




838

L. III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7-8 1894

ՅՈՒԼԻՍ—ՕԴՈՍՏՈՍ

1894 № 7-8

ՎԵՅՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ


	երես	
1 ԱԳԵԼԵԱՆ, Ա.	987	Ներհակ Առաքելը (եղեղութիւն):
2 ՊՈՒՇԿԻՆԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ . . .	1017	Հրեշտակ (բանաստեղծ.):
3 ՆԱԳՍՈՆԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ . . .	1018	* * (բանաստեղծութիւն):
4 ՍԵՆԿԵՒԻԶ, ՀԵՆՐԻԿ	1019	Սրհնանկ լինես (Հնդ. լեզենդա):
5 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	1023	Անմուտց ընկերիս (բանաստեղծ.):
6 ՎՐՈՅՐ, Ա. Մ.	1025	Աղամեանի Նամակները:
7 ՇԱՆԹ	1035	Երգ (բանաստեղծ.):
8 ՎՈԳՈՎՈԶՈՎԱ, ԵԼԻՍ.	1036	Գլուղական քահանան Անդրիստում:
9 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ	1047	Մանկան (բանաստեղծ.):
10 ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺՇ. ՎԱՀԱՆ	1049	Բնական Հիպոտիսմ (չարուն.):
11 ԱԹԱՆԱՍԵԱՆ, ԱՇՈՏ	1060	Գութանի շուրջը:
12 ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ	1066	Պատմ. ակնարկ բուշան. անցեալից:
13 ՄԻԻԼԼԷՐ, ՖՐԻԴՐԻԽ, ՊՐՈՅ.	1089	Հայերէնի ձախաւորների ծագումը:
14 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	1093	Բանաստեղծի աղան. Ռուսաստան:
15 Ա. Ա.	1102	«Մասիա»:
16 Գ. ԱՍՏ.	1109	«Մեղադարտ փարիսեցիներ»:
17 »	1113	«Միլիթարանք և հանգիստ»:
18 ՎԱՐԳԱՆԵԱՆ, Գ.	1117	Լուրդ.— Լամիլ Զոլաի:
19 ԱՐԱՍԻՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՐ	1122	Ժամանակակից Տեսութիւն:
20 ՂԱԶԱՐԵԱՆՅ, ԵՐՈՒԱՆԴ	1143	Ուսուցչական խնդիր:
21 ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆ, Մ.	1147	Աւագ ուսուցիչները դպրոցներում:
22 Ա. Ա.	1151	Յովհ. Ս. Խաթիսեան:
23 ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՆ	1154	Գաւառակ. Նամակներ.— Գեղաշէնը:
24 Ա. Մ. Ն.	1163	Արտաս. քրոն. Պոլսի երկրաշարժը:
25 Հ.	1168	Քաղ. Տես. Զին-հաղ. պատերազմը:
26 ԽՄԲ.	1173	Զանազան Լուրեր:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1894



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№№ 7—8 1894

ՅՈՒՆԻՍ — ՕԳՈՍՏՈՍ

1894 №№ 7—8

ՎԵՅՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Августа, 1894 г.

ՆԵՐՅԱԿ ԱՌԱՔԵԼԸ

(Եղեղու թիւն)

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

Անկուշտ ու ներհակ մարդը,
«Սաղ ¹⁾ իմն է» ասողը,
Գիտէ որն է Աստուածը,
Սէրը, դուրսը, կամ խիղճը...
Ժողովրդի բերանը:

I

Երեկոցեան դէմ էր, որ գզիր Մեղքումը մի նամակ ձեռքին շտապով կանգ առեց տանուտէր Սահակի տան առաջ և զանգակի տեղ ծառայող երկաթէ մուրճով երեք անգամ թակեց բակի դուռը:

—Մէլիքը տանն է, հարցրեց նա դուռը բաց անող փոքրիկ աղջկան:

—Այո:

—Քնած չի խօս:

—Ձէ, ղոնաղատանը ²⁾ չեմ իմանում ինչ բանի է:

—Ի՞նչ է, ղոնաղ ³⁾ կայ, հետաքրքրութեամբ հարցրեց գզիրը՝ ներս մտնելով:

—Ձէ, մենակ է:

—Հնչ, լաւ:

Եւ նա բակից դէպի վերեւի յարկը տանող քարէ սանդուղքի

¹⁾ Ամենը, ²⁾ հիւրասենեակ, ³⁾ հիւր:

աստիճանները մինումեջ անելով՝ արագութեամբ բարձրացաւ հիւրասենեակը:

Հ. գիւղում երկու երկյարկանի տուն կար միայն. դրանցից մէկը պատկանում էր անգլուական Մարկոսին, որը գիւղի ամենահարուստ տնայէն էր, իսկ միւսը՝ տանուտէր Սահակին:

Սրա տան վերին յարկը կազմում էր զօնադատունը: Դա մի երկարաւուն, գահլիճի փոքր ինչ նմանութիւն ունեցող սենեակ էր: Պատուհանները քառակուսի էին, վանդակապատ և փեղկերին ապակիներ զգուծ: Պատերը ներսից գեջով ¹⁾ սւաղլած ²⁾ էին և տեղ-տեղ զարդարւած անշրջանակ պատկերներով, որոնք վերաբերում էին վերջին ռուս տաճկական պատերազմին: Յատակը փարշ ³⁾ էր արւած. նախ փռւած էին երկու մեծ կապերտներ, իսկ նրանց վրայ պատերի տակով զցւած էին երկայն և նախշուն դորգեր: Սենեակի ճակատին փոքրիկ բուխարի առաջ, որը երբէք չէր վառւում իւր սպիտակութիւնը չկորցնելու համար, դրւած էր մի բաց և աններկ սեղան, առանց աթուի: Այդ սենեակը յատուկ հիւրերի և գլխաւորապէս տէրունական պաշտօնեաների համար էր ծառայում:

Երբ զգիրը ներս մտաւ, տանուտէրը նստած էր պատում շինած քառակուսի պահարանի առաջ և ինչ որ է թղթեր էր քըրքըրում: Դա յիսունի մօտ մի յաղթանդամ և գեղեցկապէմ մարդ էր, երեսը լիքը, կարմիր և թրւշած: Աչքերը մեծ-մեծ էին, վառ-վըռուն, և այդ լիքը դէմքին աւելի աշխոյժութիւն ու քաջութիւն էին տալիս նրա հաստ, երկայն և ոլորած բեխերը, որոնք, ինչպէս և գլխի մազերը, սկսել էին չալել: Երիտասարդական տառջ-գութիւնը և թարմութիւնը դեռ ևս ծիծաղում էին նրա երեսին:

— Հը՛, ի՛նչ կայ, հարցրեց նա խորիտ և լուրջ ձայնով, երբ Մեկքուժը ներս մտաւ.

— Նամակ է, Մարտիրոսենց Ղուկին տւեց:

— Ումնից է:

— Վարժապետն է ուղարկել:

— Հնա, ի՛նչ բան սխտի լինի:

¹⁾ Թարդ, ²⁾ ծեփած, ³⁾ դորգերով, կապերտներով ծածկւած, պատած:

Տանուտէրը հետաքրքրութեամբ բաց արաւ նամակը և սկսեց ծանր, լսելի ու տեղ-տեղ կմկմալի ձայնով կարդալ:

«Յարգելի տանուտէր Սահակ!

«Յուսով եմ, որ ուսումնահարկը այժմ ժողոված կը լինէք: Ժամանակից արդէն երկու շաբաթ անցել է, բայց մեզ փող է հարկաւոր. բանւորները, որոնք մի քանի ամիս է ռոճիկ չեն ստացել, փող են ուզում, հարկաւոր է վճարել, թէ չէ նրանք կարող են թողնել զործը: Իսկ չէ որ մենք շտապում ենք շուտով գլուխ բերել ուսումնարանի շինութիւնը: Փողը չ'ուղարկէք, ես ինքս կրկին այն զործի համար շուտով գալու եմ, կը վերցնեմ հետս:

Ձեզ յարգող Սփառ Միլեաբեանց:

—Ես էլ հէնց էդ հաշիւներն էի տեսնում, ասաց Մէլիքը, նամակը զորգի տակը դնելով,—ամենքն էլ ուսումնահարկը տւել են. միայն Սարգսենց Առաքելը և մզկաթի Մոսին են մնացել, դրանք էլ միշտ էսօր-էգուց են գցում:

—Հալբաթ ¹⁾ չեն ուզում տան, Մէլիք:

—Պատճառը, հարցրեց տանուտէրը տաքացած և աչքերը գզիրի վրայ չառելով:

—Ո՞վ է իմանում, թարս են, թարսութիւն կանեն էլի. տեսնես մէջներով ինչ սև կառու է անցկացել:

—Ըհը', դրանց հէրն անիծած—Աստուած վկայ, գլուխները թակելով կ'առնեմ... էդ ներհակներին հալա մահակիս տակը չեմ գցել, համբերում եմ...

—Զուր ես համբերում, Մէլիք, դրանք առանց թակ ուտելու փող տուղներ չեն:

—Լաւ, ընդհատեց Մէլիքը, ինչո՞ւ չեն ուզում տան:

—Ձեմ իմանում... էդպէս լսեցի... հալբաթ չեն ուզում, որ ուսումնարանը լինի:

—Ձեն ուզո՞ւ-ում, թող մի փորձ փորձեն, տեսնեն:

Յետոյ նա շտապով ժողովեց հաշիւ թղթերը, դրեց պահարանի մէջ և, դառնալով գզիրին, ասաց.

¹⁾ Երևի:

—Գնան գիւղամէջ, էդ ներհակներին զտիր ու ասա, որ ինձ էնտեղ սպասեն, ես էլ շուտով կը գամ:

—Աչքիս վրան, պատասխանեց զգիրը և քայլերը շտապով ուղղեց դէպի դուրս:

—Շուտ արա, տեսնեմ էդ անիրաւները. ինչ են ասում, որ չեն տալիս:

—Էս սհաթիս, Մէլիք: Եւ Մեւքումը ուրախ սրտով դուրս թռաւ: Նա զիտէր, որ Աւաքելն ու Մոսին առանց թակ-մահակի փող չէին տալու... բայց ո՞վ պիտի այդ ներհակների վզակոթին տար... չէ որ զգիրը՝ ինքը:

Ահա դրա համար էր նա ուրախ:

Ընդհանրապէս զգիր Մեւքումը մի շատ համակրելի անձնաւորութիւն էր:

Դա քսան և հինգ տարեկան մի բարձրահասակ, լայնաթիկունք և երեսը վառվռուն երիտասարդ էր, որի քաջութեան համար թուրքերը «Իգիթ Մէպքիւմ» էին ասում: Տանուտէր Սահակը նրան էր իւր համար զգիր ընտրել, որովհետեւ այդ երիտասարդը, բացի քաջութիւնից, ունէր և համակրելի բնաւորութիւն: Նա պարզասիրտ էր, ճշմարտասէր և իւր գործը եռանդով տանող: Դրանով նա սիրելի էր դարձել ոչ միայն Մէլիքին, այլ և գիւղացիներից շատերին, նամանաւանդ երիտասարդներին:

Մեւքումը սաստիկ ատում էր այն անձերին, որոնք գիւղի հասարակական բարենպաստի գործերում խոչնդոսներ էին հանդիսանում և իրանց անձնական շահերի համար դիմում էին ամենաանխիղճ միջոցներին:

—Էդպէս մարդկանց ոսկորները պիտի փշրես, բացականչում էր նա շրթունքները կծած և գլուխը շարժելով. էնքան պիտի տաս ¹⁾, որ ջանը կապոյտ լեզակ կտրւի...

Ահա այդպիսի մի սիրտ էր գրւած զգիր Մեւքումի, այդ աղքատ երիտասարդի, կրճքում:

II

Նոյն երեկոյեան Աւաքելն ու մղդսի Մոսին ջրակալից ²⁾ վե-

¹⁾ Մեծելու մաքով: ²⁾ Արտը ջրելու:

քաղառնում էին տուն: Նրանք հանդիպեցին միմեանց Մոսու հնձանի մօտ և ներս մտան: Որովհետև արդէն ուշ էր, հէնց ոտի վրայ մի քանի բաժակ գինի խմեցին, մի երկու կտոր չոր հաց դրին բերանները և դուրս եկան: Մոսին փակեց ցանկապատի դուռը, բանալին պատի ճեղքերից մէկում դրեց, և նրանք երկուսն էլ իրանց քայլերը ուղղեցին դէպի տուն:

Առաքելը 35 տարեկան մի միջահասակ տղամարդ էր, դէմքը եռանկիւնաձև, գունատ, իսկ քիթը սուր և դուրս ցցած: Փափախի տակից գաղտագողի այս-այն կողմ նայող աչքերը կիտած ունքերի տակ միշտ անբաւականութիւն էին արտայայտում: Դէմքը դժգոհ էր և մռայլ: Այդ ամբողջ մռայլութեան համապատասխանում էին նրա բեխերն ու մաղերը, որոնք սաստիկ կոշտ էին և ցից-ցից: Նա միշտ գնում էր արագ, փափախը աչքերը զցած, իսկ հայեացքը գետին՝ առանց այս ու այն կողմ նայելու: Նրա ամբողջ արտաքին տեսքը շատ պարզ հայելի էր իւր ներքին աշխարհի, որը նոյնպէս մռայլ էր և մութ: Հ. դիւղացիք նրան անւանում էին «ներհակ», ուրիշ գիւղացիք — «հացով քող» ¹⁾, կանայք — «քարասիրտ», իսկ բանւորները — «հախքասէն» ²⁾:

Առաքելը ընտանիք ունէր և միջակ կարողութիւն: Վերջին ժամանակներում նա սկսել էր փող ևս յետ գցել:

Իայց այլ էր մղդսի Մոսին: Դա կարճահասակ և հաստլիկ մարդ էր Առաքելից տասը տարով մեծ: Երեսը քառանկիւնաձև էր, լիքը, դեղնած և թորշումած: Քիթը տափակաւուն էր, երկայն և վերջաւորութեան մօտ դէպի ձախ ծուած: Հեզ աչքերը կիսակամարաձև ունքերի տակ միշտ կեղծ բարութիւն էին արտայայտում: Երեսին մազ չկար, բացի բարակ ու նոսր բեխերից: Գլուխը երկարաւուն էր և ճաղատ:

Դաշտային աշխատանքով շատ քիչ էր զբաղւում մղդսին: Նա իւր հողերի մեծ մասը տալիս էր զերաքով, իսկ ինքը կտաւ էր ներկում և աշակերտներ կարգացնում: Այդ երկու պարապմունքը հողային աշխատանքից նա դերադասում էր:

Մի քանի աշակերտներ զլիւին ժողոված Մղդսին սաղմոս ու

¹⁾ Կողբ: ²⁾ Վարձից կտրող:

շարական էր դաս տալիս: Ուսումնարանը ամառ-ձմեռ նրա մոլթ, խոնաւ և փողոցից բաւական ցածր խանութն էր, որտեղ նա կտաւ էր ներկում:

Ահա մղդսի Մոսին չոք է տւել ներկի կարասի առաջ և տարածած կտաւը պտտեցնում ձեռքերում: Նրա դիմաց, պատի տակով խոնաւ դռակների վրայ նստոտած են աշակերտները և մի-մի գիրք ձեռքներին մոմռում են: Նրանց բոլորի դէմքն էլ համարեա գունատ: Ոմանց աչքերում լոյս չի մնացել, իսկ ոմանք ապուշների են նմանում:

— Դէ, լսեցէք, գիրքներդ վեր դրեցէք, ձեռքներդ էլ խաչ արէք: Լաւ լսեցէք, տափը մտածներ.— էն օրւայ նման ականջներդ էշի ականջներ միք շինիլ.— էսպէս:

Եւ մղդսին կտաւը ներկի մէջ դցելով ու հանելով երգում է «Պանին Հօր» (փոխանակ Բանին): Նրա ձայնը մղկած, խանձաւած բասօ է, որ երբեմն հնչւելուց զլլում է կոկորդում:

— Դէ, Գրիգոր, մի ասա տեսնեմ,

Գրիգորը կրկնում է վարժապետի երգածը կտրակի ու սխալ. միաձայն և ուժգին շեշտով նա հնչում է «Պանին» խօսքը, իսկ Հօր-ի վրայ ձայնը արագութեամբ վայր բերում:

— Եղպէս չի, մին էլ լսիր... աջլ, էսպէս: Եւ նա երգում է կրկին:

Աշակերտը դարձեալ սխալում է:

— Եղպէս չի, աջ նղովեալ զաւակ, Եղպէս չի, մին էլ լսիր...

— Պանին Հօր,— երգում է աշակերտը կրկին իր եղանակը:

— Ատա չոռ... դռում է մղդսին... էշի կտոր... չոքիր էս սհաթիս, չոքիր, զարշելի...

Այնուհետ նա անցնում է ուրիշներին:

Վերջանում է Շարականը և սկսում Սաղմոսը:

— Սողոմոն, դասդ ասա:

Սողոմոնը վեր է կենում տեղից և աչքերը ղետին զցած անգիր արած Սաղմոս ասում: Իսկ մղդսին աջ ժամանակ սպիտակ ու թաց կտաւը սալ քարի վրայ դրած փայտով անդադար թակում է. թրախկ. թրախկ, թրախկ...

— Մին էլ ասա, չլսեցի, դառնում է նա աշակերտին: Աշակերտը

կրկնում է երկրորդ և երբեմն երրորդ անգամ մղդսի Մոսու թրախկաթրուխի պատճառով:

Այդպէս էր ամեն օր անցնում մղդսու դասաւանդութիւնը: Նրա աշակերտների թիւը սկզբներում 15-ի էր հասնում, բայց վերջին տարիներում զգալի կերպով պակասեց: Վարժապետի զաւուց չեռոյց նրա մօտ 5 աշակերտ էին մնացել:

—Նզովեալ, անիծեալ լինի նա, զանդառում էր մղդսին վարժապետի վերաբերմամբ,—էդ անդինջը, էդ նեխածը եկաւ-չեկաւ, աշակերտներս մին-մին փախան ինձանից. ամենքին էլ խելքից հանեց այդ անխիղճը:

Նեղ եսականութիւնը նոյնպէս զարգացած էր Մոսու մէջ, բայց այստեղ նա կաւալարւում էր կեղծաւորութեամբ, շողոքորդութեամբ և խորամանկութեամբ, այն ինչ Առաքելը իր շահերի համար գործ էր դնում ոյժ, բռնութիւն և կամակորութիւն:

Այգուց դուրս գալով նրանք երկուսն էլ մի փոքր տարածութիւն լուռ անցան: Յետոյ մղդսին յանկարծ ընդհատեց այդ լուռութիւնը, ասելով.

—Առաքել, մոռացել եմ քեզանից հարցնեմ. ուսումնահարկը տալու ես, թէ չէ, ակտր գլուխս տանում են:

—Ի՛նչ ուսումնահարկ, խելքդ կորցրել ես:

—Ես էլ հէնց էդ եմ ասում է...

—Թող ուզեն-ուզեն և իրանք-իրանք յետ քաշեն: Մի երկու մարդկանց ձեռքին էլ խեղճ չենք մնալու:

—Ուղիղ ես ասում.—Այ տղա, ակտր մեղ ի՛նչ, ի՞նչ վարժապետը իրանց գիւղումը ուսումնարան է շինել տալիս, օգուտներս սրն է:

—Օգուտը դրանց գլխին տւած... փող է, հաւաքում են էլի... կէսը իրանց ջիբը կը դնեն, կէսն էլ ուսումնարանին կը տան: Ժամանակումս ո՞վ չի անում.—Ես էլ լինեմ, կանեմ... Հէ, ուսումնահարկ չեմ տալու: Անցեալ տարի էլ առաջին անգամն էր, չուզեցի կռիւ գցեմ, սարսաղութիւն արեցի սուեցի:

—Ես էլ չեմ տալու... Այ մարդ, տէրութեան հարկ ենք տալիս. էդ մինը հախ է, խօսք չկայ... իսկ ուսումնարանին ինչ հարկ... Սմբատը թէ որ ուզում է մեզ լաւութիւն անի, հազիր հէնց իրա փողով շինել տայ ուսումնարանը էլի:

—Էհ, խաղ է՝ անում են... մինչև հիմա որ ուսումնարան չկար, երեխաները քեզ մօտ պակաս էին սովորում...

—Հա, Առաքել, հա, էլ մի ասիր, կցեց մղղսին մի խոր ախ քաշելով, էդ անիրաւը ինձ շատ թշնամութիւն արեց... Փառք Աստծոյ, խօմ գիտես, թէ նրա պատճառով քանի աշակերտ դուրս եկաւ իմ մօտից:

—Վնաս չունի, մղղսի, վնաս չունի. հէնց ես իմանում, որ նա քաղաքումն է ուսում առել, քեզանից շատ է հասկանում... էլի քեզ մօտ կը գան... թող հալա համը տեսնեն...

Յետոյ յանկարծ յուզւելով դռնեց՝

—Ախպէր ¹⁾, իրանց գիւղում ինչ անում է անի, էլ մեզ հօր է խառնում, մենք մեր հացին, նրանք էլ իրանց հացին:

—Պա բնչ է... ուսումնարան որ մեզ հարկաւոր լինի, մենք էլ մեզ համար կը շինենք:

Եւ փոքր լռութիւնից յետոյ գլուխը թափահարելով՝

—Այ տղայ, օյին է էլի, օյին.— գլխներիս թաղաւոր են դառել:

—Թող սպասի մեղիք Սահակը, արհամարանքով բացականչեց Առաքելը, գալ տարի թէ դիւղի կէսը ուսումնահարկ տաց, բաս ես մարդ չեմ:

Յետոյ փոքր ինչ լուռ ֆնաց և դէմքին խորհրդաւոր կերպարանք տալով աւելացրեց.

—Գու էդ ես օյին ասում, մղղսի, պա իսի՛ր ուրիշ օյին չեմ լսել:

—Ձէ, նոր բան էլ կայ:

—Հէ, հէ, հէ քրքնջաց Առաքելը դառնապէս և հեգնօրէն, փափախը աւելի ևս աչքերը գցելով: Յետոյ գլուխը փոքր ինչ բարձրացրեց և, հայեացքը հեռուն ուղղելով, շարունակեց.

—Օյին, էն էլ ինչպէս օյին.— Սարգսենց Առաքելի գլխին են ուղղում էդ օյինը դնեն... պա չեմ լսել:

—Ձէ. հի է:

—Ղորդ ²⁾, չեմ լսել:

¹⁾ Եղբայր: ²⁾ ձգտարիտ:

—Քո արևը վկայ, չէ:

—Պա ի՞նչ... Առաքելին երեխի տեղ են դրել. — հէնց են իմանում ես էլ խեղճ հէջւան եմ, ինչ որ գլխիս անեն կը համբերեմ:

—Այ աղայ, ինչ բան է, դէ ասա էլի:

—Շան որդիք, չեն իմանում, որ Սարգսենց Առաքելին չօռ ասողը նրա ձեռքից չի պրծնիլ, որ նրա միւլքի զրաղը ¹⁾ ոտք դնողը գիւլլախորով կը դառնայ?

—Ո՞վ է էդ ասի:

—Ել ո՞վ պիտի լինի. բենամուս վարժապետն ու մէլիքը: Էն անիրաւը մէլիքին վերցրել, զնացել է քեռուս մօտ ու ասել. «Մարկոս ասպէր, դու մի անգաւակ մարդ ես, միակ ժառանգդ Առաքելն է, նա էլ հնքան. ունի, որ հերիք է»... Աչքդ ծակում է, վեր չի առնում հա՞մ... եկ, ասում է, կարողութիւնդ կտակիր ուսումնարանին: Քեռիս էլ ասում է, լաւ, բայց հիմայ խօսք չեմ տալ, պիտի մտածեմ, տեսեմ:

—Առաքել, ես հէնց ասում էի, որ էդ վարժապետը դինջ աղայ չի երևում, ընդհատեց մղղսին յիսալի ձայնով: Իմ աշակերտներին խեղքից հանողը էդ անիրաւը չէր... Լաւ, ո՞վ ասեց:

—Լսեցի:

—Որ էդպէս է, գնա քեռուդ խեղքի բեր:

—Քեռիս տալիւ մոնի, քեռիս ի՞նչ. դործս վարժապետի հետն է. նրա գլուխը մի պիտի կռնատակս դցեմ, որ խեղքը գլուխը հաւաքւի:

—Հալա ուսումնահարկը չենք տալ, դէնն էլ կը մտածենք:

—Մենակ ուսումնահարկը. չէ որ դու անցեալ տարի թղթին ձեռ էիր քաշել, թէ 10 մանէթ ընծայում ես ուսումնարանին. էդ էլ մի տար:

—Ը՛հ, սարսաղ եմ, ի՞նչ է. ով է տողը. ձեռ էին քաշում, բերին մօտս, ես էլ հէնց հնպէս գրեցի... փողից բէզար չեմ խօմ, որ տամ:

—Ինձ մօտ էլ բերին, ասեցի գլխիցս կորցրէք-կորցրէք. հիմա էլ մի նոր բան... Աստուծ վկայ, արիւնս գլխովս է տալիս միտքս ընկնելուց... Ձեմ իմանում ինչ անեմ:

¹⁾ Ափը:

—Ուսումնարանը պիտի քանդենք, Առաքել, լուրջ դէմքով ասաց մզկսին, էն ժամանակ հալա մենք տաններս հանդիսա կը նըստենք, մնացածները իրանք են իմանում:

—Ես էլ մի էդպէս բանի վրայ եմ մտածում, ամա չես իմանում, մզկսի, որ ծառը չորացնելու համար արմատից պիտի կտրես: Վարժապետին պիտի մի կերպ անենք. էս ցաւն ու ցեցը նրա բաներն են:

—Հա, էդ ուղիղ է, ուղիղ է, եթէ նա չլինէր, ապա իմ աշակերտները դժուր կը գային մօտիցս:

Նրանք արդէն հասելէին գիւղամէջ: Մեկքումը մօտեցաւ նրանց ու հրամայական եղանակով ասաց.

—Էստեղ սպասեցէք:

—Ինչո՞ւ, ունքերը կ'իտելով հարցրեց Առաքելը:

—Գործ կայ, Մէլիքը ասաց.

—Ի՞նչ գործ:

—Ձեռ իմանում, արհամարական ժպիտը երեսին մզմզաց մզկսին, էլ ինչ կը լինի:

—Դէ որ իմանում ես, էլ ո՞ր ես փորումը պահում, բարեկամիդ ասա էլի, կտրակի պատասխանեց զզիրը և հեռացաւ:

—Ա՛յ, երեք մանէթը հազիր է. եկէք ծակատներիցդ կախ անեմ, բացականչեց Առաքելը գզիրի յետևից, մի կողմ քաշւելով: Մոսին մի քրքիջ արձակեց և մօտեցաւ իւր բարեկամներից մէկին: Առաքելը նստեց սալ քարերից մէկի վրայ բոլորովին առանձնացած: Նրա դէմքը այդ րոպէին այն արտայայտութիւնն էր ստացել, երբ մարդ կանգնած է լինում անփախուստ կուլի առաջ, անհամբեր սպասելով հակառակորդի դուրս գալուն:

Նա հէնց նոր էր նստել, որ պիւղամէջ եկաւ Սողոմոնենց Խաչին, Առաքելի արտի հարեանը: Նա ևս ջրակալից էր վերադառնում:

—Այ տղա, ամօթ չի քեզ համար, գոչեց Խաչին Առաքելի վրայ՝ նախատինք և զգանք արտայայտող եղանակով. իսկի տափը չես մտնում, էնքան էլ չարչարանք կը լինէր, որ ինձ տուիր:

— Ի՞նչ չարչարանք, հարցրեց Առաքելը կարակի և հեզնօրէն, ինչ ևս բերանդ ցրիւ տալիս:

—Աներես, հալա հարցնում էլ է. տափը մտիր է, տափը:

—Տափն էլ մտիր, մի քիչ էլ դէնք. հունարին նայէք, հունարին, վեր եմ կենալու ոտիս տակը գցեմ հնա...

—Բնս, քոնը հէնց կռիւն է. առաջ մարդու նման հալա մի խօսա. այ անասուած, ջրազլուխը որ իմն է, դու ուր ես գալիս օրդա ¹⁾ կապում, ջուրը վերառնում տանում... հէնց գնում եմ ջուրը բերում ու, հալա արտիս վրան չարած, տեսնեմ քամակից կտրում են ²⁾: Ամօթ է ամօթ, էդ թարս խասիաթդ երբ ես վեր դնելու:

—Քեզ ասեցի բերանդ ցրիւ ³⁾ մի տալ... աչքդ էլ էի հանում, որ կտրում էի, պա ես արտս ջրում չէի:

—Արա խօսքերին, խօսքերին... թու երեսիդ... այ մարդ, բա ես արտս չէի ջրում... ջրազլուխը ես եմ, թէ դուն:

—Շատ էլ դու ես:

—Ար ես եմ, պա էլ ուր ես թարսուծիւն անում, պա էլ ինչու սաղ օրը հոգիս հանում էիր... կորիր գլխիցս, ներհակ ես, ներհակութիւն պիտի անես:

—Ներհակը դժ. ես, թէ ես:

—Տեսնում ենք ով է. դու հէնց միշտ էդպէս ես էլի, եզ, ջորի կառնես փոխանէ, յետոյ, Ասուած վկայ, կ'ասես, կ'ուրանաս, փոխարէն կուլ կը տաս. փահլայ ⁴⁾ կը բանեցնես՝ վարձները կը կտրես, իրանց էլ վզակութներին տալով դուրս կանես... որ մէկը ասեմ:

—Գլուխդ վկայ:

—Ով չի քեզ «հացը քօռ» ասում, ամեն բանում հէնց դէպի քեզ ես քաշում:

—Առա ես քո աչքն էլ եմ հանում, ձեռքիս մէջ տեղոյն է գալիս, քեզ ինչ. թէ զօչաղ ես, կուռդ պատում է, դու էլ արա. ինչ ես կուլի եկել, արսըզ ⁵⁾ մարդ. դու հալա գնա քսան տարեկան աղջկանդ հոգսը քաշիր:

—Քո հէրն անիծած, աղջկանս հետ ինչ բան ունես, աչքդ

¹⁾ Առւի ափում գտնուող ջրանցք, որտեղով ջրերը բաժանում են արտերի վրայ: ²⁾ Կապում են ջրանցքի առաջը: ³⁾ Մի հալհուլի: ⁴⁾ Բանուոր: ⁵⁾ Անհոգ:

հանել է... դու հալա տղերանցդ ջլանները ¹⁾ քաշիր, յետոյ ուրիշին խօսք ասա. սաղ քէաշւանը ²⁾ ընկած՝ էլ եմիշ, վարունկ չեն թողնում, գողանում են:

—Քո աչքն էլ են հանում. դու հալա կնկանդ ջլաւ քաշիր: Հարւածը սատոիկ էր, այնպէս որ Խաչին այլ ևս չկարողացաւ համբերել: Նա Առաքելի վրայ վազեց, որը իսկոյն և եթ վեր թռաւ տեղից, իմանալով գործի էութիւնը:

—Էդ էր պակաս, հա, գոչեց Խաչին, բահը Առաքելի մէջքին խփելով: Անդինջ մարդ, դէ հերիք է էլի:

—Թուլի տղայ, ում վրայ ես ձեռք բարձրացնում, գոչեց Առաքելը, և նրանք երկուսն էլ միմեանց կտան:

Հարւածում էին որտեղին հասնում էր՝ գլխին, դնչին, կրծքին և դրա հետ միաժամանակ յորդառատ անձրևի նման տեղում էին անասելի հաջոյանքներ: Շուտով Խաչի քիթն ու պոունգը արիւնկալեց, իսկ Առաքել՝ գլուխը: Այդ ժամանակ մէջ տեղ մտաւ մղդախն, իբր թէ կռողներին բաժանելու, բայց մի քանի անգամ՝ հարւածեց Խաչուն: Նրա վարմունքը նկատեցին վերջինի բարեկամները և վրայ վազեցին: Մոտին շուտով անյայտացաւ կռուողների ոտների տակ, իսկ Առաքելը իւր ալակերպւած դէմքով դեռ շարունակում էր կռւել:

Բայց ահա եկան և նրա բարեկամները, ու կռիւը աւելի կատաղի կերպարանք ստացաւ: Երկու բանակներն էլ խմբերի բաժանւեցին և խումբ-խումբ սկսեցին կռւել: Այժմ ամեն մի խմբի կռուական ծորը ոչ թէ Խաչին կամ Առաքելն էր, այլ սեպհական-անձնական հաշիւներ: Գլիրը մէջ տեղ ընկած աշխատում էր վերջ տալ կռիւն, որ հասաւ տանուտէր Սահակը և իւր մահակով մէջ մտաւ:

—Ագա, Մեղքում, տուր ³⁾ զրանց գլխին, գոչում էր նա, ցրելով խմբերը, շան սատակ պիտի անենք էս շան տղերանց:

Ոմանք արիւնթաթախ եղան Մէլիքի մահակից և դգիր Մեղքումի բռունցքներից և սկսեցին թողնել կռւի ասպարէզը: Քիչ յետոյ երկու բանակներն էլ կանգ առան:

—Հոգիդ հանելու եմ, ամեն անգամ ջուրդ կը կտրեմ, գոչում

¹⁾ Սանձ: ²⁾ Արտօրաւքը: ³⁾ Խփիր:

էր Առաքելը, արիւնկալած երեսը սրբելով: Միևնոյն ժամանակ նա ճիգ էր անում կրկին հակառակորդի վրայ յարձակել, բայց բարեկամները բռնել էին և չէին թողնում:

— Թողէք է, դուռում էր Առաքելը, թողէք դրան մի լաջախջախեմ...

— Մին էլ ջուրս կտես, տես թէ ինչ կանեմ:

— Կը տեսնենք, թէ հէնց օրդիդ վրան շանսատակ չանեմ քեզ, բաս ես մարդ չեմ:

— Քո արևը վկայ, մի փոքրիկ հունարդ...

— Էս անգամ խօսմ տեսար:

— Դու էլ խօսմ տեսար:

— Քեզ բամբակով պիտի ջուր խմացնել տայի:

— Սասներդ կտրեցէք, բենամուսներ, գոչեց տանուտէրը — կոտորւէք դուք:

— Մեկիք, ախր մի հարցուր տես, թէ ով է մեղաւորը. թէ ես լինեմ, վեր կաց զլիսի տասը խփիր:

— Ես այժմ ուրիշ գործ ունեմ, ուշ էլ է, յետոյ դատաստան կ'անեմ, բայց հիմա մարդը մի մանէթ շտրաֆ տւէք, որ կռիւ էք արել:

— Ես ինչո՞ւ տամ, որ մեղաւոր չեմ:

— Դու մեղաւոր չես, պա ով է, ես եմ... մէջ մտաւ Առաքելը. կռիւ զոյգը ով էր, դու թէ ես: Յետոյ դառնալով Մէլիքին՝ դու հէնց մանէթներ առնելում ես զօչադ, էս է, պատրաստել ենք, մնացել է ճակատիդդ կախ անենք:

— Աչքդ էլ եմ հանում, առնում եմ, էդ քո բանը չի. քեզ նման մարդու կաշին էլ մաշկեն, քիչ է:

— Դու հէնց շատ մէաթ թէա՞ն ¹⁾ մարդ ես:

— Սասը կտրիր, ներհակի տղայ — ներհակ, դու հալա բեր ուսումնահարկը տուր, յետոյ երեսիս լրկ-լրկ ²⁾ արա:

— Հը, հը, շտրաֆը տւի, մնաց էդ. — ասել եմ, որ ուսումնահարկը չեմ տալու:

¹⁾ Կարգին:

²⁾ Խիստ կամակար լինել և կռակա ձեռքով իր ասածին մնալ:

— Սուտ ես խօսում, դու միայն էսօր էգուց էիր գցում. —
մինչև երբ սպասեմ ու համբերեմ:

— Ես միշտ ասել եմ ու էլի կասեմ, որ չեմ տալու:

— Թարսու թիւնդ դէնը դիր, Առաքել, թէ չէ վատ կը լինի:

— Որ սպանես էլ, չեմ տալու.

— Պատճառը.

— Պատճառը. — քէյիլ ինձ չի, չեմ տալիս, զօռի բան է:

— Դա, քեզ նմանների համար զօռ օրինակոր է:

— Շատ լաւ, դէ առ տեսեմ. էնքան էլ ես հէյտն չեմ, որ
թշնամիներիս ծափով պար գամ, նր նց տակին մնամ:

— Ինչո՞ւ թշնամու թիւն պիտի անենք քեզ, ա՛յ անիծւած...
ինչ ունենք մէջտեղ բաժին անելու:

— Դու և վարժապետը շատ լաւ էք իմանում թէ ինչո՞ւ. — ամա
Սարգսինց Առաքելը ձեր ձեռքին խեղճ մնացող չի:

— Սասդ կորիր, նեխւած մարդ, հանիր երեք մանէթը:

— Զեմ տալու:

— Դէ մի՛ տալ, գոչեց մէլիքը բարկացած և մի քանի անգամ
ապտակեց Առաքելին: Այն ժամանակ մղղսի Մոսին դարձեալ մէջ
մուտ Առաքելին պաշտպանելու համար:

— Էս քոտտին, քոտտին, զոռաց տանուտէրը. — կեղծաւոր
շուն. — դու ինչո՞ւ չես ուսումնահարկը տալիս... ադա, Մեկքում,
տո՛ւր դրա վզակոթին... էդպէս, հերիք է... հիմա տար երկուսին էլ
թովլան ¹⁾ գցիր...

Գլիրը երկուսին էլ հրելով դոմը արեց և դուռը կողպեց:

— Մէլիք, որ մեռնես էլ չեմ տալու, անդադար կրկնում էր
Առաքելը: Մղղսին լուռ էր: Նա երբեմն քորում էր գլուխը և
մտքումը հայհոյում Մեկքումին, որ այնքան անգթաբար էր հար-
ւածում:

— Մեկքում, մինչև որ երեք մանէթը չտան, դրանց դուրս
չանես թովլից:

Ո՞վ է սրանց բաց թողնողը, սարսաղ եմ, ինչ է.

Այ՛ք միջոցին մի ծերունի կամացուկ մօտեցաւ տանուտէրին և

¹⁾ Գոմ:

—Մեղիք, ասաց, համեցէք էս չորս մանէթը, Առաքելին բաց թող... Ամօթ է, ինձ մի խայտառակիր, կնիկ, երեսաններ ունի. խեղճ են... տալիւ մոնի դա, պրծնենք ¹⁾ ձեռքից:

—Մարկոս ապեր, ես ուզում եմ, որ ինքը տայ, դու նրա տեղ տալիս ես, ինչ փայղայ ²⁾:

—Ձէ, քեզ մատաղ, փնաս չունի—ախր դրան կրակ էլ գցես չի տալու.—առ չորս մանէթը, գործդ մի կանգնեցուր:

—Անուն Նոր վկայ, Մարկոս ապեր, լաւ չես անում:

—Ձէ, խնդրում եմ, լսիր ինձ, ինձ բախշիր:

—Ախր... լաւ չես անում, հաւատայ.—ախր... ամա իմացիր, որ քո խաթրի եմ ընդունում:

—Հա, շնորհակալ եմ,—համեցէք.

—Աղա, Մեղքում, գոչեց մէլիքը, փողը առնելով, Առաքելին դուրս բեր:

Գզիրը նրան բաց թողեց: Առաքելը դուրս գալուն պէս սկսեց հարայ-հրոց բարձրացնել քնուռ վրայ, իմանալով նրա արածը:

—Շատ նհախ ³⁾ ես արել, որ քո գլխի բաներ ես բռնում... քեզ ճիւղ ասեց, որ ինձ տեղ փող տաս. քո ի՞նչ պարտքն է, որի իմ գործերի մէջն ես խառնում.—հէնց է որ չորս մանէթը ստանալու ես, հա՛:

—Լսում ես, Մարկոս ապեր, խօսեց տանուտէրը.

—Լսում եմ, փնաս չունի, մէլիք. յետոյ բարձր ձայնով.—մի' տալ, մի' տալ, հարկաւոր չի, տար աչքդ կոխիր:

—Ասում եմ, որ էլ իմ գործերիս մէջ չխառնես, իմացմը.—կոպտութեամբ պատասխանեց Առաքելը, մի կողմ քաշւելով:

Քիչ յետոյ գզիրը մօտեցաւ Կոմի դռան, որ թրխակացնում էր Մոսին:

—Հը, ի՞նչ կայ:

—Բանց, բանց դուռը:

—Բաց անելը հեշտ է, ծիծաղեց Մեղքումը, դու ասա տեսնեմ, փողը տալիս քե՛ս թէ չէ...

—Տալիս եմ, տալիս, անիծեալ, տալիս եմ, տարէք, կշտացէք.

¹⁾ Աղատւենք. ²⁾ ձար. ³⁾ Ի դուր:

—Հա, հա, հա, ծիծաղեց կրկին Մելքումը, դէ շուտ ասա էլի,—սնաշէնի մարդ, որ տալու էիր, էլ ինչո՞ւ էնքան թակ կերար.

—Անիծեալ զաւակ:

Մշոյին ևս ազատուեց գոմից, վճարելով չորս ռուբլին: Ներկայացումը վերջացաւ դրանով և հետաքրքրուող հասարակութիւնը սկսեց ցրուել:

Մութը ընկել էր արդէն:

Բայց ինչ հարկ էր այդ և ո՞վ էր վարժապետը:

III

Սմբատ Մխիթարեանը, այսպէս էր վարժապետի անունը, Տ. գիւղիցն էր, որը Հ.-ից գտնուում էր երկու ժամեայ ճանապարհի վրայ: Այդ գիւղերին բաժանում էր միմեանցից բարձր, անտառապատ բլուրը, որի երկու հակառակ երեսում ընկած էին Հ.-ն և Տ.-ն:

Սմբատի հայրը հասկացող մարդ և միջակ կարողութեան տէր լինելով՝ որդուն ուղարկեց Թիֆլիս Ներսիսեան դպրոցում սովորելու:

—Գնա ուսում առնի, մարդ դառնայ, ասում էր հայրը իր բարեկամներին, երբ դրա մասին խօսք էր բացւում:—Մեր ծնողները պարտական մնան, մեզ խաւար թողեցին, մեր որդիքը զնան լուսաւորւեն:

Թիֆլիսում Սմբատը մի քանի ամիս պատրաստուելուց յետոյ յաջող քննութիւն տուաւ և ընդունուեց Ներսիսեան դպրոցի 3-րդ դաստանը: Այդ նրան յաջողեց այն պատճառով, որ հարկաւոր պատրաստականութիւն էր ձեռք բերել գիւղում, աւարտելու մօտ լինելով Ա. գիւղի ծխական-երկրասեան ուսումնարանը, որը այդ ժամանակ բոլոր ուսումնարանների հետ միասին նոյնպէս փակւեց:

Ենորհիւ իր նախկին ուսուցիչների Սմբատը քաղաք էր հասել փոքր ի շատէ մօտաւոր և բարոյական պաշարներով: Վարժապետները այդ երկու բաների վրայ մեծ ուշադրութիւն էին դարձնում: Դասեր աւանդելու հետ միասին ուշքից չէր թողած և կրթական գործը: Օգտուելով ամեն մի հանգամանքից և առիթից, նրանք ձգտում էին նպաստել աշակերտների մէջ բարոյական և գիտակ-

ցական ոգու զարգանալուն, աշխատում էին ցանել նրանց ուղեղում ինքնազարգացման և օգտակար աշխատանքի սերմերը, որպէս զի ուսումնարանը թողնելուց յետոյ նրանք չեղւին կեանքի իսկական ճանապարհից:

Ուսուցիչների այդ աշխատանքը նշանաւոր ազդեցութիւն էր արել և Սմբատի վրայ: Պա մի լուրջ և մտածող աղայ էր: Դպրոցում մի քանիսների հետ աչքի էր ընկնում իր շատ կարգացած լինելովը ու զարմացնում էր շատերին իր շարադրութիւններով: Սմբատի լրջութեան վրայ ուշադրութիւն դարձրին V-րդ դասատան աշակերտներից ոմանք և նրան հրաւիրեցին իրանց գրականական ժողովները, որ կառավարում էր հայերէն լեզու աւանդող ուսուցիչը: Պա մի զարգացած և բարեսիրտ մարդ էր, որ իր ամբողջ կեանքը նւիրել էր աշակերտների զարգացման դործին:

Ժողովներում Սմբատը աւաջ լուռ էր, բացց երբ միայնակ աշխատած ուղեղը սկսեց ուրիշ կարծիքներ ընդունել և նրանց հետ շփուել, այն ժամանակ նա ևս սկսեց գրել ու վիճաբանել: Երկու տարւայ ընթացքում գրականական ժողովները այն ազդեցութիւնը արեցին Սմբատի վրայ, որ գիտակցութիւնը և քննադատական միտքը արդէն հիմք էին դրել նրա մէջ: Զանազան զաղափարներ, որոնց մասին նա չէր լսել, կամ լսել ու չէր հասկացել, այժմ մօտենում էին նրա ուղեղին:

Այդ զաղափարներով ու նրանց հասկանալու պրոցէսով չափաւաճ Սմբատը ձգտում էր միշտ նոր-նոր զաղափարների հետ ծանօթանալ: Ահա թէ ինչու նա մեծ ազահութեամբ գրքեր էր կարդում, ընթերցանութիւնը ուսումնարանական աշխատանքից բարձր դասելով:

Հինգերորդ դասատուն անցնելով Սմբատը թողեց դպրոցը և մտաւ Ք. քաղաքի ռէալական ուսումնարանը: «Ռէալականում», մտածում էր նա, կարող եմ ուսումնասիրել ռուսաց լեզուն և նրանց գրականութիւնը: Բացի այդ, այնտեղից ես իրաւունք կունենամ շարունակել ուսումնաւարձարգոյն դպրոցներում, որ նոյնպէս անհրաժեշտ է: Հայերէն լեզւի մէջ ինձ քաջ եմ զգում, չպէտք է միայն մոռացութեան տալ:

Ռէալական ուսումնարանի V-րդ դասատանը նա ծանօթացաւ

լուրջ աշակերտների հետ, որոնք իրանց մուսուր աշխատանքի մեծ մասը գործ էին դնում կանոնաւոր ընթերցանութեան վրայ:

Թէ ուսումնարանում և թէ ուսումնարանից դուրս նրանք յաճախ խօսում էին գրականութեան, զանազան գրողների կարծիքների, լրագրական բանակոխների, որոշ կուսակցական ուղղութիւնների մասին և այլն: Հէնց այդ աշակերտների միջոցով Սմբատը ծանօթացաւ ուսաց յայտնի հեղինակների հետ, որոնց անունները ուսումնարանում չէր լսում: Սկզբում նա կարդում էր առաջնակարգ վէպեր, իսկ յետոյ սկսեց քննադատութիւններ ևս: Ընկերները նրա համար բերում էին այն քննադատների դրամաքներին, որոնք յառաջադիմական ուղղութիւն ունեցող չեղափոխութեան են թարկում ընթերցողի ուղեղը:

Սմբատը չէր կշտանում այդ գրքերը կարդալուց: Ծանօթանալով մարդկային և հասարակական կեանքին վերաբերող գաղափարների հետ՝ ամեն անգամ նրա մէջ տիրում էր ոգևորութիւն և գործելու եռանդ: Նա արդէն պարզ հասկանում էր, թէ որն է անհատի կոչումը, հասարակութեան և նրա անդամների պարտականութիւնները: Այդ բոլորի հետ միասին նա աշխատում էր պարզել իր համար մեր կեանքի ներկայ դրութիւնը և նրա հասարակական խնդիրները:

—Արդեօք ի՞նչ բանի պիտի ձգտենք մենք այժմ, մտածում էր նա յաճախ, որ մեզ ապահովենք վրայ հասնող զանազան վտանգներից:

Այդ հարցի մասին Սմբատը շատ էր խօսում ընկերների հետ, բայց երբէք մի բաւարար պատասխանի չէր հանդիպում:

Կանոնաւոր ընթերցանութիւնը և նրա միջոցով կեանքի հետ ծանօթանալը ծնեցրել էր Սմբատի գլխում «ինչ անելու» հարցը, որ իր ամբողջ ոյժով տանջում էր նրան: Որոնելով դրա պատասխանը, նա միևնոյն ժամանակ աշխատում էր նպաստել այդ հարցի արծարծւելուն:

Եւ մի անգամ իր հօրեղբօր որդուն, որը սովորում էր Էջմիածնայ ճեմարանում, ահա թէ ինչ նամակ էր գրել.

Ս. Արշակ!

«Ինձ հետաքրքրում է այն, թէ ինչ ես մտածում և անում,

խիստ դուրս դրա մասին իսկի չես էլ գրում: Երկմտութիւնս մասամբ փարատելու համար ես իմ բարոյական պարտքն եմ համարում քեզ մի քանի խօսք ասել, որոնց վրայ մտածելը և այդ մտածմունքների մասին ինձ գրելը քեզ եմ թողնում: Արդեօք մէկ անգամ իսկի հարցրել ես քեզ, թէ ինչո՞ւ ես սովորում, ինչ բանի է պէտք ուսումը, որը ձեռք ես բերում և որը գուցէ դեռ շարունակես բարձրագոյն ուսումնարաններում ևս: Եթէ դրա մասին չես մտածել, կամ մտածել ես, բայց պատասխանը չես գտել, ես օգնեմ քեզ գտնելու:

«Այդ բոլորը մենք ձեռք ենք բերում հասարակութեան, ուրեմն և մեր կեանքը օգտակար դարձնելու նպատակով: Առանց այդ միջոցի մենք անկարող կը լինենք մի նշանաւոր օգուտ բերել, և դրանում է կայանում անհատի կոչումը: «Ի՞նչ պիտի անել» հարցին այդ տեսակէտից պիտի պատասխանել:

«Այդպիսի մի տեսակէտ ընդունելուց յետոյ պարզ է, որ մեզանից ամեն մէկը պիտի ընտրի մի այնպիսի նպատակ, որի իրագործումն օգուտ բերէր ընդհանրութեան. և այդպիսի նպատակը պահանջում է լուրջ և օգտակար աշխատանք: Ուրեմն ի՞նչ պիտի անես դու, որն է կեանքիդ նպատակը: Մտածիր դրա մասին այժմեանից, որպէս զի աւարտելուդ մօտ պատասխանը պատրաստ լինի: Միևնույնն է, այդ հարցը ինքն իրան այն ժամանակ կանգնելու է քո առաջ»:

Ռէալական դպրոցը աւարտելու մօտ Սմբատը ինքը շատ էր մտածում դրա մասին: Եւ ահա մի անգամ, երբ խօսք էր բացւել, թէ ով ինչ մասնագիտութիւն է ընտրելու և ինչո՞ւ, նա վճռողաբար արտասանեց.

—Իբրեւ ձեր ընկեր՝ ես անկեղծօրէն յայտնում եմ, որ ես անպատճառ ուսուցչական դպրոցը պիտի մտնեմ, աւարտեմ և դնամ իմ հայրենի գիւղում դործելու: Դա իմ պարտականութիւնն է, և ահա թէ ինչու: Առաջին՝ այն ամբողջ զաւառում, որտեղ գտնւում է և մեր գիւղը, կայ միայն երկու ուսումնարան, որոնցից մէկը հոգևոր: Վերջինի գոյութիւնը կարելի է բաց ասել, որովհետեւ նա մի տարի բաց է լինում, իսկ տասը տարի փակ: Երևակայեցէք ուրեմն, թէ քանի-քանի գիւղեր առանց ուսումնարանի

են, քանի երեսաններ առանց կարդալ-գրելու են մեծանում... զաւառ, հարիւրաւոր զիւղեր... մի ուսումնարան... Անմխիթար և ճնշող պատկեր, որի վրայ տեղ-տեղ դեռ ևս շարունակում են իրանց դոյութիւնը տէր Թողիկի տեսութեան ուսումնարանները... Մինչև երբ պիտի շարունակւի նրանց բթացնող և փթեցնող աշխատանքը. երբ ախր այդ հինը, փթածը պիտի տեղ տայ նորին, թարմին:

Յրկրորդ՝ երբ զիւղերից ականջիս հասնում են այնպիսի տխուր լուրեր, որոնք մարդու սիրտ են ճմլում: Իսկ այդ բոլորը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մռայլ երևոյթների հետևանքներ...

Ո՛վ պիտի առնի դրանց առաջը, ո՞վ պիտի վերջ տայ ջղեր քայքայող այդ լուրերին, որոնք ինձ երբեմն այնքան յուսահատութիւն և զայրոյթ են պատճառում, որ սկսում եմ հայհոյել, անիծել զիւղացոց: Բայց դա, իհարկէ, բոլորակաւ ազդեցութեան և խիստ ցաւակցութեան արտայայտութիւններ են միայն: Հարկաւոր է լրջօրէն մտածել այդ երևոյթների առաջն առնելու համար: Իսկ ո՞վ է այդ դործը կատարողը, եթէ ոչ ինտելլիգէնտը և այն էլ զիւղացի ինտելլիգէնտը: Այդ նրա ամենամեծ պարտականութիւններից մէկն է, մանաւանդ որ նրա համար զիւղում դործելը այնքան էլ դժւար չէ: Նա սովոր է զիւղական կեանքին, ճանաչում է զիւղացոց, կարող է նրանց հետ հեշտութեամբ մտերմանալ և այլն:

Վերջապէս ում՝ չէ յայտնի, որ սեպհական ուսուցիչներ ունենալը մեր հասարակական ներկայ պահանջներից մէկն է:

Եւ ես այդ պահանջի համաձայն եմ տեղիցս շարժւում:

Ընկերներից ոմանք համակրեցին նրա նպատակին, իսկ ոմանք, որոնք լուրջ դործ կատարելում կամ անընդունակ էին և կամ վախկոտ, միայն ծաղր ու հեգնութիւն արտայայտող ժպիտներ արձակեցին մի կողմ քաշւելով:

Այն ինչ Սմբատը ամբողջապէս այդ մութին էր նւիրւել:

—Ա՛խ, եթէ ես այնտեղ զիւղում լինէի, բացականչում էր նա ամեն անգամ, երբ զիւղերից տխուր լուրեր էր լսում: Եւ նրա վառ երեակայութիւնը տեղ էր տալիս մի ուրախ պատկերի. ահա նա զիւղումն է: Դուրս է դալիս զիւղամէջ և այնտեղ կանգնած մարդկանց մօտենում: Փոքր ինչ դէսից-դէնից խօսելուց յետոյ նա սկսում է մատնացոյց անել զիւղացոց խոշոր պահասութիւնների

վրայ, բացատրելով, որ դրանք բոլորն էլ բարոյական, մտաւոր և տնտեսական տեսակէտից փնասակար են: Նոյն բանի մասին նա գրում է, քահանային է տալիս և քահանան եկեղեցում կարգում է այդ... Գիւղացիք լսում, կարմրում են և դլուխները քարշ պցում: Այնուհետ համերաշխութեան ոգին կամաց-կամաց մոռաք է գործում գիւղացիների մէջ, բոլորն էլ սկսում են սիրով և փոխադարձ օգնութեամբ ապրել: Դրա հետ միասին նա երբեմն իւր գլխին է հաւաքում շատ գիւղացիներ և գիւղամէջում նստած նրանց համար դրքեր է կարդում, բացատրում: Սկզբում նա կարդում է այնպիսի գրաւծքներ, որոնք կարողանում են լսողներին կապել ընթերցանութեան հետ, իսկ յետոյ անցնում է աւելի լուրջերին... Գիւղացիները այդպիսով ընտելանում են նոր-նոր բաներ լսել ու ըմբռնել, որից յետոյ Սմբատը առաջարկում է գիւղացոց մի ուսումնարան հիմնել: Խոչ ասել կ'ուզէ, որ այդ բանը սիրով է ընդունւում: Բոլորն էլ աջակցում են նրան... Ուսումնարանը շուտով գլուխ են բերում: Ահա դասարանները արդէն լիքն են աշակերտներով, որ եկել են զաւառի զանազան գիւղերից: Այդտեղ են և տէր Թողիկների ուսումնարանների աշակերտները, նրանց ազատել է Սմբատը, և այժմ հարկաւոր է այդ խեղճ արարածների մտաւոր և բարոյական աշխարհը վերանորոգութեան ենթարկել, հարկաւոր է ազատել նրանց ուղեղը այն ծանր կապանքներից, որ կռել-կոփել էին տէր Թողիկի տեսչութեան ուսումնարանները..

Նա պարապւում է աշակերտների հետ. ո՛հ, որքան երջանիկ ժամեր: Բացի դասաւանդութիւնից նա մեծ ուշք է դարձնում և սաների կրթութեան վրայ, աշխատելով նրանց բնաւորութիւնը դէպի կրթութեան իդէալը ուղղել: Աշակերտները սիրում, յարգում և լսում են նրան... Ընտանիքներում նա պտտում, պտտւելում է, որ տղայոց հետ այնպէս վարեն, ինչպէս այդ պահանջում է կրթութիւնը: Այդպիսով նա հաստատում է մի նշանաւոր կապ ընտանիքի և ուսումնարանի մէջ, թէև սկզբներում թույլ... Օ՛հ, ինչպէս չ'ուրախանալ այդ բոլորից յետոյ...

Սմբատի սիրտը թռթռում էր այդպիսի երեակայութիւնների ժամանակ:

—Հարկաւոր է շուտ, շուտ վերջացնել ամեն ինչ և դիւղը

վազել, մտածում էր նա:

Եւ հա մի պեղեցիկ օր, ամառուայ սկզբներին ռուսաց ուսուցչական դպրոցը աւարտած՝ նա ճանապարհ ընկաւ դէպի իւր հայրենի գիւղը:

IV

Տեղ հասնելուց մի ամիս յետոյ Սմբատը սկսեց այն գործը, որի համար նա պատրաստել էր իկել: Ուսման և ուսումնարանի անհրաժեշտութեան դադարաւոր առաջ նա արժարժում էր այն ընտանիքներում, որտեղ նրան ճաշի էին հրաւիրում իբրեւ օտարութիւնից նոր եկածի:

— Հա, Սմբատ, ուսումը հարկաւոր է, ասում էին բարեկամները, առանց ուսումի ոչինչ չի դուրս գալիս... Ինչ ուզում ես վերցրու... ուրեմն մենք ինչո՞ւ խաւար մնանք... ասենք՝ մեր ժամանակը խաւար ժամանակ էր, հիմայ մեր որդիքը ինչո՞ւ պիտի խաւար մնան... Ախպէր, ուսում կայ, անուն էլ կայ, պատիւ էլ, փող էլ...

Բարեկամների միջոցով ուսումնարանի հարցը աւելի և աւելի տարածւեց, և Սմբատը անդադար աշխատում էր, որ վառւած մուքերը կրկին չմարին...

Դրա համար նա մի օր տանուտէրին մի քանի պատուաւորների հետ իր մօտ ճաշի հրաւիրեց ու յայտնեց նրանց իր միտքը: Հիւրերը սկզբում լուռ մնացին: Ինքնասիրութեան զգացմունքը նրանց տակն ու վրայ արեց, որ մինչև այդ ժամանակ այդ միտքը չէր եկել իրանց գլուխը: Բայց յետոյ երբ տեսան, որ վարժապետի առաջարկութիւնը խելացի է և բարի, հանդարտ ու համակրական եղանակով պատասխանեցին.

— Շատ լաւ ես ասում, Սմբատ, ապրիս, բարի օրինակ լինիս... ուսումնարանը շինել կը տանք, մեր երեխէքն էլ ուսում կաւնեն, մեր հարեան գիւղացոցն էլ: Փառք Աստուծոյ, վարժապետն էլ զու կը լինես, մեր մարդը:

— Լաւ, Սմբատ, պա՛) ինչու հիմայ մունթեր չես հաւաքում գլխիդ, հարցրեց մէկը:

1) Ապա:

—Ես մտադիր եմ այդ անել, կը գան մեր տանը կը սովորեն, բայց նախ ես կամենում եմ սուսումնարանի զործը վերջացնեմ: Աշակերտներ հաւաքելը հեշտ է...

—Վերջացնենք էլի: Մէլիք, ինչ ես ասում:

—Ի՞նչ պիտի ասեմ... շուտով Ասուածածին է, պատարագից յետոյ հացի ժամանակ ես դրա վրայ մի կենաց կը խմեմ, պրծաւ գնաց էլի:

—Էդ էլ լաւ ես ասում:

—Վարժապետն էլ մի ճառ կ'ասի, պրծաւ գնաց էլի...

—Աչքիս վրայ, դա իմ պարտականութիւնն է:

—Յետոյ, շարունակեց տանուտէրը, երբ հացից վեր կը կենանք, մի թուղթ ման կ'ածենք, որ ցանկացողը ինչքան ուզում է ուսումնարանին բաշխի... լմա չի լինիլ:

—Էդ հալա շուտ չի, հարցրեց մէկը:

—Պա ինչ, շուտ է, կցեց միւսը, ինչ հարկաւոր է...

—Ինչու չի հարկաւոր, ընդհատեց տանուտէրը, մի քանի մարդ համբաներից, աղասխիւղներից ¹⁾ ձեռ քաշեն, հերիք է. բանը սկսած կը լինենք:

—Ես ևս կարծում եմ, որ աւելորդ չի լինիլ, խօսեց վարժապետը. այդ թուղթը մի քանի ստորագրութիւնների հետ միասին կը շինի ուսումնարանի հիմքը, որ կամաց-կամաց կը բարձրանայ:

Ի վերջոյ բոլորն էլ համաձայնեցին: Հարկաւոր էր այդ միտքը յայտնել ամբողջ հասարակութեան և դրա ժամանակը նշանակեցին Ասուածածնայ տօն օրը: Այնուհետեւ հիւրերը վեր կացան գնալու: Սմբատը յայտնեց նրանց իր շնորհակալութիւնը, ցանկանալով, որ նրանք բարի և օգտակար գործերի համար միշտ աջակցողներ լինեն: Շնորհակալութիւն յայտնեցին հիւրերը ևս Սմբատի հիւրասիրութեան և նպատակի համար և դուրս գնացին: Նրանք բոլորն էլ այդ օրը իրանց ուրախ, զարթ և բաղդաւոր էին զգում, տեսնելով, որ մի բարի գործի ձեռնարկողներ են: Առանց վարժապետի նրանք մի քանի անգամ ևս խորհուրդ արեցին, վճռելով անպատճառ գլուխ բերել ուսումնարանը:

¹⁾ Գիւղի կարևորագույն մարդիկ:

Երկու շաբաթից յետոյ հասաւ Աստուածածնայ տօնը: Ամառն էր, խաղողի և ուրիշ մրգերի հասած ժամանակը: Առաւօտ էր, մի սքանչելի առաւօտ: Արեւը դեռ ևս չկար: Միմեանց խճճած լեռնաշղթաների զաղաթները իրանց բարձրութիւնից էլ նոր էին տեսնում արևի երեսը: Զմայմոնք և ինքնաբաւականութիւն արտայայտող զէմքերով նրանք նայում էին ամեն կողմ, աշխատելով բոլորի ուշքը գրաւել և կարծես հպարտութեամբ կամենում էին ասել.

—Տեսէք, մենք առաջինն ենք որ տեսնում ենք արևին:

Երկնականարի երեսին մի ամբի կտոր անգամ չէր երևում: Օդը պարզ էր, զով և հանդարտ: Միայն երբեմն մեղմ հովիկը նազնազելով գալիս, իր ուղիով անց ու դարձ անողներին շոյում, փայփայում էր, յետոյ գնում, անյայտանում և կրկին գալիս...

—Ուխայ, բացականչում էր նրան հանգիպողը, իրան հովիկի գիրկը գցելով... Ուխայ, քո Տիրոջ փառքը շատ լինի, պա սաղ օրը որտեղ ես լինում, ախր արեւը մեզ այրում, խորովում է...

Այդ սքանչելի առաւօտայ գեղաճիծաղ տարրերից մէկն էլ թարմ ու զւարթ բուսականութիւնն էր. կանաչազարդ արտերը, այգիները և մարգագետինները այդ գեղեցկութեան թագն ու պսակն էին կազմում: Բնութիւնը ամենուրեք խնդում ծիծաղում էր: Լայնատարած պտուկերը շատ հրապուրիչ էր և հաճելի: Ոչ ոք չէր կամենալ հեռանալ նրանից:

Եւ ինչո՞ւ հեռանալ. չէ որ նա իւր դիւթական զօրութեամբ ժամանակաւորապէս մոռացնել է տալիս ամենքի առօրեայ հոգսերն ու ցաւերը և նրանց մարմինն ու հոգուն մի տեսակ զւարթութիւն, թեթեւութիւն ներշնչում... Ինչո՞ւ հեռանալ, ինչո՞ւ չ'օգտուել. չէ որ արեւը շուտով դուրս է գալու որ ամենքին դարձեալ պապակէր:

Եւ որքան հաճելի էր դառնում այդ առաւօտը օրւայ տոթը երևակայելու միջոցին:

Առաւօտեան զովով գիւղացիներից ամեն մէկը գնացել էր իւր այգին, խաղող քաղի եկեղեցի բերելու համար:

Արեւը նոր բարձրացել էր մօտակայ լեռան յետևից, եկեղեցու գմբէթը ամբողջովին լուսաւորւած էր նրա առաւօտեան ճառագայթներով, պատարագը սկսւելու վրայ էր, որ ամեն ոք խաղողով

լիքը փոքրիկ զամբիւղը ձեռքին շտապում էր դէպի եկեղեցին: Այդ օրը քահանան կ'օրհնէր խաղողը, գիւղացիք այդ խաղողից բերանները կը դնէին և դրանով բաց կ'անէին իրանց խաղողապասը: Գիւղացին իւր մշակած, պահած, հասցրած խաղողին մինչև Աստուծածնայ տօն օրը ձեռք չի տալիս, մի պտուղ էլ բերանում չի դնում, այնպէս որ խաղողի քաղցրութիւնը կամ հասած լինելը նա իմանում է իւր անչափահաս որդու միջոցով: Որպէս զրանք՝ երեսնաներն ու պատանիներն են, որ չեն կարողանում համբերել մինչև Աստուծածնայ տօնը և ոմանք բոլորովին պաս չեն պահում, իսկ ոմանք մի-երկու շաբթից յետոյ բաց են անում: Խաղողի կախկախ ողկոյցները իրանց սև և յակնթագոյն պտուղներով ամեն օր գրաւում են նրանց ուշն ու միտքը, անդադար հրապոյրներ ուղարկելով: Պատանիները այդ քաղցր, հաճելի հրապոյրներից շլացած վրայ են վազում և չեն իմանում որ ողկոյցը կտրեն, որը պահեն. բոլորն էլ նրանց աչքերին լաւ են երևում..

Պատանիներն ու երեսնաները թէև խաղողապաս չեն պահում, բայց նրանք Աստուծածնայ տօնի օրը նոյնպէս եկեղեցումն են, դասերում խմբւած: Նրանք անհամբեր սպասում են խաղող բաժանելուն, որ օրհնած խաղողից էլ ուտեն և իրանց մայրերի ու քոյրերի համար բաժին տանեն:

Ահա պատարագը արդէն վերջանալու մօտ էր: Գանձապետն ու վարժապետը, որը նոյնպէս շապիկ հագած այդ օրը տիրացութիւն էին անում, մի-մի խաղողով լիքը սինի ձեռքներին խաղող էին բաժանում: Սկզբում ամեն ոք կարգով մօտենում, խաղող էր ստանում, բայց յետոյ բոլորն էլ իրարով անցան, խառնեցին, միմեանց հրոտել սկսեցին... Գանձապետի և վարժապետի բարկանալը, նախատելը ոչինչ չէր օգնում. ժողովուրդը շարունակում էր իւր հարայ-հրոցը:

Այդպէս ամեն ոք խաղող էր ստանում և դուրս գնում, որ լաւեց պատարագիչ քահանայի ձայնը:

—Սիրելի ժողովուրդ, սպասեցէք, լսեցէք. Պատարագից յետոյ ամենքդ էլ եկէք դիւղամէջ մատաղ ուտելու: Ուրիշ տեղ դնացող չ'լինի, որովհետև զործ կայ. էդ զործը սաղ հասարակութեանն է վերաբերում, դրա համար ասում եմ, որ ուրիշ տեղ չգնաք, ամենքդ էլ դիւղամէջ դաք:

Ժամն էլ վերջացաւ: Ամենքը շտապով տուն վազեցին հաց, աման, զինի վերցրին հետները, որ զան գիւղամէջ: Գզիրը արդէն մի քանի երիտասարդների հետ այնտեղ հաստաբուն և սուերախիտ չինարուտակ սեղանը գցել, պատրաստել են: Տնտեսութեան մէջ հմուտ մի քանի տղամարդիկ զոգնոցները կապած մատաղովն են կացել, որը օջախի վրայ եփում, թշթշում է: Մի երկու ջահիլներ էլ օջախից մի կողմ պազած խորովածացու են շարում: Գեռ առաւօտ է, արեւը մի լուծ բարձրացած, բայց աշպաղէիների¹⁾ դէմքները մեծ օջախի տաքութիւնից այրում, վառւում են...

Վերջապէս ժամ գնացողները եկան մէկ-մէկ, նստեցին, հացները բաց արին, զինին դրեցին առաջներում և սպասում էին տէրաէրի օրհնելուն: Այդ ևս կատարեց և այնուհետև ամենքն էլ մեծ ախորժակով, խշփշալի հացի վրան տւին: Ահա, մի կողմից բերում են մատաղաշուրը, միւս կողմից միսը, իսկ վերջում խորովածը: Ամեն մի խմբի մէջ տիրում է ուրախութիւն, ցնծութիւն և բաւականութիւն: Ուտում, խմում, ասում, խօսում, հանաքներ են տնում, ծիծաղում: Կենացների ժամանակ երբեմն լռում, բայց երբեմն շարունակում են իրանց մասնաւոր խօսակցութիւնները:

— Գզիր, ասա հղտեղ սուս կենան, լսեց տանուտէրի ձայնը:

— Տղերք, սուս կացէք, կամացուկ յայտնում է գզիրը, որը կանգնած ծառայում էր սեղանաւորներին: Բայց ինքն էլ մոքով ու սրտով այդ խմբի հետ լինելով չի կարողանում բոլորովին լռացնել, ինքն էլ թաքուն խօսում, ծիծաղում է:

— Դէ, սասներդ կտրեցէք է, գոչեց տանուտէրը փոքր ինչ բարկացած ձայնով: Այս անգամ ամենքն էլ զաղեցին իրանց և կամաց-կամաց լռութիւն տիրեց: Այնուհետև Մեկիքը բաժակը ձեռքին յայտնեց, որ մտադիր են մի ուսումնարան կառուցանել հասարակութեան փողով ցանկանում է, որ բոլորն էլ եռանդով աջակցեն այդ գործին ու խմում է աղաքաց ուսումնարանի կենացը: Վարժապետն էլ վերկացաւ տեղից և մի ճառ ասաց, բացատրելով ուսման նշանակութիւնը թէ գիւղացոց և թէ նրանց երեխաների համար: Այնուհետև լսեցին ուրախութեան աղաղակներ. մի քա-

¹⁾ Խոհարար:

նի տեղերից ծափի ձայներ, իսկ վերջ ի վերջոյ տեղի տւաւ մասնաւոր խօսակցութիւն: Ամեն դք իր կողքին կամ դիմաց նստողի հետ խօսում էր: Բարձրացել էր մի մեծ աղմուկ, որի մէջ լսւում էին վէճեր, բացականչութիւններ, բարձր ծիծաղ և այլն:

—Ե՛հ, դժւար գլուխ գալու բան է, խօսում էին մի խմբում:

— Ինչո՞ւ, անաշէնի մարդ, դժւարը սկսելն է:

—Փող շատ կը գնայ, փող... դա իսկի մի տարում գլուխ գալու բան է:

—Վնաս չունի, թող երկու-երեք տարում գլուխ գայ. վերջը խօսմ ուսումնարան կունենանք. յետոյ ինքը իրան գլուխը կը պահի:

Մի ուրիշ խմբի մէջ, որ կազմում էին դեռահաս երիտասարդները, տեղի էր ունենում հետեւեալը.

—Էն ժամանակ մեր գիւղը Ա. գիւղից անց կը կենայ ¹⁾:

—Պա ի՛նչ է... ուսումնարանն էլ որ բալկոնաւոր լինի:

—Ամա գիտես, էնտեղ 4—5 վարժապետ կայ, էդ էլ ասա է:

—Պա հստեղ չի լինիլ, մերը հալա նոր է...

—Ասում են Ներսէսեանց Վահանն է գալու վարժապետութիւն անի:

—Եդ է երկուսը կան խօմ, էլ ի՛նչ էք ուզում:

—Ես մհալում մեր դիւղն էլ քաղաք է զառնալու էլի, մի առանձին բաւականութեամբ ասաց մէկը, մի քանի դիւքէաններ էլ որ կան:

—Պա ի՛նչ... էն օր գնացել էի խուլ գիւղը ոչխար առնեմ, մէկը ինձ տեսել, հարցնում է. ձեր գիւղը, ասում է, մեծ շիհար ²⁾ է, հա՛մ...

—Հա, հա, հա, ծիծաղեցին ամենքը:

Աւելի հասակաւորները հանդարտ և լուրջ դէմքով քննադատում էին հարցը:

—Վարժապետն էլ որ մեր մարդն է լինելու, էլ ի՛նչ էք ուզում:

—Շատ լաւ է, գովելի է, ոչինչ չեմ ասում, ամա ուսումնարանի շինութիւնը աւելորդ է. մեծ փող կը նստի:

¹⁾ Կը գերազանցէ. ²⁾ Քաղաք:

— Ինչպէս թէ լաւ է և աւելորդ:

— Հրամանքս, այո, աւելորդ է, մի տուն չէ, բռնեք, էնտեղ սովորեցնի:

— Օրհնած, էդ ինչ ուսումնարան կը լինի. մի իմանայիր, թէ վարժապետը էդ խօսքերիդ ինչ պատասխան կը տար:

— Ի՞նչ պատասխան պիտի տար, աւելորդ ծախս է:

— Էն կասէր, որ հիմիկս լսեցիր. Եդ մարդը Թիֆլիսումն է ուսում առել, դա էլ խօսմ մղղսի Մոսկն չի, որ մոենթերին տանի մի թովլաց անի, թէ ինչ է, ես էլ ուսումնարան եմ պահում:

— Ուսումը ուսում է, որտեղ ուզում է լինի:

— Ասում ես, մէկ վարժապետին հարցուր, տես մէկ է. որ էդպէս է պա ինչո՞ւ քաղաքներում էնքան փողեր են ծախսում առանձին ուսումնարաններ շինում:

— Քաղաքներում բանը ուրիշ է.

— Ինչո՞ւ է ուրիշ. մենք քաղաքացիներից աղքատ ենք, սուտ չի, մեր ուսումնարանն էլ դրա համար փոքրիկ, հասարակ կը լինի, բաց մի էնպէս, առանձին...

— Ե՞հ, ասում ես էլի. հէնցա առանց դրան եօլաց չենք գնալ. ախր դրա օգուտը հրն է.

— Օգո՞ւտը, ըհը՛, օգուտը շատ-շատ է, շատ. էնքան հարեան գիւղեր կան առանց ուսումնարանի... չէիր լսում, ինչ էր ասում վարժապետը, հէր օխնած. էնտեղի տղերքն էլ կը գան կը կարդան. մի օթախ բռնեցիր, քանի աշակերտ կը նստեցնես.

— Ե՛հ, մենակ էդ ես ասում, աւտօրիտետի նման միջամտեց մի ուրիշը, որը օտարութիւնում երկար ժամանակ եղել էր. — շիօլը շիօլ պիտի լինի, նաստայաշի. խոմ ամեն տուն շիօլ չի լինիլ. էն էլ մեր գիւղերում: Սենեակը լոյս, շուշի ակօշկաներ պիտի լինեն. էնտեղ ստոլ սկամի պիտի դնես, խոմ չի լինիլ, որ ուշենիկներին բերես տափին նստացնես, ծնկների վրաց դիր դրէն. ժամանակումն շիօլը հանաք մասխարայ չի. քաղաքներում թագաւորական մարդիկ գալիս են շիօլը նաջում, տեսնեն ինչն է պակաս ինչը չի պակաս. չէ շիօլը սամսէ-՛մ նաստայաշի շիօլ պիտի լինի:

— Ե՛հ, թող ձեր ասածը լինի, ախպէր, շինեցէք տեսնեք. ես չեմ ուզիլ...

Այդ ժամանակ կրկին լսեց Մելիքի ձայնը, որը լռութիւն էր պահանջում: Երբ բոլորն էլ կամաց-կամաց հանդարտեցին, նա յայտնեց, որ հացից յետոյ զգիրը նստած է լինելու չինարու տակ դրած սալ քարի վրայ մի թուղթ ձեռքին: Յանկացողը կարող է նւիրաբերութիւն անել նորակառուց ուսումնարանին և ստորագրել: Փողը կարելի է և յետոյ սալ: Երբ հարցը փողին հասաւ, շատերը ունեւերը փոքր ինչ կախ արեցին, բայց մտաբերելով «ով ռզում է» խօսքերը, հանդարտեցին: Այնուամենայնիւ հարուստները բոլորն էլ համարեա մէկը միւսից յետ չմնալով, ստորագրեցին:

Նոյն օրը երեկոյեան զգիրը գիւղի ամենաբարձր կտրից կանչեց, թէ առաւօտեան բոլորն էլ գիւղի մէջ պիտի ժողովեն ուսումնարանի մասին խօսելու: Այդ ժողովն էլ կայացաւ և նրա արդիւնքը հետեւեալն էր.

Վճռել էին, որ ուսումնարանի կառուցման մէջ մասնակցեն և Հ. գիւղացիք, եթէ ի հարկէ նրանք համաձայն լինէին, հակառակ դէպքում Տ. գիւղացիք ամբողջ գործը իրանց վրայ էին վերցնելու: Որովհետև ուսումնարանը դեռ ևս ևս կկամուտի աղբիւր չունէր, այդ պատճառով տունը երեք բուբի իբրև ուսումնահարկ պիտի վճարէր: Եկամտի մէջ կը մտնէին և այն տուգանքները, որ առնում է տանուտէրը դատի ժամանակ զանազան մեղադրեալներից: Այնուհետև ընտրեցին 5 հոգի վարժապետի հետ միասին և շինութեան գործը յանձնեցին նրանց: Ի վերջոյ վարժապետը յայտնեց, որ ուսումնահարկը ամեն անգամ ժամանակին պիտի ժողովի, որպէս զի շինութիւնն էլ կանոնաւոր կերպով աւաջ ընթանայ: Մի բան ևս բաւականին տաքացած ու ոգևորւած աւելացրեց, թէ պէտք է շտապել ուսումնարանը գլուխ բերել, թէ չէ յետոյ կ'ուզեն, բայց էլ ուշ կը լինի. անցածը անցած կը լինի և այնուհետ ուղածները ձեռքները չի գալ...

Շատերը հասկացան նրան և միմեանց դառնալով խորհրդաւոր եղանակով ասացին.

—Իսկ է ե.—էդպէս բան էլ կայ:

Երկու օրից յետոյ հոգաբարձուները վարժապետի հետ միասին գնացին Հ. գիւղը և ստաջարկեցին այնտեղ իրանց միտքն ու պայմանները: Դիւղացիները մեծ մասը համաձայն էր, իսկ մնա-

ցածը ոչ, այնպէս որ հարցը վճուեց յօգուտ ուսումնարանի: Այնուհետեւ Հ. գիւղացիք ևս իրանց միջից հողաբարձուներ ընտրեցին, որոնք պիտի մասնակցէին վարչական գործերում: Ալիճաբանութիւններ, հայհոյանքներ, միմեանց դիպչել այդ բոլորի համար շատ եղաւ, մէկ որ Հ. գիւղացիք փոքր ինչ թարս մարդիկ էին, մին էլ որ մէջ տեղը փող կար. գործին հակառակ կանգնողը Սարգսեանց Առաքելն էր իւր ազգականներով և համախոհներով միասին, որոնք անդադար գոռում-գոչում էին:

— Զենք ուզում, շենք ուզում, զոռի բան է. ով իրա որդուն տալու է ուսումնարան՝ նա թող թղթին ձեռք քաշի... մենք ոչ ուսումնարան ենք ուզում, ոչ էլ Յ մանէթ կը տանք: Դա էլ թագաւորական հարկ է, ի՞նչ է... Բոլոր հողաբարձուները, որոնց մէջ կային և այդ գիւղերի տանուտէրները, վերադարձան Տ. գիւղը և միւս օրը թափուրով օրհնեցին ուսումնարանի հիմքը: Տեղը գտնուում էր գիւղից դուրս բարձր լեռան լանջին, որ ուղղակի դէպի արտերն էր նայում:

Մի ամսից յետոյ սկսեցին գործը և մինչև աշնան վերջերը պատերը հիմքից փոքր ինչ բարձրացան: Յատակադիծը ցոյց տւեց Սմբատը և նա էր ընդհանրապէս ճարտարապետի պաշտօն կատարողը: Ուսումնարանը երկդասեան կը լինէր մի քանի ժամանակից յետոյ: Դրա համար շինութիւնը բաղկացած կը լինէր 5 սենեակներից մի օւղղութեան վրայ միմեանց կցած:

Երկու տարւայ ընթացքում պատերը կիսից բարձրացել էին: Դրա հետ միասին արւած էր և հիւսններին վերաբերող գործերի մեծ մասը:

Ուսումնահարկը ամեն անգամ ժամանակին ժողովւում էր և գործադրւում:

Միայն երկրորդ աարին Հ. գիւղացիք երկու շաբաթ ուշացրին: Այդ էլ Առաքելի, մղդսի Մոսու և դրանց նմանների շնորհիւ էր: Դա մի փոքրիկ կուսակցութիւն էր, որ կռիւ էր մղում ուսումնահարկի և ուսումնարանի գոյութեան դէմ...

Այդ կռիւը անշուշտ խիստ կերպարանք կը ստանար, եթէ մէջ ընկնէին կուսակցութեան պարագլխի՝ Առաքելի անձնական շահերը՝ — կտակի հարցը:

(Այերջը չաջորդ համարում)

Հ Ր Ե Շ Տ Ա Կ

ՊՈԻԾԿԻՆԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Քնքոյշ հրեշտակն գլուխ խոնարհած,
Համեստ շողում էր եղեմի դռանս.
Իսկ մռայլ դէր թռչում վրդովւած,
Մութ դժոխային անդունդի վերանս:

Եւ չար, կասկածոտ ոգին ուրացման
Անթարթ նայում էր մաքրափայլ ոգուն
Եւ զգում իւր մէջ ականաց զղջման
Մի նոր ու անյայտ քաղցր ջերմութիւն:

Ներիր, ասում էր, որ տեսայ ես քեզ.
Օ', ինձ պատկերըդ իզուր չը շողաց.
Դեռ կեանքից խալառ չեմ դարձրել երես,
Դեռ ողջ աշխարհը չեմ արհամարած:

10 օգլիսի, 1894 թ. Կիսլովոդսկ.

*
* *

ՆԱԴՍՈՆԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴԵՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Հասել է ժամը: Ե՛կ, ո՛վ մարգարէ, յայտնելի՛ր դու շուտով,
Կոչում եմ ես քեզ բունն տխրութեամբ և բունն սիրով.
Նայիր մեզ վերայ, տես ինչպէս թո՛յլ ենք և ինչպէս յոգնած,
Ինչպէս անզօր ենք չարատանջ կռուում՝ մեր առաջ բացւած...
Արի՛ կամ անժամ, կամ էլ ո՛չ երբէք... Նայիր, օրէցօր
Թմրում է միտքը, մեռնում է խիղճը, ամօթը կորչում:
Զկան գէթ նշոյլ փրկարար լուսոյ. մոթ է չորս բոլոր,
Եւ միայն անգուսպ ոչնչութիւնն է ամեն տեղ իշխում...

26 յունիսի, 1894 թ. Կիսլովոդսկի:

ՕՐՀՆԵՂԼ ԼԻՆԵՍ

(Հնդկական լեզունդա)

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵԻԻՉԻ, Թարգմ. Ա. Աղեյան

Մի անգամ պարզ լուսնկաջ գիշերին մեծ և խմաստուն Կրիշ-
նան խոր մտածմունքի մէջ ընկաւ.

— Ես կարծում էի, ասաց նա, թէ մարդը աշխարհի ամենա-
գեղեցիկ արարածն է, բայց սխալեցայ. ահա, ես տեսնում եմ
լոտոս ծաղիկը, որ տատանւում է գիշերային մեղմ հովիկը շնչե-
լուց: Ո՛րքան գեղեցիկ է նա բոլոր կենդանի արարածներից: Նա
բաց է արել իւր թերթիկները լուսնի կաթնագոյն լոյսից և ես
իմ աչքերը չեմ կարողանում հեռացնել նրանից:

— Այո, շարունակեց նա ասի քաշելով, մարդկանց մէջ դրա
նման ոչինչ չկայ: Եւ բոլորից յետոյ կրկին մտածեց.

— Միթէ ես՝ Աստուածս, ոյժ չունիմ մէկ խօսքովս այնպիսի
մի արարած ստեղծել, որը մարդկանց մէջ նոյնը լինէր, ինչ որ
լոտոսը ծաղիկների մէջ: Եւ թող մարդկանց ու երկրի համար դա
մի բերկրանք լինի:

— Ահա, փոխիր կերպարանքդ, կենդանի կոյս եղիր և կանգ-
նիր իմ առաջ:

Յանկարծ թևթև կերպով ցնցւեց ալիքը, ասես ծիծեռնակի
թևի կպշելուց, պարզւեց գիշերը, լուսինը աւելի պայծառ լոյսով
փայլեց երկնքում, գիշերային տորտիկները աւելի բարձր երգեցին
և յանկարծ լռեցին: Ու ի՛նչ մի հրաշք. լոտոսը կոյսի կերպարանք
առած՝ կանգնեց Կրիշնայի առաջ:

Աստուածը ինքն էլ մնաց զմայլւած:

— Դու լճի ծաղիկ էիր, ասաց նա, իսկ այժմ իմ մոքերի ծաղիկը կը լինես, խօսիր:

Եւ կոյսը սկսեց այնպէս շնչել, ինչպէս քշվում են լոտոսի սպիտակ թերթիկները ամառային քամուն շփւելուց:

— Տէր, դու ինձ կենդանի արարած դարձրիր. բայց որտեղ ես հրամայում, որ ապրեմ: Դու գիտես, տէր, որ ծաղիկ ժամանակս ես դողում էի քամու ամեն մի շարժումից, վախենում էի յորդահոս անձրևներից ու բքից, սարսում էի որոտումից և կայծակից, վախենում էի նոյն իսկ արեգակի կիզիչ ճառագայթներից: Դու հրամայեցիր, որ ես լոտոսի պատկերացումը ամփոփեմ իմ մէջ, և ես, ահա, պահպանել եմ իմ բնութիւնը: Բայց ես վախենում եմ երկրից և այն ամենից, որ ապրում է նրա վրայ:

Որտեղ ես հրամայում, որ բնակւեմ ես.

Կրիշնան իւր իմաստուն աչքերը ասողերին դարձրեց, խորհեց ու հարցրեց.

— Կամենում ես ապրել լեռների գագաթներին:

— Այնտեղ ձիւն է և ցուրտ, տէր, վախենում եմ:

— Եթէ այդպէս է, ես քեզ համար լճի յատակում բիւրեղներից մի ապարանք կը կանգնեցնեմ:

— Զրերի խորքերում գեռուններ ու այլ և այլ ամեհիներ են լողում, տէր, վախենում եմ...

— Ուզում ես անսահման դաշտավայրը:

— Օ', տէր, հողմն ու բուքը վայրի կենդանիների հօտերի նման ոտնատակ են տալիս դաշտավայրը:

— Ապա ի՞նչ անեմ, ո՞վ ծաղիկ, որ մարդու մարմին ես առել... Հա, էլլորայի քարայրներում ճգնաւորներ են ապրում: Կամենում ես այնտեղ տեղափոխել, քարայրները, լոյսից հեռու...

— Այնտեղ մութն է, տէր, վախենում եմ:

Լսեց Կրիշնան: Նա նստեց ընկած քարերից մէկի վրայ և գլուխը արմունկներին յենեց: Կոյսը ահ ու դողով կանգնած էր նրա առաջ:

Այդ ժամանակ արևելքում արշալոյսը սկսեց լուսաւորել երկինքը. նա ոսկեգօծեց լճի հարթ մակերևոյթը, արմաւենիքը և

բամբուկները: Արշալոյսը բացւելուն պէս ջրերի երեսին երեւցին վարդագոյն արագիլներ, կապուտ կռունկներ և սպիտակ կարապներ, անտառներում՝ սիրամարգններ, բենգալներ, իսկ այդ բոլորին ձայնակցեց մարգարտախեցիի վրայ ձգած լարերի հնչիւնը մարդկային երգի խօսքերի հետ միասին:

Կրիշնան սթափւեց խոր քնից և ասաց.

—Դա Վալմիկի պօէան է, որ ողջունում է արշալոյսի ծագումը: Փռւեցան ծաղիկների ծիրանագոյն քողերը և լճի ափին երեւաց Վալմիկին:

Տեսնելով լոտոս ծաղկան մարդու կերպարանք առած՝ նա դադարեց երգելուց: Մարգարտախեցին հանդարտութեամբ ընկաւ նրա ձեռքից հողի վրայ, կռները կախ ընկան և նա մնաց անշարժ կանգնած, այնպէս անշարժ, որ կարծես մեծ Կրիշնան նրան այդ ընկալէին ծովեզրեայ մի ծառ էր դարձրել: Զարմացած մնաց պօէտը Աստծոյ արած ստեղծագործութեան վրայ, և այդ զարմանքը Կրիշնային հիացումն պատճառեց:

—Սթափւիր, Վալմիկի, խօսիր:

Եւ Վալմիկի-ն ասաց.

—Սիրում եմ:

Նա միայն այդ խօսքն էր չիշում և այդ միայն կարողացաւ արտասանել.

Փայլեց Կրիշնայի երեսը յանկարծ:

—Հրաշալի կոյս, ասաց նա, ես քեզ համար աշխարհի երեսին մի արժանի տեղ գտայ. բնակւիր, ահա, պօէտի հոգու մէջ:

Իսկ Վալմիկի-ն մի անգամ էլ կրկնեց.

—Սիրում եմ:

Հզօր Կրիշնայի աստուածային կամքը սկսեց կոյսին դէպի պօէտի սիրտը մղել իսկ Վալմիկի-ի սիրտը դարձրեց բիւրեղի նման թափանցիկ:

Եւ կոյսը ամառային օրւայ նման պարզ երեսով ու Գանգէսի ալիքի նման խաղաղ ողով ոտք դրեց իւր համար նշանակւած ապաստանարանում: Բայց յանկարծ պօէտի սրտի աւելի խորքերը նայելով, նա գունատւեց: Սարսափը կտրող քամու նման սարսուռ-ցրեց նրան:

Զարմացաւ Կրիշնան և հարցրեց.

— Դ՞նչ, մարդկային մարմին առած ծաղիկ, մի՞թէ վախենում ես և այդտեղ, պօէտի սրտի մէջ, ապրել:

— Տէր, պատասխանեց կոյսը, դու հրամայել ես, որ այստեղ ապրեմ. բայց այս միակ սրտի մէջ ես տեսայ և լեռների ձիւնապատ զազաթներ, և օտարոտի էակներով լիք ջրերի անդունդներ, և դաշտավայրը հողմալի և բքալի, և Ելլորայի մութ քարայրները... օհ, Տէր, ես վախենում եմ դարձեալ:

Բայց զթառառ և իմաստուն Կրիշնան ասաց.

— Հանդարուիր, դու, մարդ դարձած ծաղիկ, եթէ Վալմիկի սրտի մէջ ձիւնի կոյտեր կան, դու եղիր դարնան ջերմաշունչ արեւը և հալեցրու նրանց: Եթէ այնտեղ ջրերի խոր անդունդներ կան, դու եղիր այդ խորքերի միակ մարդարիտը: Եթէ այնտեղ է անապատի խուլ տարածութիւնը, դու ցանիր այնտեղ երջանկութեան ծաղիկներ: Եթէ այնտեղ են Ելլորայի մռայլ քարայրները—եղիր այդ խաւարում լոյսի մի ճառագայթ...:

Իսկ Վալմիկի-ն, որը այդ ժամանակամիջոցում դարձեալ խօսելու ընդունակութիւն էր ստացել՝ աւելացրեց.

— Եւ օրհնեալ լինես...

ԱՆՄՈՒԱՅ ԸՆԿԵՐԻՍ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

I

Իմ պարտիզից այս փնջիկը ես ծաղկաքաղ արեցի,
Աղնիւ ընկեր, տանջւած ընկեր, քեզ ես նւէր բերեցի.
Գիտեմ, զու չեմ արհամարիլ իմ այս անվարժ հիւսւածքս,
Նա քաղւած է մաքուր սրտից—նրա մէջ է տենչանքս,
Աւ, ուրեմն, այս յիշատակ. և իմ համեստ փնջիկը
Թող քեզ պատմէ, որ քրտնաթոր իրեն ինամոզ մշակը
Գիշեր-ցերեկ արցունքով է այդ ծաղիկները ջրել,
Որ և վերջը խորին սիրով իւր ընկերին նւիրէր:

Թիֆլիս, Յունիսի 7, 1894:

II

Այն մի զմայլիչ առաւօտ էր,
Երբ թռչուններ բունից իջնում,
Արշալուսին ողջունելով
Աղօթք էին երկինք ուղղում:

Եւ տերեւ հեղ ուռենու
Թեթեւ զողով մրմնջում էր,
Իբրեւ շրթունք միանձնուհու,
Կարծես, նա էլ աղօթում էր:

Դեռ փայլում էր Արուսեակը
 Արշալուսեան այդ վեհ արքան,
 Երբ աստղերն էլ վերջին աղօթք
 Սրմնջացին ու չքացան...

Տէր, գոչեցի, վշտից յուզւած՝
 Իմ աղօթքն էլ թող հասնի Քեզ,
 Եւ մաղթանքս սրտից այրւած՝
 Ընդունիր իբր մի ողջակէզ:

Եւ շրթունքս անով զողով
 Մէկի անուն էր շըշնջում...
 —Ախ, նա ընկերս... հառաչելով
 Տառապում էր վերջին շնչում...

Սլաւեանկա գիւղ, 1890 թ., օգոստ. 20.

ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. Մ. ՎՐՈՅՐԻ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

«Մուրճ» ամսագրի էջերում հրատարակեց մեր «Պետրոս Ադամեան» վերնագրով գրածքը, որ համառոտ հայեացք էր միայն նրա կեանքի և գործունեության վրայ, և ոչ մի կողմից չէր կարող համարել իբրև մի լիակատար գրածք: Մեծ արևստագէտի հոգու բոլոր խորշերը մեր առաջ բանալու համար հարկաւոր էր որ ինքը, իր սեփական գրչով, իր իսկական խօսքերով ներկայանար մեր աչքին: Եւ մենք մեծ արևստագէտով հետաքրքրուողներին և նրան գնահատողներին ներկայացնում ենք նորա առ պ. Ալ. Ստեփանեանց գրած 50 հատ նամակները, որոնք ոչ թէ իր կիրթ ճաշակին, զգայուն հոգուն, անհուն սիրոյն և վառ երևակայութեան ինքնախօս վկաներն են, այլև մի որոշ ժամանակաշրջանի կենսագրական ցիշատակարանն է, թէև թերի, ուր ծագող արեւը լուսաւորում է իր շուրջը, հասնում է միջօրէի բարձր գագաթին, աջ ու ահեակ սրբառում ողողում է իր լուսով և ջերմութեամբ և ապա կամաց-կամաց մոլթ թուլալով շրջապատում և վերջապէս մայր է մըտնում, անհետանում մռայլ մթութեան և խաւարի մէջ:

Թէև պ. Ա. Ստեփանեանցի համեստութիւնը չէր ներում որ այս նամակները հրատարակութեան տրւէին, բայց ինչպէս շատերի, նոյնպէս մեր թախանձանքը և սրանով իր անմոռանալի և յաւերժ ողբալի մեծ արևստագէտ բարեկամի բնաւորութեան ավելի որոշ պարզելուն և առհասարակ թատրոնական գրականութեան և պատ-

մութեան իբր նիւթ շինելուն համոզելով, մեզ յանձնեց ստորագրութեան և հրատարակութեան տալու համար, նախապէս կրճատելով նամակների միջից այն մասերը որոնք լոկ ընտանեկան և կամ ո՞ր և է անձնական գործի հանգամանք ունէին:

Մեծ արւեստագէտի հատուկտոր, և կամ բաւականաչափ զրաժնամակներ թէև շատերի մօտ ցրւած կան, բայց ոչ մինը չունի այն նշանակութիւնը ինչ որ ունին պ. Ա. Ս.-ցի մօտ եղածները, որոնք, բացի իրանց պատկառելի թւից, հետաքրքիր են նորա համար որ՝

1) Նոքա անընդհատ գրւած են 1886 թ. յունիսի 16-ից մինչև իր վերջին օրերը, 1891 ապրիլի 3. այդ թւականից ճիշտ երկու ամիս յետոյ խաւարեց իր կեանքի արււլ, միմիայն 86—87 թւականի թատրոնական սեզոնն է, որ Տփլիսիսումն էր, և շատ մօտ իր հոգեհատոր Ս.-ին, բաց է մնում իր նամակների շարքում յիշատակելուց:

2) Այս գրութիւններում Աղամեան իր ամբողջ ներքին աշխարհը անկեղծօրէն բաց է անում Ս.-ի առաջ, նա հրճում է, ուրախանում, խայտում, տխրում, բարկանում, կատակում, լաց լինում, կարմրում, բողբոջում, և այս բոլորը առանց քաշելու, նախապէս ապահով լինելով Ս.-ի գաղտնապահ ոգոյն:

Այս գրութիւնների շարքում թիւ 35 նամակը մի հետաքրքիր և շօշափելի խոստովանութիւն է Աղամեանի մեծ և անհուն հաւատքին. և մի քանի անգամ ուշի ուշով կարդալով այդ գրւածքը, մենք հաւատացինք որ Աղամեան ցանկանում էր որ իր այդ գրութիւնը վաղ կամ ուշ տպագրւէր: Այդ գրւածքում, հանճարաւոր դերասանը, խոնարհած Նախախնամութեան առաջ, հանդիսաւոր կերպով արտասանում է ընդհանուրի առաջ իր դաւանանքը, լի հաւատով և անկեղծութեամբ. նորա ձայնը այդ միջոցին կարծես լսում է բազմութեան առաջ ջերմեռանդն քարոզող կրօնի պաշտօնեայի պէս, որ պատրաստ է իր վարդապետութեան հակառակորդին առաջ հարիւր հազար փաստ թափել, ապացուցանելու համար իր քարոզութիւնը...

Մի քանի նամակներում լսում են նորա բարկացող շեշտերը այնքան պարզ և որոշ, որ մեծ արւեստագէտը պատկերանում է ընթերցողի առաջ. ահա՛ նա, արագ, կանոնաւոր չափւած քայլերով

անցուդարձ է անում սենեկին մէջ, ունքերն ու շրթուկը դողդոջում են յուզմունքից, կապոյտ աչքերը տարօրինակ կերպով փայլատակում, և մեծ, գիսախուլ գլուխը ցնցում անհանդարտ, բարկացած դուռում է նա, և նորա արտասանած ամեն մի բարձրագոյ խօսքից յետոյ տիրող խոր հանդարտութիւնը աւելի սուր և զգալի են դարձնում իր բերնից արձակւած շանթերը: Մի այլ տեղ նա իբրեւ երկնառաք զիտութեան հրեշտակ խանդաղատանօք դուրգուրում, դողում է իր հիւանդ բարեկամին վրայ, որին սիրում էր ոչ նւազ պ. Սոսից, և այդ հիւանդի վրայ ունեցած հոգածութիւնը տեղի է ունենում աչն պահուն՝ երբ իր կենաց օրերը հաշւած էին օրերով ու ժամերով:

Իր մի քանի նամակներում նա այնքան սիրուն է և գրաւիչ, որ կարծէք Ագամեան ճգնել էր ինքզինքն ամբողջովին զետեղել իր գրութեան մէջ, և իսկապէս յաջողւած էր: Նրա գրւածքների մի մեծ արժանաւորութիւնն էլ այս է, որ իր ամեն մի տողում, ամեն մի բառում պահած է իր ինքնուրոյն և տարօրինակ բնավորութեան բոլոր նշանները:

Սոց նամակները տպւելիս չենք կարող ի բոլոր սրտէ չցանկանալ որ ժամ յառաջ լոյս աշխարհ հան էին ողբացեալ դերասանի գրած բազմաթիւ բանաստեղծութիւնները, որոնցից շատերը ինձ կարդալիս, համոզում էի որ մի թանկագին հատոր պիտի լինի 19-րդ դարու գրականութեան մէջ. յուսանք որ պ. Թաշճեան, մեծ արւեստագէտի քեռայրը, իբրեւ աւանդապահ նորա գրւածքներին, պէտք եղածը կը տնօրինէ ձեռագրերի շուտափոյթ հրատարակութեան համար:

Մինչդեռ մենք այս նամակները յանձնում էինք հրատարակութեան, լսեցինք որ տ. Զաքելի մօտ կայ Ագամեանի մի ձեռագիրը, և չարգելի տիկինը յօժարակամ մեզ յանձնեց տպագրութեան համար, որ մենք կցում ենք այս նամակներին իբրեւ յաւելւած: Ձեռագրի վերնագիրն է «Բարեան մնաք իմ յոյսեր», որ մեծ արւեստագէտը Մանսիէլլի հետեւողութեամբ իր խնդրի համաձայն գրել և նւիրել է տ. Զաքելին: Այդ փոքրիկ մենախօսութիւնը կըրկին ապացոյց է Ագամեանի բեղմնաւոր գրչին, սրամտութեանը և վերին աստիճան զարգացած գեղագիտական ճաշակին: Այս մասին

մեր կրկնակի շնորհակալութիւնները յայտնելով յարգելի տիկնոջ, կը ցանկանանք որ նորա հատուկտոր ցրած ձեռագիրները հետզհետէ շուտափոյթ լոյս աշխարհ գալին որպէս զի գէթ նրանով սփռուէին աջն հազարաւոր սրտերը, որոնք ի խոր խոցեցեցան այդ աննման հանճարի անփոխարինելի և անժամանակ կորստով:

Թիւ 1

16 փետրիսի 1884 (6) Մողղոկ

Սիրելի բարեկամս պարոն Ստեփանեան.

Երեք օր առաջ ստացալ ձեր անդին նամակը. աչսինքն Մողղոկ հասնելուց Էրկու օր լետու, և իմ ուրախութեանս չափը կարող էք հասկանալ եթէ (աչսպէս ասած) ձեր սրտին հարցնէք... Անշուշտ աչժմ փոքր ինչ տխրած կը լինէք ինձ գէմ թէ ինչո՞ւ համար աչքսն ժամանակ չգրեցի ձեզ, որովհետեւ, նախ կասկած չունիմ որ իմ լուսթիւնս իբրեւ մոռացութիւն բացատրէք, մոռանալ ձեզ՝ այց ա՜ն կարելի է, մանաւանդ չսիրելու Սակաջն եթէ վաղ գրէի, իմ գրութիւնը աւելի տխրեցնէր գուցէ ձեր ազնիւ սիրտը... չունէի շիտակը մի լաւ բան ձեզ հաղորդելու, ձեզ ուրախացնելու:

Մինչև աչժմ, Տփլիսից մինչև աչստեղ թէ խմբին ¹⁾ և թէ իմ անձի համար ծախսած գումարիս քառորդը միայն կարողացալ լետ առնել. աչսինքն 200 ռ. որ Վլադիկաւկազի պատուական հաշերը ինձ ընծալեցին: Այդ էլ կրկին ծախս արի մինչ աչսօր:

Բաց այդ բոլորին հետ պէտք է ձեզ ուրախացնեմ չափունելով, որ բարոյապէս գտած պատիւնիս և ընդունելութիւննիս անմոռանալի և աննման է. ճաշեր, հրաւերք և աչն: Մեր տղերքը իրանց բաւականի լաւ են պահում, ի բաց առեալ երբեմն գարեջրի շիշերի ազդեցութիւնը և ծովութիւնը: Առողջութիւնս միայն շատ գոհացուցիչ է, որոնց պատճառն է Տփլիսի կանոնաւոր կեանքիցս մէկից չանկարծ դադարեցնող, չուզեալ և անկանոն ապրուստս, որն որ, ինչպէս կը գուշակէք, վիճակիս հետեանքն է: Սակաջն դարձեալ աշխատում եմ խնամք տանել իմ առողջութեան, ապահով լինելով որ ձեզ, բարեկամիս, ես հաճելի է աչդ:

Մողղոքի շուրջ անտանելի և անհանդուրժելի էր մեր հասած օրերը. ես դորա նման չոք դեռ չէի զգացել. շնչել, գործել, սնունդ առնելն անկարելի էր. լիրաւի կարծում էի թէ արիւնս զլուխս խփէ ու գժեմ, բաց կարծես Աստուած ողորմեց և ահա երեք օր կը լինի որ մի զովարարար

¹⁾ Այսաման Տփլիսից մէկնելիս ինքը վճարեց դերասանների ճանապարհածախսը մինչև Վլադիկաւկազ, աչստեղի ներկայացման արդիւնքներից դուրս գալու պայմանաւ, որ և ստացաւ:

քամի տիրոփում է մեզ բազմատանջներին, Գաղաքը մեռեալ և ամալի դրութեան մէջ է, լալց աչնքան զգալի չէ լինում մեզ, շրջապատւած լինելով պատեական հիւրատիրութեամբ և չարգանօք, Ուսումնարանի սենեկացի մէջ տւին մեզ բնակարան, ուր և գտնուում է բեմին սրահը, երկուսն էլ անվարձ, ափսոս որ հասուցթը 290-ից աւելի չէ. ապա թէ ոչ առաւին ներկայացման օր նուան պէս լիքն էր սրահ՝ բաւականին կը չահէինք. երկրորդը անձրիի պատճառաւ գրեթէ անշահ էր, միայն 130 ու. Մուղիքին վճարում ենք 20, լուսաւորութեան 10 և համարեա ուրիշ կարեւոր ծախքեր չկան: Փառք և պատիւ Մոզդոքի ազնիւ երկրասարդաց, որ ամեն ջանք ի գործ են դնում թեթեւացնելու համար մեր ծախքերը ու կենսական պիտուից հոգսերը:

Վաղը կրկին կտանք մի դրամատիքական երեկոյթ, որ մի ասփն անւամբ կը լինի իմ բէնէֆիսը՝ եթէ չլետաձգւի. ալդ երեկոյթի վրայ մեծ լուս ունիմ. տեսնենք:

Սիրելի և թանկագին Բաշինջաղեանին գրկելով համբուրեցէք իմ կողմից. ասէք իրան իմ անբաւ շնորհակալութիւնս լուսանկարց ջրանկարին համար, որն որ ստացանք Վաղիկաւկազում կրկնութեան ժամանակ ալս կերպիւ. աչն օրը Վրոյր, Պարոն-Սարգսեանց և Աղապեան ժամանակին ներկալ չէին կրկնութեան, և ես, ինչպէս կերեակալէք, սաստիկ նեղացած, սպասում էի որ եթէ գանձ գանգատւում, բալց ամեն նեղութիւն և գանգատ ուրախ ծիծաղի և անգուսպ հետաքրքրութեան վրա կարկեցան՝ երբ երեքն էլ մի ահագին քարթոնի ծալքերից բռնած «պատկերները, պատկերները» գոչելով բեմ մտան... բոլորն էլ խնդրում են որ մատուցանեմ ձեզ իրանց երախտագէտ զգացմունքները, ձեզ երկուսիդ էլ իմ կարօտ համբուրներովը:

Յառաջիկայ կիրակի օր լուսամ հասնենք Պիատիգորսկ, ուր տեղից կրկին կը գրեմ ձեզ—ողջ և առողջ եղէք. և մի երկմտիք բնաւ իմ սիրու մասին, քանի որ ես ողջ եմ, համբուրելով ձեզ միամ ազնւութեանդ անձնւէր և չարգող:

Թիւ 2

8 փոլիսի 1886 Պետտիգորսկ

Թանգաղին եղբայր իմ և բարեկամ,

Ստացալ սիրակիր նամակնիդ և աչն մի քանի տուն ոտանաւորը որ բարեհաճեր էիք գրել ինձ համար... եթէ ուրախացալ ասեմ, քիչ է, միայն կարող եմ ասել որ երջանիկ եմ գոնեալ սրտով և հանդարտ հոգւով, երբ մտածում եմ որ վալելում եմ ձեզ նման մի ազնւագոյն անձի սէրն ու բարեկամութիւնը:

Խոսմբը, ըստ իմ պալմանի զօրութեան, ցրեցի ալստեղից մի քանի պատճառների համար ¹⁾...

Ալթմ մնում են ինձ հետ պրն. Վրոյր և տիկ. Զաբել և մի Ղազար անունով տղալ որ Մոզլոքից առի իմ ծառաութեան, նոցա հետ պիտի գնամ Ղրիմու քաղաքները...

Գրկելով և համբուրելով մնամ սիրելութեան ձեր ի չարգանս անձնըւէր.

Եթէ ժամանակնիդ ներէ, ագնիւս, բարեհաճեցէք ինձ համար նաեւ 3 սենեակ երկրորդ չարկի վրայ, մի ուրախ փողոցի մէջ, թատրոնին մօտ...

Թիւ 3

1886, 5 սեպտեմ. Թէոդոսիա

Սիրելիդ իմ բարեկամ Աղէքսանդր.

Զեր վերջին համակր ստացալ պ. Վրոյրի նամակին հետ և ահա շտապում եմ պատասխանել. նոյնպէս և Խաչատրեանցի ստորագրութեամբ ստացալ մի հեռագիր՝ որով չալտարարում է թէ ամսույ 11 ին Բօմբէն որոշել է առաջին ներկայացումը սկսել ինձանով, իսկ ես արդէն Սուրկօյին էլ չալտնի է, որ ստորագրութիւն դրի պալմանագրին ահա համաձայնութեամբ որ սեպտեմբերի 15 ին պէտք է գամ Տփլիս, Նոքա էլ համաձայնեցան. ուստի ալդ հեռագիրը աւելորդ էր, և մանաւանդ երբէք չի լուսան որ առաջին ներկայացմանը ես մասնակցեմ. երբէք Շատ չնորհակալ կը լինէի, եթէ Սուրկօյին իմացնէիք ալդ բանը.

Ալստեղ ամեն օր ծովն եմ լողանում. նկարեցի և վերջացրի ընծակելով իրան Ալազովսկու պատկերը, որից շատ բաւական մնաց և հաւանեցաւ աշխատութեանս. մի փոքր նկար ընծակեց ինձ և ալն և ալն...

Երեկանից ի վեր ալստեղ սկսեց զիշերահաւատարի փոթորիկը եթէ ոչ վաղը, չաբաթ, ճանապարհ պիտի ելնէի չողեհաւով, եթէ մինչև երկուշաբթի փոթորիկը չարունակէ ստիպւած կը լինեմ ցամաքից, Վլադիկաւկազի վրայից գալ, որն որ շատ ու շատ թանգ պիտի նստի. ինչ արած, ճիշդ տասնհինգին Տփլիս գտնելու համար պիտի թողնեմ Ալազովսկու ընկերութիւնը, ծովի բազանեաց առողջարար աղղեցութիւնը, ապա թէ ոչ գոնեա մի ամիս աւելի ալստեղ մնալս շատ նպատաւոր էր ինձ համար.

Վլադիկաւկազից կուտամ հեռագիր—համբուրելով ձեզ մնամ սիրելութեան ձեր.

Պ. Վրոյրին և բոլորին բարեկցէք.

¹⁾ Աղամեան իմբի հետ ոչ մի գրաւոր պալման չէ ունեցել, եղածն էլ բերանացի էր և անորոշ. խմբի ցրելու պատճառներն են ա) իւր վարչական ընդունակութիւններից զուրկ լինելը և բ) խմբում պատահած զանազան տարաձայնութիւնները. որոնց չէր կարող տանել Աղամեան:

Թիւ 4

16 յունիսի 1887, Բաթում:

Սիրելիդ իմ Ս.

Ճանապարհորդութիւնս շատ հանգիստ էր. սիրողաց խումբը զիմաւորեց ինձ կալարանում, և վերջապէս երեկ երեկոյեան տւի իմ առաջին երեկոյթս, որն որ բաւականի չահաւէտ եղաւ. այսինքն թատրոնը կիսից աւելի լիքն էր, և պրն. Արշակ Մատուրեանը, որ մի շատ ազնիւ մարդ է երևում, սիրողների հետ շատ օգնեց ինձ, և առաջիկալ ուրբաթ պիտի տամ «Ոճրագործի ընտանիքը» դրաման:

Ձնալելով ալդ բոլորին, սրտով էլ հանգիստ չեմ, մանաւանդ մեր ամենասիրելի Բաշինջաղեանի տկարութիւնը ինձ մտատանջութիւն է պատճառում. խնդրեմ, սիրելիս, լուր հաղորդես ինձ շուտով նրա մասին, և իրան էլ գրիր անշապաղ, որ անպատճառ կ'ու մի ու իմէ ալս ամառ, եթէ մի որ և է կուրծքի տկարութիւն էլ կալ, անպատճառ դորանով առաջն առած կը լինի:

Բազաթիս բեռը շատ ծանր է գալիս. շատ գոհ եմ որ գոնէ աւելորդ բաները ապահով քեզ մօտ եմ թողած: Ալիմ էլ ուզում եմ դեռ մի քանի արծաթեղէն իրեղէններ և նկարներ հետս չառնել: Սակալն եթէ Տիխիս քեզ ուղարկեմ՝ գոնեա 8 ուրբու մօտ պիտի ծախսեմ, արդեօք ինձ խորհուրդ կ'ուտաս, նրանց էլ ալտեղ պրն. Մատուրեանի մօտ թողնելու գրիր անշապաղ...

Նոյնպէս ազնիւ մօրդ ու քրոջդ ողջունիր իմ կողմից. դրկելով քեզ մնամ եղբարկաւան սիրելութեանդ պնահատող և սիրող քուդ:

Թիւ 5

19 յունիսի 1887 թ. Բաթում

Սիրելիս իմ Ս.

Ի սէր Աստուծոյ, ազատիր ինձ սա թղթատան փորձանքից... դերքերս տակաւին չեն լանձնել Բագու—Վարչամեանցին՝ անունը սխալ գրած լինելու համար. փոխանակ Сергею Михайловичу գրելու գրել եմ Михаилъ Сергѣевичу:

Յետո՛ղ նամակներ գրեցի, հեռագիր տւի որ իրօք նրա անունը Ս ա Ր Վ ի ս է, ալ ոչ Մ ի ք ա չ է. հեռագրիս վրալ իմ ստորագրութիւնը ապահովացրուց և հաստատեց հեռագրատունը, դարձեալ ոչինչ չէ օգնում: Ահա նորից նամակ ստացալ—գուցէ ալն հալ երիտասարդի ձեռօք, որ փողի բաժանման մէջ է ծառաւում. ճանաչելով թէ ինձ և թէ քեզ, և տեսնելով ալս երկու կելտանցիաները՝ բարեհաճի հեռագրել տալ, Բագալ թղթատան կառավարութեանը. խնդրեմ բարեկամս, մի կերպիւ վերջացնել ալս գործը: Ապացուցի համար ուղարկում եմ քեզ և Վարչամեանի վերջին նամակը:

Բաթումի օդը շատ վնասեց ինձ. առաջին ներկայացումիցս մնաց միայն 130 ու., որ ծախքս անգամ չէ և, ի լրումն դժբաղդութեան, Սաֆրադեանը եկաւ ախտեղ և ուզում է ներկայացումն տալ՝ սիրողները զրաւելով: Ահա այս հանգամանքների մէջ չգիտեմ թէ ինչպէս կ'անցնի այս երեկոցեան «Քաղաքական մահ»-ը:

Գրիր ինձ մեր անգին բարեկամ Բաշինջադեանի առողջութեան մասին:

Գրեկելով քեզ մնամ սիրելութեանդ հղբալը.

Թ. 6

27 Յունիսի 1887 թ. Բաթում

Սիրելիդ իմ Ս.

Անշուշտ երէկ ստացած կը լինես հեռագիրս թէ՛ վարչամեան ստացել է ծրարները, և որից ես նամակ առի:

Գործերս ամենավատ ընթացք ունեցան ախտեղ, առանց հաշուելու աղ անիրաւ և վատթար կլիմայի ազդեցութիւնը, որ ինձ ջերմ տեղի, նորոգելով քաթարս: Կ'ասես թէ Սաֆրազեանը չէ կարող վնասել, գուցէ այն. բայց աչքանս դիտելի, որ ախտեղ զոկերից կազմած մի կուտակեցութիւն ունի. և այլ ու կին փողոցներում ու խանութներում ման գալով տոմսակ են ծախում...

29-ին կը տամ վերջին ներկայացումս, գոնեա մասամբ ծախքերս հանելու համար, և կը մեկնիմ 30-ին Քէրչ, աչտեղ գրիր до востребо-
вания.

Առ այժմ ց'տեսութիւն, ներքի տաճ նեղութեանցս, ողջուն սիրելեացդ, Բաշինջադեանին, որից, մանաւանդ իւր առողջութեան մասին ափսոս որ դեռ մի լուր չ'ունեմ:

Ձեռքերնիդ սեղմելով մնամ Ձեզ սիրող և չարգող:

Թ. 7

1887 թ., 21 Յուլիսի, Սիմֆէրոպոլ

Իմ սիրելի Ս.

Մի քիչ ուշացրի նամակնուդ պատասխանը, որովհետեւ կեանքս շատ չուրած էր, հիւանդոտ և անստուգութեան մէջ. Կէրչի տաճանելի նեղութիւններից չետոյ, առանց մի կոպէկ շահելու և վնաս կրելով եկալ հասալ Սիմֆէրոպոլ, ուր ոչ ոք չի կալ այժմ, բայց գոնեա՞ հալերը շատ սիրով ինձ ընդունեցին, և չնայելով հասարակութեան մեծագուն մասին գիւղերում լինելը, ստիպած եմ մի ներկայացում տալ թատերասերների հետ, որ գոնեա ծախքերս հանեմ: Սաֆարեան քահանայի հետ տեսնեցալ, չալտնիցի նամակ չի գրելուն համար զարմանքս, բայց եա ինձ պատաս-
խանեց ալպէս.

«Ասացի սիրողներին, նոքա համաձայնեցան, աւել
 ձեր հասցէն պ. Ստեփանեանցի վրայ, և նոքա ինձ խոս-
 տացան հեռագրել ձեզ թէ ուրախութեամբ սպասում
 ենք ձեր գալուն և պատրաստ օգնելու, և ես վստահ չի-
 նեցի որ թատերասէրք ձեզ պիտի հեռագրեն, հանգիստ
 եղաւ: (փոխանակ ասելու մեծ ծովութիւն արի) և աւելորդ համա-
 րեցի ձեզ գրել: Բաւց չհտուց Ս. հանը (անշուշտ ինձ վնասելու
 համար) խորհուրդ տւեց սիրողներին: որ աւելի ապահով
 կը ստանամ հեռագրի բն և աւելի շուտով, եթէ Աղամեանին
 թատրոնում հեռագրեն. փոխանակ պ. Ստեփանեանցի
 հասցէին»: Եւ ես մինչև ալժմ ոչինչ զեռ չըստանալով, և երկու ամիս
 հիւանդոտ և ապարդիւն Բաթումի և Կերչի մէջ թափառելուց չետու,
 եկաւ հասաւ ալստեղ, հէնց ալն ատեն՝ երբ ամենքն էլ ինձ տեսնելուց
 ոչսերն են կտրած գնացել են գիւղերը օդ փոխելու կամ լողանալու:
 Բաթումի մէջ ալ Ս. նը վնասեց ինձ և ալստեղ էլ Սիմֆերոպոլի շահերս
 փչացրուց: Ահա թէ ինչ մարդկանց ձեռքերում խաղալիք է եղած երկու
 ամսից ի վեր սիրելի Աղամեանը: Հիմի համոզում էք թէ չինչին մարդիկն
 էլ կարող են մեծամեծ վնասներ հասցնել մեզ...»

Օգոստոսի 4-ին կրկին Թէոդոսիա կը վերադառնամ, ուր անշուշտ
 կը զրէք ինձ, աղնիւս, չետոգրեալ հասցէիս:

Բաշչի, մեր հոգեկցորդ սիրելուն հազը շատ ու շատ ցաւացնում է
 սիրտս: Խնդրեմ գրեցէք իրեն, որ գալ անպատճառ Թէոդոսիա ինձ մօտ
 բնակելու մինչև սեպտեմբերի սկիզբները: Ես էլ վաղը պիտի գրեմ:

Ողջ և առողջ եղէք, սիրելիդ իմ, գրկելով և համբուրելով ձեզ մնամ
 սիրելութեանդ կարօտ և անձնւէր:

Իմ հասցէն՝ Θεοδοσία, Домъ Бабыровой, Артисту П. І. Адамьяну.

Թ. 8

Սիմֆերոպոլ, 28 չուլիսի 1887 թ.

Սիրելիդ իմ Ս.

Ահա չորրորդ օրն է, որ գիշեր և ցերեկ տանջում եմ սարսափելի
 ատամնացաւով, ալնպէս՝ ինչպէս Բաթումի մէջ: Վերջապէս երեսու ալն-
 պէս ուռեցաւ, որ ատամնաբուքը հարկադրեց օպերացիա անել, դա-
 նակով ձեռքից միսը և ալնտեղից բաւականի արիւն և թարախ հանելով
 հանգստացաւ: Ալժմ կարողանում եմ խօսել, ման գալ: Վաղը երեկոյեան
 պիտի ներկայացնեմ Կորբադօն, իսկ հետեւեալ օրը ճամբալ ելնեմ ի Թեո-
 դոսիա, տոմսակները շատ վատ են վաճառում, չգիտեմ թէ ինչ անեմ...

Գրիբ ինձ անպապաղ ի Թէոդոսիա ուղարկած հասցէիս և ներդրութիւն
 կրիբ խնդրեմ ուղարկել ինձ նույնպէս 10 օրինակ իմ գրքերից, և Մոս-

կապից ստացելիք «Сезонъ» ժուրնալը պատկերազարդ, ուր բաժանորդ
եմ գրած ձեր հասցէն տալով:

Ներեցէք, սիրելիդ, իմ տւած նեղութեանցս, խնդիրներս մի մոռնաք
որ արել եմ նախորդ նամակիս մէջ:

Գրկելով ձեզ մնամ քոյդ սիրելութեան անձնէր:

Թիւ 9

8 սեպտ. 1887 թ. Սիմֆերոպոլ

Սիրելի բարեկամս Ս.

Մի քանի օր առաջ ստացալ ձմեռւան վերնազգեստս. շնորհակալ եմ
ձեր կրած նեղութեան համար: Սակալն շատ դժգոհ եմ Բաշինջաղեանից
ոչ մի նամակ չ'առնելուս մինչև այժմ:

Գիտեմ, որ սրտերիդ կը ցաւի բաց պէտք է որ բարեկամիս չալտ-
նեմ ամեն ճշմարտութիւն. ուրեմն գիտցէք, որ մէկ ամսից աւելի է, որ
ալստեղ եմ, և մինչև հիմաչ հազիւ կարողացանք տեղուկ թատերասիրաց
հետ մի ներկայացումն տալ, և ալդ էլ ամենամեծ նեղութեամբ և նազերով:

Կարողացալ միայն միսթարւել նկարչութեամբ պարապելով և մէկ
քանի ազնիւ անձանց ընկերութեամբը, որոնք են ի միջի ալոց պ. Նազը-
ճեան և քաթոլիկ հալոց առաջնորդ վերապատելի հայր Նիկողայոս վար-
դապետը:

Հիմա մի ճար եմ մտածում քիչ փող ձարելու, որպէս զի կարող-
նամ դուրս գալ ալստեղից:

Տիկին Զաբէլը գնաց մի օրւան հեռաւորութեամբ մի գիւղաքաղաք
Армянскъ կոչւած, ալստեղ մի ներկայացում տալու:

Այս լուրերը ուրիշին չի հաղորդէք. թշնամիքս կուրախանան...

Պատւական և սիրելի պ. Ղազարոս Աղաչեանին սիրով ու կարօտով
ողջունեցէք իմ կողմից, չարմար առիթին իրեն էլ կը գրեմ:

Գարձեալ սիրելիս, նեղութիւն պիտի տամ ձեզ, խնդրելով որ ալս-
նամակս ներկայացնէք Կենտրոնական գրաւաճառանոցը ու առնէք և ու-
ղարկէք Սիմֆերոպոլ պ. Նազըճեանի հասցէին ինձ, ծախածների դու-
մարին հետ նոյնպէս մի օրինակ էլ գնեցէք և ուղարկեցէք Օթելլօից:

Ինչ որ էլ լինի ուղարկեցէք միշտ ալդ հասցէով:

Симферополь, Якову Николаевичу Языджану съ передачей

Адамяну.

Գրկելով և համբուրելով մնամ ազնիւ սիրելութեանդ անձնէր և
սիրող:

(Կը շարունակւի)

Ե Ր Գ

Շ Ա Ն Թ Ի

Հոս եկուր, նըստենք ծառին տակ,
Որ կէս-մութին մէջ կ'երերայ.
Անուշ զեփուռը թող ջըստակ
Երգեր հըծծէ մեր վըրայ:

Գիրդ ձեռքըդ սեղմած ջերմ կըրծքիս՝
Հոս եկուր, նըստինք ծառին տակ.
Ողողեն դէմքըս, երբ հակիս,
Մազիդ ոսկի այդ գիսակ:

Սուգւիմ աչքիդ մէջ ես վըճիտ՝
Գիրդ ձեռքըդ սեղմած ջերմ կըրծքիս.
Եկուր, փըսփըսամ ականջիդ
«Քեզ կը սիրեմ ես, հոգիս»:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆ

ԵԼԻՍ. Ն. ՎՈՂՈՎՈՋՈՎԱՅԻ Թարգմ. Խոր. քհն. Խանդավեանց

Նրա կեանքը, սովորութիւնը, չարաքերութիւնը ղէպի շրջապատողները և հասարակական դրութիւնը: Եկեղեցի և եկեղեցական պաշտամունք: Շինականների համար քահանայի կազմակերպած ժողովարանները և զբօսանքները:

Անգլիական զիւղը իր յատուկ կերպարանքն ունի. այստեղ միմիայն երկրագործներ չեն ապրում, այլ և հասարակութեան ուրիշ դասակարգի ներկայացուցիչներ: Անգլիական արիստոկրատը, թէև գործօն քաղական կեանք է վարում, բայց բոլորովին չէ ընտելանում մայրաքաղաքին. նա մշտապէս ապրում է գիւղում. մայրաքաղաք և քաղաք գնում է գործով միայն՝ ժամանակաւորապէս: Այդ է պատճառը որ անգլիական իւրաքանչիւր զիւղում, զիւղական աղքատ տնակների մօտ բարձրանում են հարուստ մարդկանց հոյակապ տներ և ազնականների ամրոցներ: Այստեղ իսկ, եկեղեցուց ոչ հեռու, սովորաբար ամենաբարձր տեղի վրայ, գտնւում է քահանայի տունը, գրեթէ մշտապէս պատնէշով և այգով շրջապատած: Այս տունը մեծ մասամբ երկյարկանի է և ոչ միայն մշտապէս շատ մաքուր, յարմարութեամբ կահաւորւած, բայց և յաճախ՝ շքեղ զարդարած: Նրանում ոչ միայն տեղ կայ քահանայի իւրաքանչիւր անդամի համար, այլ և առանձին հիւրանոց—ընդունարան և առանձնասենեակ անակնկալ բարեկամի համար: Տան ետեւի դուռը բացւում է այգու մէջ, որի միւս կողմը գտնւում է եկեղեցու մարգագետինը, ուր արածում են քահանայի ոչխարները:

Քահանայի տունը իր սեպհականութիւնը չէ, այլ նախորդից

իրան անցած, որ նրանից առաջ ապրում էր այնտեղ: Իր կողմից, նա ևս իր յաջորդին պէտք է յանձնի այս տունը, երբ իր պաշտօնը կը թողնի: Այս հանգամանքը քահանաներին հարկադրում է արտասովոր կարգի մէջ պահպանել իրանց տները: Յաջորդը իրաւունք ունի ոչ միայն նախորդից, այլ մինչև իսկ նրա ժառանգներից դատաստանով պահանջել տունը վերանորոգելու զուամարը, որը նա պէտք է ծախսէր, բայց անհոգութիւնից չի արել:

Իւրաքանչիւր երիտասարդ, որ ցանկանում է նւիրել իրան եկեղեցական ծառայութեան, անգլիական որ և է համալսարանի դասընթացք պէտք է անցնի և ստանայ գրական գիտութիւնների գէթ բակկալաւրի աստիճան: Եւ այսպէս կլասիքական լաւ ուսումը անհրաժեշտ է համարւում Անգլիայում և քահանայի համար: Համալսարանական կրթութիւնը քահանային մեծ օգուտներ է տալիս: Այն երիտասարդները, որոնք մտածում են հոգևոր կոչման նւիրել իրանց, համալսարանում փակւած դասակարգ չեն կազմում, այլ ապրում և կրթւում են բոլորի հետ միատեսակ: Ոչ ոք չի սովորում երիտասարդին հոգևոր ասպարէզ ընտրել. նա կանգ է առնում նրա վրայ բոլորովին ազատ, իր ձգտման համաձայն: Սրանից հետևում է այն, որ անգլիական հոգևորականութիւնը որ և է բացառիկ, փակւած դասակարգ չէ ներկայացնում: Երիտասարդ քահանաները համալսարանական լաւագոյն կրթութիւն ստացած մարդիկ են համարւում: Նրանց տւած բազմաթիւ հարցաքննութիւնները, խիստ պարապմունքները, հետամտութիւնը և տոկունութիւնը, որոնց միջոցով միայն նրանք կարող են քահանայական աստիճան ձեռք բերել, իրանց բացառիկ պարապմունքի ազատ ընտրութիւնը, յաճախ երկրի ազնւական տոհմերի հետ նրանց ազգակցութիւնը և բարեկամական կապերը, այս բոլորը նրան կատարեալ իրաւունք են տալիս ամենալաւ, ընտիր հասարակութեան մէջ ներկայ լինել և նրան իր մօտ ընդունել: Նրանից զատ, նա կարող է ազդիւ մարդկանց սրտերի վրայ իր ծարտարախօսութեամբ, իր կրօնական ջերմեւանդութեամբ, իր դործունէութեամբ յօդուա ժողովրդի և նրա լուսաւորութեան: Այս իսկ պատճառով հոգևորականութիւնը Անգլիայում մեծ ազդեցութիւն և յարգանք է վայելում: Անգլիական հոգևորականութեան վարած կեանքը ոչնչով չի զանազանւում աշխարհա-

կանների կեանքից: Որովհետև նրանցում թույլատրւում է ամուսնութիւնը, այդ պատճառով հասարակութեան մէջ նրանք ևս, այլ երիտասարդների նման, սիրաշահում հաճոյանում են օրիորդներին, պարում են նրանց հետ և յաճախ ամուսնանում են շատ նշանաւոր և հարուստ օրիորդների հետ: Այս տեսակ ամուսնութիւնների միջոցով բարձր դասակարգի հարստութեան մի մասը քահանաների ձեռքն է անցնում:

Եթէ դուք որսորդ էք և զէպքը կը բերի ձեզ երբ և իցէ ներկայ լինել Անգլիայի փառքը կազմող մեծահանդէս որսորդութեանը ազւէսների վրայ, դուք անպատճառ այնտեղ կը պատահէք և իր և է հոգևորական անձի, կատարելապէս սպառազինւած խթան ունեցող կոշիկներով, կողից դանակ կախած: Այդ տեսակ ժամերում, երբ յանկարծակի քահանան նկատում է որ ժամերգութեան հասնել չի կարող, նա առանց այլեւայլութեան որսորդական հագուստի վրայ հագնում է իր երկար քահանայական վերարկուն և շտապում է ամբիոնից քարոզել: Այն ժամերում, երբ մայրաքաղաքի ամեն ծայրերից Հայդ-Պարկն են թափւում փայլուն ամազոնուհիներ, դուք կը տեսնէք և բազմաթիւ հոգևորականներ, որոնք սիրալիր ծառայութիւններ են մատուցանում տիկիներին, օգնելով նրանց թամբի վրայ նստելու:

Այս տեսակ կեանքը, որ ոչնչով չի զանազանւում աշխարհականների կեանքից, յաճախ հոգևոր անձերին արդարադատութեան հետ ընդհարման է ենթարկում: Ի հարկէ, իրանց կրթութեան և հասարակութեան մէջ ունեցած փայլուն դիրքի շնորհով, հազիւ են պատահում այդպիսի սրկածներ. բայց և այնպէս սակաւ չեն դէպքեր, երբ հոգևոր անձը պատարան է հրաւիրւում, մեղադրելով ամուսնանալու խոստումը ժխտելու կամ հարբած դրութեան մէջ յանցանք կատարած լինելու համար և այլն:

Անգլիական հոգևորականութեան արդիւնքը տասանորդների, եկեղեցական օրինակատարութիւնների, եկեղեցում տեղափճարի և այն նւէրների մէջ է կաջանում, որ զատիկից չետոյ ժողովում են յայտնի եկեղեցիներում: Այս բոլոր հասոյթները չափազանց տարբեր են զանազան ծուխերում. կան այնպիսի ծուխեր, ուր քահանային տարեկան 7 հազար ֆ. ստ. պակաս չեն վճարում (70,000

ռ.). Կան 3—4 հազար վճարողներ, բայց և այնպիսիներ, ուր 50 Ֆ. ստ. աւելի չեն ստանում: Յամենայն դէպս ամենամեծ արդիւնքը «տասանորդն» է, այսինքն հողային սեփականութեան արդիւնքի տասներորդ մասը: Այս հարկը առաջ բնական բերքերով էին վերցնում. այժմ փող են վճարում: Զատիկի նւիրատուութիւնը հետեւեալումն է կայանում: Իւրաքանչիւր տարի Զատիկան տօնին եկեղեցական դպիրը, քահանայից ստացած գրքոյկը վերցրած, շրջում է հարուստների տները, որոնք և ստորագրում են իրանց ցանկացած գումարը յօգուտ քահանայի: Եկեղեցական օրինակատարութեանց համար քահանան քիչ է ստանում. միրոութեան խորհուրդը եկեղեցում կատարելու համար ոչինչ վարձատրութիւն չի պահանջում: այդպէս էլ Ս. Հաղորդութիւն ընդունողը պարտաւոր է ոչինչ վճարել, ոչ քահանային, ոչ եկեղեցուն. ով ինչ կամենում է աճի և գցում է դանձատուփի մէջ, որը նոյնպէս քահանային է պատկանում: Շատ ընտանիքներ, եկեղեցում իրանց յատուկ տեղն ունենալու համար, տարեկան վճարում են 10—12 Ֆ. ստ. որը, ինչպէս վերև յիշեցինք, նոյնպէս քահանային է պատկանում: Եկեղեցում նոյնպէս անգլիացիք կամենում են այնպէս լինել, ինչպէս իրանց տանը. դրանով յաճախ արտաքսում են աղքատներին: Այդ պատճառով նոր եկեղեցի շինելու ժամանակ, սովորաբար 100 անվճար տեղ աղքատներին են յատկացնում:

Բայց որքան և շատ ստանայ քահանան, այնու ամենայնիւ նրան հաղիւ է պատահում մի բան ժողովել: Եւ սա առաջանում է անդլիացու ընդարձակ ապրելու և շատ ծախսելու սովորութիւնից. ընդ սմին քահանան պարտաւոր է մասնակցել զանազան ստորագրութիւնների, իր ծխի աղքատներին պէտք է օգնի, իր տունը պահելու համար մեծամեծ ծախսեր պէտք է անի, վայելուչ ապրի, յարմարաւոր նիստ ու կաց ունենայ, որոնք բոլորը անգլիացու աչքում շատ մեծ գին ունին. աւելացրէք այս ամենի վրայ և զաւակների կրթութեան և ուսման ծախսերը: Կինը և որդիքը նոյնպէս վայելուչ, շատ լաւ պէտք է հաղնւած լինին և ազնիւ տոհմերի բարեկիրթ զաւակների նման պահպանւին: Ինչ վերաբերում է իրան քահանային, նա պէտք է ունենայ սպիտակ փողպատ և նուրբ, բարակ մահուդից զգեստ. մի խօսքով նա պէտք է «եկե-

ղեցական մարդու պատուաւոր վսեմութիւնն ունենաց:

Անգլիական օրէնքը քահանային արգելում է վաճառականութեամբ պարապել. բայց նրան թոյլ է տրւում եօթնամեայ ժամանակամիջոցով 80 ակր (ակրը = 889 քառակուսի սաժ.) տարածութեամբ ագարակ վարձել: Այսպէս ուրեմն Անգլիայում հազարաւոր բան է, որ քահանան մի և նոյն ժամանակ կալածատէր լինի: Մի քանիսը նրանցից իրանց եկամուտը մեծացնում են, իրանց մօտ գիշերօթիկ աշակերտներ ընդունելով: Նրանցից շատ շատերը սակաւ վաստակ չեն ունենում գրականութեամբ պարապելով: Անգլիայում աղքատ քահանաների թիւը առաւել քիչ է քան հարուստներինը. և քահանան, որքան էլ աղքատ լինի, այնու ամենայնիւ անպատճառ աշխատում է որ իր որդիքը համալսարանական կրթութիւն ստանան: Շատերը նրանցից պարապում են հին լեզուներով իրանց աղջիկների հետ. և այս վերջինները յաճախ օգնում են հօրը և վաստակը մեծացնում իրանց թարգմանութիւններով: Իւրաքանչիւր քահանայ ի նկատի ունի, որ նրան շրջապատողները նախ և առաջ օրինակ են որոնում ինչպէս նրա ընտանեկան՝ այնպէս և հասարակական կեանքի մէջ. և իրաւի, նա աշխատում է իր կեանքի կազմակերպութեամբ իսկապէս որպէս օրինակ ծառայել: Քահանայի տունը պէտք է որոշւի անպայման մաքրութեամբ և կարգաւորութեամբ, որովհետեւ անգլիացու հասկացողութեամբ կրօնական պարտաւորութիւնները տնային կեանքից են սկսւում: Սրանից պարզ երևում է որ քահանան պէտք է ամուսնացած լինի. ամուրիին ընտանեկան առաքինութեան ինչ օրինակ կարող է ցոյց տալ: Անգլիական քահանան ընտանեկան կեանքի մանր-մունր բաներն անգամ անուշադիր չէ թողնում: Նրա ժամանակն ու պարապմունքը ճշտիւ և խստութեամբ կարգաւորւած են. առաւօտեան ժամը 8 զանգահարութիւնը նախաճաշիկի է հրաւիրում: Սեղանի վրայ նստելուց առաջ, քահանան ծնգաչոգ աղօթում է ամբողջ ընտանիքի և սպասարի ներկայութեամբ: Ամբողջ առաւօտը կամ աշխատում է իր տաճարային գաւազանը ձեռքին, համարաքալ անցնում է նա ցանկապատերի միջով—ով և պատահի նրան ճանապարհին՝ ամենքը գլուխ են տալիս. բոլորին ճանաչում է նա. բա-

լորի հետ խօսակցում է. նա ծանօթ է իր հօտի ընտանիքի իւրաքանչիւր անդամի դրութեան հետ. գիտէ նրանց փոխադարձ ջարաքերութիւնները, պակասութիւնները, վիշտը և ուրախութիւնները: Պատահեց նրան մի կինարմատ, կը յանդիմանի նրան իր որդուն երկար ժամանակ դպրոց չուղարկելու համար. մի ուրիշին խորհուրդ կը տայ, ինչպէս օգնել զառամեալ և հիւանդ մօրը: Նոյնպիսի յարգանք, նոյնպիսի բարոյական ազդեցութիւն է վայելում քահանան և հասարակութեան բարձր խաւերում: Ահա նա պատահեց հարուստ հագնւած մի նորատի օրիորդի, որ մեծ հոգերի ժառանգ է: Փահանջն բոլոր սրտով, ամենայն վայելչութեամբ կ'ողջունի նրան, մանրամասն հարց ու փորձ կ'անի. ինչով է նա արդեօք պարապում, ինչպէս է անցնում ժամանակը: Աննկատելի կերպով կը հետաքրքրի նրան այս կամ այն յետ ընկած, աղքատ դպրոցի վիճակը. կը խնդրի իր ազատ ժամանակից մի ժամ նւիրել աղքատ մանուկների հետ պարապելու համար: Եւ արդէն բաւական է եթէ օրիորդը իր ցանկութիւնը արտայայտէ այդ մասին. կէս ժամ չանցած նա կը գնաց նրա մօտ թերթը ձեռքին, խնդրելով նշանակել աշնտեղ դպրոց այցելելու օրերն ու ժամերը:

Ժամը մէկին կէսօրից յետոյ երկրորդ նախաճաշիկն է. այդ ժամանակ քահանայի ամբողջ ընտանիքը հաւաքւում է. այստեղ կրկին աղօթք թէ ուտելուց առաջ և թէ յետոյ: Ճաշից յետոյ քահանան այցելութիւններ է կատարում կամ ծխականների մօտ է գնում որ և է զործով: Ճաշելուց կէս ժամ առաջ, որ 6 ժամին է լինում, քահանայի ամբողջ ընտանիքը իրանց սենեակներն են քաշւում հագուստներ փոխելու: Զանգահարութիւնը ճաշի է հրաւիրում. բոլորը հաւաքւում են սեղանատուն, որտեղ սովորաբար արդէն հրաւիրւած են լինում և կողմնակի այցելուհիներ: Ճաշելուց յետոյ բոլորը գնում են թէյ խմելու, և այս միջոցին քահանայի աղջիկներից մէկը կամ երգում է կամ դաշնամուրը հնչեցնում: 11 ժամին քահանան, ամբողջ ընտանիքի ներկայութեամբ, երեկոցեան աղօթքը կարդալով, բոլորին հրաժեշտ է տալիս և ամենքը ցրւում են իրանց սենեակները: Կան քահանաներ որոնք սովորութիւն ունեն առանձին օրեր նշանակել հիւրերի ընդունելութեան համար. մի անգամ նրանք հրաւիրում են իրանց ծուխերի բանւորներին,

մի այլ անգամ կալածատէրերին: Բայց ոչ սակաւ բաւականութիւններ և տօներ կան, որոնց մէջ հաւասարապէս մասնակցում են, ինչպէս շինական հարուստներն ու անւանինները, այնպէս էլ հասարակ դատարակարգը. և բարձր հասարակութեան՝ ստորին դասակարգի հետ այս շփմանը ամենից շատ նպաստում են քահանաները:

Քահանայի կինը նոյնպէս ահագին ազդեցութիւն ունի շրջապատողների վրայ, և աշխատում է հասարակական կեանքում եռանդուն մասնակցութեան օրինակ ցոյց տալ: Նա սովորաբար աղքատ մանուկների համար զպրոց է պահում, որի մէջ ինքն է դաս աւանդում: գինի և կերակուր է ուղարկում յանկարծակի հիւանդացողներին. օրիորդներին ձեռագործ է սովորցնում, ընտելացնում է խոհանոցին: Դուք այստեղ յաճախ կը պատահէք քահանայի կնոջ որ իւրաքանչիւր կէս տարին, շատ շատ մի տարուց յետոյ, փոխում է սպասաւորը: Սա տան տիկնոջ կուտար բնաւորութիւնից չէ առաջանում, այլ նրանից, որ նա միանգամից ժողովում է երկու, երեք նորատի օրիորդներ, նրանց կարգ ու կանոն է սովորցնում, և ամենատեսակ ընտանեկան գործեր կատարելու ընտելացնում: Իսկ այնուհետև հէնց ինքը աշխատում է նրանց համար լաւ տեղ որոնել, նրանց ձգտումներին համաձայն: Դրանից յետոյ նա կրկին նոր սպասաւոր է վերցնում իր մօտ. նրա մօտից զուրս եկած օրիորդները բնաւ անպաշտօն չեն մնում. բոլոր շրջակայ տեղերից անընդհատ հրաւիրում են նրանց իրանց մօտ, որովհետև հաւաստի են, որ քահանայի ընտանիքում ասորած օրիորդը լաւ բարոյականութեան տէր է և գործին ընտելացած: Միևնույն ժամանակ, իրանք օրիորդները աշխատում են իրանց մաքրութեամբ և նիստ ու կացով զերազանցել, որպէս զի տիրուհին ընդունի նրանց իր մօտ, որովհետև այդպիսիներին է միայն ընդունում:

Վերակի օրը, առաւօտեան ժամը տասին, եկեղեցական թնդիւն զանգահարութիւնը ծխականներին եկեղեցի է հրաւիրում աղօթելու: Եկեղեցու պարսպի մէջ, ուր գտնւում է և գերեզմանատունը, խաչեր չեն տեսնւում, այլ տապանաքարեր միայն, մեծ մասամբ կանգնած իւրքով 2—3 տանաչափ բարձրութեամբ: Այս օրը սովորաբար այստեղ կանգնած են լինում շինականները տօնական զգեստով

և խօսում են իրանց զործերի մասին: Քահանան գերեզմանատան միջով անցնում է եկեղեցի, մի բոպէ կանգ է առնում ծանօթների մէջ և հարց ու փորձ է անում թէ ինչու նրանց եղբայրներն ու քոյրերը չեն եկել: Նա երբէք չի յանդիմանում նրանց, որոնք անճիշտ են եկեղեցի յաճախելու մէջ. բայց աշխատում է կրկնապատկել իր ուշադրութիւնը չայցելողների վրայ. ժամերգութիւնից յետոյ անձամբ գնում է նրա տունը պատճառն իմանալու. և այսպէս ակամայ եռանդ է զարթոյնում թուլասիրանների մէջ: Մի ծուխի մէջ կար մի պարտէզատէր, որ բնաւ եկեղեցի չէր յաճախում: Մի անգամ քահանան առաջարկեց ժողովւած բոլոր ծխականներին նրա փոխարէն աղօթել: «Ինչո՞ւ» զարմացած հարցնում է ջենտլմէնը. «որովհետեւ դուք բնաւ չէք աղօթում ձեզ համար, և ձեզ կարող է որ է անբաղդութիւն պատահել», պատասխանում է քահանան:

Բայց ահա եկեղեցու գլխաւոր մոլորքը բացւեց: Անգլիական եկեղեցու մէջ արտակարգ պարզութիւն է տիրում: Անգլիացիք իրանց եկեղեցիներում պատկերներ և սրբազան նկարներ չեն կախում: Եկեղեցին լի է նստարաններով, երեսները ոչ դէպի սեղանը դրւած, ինչպէս կաթոլիքական եկեղեցիներում, այլ դէպի ամբիոնը, որ մի կողմի վրայ է գտնւում: Սա պարզ նշան է որ ժամերգութեան ամբողջ էութիւնը քարոզի մէջ են տեսնում:

Սպիտակ, երկար, թւերը վաջր թողած, ժամաշապիկը հաղած, քահանան ամբիոն է բարձրանում և սկսում է ժամասացութիւնը: Ժամանակ առ ժամանակ եկեղեցու կամարների տակ հնչւում են եկեղեցական երգեր երգեհոնի ներդաշնակութեամբ: Յայտնի բոպէներում քահանան իջնում է ամբիոնից և ուղեւորւում եկեղեցու խորքերը, դէպի սեղանը, ուր կարդում է նա պատուիրանները և առաքելական հանգանակը, որը հէնց այստեղ պատի վրայ ոսկեայ տառերով գրւած են ամենատեսակ սրբազան նկարների փոխարէն:

Անգլիական քահանաները աշխատում են գիւղերում պահպանել և զարգացնել ժողովարաններ: Շինական ժողովարանները այստեղ հիմնարկւում են աղքատների մէջ խնայողութեան գաղափարը մարմնացնելու, որ նրանց արագ և ճշմարիտ շահ է խոստանում: Այս ժողովարաններից իւրաքանչիւրը կազմւած է պատուաւոր և իսկական անդամներից: Առաջինները որ սովորաբար

հարուստ մարդիկ են լինում, մի որոշ գումար են վճարում ժողովարանի դրամարկդին, թողնելով միանգամայն ի սեփականութիւն ժողովարանի, որպիսի դրամագլխի տոկոսները զործադրում են նրա կարիքների վրայ: Իսկական անդամները նրանք են, որոնք շաբաթական մի քանի կոպէկներ են վճարում: Տարւայ վերջին ժողոված ամբողջ գումարը բաժանւում է իսկական անդամների մէջ, նրանց տուրքի քանակութեան համեմատ: Այսպէս օրինակ, եթէ բանւորը միջին թւով շաբաթական հինգ կոպէկ է վճարում, տարւայ վերջին նրա վճարը կը հասնի մինչ 2 ու. 60 կոպ., որը և նա ստանում է. բացի դրանից, վաստակելով 125—250 կ., նայելով թէ որքան հարուստ և առատաձեռն են հարեւան ընտանիքները, որոնք ժողովարանի պատուաւոր անդամ են գրւել: Այս կերպ օգնում են աղքատին, չվիրաւորելով նրա մարդկային արժանաւորութիւնը: Ժողովարանները հիմնարկւում են զանազան նպատակներով. կան ժողովարաններ «քարածուխի», «ժողովարան հագուստի համար», «ժողովարան հիւանդների համար», ժողովարան ոտնամանների համար» և այլն: Այս ժողովարանները շինականներին չափազանց մեծ օգուտներ են տալիս. միանգամից մեծ քանակով գնելով հարկաւոր իրերը՝ ձեռնոտ գնով, ժողովարանը առաջնակարգ հարկաւորութեան զանազան իրեր վաճառում է իր անդամներին անհամեմատ աւելի արժան, քան նրանք կարող էին խանութից ձեռք բերել: Եւ այսպէս շինականները ստանում են ձեռնոտ գնով և առաւել լաւ յատկութեամբ քարածուխ, ոտնամաններ, հագուստ: Այս ժողովարանների ամենաէական օգուտը նրանումն է կայանում որ մշակների և երկրագործ դասակարգի մէջ սովորութիւն են զարգացնում դէպի կարգ և անտեսութիւն: Կառավարութիւնը չի միջամտում այս ժողովարանների զործերին, և նրանք հիմնարկւում են այնպէս, ինչպէս ցանկանում են իւրաքանչիւր զիւղի բնակիչները: Ամենից աւելի եռանդուն կերպով այդ հիմնարկութիւններին մասնակցում է քահանան: Նա՝ իր ծխականների կարիքները ճանաչելով, խորհուրդ է տալիս այս կամ այն ժողովարանը հիմնել: Նրանք երկար խորհրդակցում են այս առթիւ միմեանց հետ, հաղորդում են քահանային, որը անմիջապէս ուղեւորւում է կալւածատէրերի, ազնւականների և իրան ծանօթ ընտանիքների մօտ, խօսւում է ժո-

ղովրդի ցանկութեան մասին, զեղեցիկ կերպով պարզաբանում է այդ նոր ընկերութիւնից սպասելի օգուտները և վերջապէս համոզում է նրանց նոր ժողովարանի ստորագրութեանը մասնակցել:

Սակայն, չնայելով որ քահանան պատկառելի դեր է խաղում այդ ժողովարանների հիմնարկութեանց ժամանակ, բայց գործերի ամբողջ կառավարութիւնը նա աղքատներին է թողնում, ժամանակ առ ժամանակ միայն խորհուրդներ տալով գործը վարելու վերաբերմամբ: Քահանան երբեք չէ մոռանում իր հայրենակիցների հայեացքը ամեն հասարակական գործի մասին, որ այն ժամանակ միայն օգտաբեր կը լինի գործը, երբ նրանում ամենաեռանդուն մասնակցողները շահ ունեցող կողմերը կը լինին. երբ գործի ամբողջ ընթացքը և նրա հիմնարկութիւնը նրանց սեփական աշխատանքի և ջանքերի պտուղ կը համարւին: Լաւ իմանալով որ ժողովուրդը թէյսսէր է, գիւղական քահանաները ամառ ժամանակ 200—300 հոգուց բաղկացած ժողովներ են կազմում որ և է անտառում, իսկ ձմեռը դպրոցական շինութեան մէջ: Այս բաւականութիւններին մասնակցում են հարուստները և աղքատները, ծերերը և երիտասարդները: Այս երեկոցութների նպատակն է՝ հասարակութեան զանազան դասակարգի մարդկանց մօտեցնել միմեանց: Այստեղ բոլորն էլ իրանց շատ լաւ են զգում. աղքատը չէ քաշում հարուստից, որովհետեւ ամենքն էլ հաւասարապէս են վճարում:

Այս տեսակ բաւականութիւնների համար վճարը ամենին ևս մատչելի է. մեծահասակները 6 պենս (մօտ 5 կ.), իսկ մանուկները 3 պենս են վճարում: Այն միջոցին, երբ տաք ջրով թէյամանները եռում աղմկում են, ահագին ժողովրդի կենդանի զրոյցները իրանց կարգով առաջ են դնում. և թէև համանման բաւականութիւններ զոռոզ անկախանի մէջ, անկասկած, հաւասարութեան զգացմունք չեն կարող զարթեցնել, բայց և այնպէս նրան միջոց են տալիս աւելի մօտ ծանօթանալու ժողովրդի հետ և նրա կարիքները ճանաչելու:

Գիւղական քահանաները իրանց ծխականների կեանքի բոլոր կողմերի վրայ ուշադրութիւն են դարձնում: Ճանաչելով թէ ժողովուրդը որքան Ֆիզիքական մարզութիւնների կարիք է զգում, քահանաները չափազանց նպաստում են, որ գիւղերում աւելի և աւել-

լի տարածւեն ժողովարաններ, ուր շինականները կարողանային ցոյց տալ իրանց ոյժն ու ճարպկութիւնը: Եւ այսպէս եռանդուն կերպով մասնակցում են շինականների բոլոր տօնախմբութիւններին: Շատ տեղերում ծխական քահանաները ընդ նմին և հաշտարար դատաւորներ են: Միմիայն Անգլիայում և Վալլիսում մօտաւորապէս 1200 հաշտարար դատաւոր քահանաներ կան: Այդ արդէն բաւական մեծ ապացոյց է թէ հոգևորականութիւնը ինչ յարգանք է վայելում և ինչ ահագին ազդեցութիւն ունի ժողովրդի վրայ:

Մ Ա Ն Կ Ա Ն

Դ Ե Ր Ե Ն Ի Կ Դ Ե Մ Ի Ր Ճ Ե Ա Ն Ի

Ահա սիրտս... ցաւ ու հոգսեր, մոռթը, ինչպէս զերեզման,
Անմեղ մանկիկ, քնքոյշ մանկիկ, մօրդ եմ բերում այս անդամ.
Ես փորձում եմ մաքրել նրան, անել նրան դեղ ու ճար,
Բայց չեմ կարող, սիրուն մանկիկ,—դու աղօթիր ինձ համար...

*
* *

Օ', աղօթքը, սուրբ աղօթքը, ինձ կարող է ազատել.
Ես ուզում եմ մաքուր սրտով Քրիստոսին աղօթել,
Ես ուզում եմ հաշտութիւնով սիրել մարդկանց ու աշխարհ,
Բայց չեմ կարող, անմեղ մանկիկ,—դու աղօթիր ինձ համար...

*
* *

Ես տեսնում եմ իմ եղբօրը միշտ հալածւած ու անտէր,
Քարէ ամուր արցունքներ են թափում նրա զոյղ աչքեր...
Ես տանջւում եմ, ես ուզում եմ աղօթք անել յուսովառ,
Բայց չեմ կարող, քնքոյշ մանկիկ,—ախ, աղօթիր ինձ համար...

*
* *

Ես ուզում եմ արցունք թափել, արցունք չունեմ թափելու,
Ես ուզում եմ հոգով թռչել դէպի հեռու ու հեռու...
Բայց իմ հոգին չդթայնում էն այս ցաւերը անհամար,
Ես լքեալ եմ, անմեղ մանկիկ,—օ, աղօթիր ինձ համար:

*
* *

Ես էլ անմեղ մանուկ էի, ինչպէս դու ես իմ առաջ,
Գիշերներում նրան էի ես աղօթում յուսատանջ,
Իմ աղօթքը շատ մաքուր էր, մանկական ու յուսավառ,
Բայց ես հիմա՛յ չեմ աղօթում,—անի աղօթիր ինձ համար...

*
* *

Ինչպէս մի աստղ գիշերային հանգան իմ վառ օրերը,
Եւ ինձ համար այնպէս դգւանք էլ չեն տաճում աստղերը.
Գիշերները այնպէս սիրուն՝ էլ չեն բազմում դաշտ ու սար,
Իմ այս հոգին մանկական չէ,—անի, աղօթի՛ր ինձ համար...

*
* *

Եւ կը հասնի վերջին օրս ինչպէս անեղ դատաստան...
Երբ ամենքը աղօթք կ'անեն, կ'երգեն տխուր շարական.
Ա՛խ, այն ժամին, երբ ես ուրախ, հանդարտ թողնեմ այս աշխարհ,
Վերջին անգամ, մաքուր սրտով, դու աղօթի՛ր ինձ համար...

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ

(Շարունակութիւն 1)

2. ՍՐԲԱԿՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԷՔՍՏԱԶ

Սրբականութիւն և դիւականութիւն—Սրբակիրների պատմութիւնը—Ս. Թերեզան և ուրիշները—Նրանց ցնորական տեսիլները—Նրանց հոգեբանութիւնը—Կեղծ մարգարէներ և քարոզիչներ. Լազարետտին և ուրիշները—Սրբակրութեան համաճարակները—Փարոզչութեան համաճարակներ—Ե քստազ և նրա երևոյթները:

Սրբակրութիւնը դիւականութեան հակառակն է: Դիւականները չար ոգիների զոհերն են, «չար ոգիներով բռնաւճենքն են», իսկ Սրբակիրները ընդհակառակը «բռնաւճ են բարի ոգիներով»: Այս վերջինների մէջ մի որ և է սուրբ, մի հրեշտակ, կամ նույն իսկ Քրիստոս, Աստուածածին և Աստուած են նստած: Սրանք չալտնի են նոյնպէս «կրօնական էքստատիկներ» անունով: Ալտպէս, սրբակրութեան (կամ էքստազի) և դիւականութեան ծագման մէջ մի հիմնական նմանութիւն կալ, —ալն որ երկուսն էլ հետեւանք են ներշնչման կամ, աւելի ճիշտ ասած, ինքնաներշնչման, ալտինքն, առաջանում են ուղեղի և ներդերի սաստիկ գրգռումից, մտքի չափազանց կենսարոնացումից մի որ և է գաղափարի, մի որ և է մտապատկերի վրա. երկուսն էլ երբեմն ծագում են մի պատահական դիւլածքից, որը հարւածում է մարդու երեակալութիւնը:

Երկուսն էլ չափաւորման են, ideé-fixe են, մոլութիւններ են: Միայն ալս չափաւորման, մոլութեան առարկաները տարբեր են: Մէկը չափը տակում է դնով, միւսը սրբով, —մէկը երեակալում է, որ նրա մէջ սատանալէ նստած, միւսը հրեշտակ,—մէկը իրան չար ոգուն է նւիրել, միւսը բարուն:

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 5 և 6:

Սրբակրութեան հիմնաքարը կազմում են կրօնական ցնորքներ, ալն ինչ դիւականութեան մէջ ցնորական տեսիլները սատանապաշտան էին:

ՍՐԲԱԿՐՈՒԹԻՒՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՑՆՈՐԱԿԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Սրբակրութիւնը (դիւակրութեան պէս) լինում է եղական կամ համաճարակ (էպիդեմիական): Պատմութիւնը արձանագրել է մի շարք սրբակիրների անուններ, որոնցից ամենահռչակաւորներն են Սբ. Թերեզան, Մարիա դելա Անջելա, Աննա Կաթերինա Հեմմերլիս, Մարգարիտա Ալակոք, քահանայ Լիօն, Ջովաննի դելլա Վերնիա և ուրիշները: Այս բոլորը և շատ ուրիշները համոզւած էին, թէ իրանք չարաբերութիւն ունին սրբերի, նոյն իսկ Քրիստոսի, Մարիամ կոյսի և Աստծու հետ: Յիսուս, Աստած, Մարիամ կոյսը երևում էին նրանց աչքին, կամ ցոյց էին տալիս նրանց իրանց ձեռք, դէմքը, ոտը և ալն: Յաճախ խրախուսում էին նրանց և մխիթարում, երկնալին աննկարագրելի չուզմունք ու երջանկութիւն ազդելով:

Կենտրոնացնելով իրանց մտաւոր բոլոր ուժերը մի ուր և է կրօնական մտքի վրա, ալս կրօնական մոլիւնները զարմանալի ճոխ և բարդ ցնորքներ էին ունենում:

Թերեզան, որին կաթոլիկների եկեղեցին սրբերի շարքն է դասել, մի կրօնամոլ ընտանիքի զաւակ էր, և դեռ մանկութեան հասակից իրան նւիրել էր Քրիստոսի պաշտմանը: Նրա առաջին ցնորքը—լսողական ցնորք էր, երբ նա լսեց երկնքի ձայնը. «Այս ալ ևս չեմ կամենում, որ դու մարդկանց հետ խօսես, պիտի խօսես միմիայն հրեշտակների հետ»: Մի քիչ փետոյ աղօթելիս նա տեսնում է Աստծու ձեռները, իսկ մի քանի օրից փետոյ Աստած երևեցնում է նրան իր աստածալին դէմքը: «Մի օր սուրբ Պողոսի տօնին, ս. պատարագի ժամանակ, պատմում է Թերեզան, ևս երջանկութիւն ունեցալ տեսնել Յիսուսի մարդկալին մարմինը, ինչ պէս որ նկարում են նրան երկինք համբառնալիս»: «Մէկ օր, ասում է նա իր ինքնակենսագրութեան մէջ, երբ ևս աղօթարանումն էի, չանկարժ ինձ թւեց, թէ ևս դաշտումն եմ խռոն բազմութեան մէջ: Մարդիկ չըջապատել էին ինձ զինուորած որը դանակով, որը սրով, որը դաշույնով, որը երկար փաշտով: Ամեն կողմ ինձ մահ էր սպասում և ոչ ոք չկար, որ պաշտպանէր ինձ: Այս սարսափելի շփոթմունքի մէջ ևս աչքերս բարձրացրի դէպի երկինք և տեսալ Յիսուս Քրիստոսին, ոչ թէ երկնքում, ալ օդի մէջ, գլխիցս վեր: Անտեղից նա տարածեց ձեռները ինձ վրա և իր պաշտպանութիւնը խոստացաւ ինձ: Անմիջապէս բոլոր երկիւղս անհետացաւ և ալս ամբոխը, չնայելով իր կատաղութեանը, անկարող եղաւ ամենաչնչին փնաս անդամ հասցնել ինձ»:

Աննա Կաթերինա Հեմմերլիս ընկնում էր սքանչացման մէջ և վերին

աստիճանի բարդ ցնորքներ ունենում: Նա հրեշտակների հետ ճանապարհորդում է երկնային եթերքում և անչափ տարօրինակ տեղերում: Մի հրաշալի նկարագրութիւն է տալիս նա իր ցնորական երկնային Նրուսադէմին:

«Նա տեսա՛ւ երկնային Նրուսադէմն, ասում է նա. այս մի փալուռն ոսկէ քաղաք էր, նա կանգնած էր բարձր եթերքի մէջ առանց ճեղքուի: Դռները և պատերը թափանցիկ էին և չէին խանգարում ինձ տեսնել, թէ ինչ է կատարում զրա ներսը: Այստեղ կալին փողոցներ, պալատներ և ընդարձակ հրապարակներ, այստեղ խոնւում էին մարդանման արարածներ, որոնք տարբերում էին միմեանցից զէմքով և արժանաւորութիւնով: Քանի խոր ուշադրութիւնով էի դիտում քաղաքի ներքին կազմութիւնը, աչքս աւելի սքանչելի և գերբնական էր երևում նա ինձ: Կենդանուում մի ծառ էր բարձրանում, որի ճիւղերի վրա, ինչպէս նստարանների վրա, բազմած էին լուսով սփռւած մարդկային էակներ: Քանի բարձր էին նշատած նրանք ծառերի վրա, աչքս փառանջ էին երևում: Ամենից վեր նստած էին պատկառելի սուրբ ծերունիներ, իսկ ծառի դազաթը գնդաձև էր և ներկայացնում էր մեր աշխարհը, որի վրա կանգնած էր խաչը» և աչքն:

Կանանց մէջ աչպիսի կրօնական ցնորքները հազւագիւտ չեն և կաթոլիկ երկիրները շատ աչպիսի կանաչք են ծնել: Սակաւն տղամարդիկ ևս, կրօնական զգացմունքներով չափաւորած, իրանց երկնքի ընտրեալն եր կարծելով, իրանց ցնորքների մէջ մօտեցել են երկնքին, տեսել են Աստուծութիւնը, հրեշտակներին, վերջին դատաստանը, զրախոն ու զփոխքը և աչքն:

ՄԱՐԳԱՐԷՆՆԵՐ ԵՒ ՔԱՐՈՋԻԶՆԵՐ

Այս տեսակ ցնորական տեսիլները համոզում են այս մոլիներին, թէ իրանք Աստծու անմիջական խնամատարութեան ներքոյ են գտնւում: Մի քիչ էլ, — և այս համոզմունքը մի ուրիշ գոյն կըստանալ—աչքն, նրանց մէջ մի գերբնական ուժ է նստած, մի հրեշտակ, մի սուրբ, կամ մի աստուծութիւն, և այս միտքը նրանց հրաշքներ գործել կըտալ. — նրանք կը դառնան մարդաբաններ, լեղափոխիչներ, քարոզիչներ և աչքն:

«Այս մարդկանց խոր համոզմունքը, թէ իրանց ցնորքները ճշմարտութիւններ են, զօրեղ և չափաւոր չպերճախօսութիւնը, որով նրանք չափնում էին իրանց համոզմունքները, բնականաբար ահալին կարեւորութիւն էին տալիս այս անձերին հասարակութեան աչքում և բարձրանում էին նրանց հասարակների առաջ: Աչպիսի չափաւորող գորութիւն ունեցան օրինակ Լազարետտին, Բրիանտը, Լուլան, Մալինաւին, Յովհաննա Դ'Արկը, Անաբապտիստները և աչքն» (Լոմբրոզո):

Լազարետտին ծնւել էր 1834-ին Իտալիայում մի սալապանից, որը, ասում են, արեւցող էր: Դեռ պատանի հասակում նա տարօրինակ բնա-

ւորութիւն էր արտապատում,—դրում էր ոտանաւորներ, ողբերգութիւններ, թէն ուղիղ գրել չգիտէր: Մի քիչ չետու նա իրան արբեցողութեան տեց և սկսեց կրօնական ցնորատեսիլներ ունենալ: Աէկ օր նրան երեւաց Աստածածինը, որը հրամայեց նրան զնալ Պապի մօտ և չալտնել, որ եկել է մի աստածալին պատգամ կատարելու: Յետոյ նա մի քանի ամիս անցկացրեց մի ձգնաւորի հետ (իբր թէ նոյնպէս Աստածամօր հրամանով) և ալստեզ իր ճակատի և մարմնի վրա զանազան ճշանակէտեր դրոշմեց, աշխատելով համոզել ուրիշներին, թէ աչդ՝ Ս. Պետրոսի կնիքն է: Այս համոզմունքը, թէ նրան առաքել է երկինքը, նրա խելացնորութեան հիմնաքարն է դառնում և լազարեաթին ապշեցնում է խաւիսն իր տարհիմնաքարն է դառնում և լազարեաթին ապշեցնում է խաւիսն իր տարօրինակ վարդապետութիւնով: Նա շուտով կարողացաւ իր շուրջը ժողովել մի խումբ հետևողներ, որոնց չալտնում էր, թէ ինքը ուղարկած է Աստծուց, և թէ ինքն էր Քրիստոսը, մեծ դատաւորը և մեծ արքան: «Երկրալին բոլոր զօրութիւնները պիտի խոնարհին իմ առաջ, իմ մի ձեռի շարժումը բաւական է, որպէս զի խորտակւին ինձ դիմադրողները»: Գնալով՝ լազարեաթի ցնորքները աւելի խելացնոր են դարձնում նրան:—Նա իրան անւանում է «թագաւորների թագաւորը, Գաւթ թագաւորի ժառանգ, մինչև անգամ Քրիստոս: «Ինձ, մարդկանց ամենանոսր, Աստած խոստացել է ամբողջ երկիրը», ասում է նա: Նա ինձ պարզեց մարդարէութեան շնորհ և լուսաւոր միտք, որպէս զի կարող լինեմ ուղղել օրէնքները և գիւտեր անել դիտութիւնների և արհեստների մէջ»: Անտարակոչս նէր մի մեծ կրօնական լեղափոխիչ դառնալ և գուցէ նրա ցնորական տեսիլները մի նոր դաւանութեան հիմնաքար դառնալին: Տասնեկոյններով դարում ծնւած լինելով, լազարեաթին կարողացաւ միայն մի խումբ հետևողներ ունենալ և խելագարների շարքն անցաւ:

Այսպէս 1212 թ., երբ Խաչակիրների արշաւանքները, սարսափելի զոհեր տանելով, չկարողացաւ փրկել Նրուսաղէմը մահմեդականների ձեռքից, ամբողջ քրիստոնէական աշխարհը լուսահատութեան մէջ ընկաւ: Բայց ժամանակ, իբր ընդհանուր չափշտակման արդիւնք, ասպարէզ է դուրս գալիս մի փոքրիկ հովիւ Ֆրանսիայի մի գիւղում, և իրան Աստծու ընտրեալ երեակալելով, հաւատացնում է ամենքին, թէ նրան երեւացել է Աստած և հրամայել է երթալ սուրբ երկիրը փրկել գերութիւնից: Ահագին քանակութիւնով, մօտ 30-հազար, 8—10 տարեկան երեխաներ և չափահասներ հետեցին ալս մանկան և կազմեց պատմութեան մէջ հռչակաւոր «մանուկներ լազարեաթին», որը աչնալիս ողբերգական վախճան ունեցաւ: Յովհաննա դ'Արկը, Ֆրանսիայի ալս ազատիչ կոչւել, իր ցնորքների մէջ ս. Կոլսին էր տեսնում, և նրա հրամանով էր գործում իր հրաշքները: Լոյովան, եզլիտների եղբայրութեան հիմնադիրը, ինչպէս և Լուծերը, բո-

ղոքական եկեղեցին հիմնողը, անդադար ցրորքների մէջ էին և իրանց երկնքի ընտրեալներ էին համարում: Նոյն ժամանակները զանազան երկիրներում երեւցան մի շարք քաղովիչներ, հետադօտիւններ, որոնց չաջողում է դեռ հետևողներ գտնել խաւար ամբոխի մէջ: Բարթոլոմէօ Բրանտանօ, համարեա 100 տարեկան ծերունի, սկսեց երեակալել, թէ ինքը Յովհաննէս Մկրտիչն է և շապկանց, խաչը ձեռին և մի գանգ թևի տակն առած, սկսեց քարոզել Սլւենացում, մարգարէութիւններ անել և հրաշքներ գործել...

Կապերների աղանդ հիմնողը, Գէորգ Ֆոկսը, մէկ օր լսեց իբր թէ երկնքի ձայնը՝ «Յիսուս Քրիստոս հասկանում է քո խօսքերը»: Նա կաշւէ շորեր էր հագնում, ապրում էր ծառերի բների մէջ և քարոզում էր, թէ բոլոր քրիստոնեաները, ինչ դաւանութեան էլ պատկանեն նրանք, պիտի Աստծու որդիք համարեն:

ՍՐԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

Ահա անհատական սրբականութեան մի քանի օրինակներ: Սակաչն ինչպէս դիւականութիւնը երբեմն համաճարակի կերպարանք է ընդունում, նույնպէս և սրբականութիւնը չաճախ տարափոխիկ ընաւորութիւն է աւելցել: Մի հասարակութեան մէջ, որի անդամները միեմունք կիանքով են ապրում, միեմունք ձգտումներն ունին, հիպնոտիսմը (ներշնչումը) ամենապարարտ հող է գտնում իր զարգացման համար: Այս օրէնքը մենք լուսաբանել ենք աչս աշխատանքի առաջին մասում: Մարդկութեան կրօնական զգացմունքները չաճախ չարուցել են ոչ միայն անհատական չափաւորումներ, որոնք մոլութեան և խելացնորութեան էին հասնում (ինչպէս երեւաց մեր առաջ բերած օրինակներէց), այլ և առաջացնում էին երբեմն խիստ տարածւած համաճարակներ:

Մի կողմ թողնելով հին պատմութիւնը, որը դեռ լաւ լուսաբանւած չէ աչս տեսակէտից, մենք մի քանի օրինակներ կը բերենք միջին և նոր դարերի պատմութիւնից:

Խաչակիրների արշաւանքները մեզ կրօնամոլութեան համաճարակների մի շարք դէպքեր են տալիս: Անգրագէտ հովիւները, վառւած Յիսուսի գերեզմանը գերութիւնից փրկելու կրակով, չանկարծ մաքդարէներ և քարոզիչներ էին չաւտարարում իրանց և կարողանում էին հարիւր հազար մարդիկ իրանց ցնորքներին զոհ տանել: 1212 թւականին Ֆրանսիայի փոքրիկ հովիւ չանկարծ իրան սուրբ է չաւտարարում, որին վիճակւած է վերջապէս փրկել ս. գերեզմանը մահմեդականների տիրապետութիւնից, և մի մեծ քանակութեան մանուկներ քարոզիւր են կարգում, հրաշքներ են անում, և ամբողջ գնդեր էին կազմակերպում խելքից հանած երեխաներից, որոնց հաւատացնում էին, թէ ծովը պիտի ձեղքւի, որպէս զի նրանք չորով

անցնեն ու Երկիրը: Յաջո՞նի է, որ աչս մանուկներին չարագործները խաբէութիւնով լցրեցին նաւերը և տարան Արեւելեան երկիրները վաճառելու: 1566 թւականին Ամստերդամում տիրող քարողչութեան համաճարակը նոյնպէս վարակիչ հիւանդութեան բնաւորութիւնն ստացաւ:

«Սեւիննալի լեռներում տարածւած քարողչութեան համաճարակը ծագեց մի ոմն Սերր անունով կրօնամոլից, որը եկել էր Ֆրանսիա հակապապական քարողներ անելու: Նա աչն աստիճան չափշտակման հասցրեց ամբոխին իր ներշնչումներով, որ չանկարծ հարիւրաւոր Ֆանատիկոս քարողիչներ երևան եկան: Սերրը շունչ փչելով իր աշակերտների բերանը, ներշնչում էր նրանց քարողչութեան և մարգարէութեան շնորհ: Եօթը — ութ տարեկան երեխաները սկսեցին քարողել և գրողել ժողովուրդը, որը թւով մինչև 3—4 հազար: Աջտեղ մարգարէ Սերրը փչում էր նրանց բերանին և ասում էր. «Թող իջնի քեզ վրա ու Հոգին», և աչս մարդիկը սկսում էին չանկարծ մարգարէութիւններ անել, ընկնելով կարկամման մէջ և փրփուրն բերներին թաւալ տալիս գետնին»: Աչսպէս է ասում պատմագիրը:

Մի ուրիշ համանման էպիդեմիա ծագեց 1841 թ. Շւեցիալոսում:

Մի տասնութեց տարեկան աղջիկ, Ղիզա Անդերսդոկտէր, չանկարծ, հակառակ իր կամքին, սկսեց ժամերով մաքուր և զիլ ձաշնով սաղմոս երգել: Մի քիչ լետոջ նա սկսեց կրօնական քարողներ կարդալ, հիպնոսական քնի մէջ էր ընկնում և զարթնելիս հիստերիկ կարկամման մէջ էր ընկնում: Լետոջ երբ հանդարտւում էր, սկսում էր մարգարէութիւններ անել և պնդում էր, թէ պատգամներ է ստացել երկնքից և թէ նրա շըրթունքներով Հոգին Սուրբն է խօսում:

Նրա քարողների ներշնչման ներքոյ շուտով ուրիշ կանաչք և աղջիկներ սկսեցին նոյն հիպնոսական երեւոյթները ներկայացնել: Յնորքների մէջ նրանց երևում էին երկինք, Աստած և հրեշտակներ, դժոխք և արքայութիւնը: Հետեւելով Ղիզա Անդերսդոկտէրին, նրանք քարողում էին հոգու փրկութեան մասին, և մարգարէութիւններ էին անում աշխարհի վախճանի և անեղ դատաստանի մասին: Եւ զարմանալի է, թէ ինչ հեշտութիւնով էր չափշտակւում ամբոխը:

Մի ոմն, Պիկար անունով, իր ցնորքների մէջ չաշնոմ է թէ ինքը Աստծու որդին է, որին Հաչրը ուղարկել է սովորեցնելու մարդկանց որ դէն գցեն հագուստները, մերկանան, որ կանաչք հասարակաց լինեն... Եւ դուրս են գալիս հետեոյների, որոնցից կազմւում է աղամիտն երի աղանդը: Կալւինիստների, եանսենիստների, անաբապտիստների աղանդները նոյնպիսի սկիզբն ունեն... Մարդ մի տարօրինակ ապշութիւն է զգում աչս դէպքերի առաջ: Ինչով բացատրել խելացնորութեան աչս վախճանն,

ինչպէս տաճիններորդ զարի նրբացած լուսաւորութիւնը չ'ոչնչացրեց ալս անմիտ մոլութիւնները? Այսօր իսկ քաղաքակրթւած աշխարհներում բազմաթիւ զարգացած մարդիկ, նոյն իսկ գիտնականներ, հաւատում են, թէ ոգիները կարող են խօսակցել մեզ հետ սեղանների և ուրիշ առարկաների միջոցով, և ալս օտարոտի միտքը, որը կարող էր միայն հիւանդ ուղեղում ծագել, մի շատ տարածւած դաւանութեան հիմնաքարն է դառել, որը ալսօր միլիոնաւոր հետեւողներ ունի:

Մենք խօսում ենք սպիրիտիսմի մասին:

ԷՔՍՏԱԶ ԿԱՄ ՍՔԱՆԶԱՑՈՒՄՆ

Ինչ է էքստազը—Օրինակներ—Սքանչացման երևոյթները—Անհատական և խմբային անզգաւթիւն—Լուրդի էքստատիկները—Ինքնատանջումն—Կրօնամոլական ծէսեր:

Սրբակիրները, կենտրոնացնելով իրանց հոգեկան և մտաւոր բոլոր ուժերը մի ուր և է կրօնական գաղափարի վրա, ընկնում են ինքնահիպնոսի դանադան աստիճանների մէջ: Նրանք իրանք հիւանալի կերպով նկարագրում են, օրինակ իրանց քարացումն կամ թովչութիւնը (տես մասն առաջին գրքուկի էջ 86):

Այս դրութիւնները, որոնք առաջանում են մտքի կենտրոնացումից կրօնական գաղափարների վրա, չալտնի են էքստազ կամ սքանչացումն անուանով:

Բոլոր վերոյիշած սրբակիրները ենթակալ էին էքստազի, սրի մէջ նրանց երևում էին Աստուած, Քրիստոս, Մարիամ կուսը, զբախտ ու զթխքը և անհամար ցնորական տեսիլներ:

Էքստազի մէջ մարդ լանկարծ համարեա անչնչանում է, նրա մտաւոր և զգացողական ուժերը կորած են, նա ոչինչ չի գգում և ոչինչ նրան չի զբաղեցնում. նա միանգամայն չափշտակւած է, նրա հոգին կարծես ջոկւել է մարմնից: Այս դրութեան մէջ նրանք մնում են շատ ու քիչ երկար, քննույ երբ զարթնում են ու ուշքի են գալիս, պատմում են իրանց ցնորքները: Այս դրութիւնը սաստիկ նման է թովչութեանը (об-ворожение):

Անհա Հեմմերիխը, չաճախ ընկնում էր ալս դրութեան մէջ: Մարգարիտա Ալակոքը երկար ժամանակ մնում էր սքանչացման մէջ և ուշքի գալով զարմանալի ցնորական տեսիլներ էր նկարագրում: Ճգնաւոր Ժակոպօ մի անգամ երեք օր սքանչացման մէջ մնաց, աչնպէս որ կարծում էին թէ նա մեռած է: Այս դրութիւնը նոյնն է, ինչ որ մենք նկարագրել ենք Լիտարգիա անուանով:

Հետեւեալ գէպքը միանգամայն նշանաւոր է: Ջոն Լնդիրբերխտը ընկ-

ման պատմութեան մէջ: Նա է որ, հարւածելով ամբոխի միտքը, ստրկացրել էր նրան և հլու դարձրել հին կրօնական պաշտօնեաների ձեռքին:

Հնդկաստանում և առհասարակ Արեւելքում, Բիրթի ասելով, որոշեալ կանոններ գոյութիւն ունէին էքստազի մէջ ընկնելու համար: «Պէտք էր անշարժ կանգնել, նայել անընդհատ երկնքի կամ մի փալուռն առարկայի, իր քթի ծալքին (ինչպէս այդ անում էին Հնդկաստանի Փակիրները) կամ իր պորտին (Աթոս լեռան կրօնաւորները), կրկնել Օսմ բառը (որ նշանակում է բրահմա). այդ միջոցով մարդ կամաց-կամաց կորցնում էր թէ զգալու և թէ շարժելու կարողութիւնը: «Բժ. Շէշը ասեւ էր մի Փակիրի, որը կարողանում էր իրան միանգամայն մահացնել և ժամերով անկենդան մնալ: Բրէդի ասելով, Փակիրները չաճախ պատւիրում էին, որ իրանց մի պարկի մէջ կարեն, կամ մի արկղի մէջ փակեն և թողնեն. երբոր նրանց հանում են փոսից, նրանք կենդանւում են» (բժ. Սիմօն):

Ֆրանսիայում կա մի «հրաշագործ գերեզման»: Սա մի ճգնաւորի չիրիւմ է, որ գտնւում է Ս. Մեդար գերեզմանատանը, Նուրդում: Ճգնաւորը տիրացու Պարիս էր, որը մեռել էր 1827 թ. և որի գերեզմանի վրա դեռ մինչև այսօր Ֆրանսիայի բոլոր անկիւններից դիմում են ներդալին հիւանդ մարդիկ առողջութիւն գտնելու: Եւ ճշմարիտ որ այն անսահման հաւատը, որը ժողովուրդը տածում է գէպի Պարիի գերեզմանը, երբեմն բժշկում է ներդալին հիւանդութիւններ, ինչպէս կը տեսնենք վետու:

Այս գերեզմանի վրա ներդալին արարարածները չաճախ նոյնպէս ընկնում են կրօնական սքանչացման մէջ և այն ժամանակ ներկայացնում են անզգալութեան միանգամայն զարմանալի օրինակներ:

Կանաչք և օրիորդներ զարմանալի հնարադիտութիւնով իրանց տանջել են տալիս առանց ցաւ զգալու: Շատ երկար կը լինէր խեղ մի առ մի այն տանջանքները: Մենք կը բաւականանք միայն մի քանի օրինակներ բերելով: Քոյր Մարգօն չոքեցնում էր իր առաջ մի տղամարդու և ստիպում էր նրան բռնեցքով հարւածներ տալ իրան ճիշտ ծծերի տակը. այս հարւածների թիւը հասնում էր 2000-ի: Այս ներդալին կիւնը շատ սիրում էր «գլխի հարւածները». Հինգ տղամարդ կանգնում էին նրա շուրջը և հերթով բռնեցքներով արագ խփում էին նրա գլխին: Յետոյ զալիս է «փշալ պոսկը»,—նրա գլուխը մի երեսորբիլ էին կապում և նրա ու գլխի արանքը մի փաշտ անցկացնում, որով այնքան էին պտտում մինչև որ նա ասում էր «բաւական է»: Ուրիշները սիրում էին, որ իրանց խեղդեն, —բարձրացնելով վաչր քցում գետին, կրկնելով 20—30 անգամ!

Մարգօին չետոյ ենթարկում էին «ձգ ձգման»: Չորս թոկ էին կապում նրա մէջքից, չետոյ չորս հոգի նստում էին նրա շուրջը, բռնում էին թոկերի ծալքերը, ոտերը դէմ էին անում կուրծքին, մէջքին և կողերին ու ձգում, որքան ոյժ ունէին, մինչև որ խեղճ կիւնը ասէր.—«չնոր-

հակալ եմ: Գետուհի նրան պառկեցնում էին մի տաքուրեւոր վրա, մէկը գլուխն էր բռնում, իսկ չորս ուրիշ մարդիկ ձգում էին նրա թևերն ու ուսերը աչնալէս որ ոսկորները չրխկում էին: Այս ողորմելի էքստատիքները ստիպում էին ծեծել իրանց մահակներով, բռունցքներով պարանոցին խփել, կամ մէկ ժամ քաշ տալ նրան ոտերից, աչնալէս որ երեսը գետնին քուլի...

Մի աղջիկ մէջքը պատին է տալիս ու ստիպում է 30 ֆունտանոց երկաթով ուժգին հարւածներ տալ փորին: Աստորինէ Տիւրպէն հրամայում է վառելափայտով խփել փորին: Այս Մոլէն հրամայում է մի ահագին բանալի փորը կոխել, միւսները իրանց ծակոտել են տալիս դանակներով և ալլն և ալլն:

ԽՄԲԱՅԻՆ ԱՆՁԳԱՅՈՒԹԻՒՆ ՆԻ ԿՐԾՆԱՄՈՒԱԿԱՆ ԾԵՍՆԵՐ

Հնդկաստանում ֆանատիկոսները կրօնական տօներին սարսափելի ինքնատանջանքներ էին հնարում: Նրանք երկար չանկալներ էին ցցում իրանց մարմինը, կախ էին ընկնում և ճոճում էին: Մի չալտնի կարգի ղէրւիշներ կտրատում էին իրանց մարմինը սուր գործիքներով և աչրում էին իրանց երկաթէ շէրով:

Զինաստանի լամաների մէջ մի սոսկալի ծէս կա, որը կապւում է նրանում, որ նրանք ամբողջ առաջ իրանց փորը պատում են: Մահմեդականների երկրներում կրօնական տօներին մարդիկ հեշտութիւնով խմբովին ընկնում են սքանչացման մէջ և տանջանքներ հնարում իրանց համար: Շատ տարի չի անցել ալն ժամանակներից, երբ օրինակ Նրևանում Շախսէ-Վախսէի օրը ահագին ամբողջ կիսամերկ մարմինը դանակներով թրաշելով, շղթաներով ծեծելով, սոսկալի գոռոց ու վաճառուն բարձրացնելով անցնում էին քաղաքի փողոցներով, ետներից հետքեր թողնելով, դադանալին կատաղութեան հասած, աչքերն արլւն կոխած, ինքնամոռացման մէջ:

Մի սոսկալի կրօնական ծէս նկարագրել է չալտնի գիտնական Պօլ Բէրը:

Տասնուհինգերորդ դարում մի ոմն, Սեդի Մահմեդ բէն Ալսա անուանով, հիմնեց մի ազանդ, որը կրում է Ալսաուա անունը: Ալսաի հետևողները ամեն տարի ժողովւում են իրանց սրբավայրը և տօնում են իրանց հիմնադրի տարեդարձը: Ծէսը սկսւում է թմբուկներով և երգերով ի պատիւ Սեդի Մահմեդի: Յանկարծ մէկը ոտի է կանգնել, թևերը վեր բարձրացրած, աչքերը լալն չուած, խռպոտ ձայնով բացականչութիւններ արձակելով, նա թռչկոտում է, մարմնի վերին կէսը դողդողացնելով և գլուխը տարուբերելով ուսերի վրա, ինչպէս տեղից խախուած մի բան: Ծերերից մէկը տալիս է նրան մի կակտուար պտուղ (տատասկաթուղ), տատաւկեն, րով և երկար փչերով ծածկւած: Նա վերցնում է աչդ պտուղը և սկսում

է չան նման կրծել նրան. տատասկները պատառոտում են թշերը և դուրս ցցում, արիւնը շրջում է բերանից: Նրանցից լետու վեր են կենում ուրիշները, Հիջի Ալսա գոռալով, լետու դարձեալ նորերը—և կատաղութիւնը ընդհանուր է դառնում: Մէկը ճանկերով կարիճներ է ուտում, միւսը սրածալը երկաթով ծակում է իր թշերը, երրորդը ապակու կտորներ է կլանում, մի ուրիշը տաքացրած երկաթ է լիզում: Գոռում-գոչումները սաստկանում են, ամենքը տարուբերում են զարմանալի արագութիւնով և բոլորը գոչում են «Հիջի Ալսա, Հիջի Ալսա»:

Ինչպէս տեսնում ենք՝ սրբականութիւնը իր արտապատութիւններով նուրիս է, ինչ որ էր զիւսականութիւնը, աչտինքն մի հիպնոսական երևութ, որի մէջ ցնորքները, քարայցման և լեթարգիայի դրութիւնները, անզգալութիւնը, վերջապէս աչն զարմանալի երևութը, որին մենք սքանչացումն կոչումը տւինք—ոչ ալ ինչ են, իթէ ոչ արդիւնք ինքն աչն երչնչման:

Մի խոշոր ֆակտ, որը ինքն ըստ ինքեան աչքի է ընկնում աչս երևութների ուսումնասիրութիւնից, աչդ՝ մարդու չակումն է դէպի ընդօրինակումն: Մի կին, սիրական գրգուման մէջ, ցնորքների մէջ սիրահարական լարաբերութիւնների մէջ է մտնում դեերի հետ և չանկարծ նրա հետ հարկւրաւոր ուրիշ կանաչք դիւսարւում են ու մէկի հիւանդական ցնորքը տեղի է տալիս դիւսականութեան համաճարակի: Մի ուրիշը կրօնամոլական ցնորքների մէջ իրան երկնքի ընտրածն է համարում, սկսում է քարոզչութիւններ և մարդարէութիւններ անել և հարկւրաւոր մարդիկ նուր ցնորքներն են ստանում, սքանչացման մէջ ընկնում, նուրպէս քարոզչութիւններ անում,—ու առաջ է գալիս սրբակրօնեան համաճարակն եր:

Մարդկութեան պատմութեան ծալքերում ընդօրինակման կամ նմանողութեան երևութները վերին աստիճանի բազմատեսակ են և ահադին դեր են խաղացել ազգերի կեանքի զարգացման մէջ: Ֆրանսիական գիտնական Տարդը մի լուրջ էտիւդ է տւել ընդօրինակման օրէնքների մասին: Մենք կը հետեւենք աչս մարդաբանին մեր առաջիկալ խոլածում:

(Շարունակելի)

ԳՈՒԹԱՆԻ ՇՈՒՐՋԸ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆԻ

Գութանի շուրջը բոլորեւ—դա միննոն է թէ ողջ երկրագործութեան մասին խօսել. որովհետեւ չկալ երկրագործութիւն առանց գութանի, ուստի ամենալն իրաւամբ գութանը համարուում է երկրագործութեան և նոն իսկ գիւղատնտեսութեան նշանաբան. մանաւանդ մեզ հայերիս համար առանց օգուտի չի կարող լինել աւելի մօտիկ ծանօթութիւնը գութանի գործի և պատմութեան հետ, որովհետեւ ինչքան և մեր բուն ժողովրդի կեանքի և պատմութեան հետ անծանօթ օտար ճանապարհորդներ և հեղինակներ հալ աղգին վաճառական ժողովուրդ համարէին, ալնուամենայնիւ հալ ժողովրդեան բուն երկրագործ լինելը կարօտ չէ ոչ փաստաբանութեան և ոչ բազմաթիւ ապացոյցներով. իսկ մի երկրագործ աղգի համար անհրաժեշտ է աւելի մօտիկ ծանօթութիւն երկրագործութեան զարգացման պատմութեան հետ ընդհանրապէս և մասնաւորապէս եւրոպական քաղաքակիրթ աղգերի գիւղատնտեսական առաջադիմութեան հետ ալն իսկ պատճառով, որ զանազան անբարեւջող քաղաքական և տնտեսական հանգամանքներ երկար ժամանակներ խեղդել են մեր երկրագործական չառաջդիմութեան ընթացքը. Ներոպան, իւր համեմատաբար աւելի ջանել կեանքով, անընդհատ չառաջադիմել է և անցել ալն աստիճաններով, որով պէտք է ընթանալ քաղաքակիրթութեան ձգտող մի ուրիշ աւելի վետ ընկած ժողովուրդ: Լուսաւորւած Ներոպալից մենք ղեւ եւ շատ բան ունենք սովորելու, մանաւանդ գիւղատնտեսութեան ասպարիղում, թէն ալգ ճիւղում մենք երկու անգամ աւելի դարեր ունենք մեր ետեւում քան նա. դա, կարծես, պատմութեան ծիծաղն է, որ գութանը հնարող և տարածող հին աշխարհը դասեր առնէր գութանը կատարելագործող նոր աշխարհից. ալս առաջին անգամը չէ, երբ ուսուցիչը դասեր է առնում իր առաջադէմ աշակերտից, վնասն ինչ. միայն թէ առաջադիմելու բարի

յանկուծիւն ունենանք. միթէ մեզ համար միևնույն չէ մեր անցեալը, մեր տարիքը ուսանելով, մենք միջոց ունենք նորից ծնւելու, նորից պատանեկական և երիտասարդական եռանդ և աշխուժ ձեռք բերելու, նորից ապրելու, գուցէ աւելի երջանիկ քան անցեալում. սկսենք աչն ասպարէզից, ուր մենք մեզ աւելի ուժեղ էինք զգում անցեալներում—երկրագործութիւնից—գութանից:

Գութան! բոլոր զարերի կուլտուրական ժողովուրդների համար ոչ մի գործիք անքան բարերար և օրհնաբեր չէ եղած որքան գութանը: Գութանը մի ժողովրդի առողջ և հաստատուն կեանքի գրաւականն է, քաղաքակրթութեան ամենաճին նշանաբանը և խաղաղութեան աւետաբերը: Գութանը հայրենիքի հիմնադիրն է, նրան պահողը, նրա գոյութեան առհաւատչեան: Մի թեթև հալեացք կուլտուրական աղգերի ներքին պատմութեան վրայ կը համոզեն մեզ գութանի կատարած աչդ պատկառելի դերի մէջ:

Ահա ձեզ Զինաստանը—աչդ խորհրդաւոր «երկնաչին կալսութիւնը» իւր մի քանի հազարամեալ—գիտութեան համար դեռ ևս հանելուկաչին կուլտուրաւով. նորագոյն ուսումնական հետազօտութիւնները աւելի և աւելի հաստատում են աչն ենթադրութիւնը թէ Զինաստանը ամենաճին երկրագործական երկիրն է եղած, ուր մեզնից դեռ ևս 5000 տարի առաջ երկրագործութիւնը ամենածագկած գրութեան մէջ է եղել. դրանով միաչն կարելի է բացատրել աչդ երկրի հարիւրաւոր միլիոն աղգաբնակութեան գոյութիւնը և հետզհետէ աճումը, որովհետև երկրագործութիւնը աչն միակ պարապմունքն է, որի խաղաղ բնաւորութեան չնորհիւ կարելի է դառնում աղգաբնակութեան ամենաբարձր աճում. մինչև օրս էլ չկալ մի երկիր, ուր երկրի ուղղումը աչնքան հսկաչական ընդարձակութեան և կատարելութեան հասած լինի ինչպէս մենք աչդ Զինաստանումն ենք գտնում: Քրիստոսից դեռ ևս հազարաւոր տարիներ առաջ երկրի մշակութիւնը պահանջել է կատարեալ կանալիղացիա, առանց որի Զինաստանի տաք և հասարակածաչին կլիման անկարելի է դարձնում կուլտուրական թանկագին բուսերի, որպէս բրինձի, բամբակի, թէւի, ցորենի արդիւնաբերութիւնը: Թողենք Զինաստանը և անցենք մի ուրիշ հին կուլտուրական երկրին—Հնդկաստանին: Այստեղ ևս գութանի գործը նոյնքան մեծ է եղել որպէս առաջինում. իսկ հին պատմական աշխարհը՝ Ասորեստանը, Բաբելոնը, Նիւպտոսը, Հրէաստանը, Փիւնիկիան և իւր քոչը կարթագէնը միթէ մի մի հրաշալի կոթողներ չեն հին դարի ծագկած երկրագործութեան համար, միթէ դրանց հինաւորց քաղաքակրթական կեանքը մեծ մասամբ արդիւնք չէ գութանի հսկաչական գործի: Հին Հաչաստանը ևս գուրկ չէ մնացել գութանի մաչրական ինամքից, ուր, ըստ մեր մեծ պատմագրի, «Արտաշէսի ժամանակ չմշակած դետին չէր գտնւում ոչ սարերում

և ոչ դաշտերումը. մինչ օրս էլ մեր երկրում անթիւ վիշատակներ են մնում որպէս ապացոյց մեր նախկին երկրագործական ծաղկած վիճակի Սակաջն գիւղատնտեսութիւնը ոչ մի երկրում ալնքան աղնւացած չէր որպէս Յունաստանում, մանաւանդ Հռոմում: Գիքտատորներին կարելի էր չաճախ գութանի մաճը բռնած տեսնել, ալը պարապմունքից հալքենիքը հրաւիրում էր նրանց պատերազմի դաշտ, որտեղից դափնիներով պսակւած նրանք դառնում էին նորից զէպի գութանը: «Այն, ինչ որ չէր կարողանում Հռոմին սեփականացնել բիւրաւոր հռովմայեցիների թափած արիւնը՝ պահում էր գութանի խոփը» ասում է երկրորդ դարի մի հռոմայեցի պատմագիր. իսկ թէ ինչպէս էր հռոմայեցին նաւում գիւղատնտեսութեան վրայ, դրա ամենագեղեցիկ ապացոյցը Յիցերոնի լատին խօսքերն են՝ *Omnium rerum, ex quibus aliquid conquiritur, nihil est agricultura melius, nihil uberius, nihil dulcius nihil homine, nihil libero dignius*«. (Բոլոր պարապմանց մէջ գիւղատնտեսութիւնը ամենալաւ, ամենից շահաւէտ, ամենից հաճելի, մարդին և ազատ տղամարդին ամենից արժանաւոր զբաղմունքն է: Հռոմայեցիք առաջինն են լինում, որ գիւղատնտեսութիւնը խապանիա են տարածում, ալըտեղից նա անցնում է Վալլիա և Բրիտանիա, իսկ այս երկրներէց փոքր առ փոքր մտնում է գերմանների մէջ:

Ազգերի քաղաքակրթութեան պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամեն տեղ, ուր որ գութանը մուտք է գործում, սկսում է նա կռւել բիրտ բարքերի դէմ, հալածում է վալքենի, թափառական որսորդին, խաչնարածին և դրանց խաղաղ աշխատանքի ստիպում. գութանը հաստատում է աշխատանքի և սեպհականութեան դադափարները, կապում է թափառող մարդին մի որոշ տեղի հետ, հաստատում անշարժ օջախ, ընտանիք, և, որ ամենագլխաւորն է, հիմնում է հաւրենիքը,¹⁾ որի պաշտպանութիւնը, ընդդէմ վալքենի առաջակարարոյ հարեաններից կամ խմբակներից, մի բնական պահանջ է դառնում գութանի հովանաւորութեան տակ ապրող անհատների համար:

Գութանի գործածութեան սկիզբը զանազան ժողովուրդների մէջ եղել է երկրագործութեան սկզբի հետ միաժամանակ: Գութանի գոյութեան մասին մեզ հասած տեղեկութիւնները շատ հին են. օրինակ գութանի նկարները գտնւած են եգիպտական կոթողների և գերեզմանաքարերի վրայ, որպէս նաև Բաբելոնի սեպաձև արձանագրութեանց մի քանիսնրի մէջ մի քանի անգամ չիշուում է գութանի անունը: Չնայելով այս կախարդական գործիքի հնութեանը նա դարերի ընթացքում շատ աննշան փոփո-

¹⁾ Համեմ. «Գիւղատնտեսական ինտելիգենցիա» լոգւածը պ. Ա. Արասխանեանցի, «Մուրճ» 1892, № 11, առաջին երկու էջերը:

խուժիւններն է ենթարկել, միմիայն 19-դ դարում դուժանը առաջին անգամ ենթարկեց հիմնական նպատակադարմար փոփոխութեան, ինչ էր ներկայացնում իրենից նախնական դուժանը. մի ամուր ծառի հաստ ճիւղ, կամ կոճղ, մի ծալրը սրած, իսկ միւսը բռնելու կամ քաշելու համար փոքր ինչ լարմարեցրած—ահա սկզբնական դուժանի ողջ մեխանիզմը. սրած ծալրը մտցնում էին զետնի մէջ, իսկ միւս ծալրին լծում էր մի ստրուկ, կամ եզ, ձի, ջորի, գոմէշ և ալն և քաշում էին գետնի վրայով. կոշտացած հողը պատռում էր և պատռածքի մէջ ցանում էին զարու, ցորենի կամ հաճարի հատիկները և ապա մի ոսկրեալ թիակով փոքր ինչ հող էին վրան տալիս. ահա նախնական դուժանի ողջ գործը: Ժամանակների ընթացքում եղան մի քանի փոփոխութիւններ. ծառի կորացրած ճիւղին մի փոքր աւելի շնորքով ձև տեցին, սրած ծալրը փոխարինեցին մետաղով: Գուժանի ալս վերջին ձևը մինչև օրս էլ պահպանւած է. արեւեան շատ ազգերի մէջ, նոյն իսկ հարաւալին Նւրուպալի մի քանի հեռաւոր տեղերում, գործածական է ալս ձևի դուժանը:

Գուժանի ձևի ալս պահպանողականութիւնը արդիւնք է նոյն իսկ գիւղատնտեսութեան պահպանողական բնաւորութեան: Նրկրագործութեան խաղաղ, հանդիստ համբերատար ոգին ամեն կերպ փախչում է աջալիս փոփոխութիւններից, որոնք քիչ չաջողութիւն են խոստանում, իսկ չաջող փոփոխութիւններ շատ քիչ են կատարւում. ալս է պատճառը, որ հռոմայական ժամանակներից մինչև 18 ըդ դարի վերջերը ոչ միայն գուժանի ալ նոյն իսկ երկրագործական միւս գործիքների և մեքենաների մէջ շատ աննշան առաջադիմութիւն ենք մենք տեսնում. միմիայն 18-դ դարում, երբ բնական գիտութիւնները ծաղկել սկսեցին և աղբ ասպարիզում նորանոր գիտեր տեղի ունեցան, երկիրն մշակելու մեքենաներն էլ սկսեցին փոփոխութիւններ կրել: Այդ ճիւղում ահագին դեր են խաղացել նախ և առաջ Անգլիան. ալս երկիրը ամենալն իրաւամբ համարւում է ներկալ գիւղատնտեսական մեքենաների հալհենիք և միւս կուլտուրական ժողովուրդների ուսուցիչ: Նւրոպական միւս ազգերը միմիայն 1851 թվի Լոնդոնի ցուցահանդէսում կարողացան ծանօթանալ անգլիական աղգի երկրագործական մեքենաների մէջ ցուց տւած հնարագիտական և գործնական ստեղծագործութեան ողջ արդիւնքների հետ. և ալ օրւանից ահա սկսեց միւս ազգերի մէջ ևս փոփոխութեան և կատարելագործութեան բուռն ձգտում, որը և մեծ աջողութեամբ պսակեց. աչնպէս որ ալսօր Ֆրանսիան, Գերմանիան, Աւստրիան և Ամերիկան ամենամեծ աջողութեամբ մրցում են իրենց ուսուցչի հետ երկրագործական մեքենաագիտութեան մէջ: Եկկէրի, Յիմմերմանի և Սակի վիթխարի գործարաններից դուրս եկած գիւղատնտեսական աննման մեքենաները տարածւած են ոչ միայն ընդարձակ Գերմանիայի կայսրութեան ամենահեռաւոր անկիւններ-

ներում, ալլ և աշխարհիս ամեն երկիրներում. բաւական է ասել, որ ալս երեք դործարաններից միմիայն երրորդը քսան տարւոյ ընթացքում 280,000 դուխաններ է ծախել, որի կիսից աւելին Գերմանիայի սահմաններից դուրս:

Ինչպէս մենք վերը տեսանք, նախնական գութանը շատ պարզ կազմութիւն ունէր և, համաձայն իր կազմութեան, գութանի կատարած գործն էլ պարզ և հաստատ էր. ուրիշ է գութանի կազմութիւնը ալժամ և ծանր նրա գործը: Եւրոպայի ազգակցութեան օր առօր բազմանալովը, բարձրանում էր նաև ալլ բազմութեան կենսամթերքների մէջ ունեցած պահանջի քանակութիւնը. մշակութեան ընդունակ հողի զինը գնալով թանկանում էր, և երկրագործը պարտաւորւած էր խիստ տնտեսութեամբ վարւել իր ձեռքի տակ եղած հողի հետ. քիչ հողի տարածութիւնից ստանալ ամեն արարձար արդիւնք՝ եղաւ բարձր մշակութեան ձգտող երկրագործի նշանաբանը: Համաձայն ալս պահանջի, բնականաբար, պէտք է փոփոխութեան ենթարկւին երկրագործական գործիքները և մեքենաները, որովհետև լաւ արդիւնաւէտ մշակութիւնը և տնտեսութիւնը սերտ կապւած էր հողը մշակելու գործիքների հետ: Սրանից մի քանի հազար տարի առաջ երկրագործը գոհ էր, եթէ նրա գութանը հողը ձեղքում էր և աղբալիտով հացահատիկների կամ փոքր ի շատէ չարմար պահեստ պատրաստում. ալժամ գութանից պահանջւում է, որ նա նախ՝ հողը խորը ձեղքի, ապա նրան մասնատի, շուտ տալ և լաւ խառնի. բացի ալլ պահանջւում է նաև, որ նա երկար դիմանալ, աշխատանքը զժւար չկատարի, քիչ ձգելու և կատարելու ուժ պահանջի, մշակութեան համար շատ ժամանակ չխլի, համապատասխանի զանազան հողալին պայմաններին և տեղափոխութեան համար չարմար լինի և գինը արժան: Արդեօք բաւականութիւն են տալիս ներկալիս սովնականաբար ելագործւած գութանները զիւղատնտեսի ալսքան բազմակողմանի պահանջներին. պարզ է որ ոչ բոլորովին. սակաւն ներկալիս եւրոպական գութանները ալսքան չարմարութիւններ և առաւելութիւններ են ներկալացնում նախնականի համեմատութեամբ, որ ալսօր իւրաքանչիւր գիւղատնտես կատարեալ իրաւունք ունի լիարերան օրհնել ալս կատարելագործութիւնները, որոնք տեղի են ունեցել գութանի մէջ ալս վերջին 50—60 տարիներում: Թէ արդեօք ինչ է սպասում գիւղատնտեսութեանը ապագայում, որքան հեշտացրած կը լինին գիտութիւնը և արւեստները հողի մշակութեան գործը գուցէ մի քանի տասնեակ տարիներից չետու—ալլ մասին դժւար է առ ալժամ ենթադրութիւններ անել. սակաւն տեսնելով ալս մի քանի տասնեակների մէջ կատարւած առաջադիմութիւնները, մենք իրաւունք ունինք չուսալու, որ կը վալ մի օր, երբ մեր թոռները, գուցէ զաւակները զարմանան իրանց հալրերի չետամնացութեան վրալ: Շոգի և էլէքտրականութիւն— ահա

Թէ ինչ տարրերով մենք պիտի մտնենք քսաներորդ դարը. իսկ թէ ինչ հրաշքներ պիտի դրանք կատարեն, ապագայում դրա մասին կարելի է ամենաոտակեղէն ենթադրութիւններ անել, քանի որ մեր օրերում վկայ ենք մինք ալն հսկալական գործին, որ անում են ալդ երկուսը իրանց ամենամանկական հասակում... Բալց թողնենք անշատ և խորհրդաւոր ապագայի մասին խօսալը և նրանով հիանալը և մի թեթև հալեացք ձղենք հողադործութեան մեղ ծանօթ անցեալի վրալ, նրա զարգացման չաճորդական ատտիճանների վրալ—ալն ժամանակ դժւար չի լինիլ աւելի ևս ամրացնել մեր չոլսերը մօտիկ ապագալից սպասելիք բարիքների մէջ:

(Նարունակելի)

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԲՈՇԱՆԵՐԻ ԱՆՑԵԱԼԻՑ

(Անտիպ աշխատութիւնից)

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

I

ԲՈՇԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ

Այս ժողովուրդը շատ սակաւ է ծանօթ որպէս գիտութեանը, նոյնպէս և մեզ՝ հայերիս, թէև մենք ամենից շատ պարտական էինք նորան վաղօրօք ծանօթանալու, քանի որ նա դարերից ի վեր եղբայրացած է մեզ կրօնով ու լեզուով:

Հայերէն լեզուով չկայ ոչ մի, չենք ասում լուրջ, այլ նոյն իսկ հասարակ աշխատասիրութիւն այդ ժողովրդի մասին, իսկ գիտութեանը նա յայտնի է միայն Ք. Պատկանեանի մի ուսումնասիրութիւնով, ուր դժբաղդաբար մի քանի էջեր միայն նւիրւած են բուշաներին: Այս պատճառով ահա դորա ուսումնասիրութիւնը ահագին անյարմարութիւններ ունի: Գնչուների ուսումնասիրութեան հէնց առաջին և զլսաւոր դժարութիւններից մինն է և նոցա անունը, որ շատ շփոթութիւնների պատճառ է դառնում, որովհետև զնչու ցեղերը իրանց համար առհասարակ որոշ, հատուտ և առանձնացատուկ մի անուն չունին. անտեղեակ, շատ անգամ նաև գիտնական գործին հմուտ, անձինք միւլենոյն անունը տալիս են և՛ հայ-բոշային, և՛ թուրք-մըթրբին, և՛ պարսիկ-ղարաչուն: Իրանք զնչուներն էլ առհասարակ թեթեամտաբար են վերաբերում դէ-

պի իրանց անունը և միշտ ձգտում են այն ազգութեան անդամ կոչել, որից ուզում են օգուտել, որի հաշվով ուզում են ապրել:

Իսկապէս նոքա ազգութիւն չեն էլ ճանաչում ու հասկանում այն մոքով, ինչպէս որ դա գործածական է մեր մէջ. ազգ, ազգութիւն բառերը բոշայերէնը չունի: Եւրոպական գնչուները իրանց անւանում են զոմ՝ կամ՝ բոմ, որ նոյնանիշ է մարդ անւան:

Գնչուի համար գոյութիւն չունի ազգութիւնը իբրև մի առանձին զաղափար, այլ մարդը — նա չի ճանաչում ազգ, հայրենիք և կրօն: Այն բազմութիւն անուններն իսկ, որով նոքա ճանաչում են օտարներին, կապ ունին լոկ ժամանակի և տարածութեան հետ. Իսպանիայում նա կոչւում է Զիտանոս, Իտալիայում՝ Զինկանի, այլ տեղերում՝ Եգիպտացի, Բոհեմիեն, Զինկեանէ, Ղարաչի, Յինդա, Յիգան, Բոշա և այլն... Գնչուների կեանքի ուսումնասիրութեամբ պարապող անձերը սովորաբար չեն որոշում այդ ցեղերը. բոլոր ցեղերին համարելով մի ազգութեան անդամ, նոքա մինը շփոթում են միւսի հետ, մինչդեռ, իրօք ծագումով գնչուները թէև մի ընտանիքի են պատկանում, բայց իրանց ներքին կացութիւնով, մանաւանդ բարբառներով զգալի կերպով տարբերւում են միմեանցից:

Այդ բոլորին մենք ընդհանուր անունով կ'անւանենք գնչու. նոցա այն ցեղին, որ խօսում է հայերէն և դաւանում է լուսաւորչականութիւն՝ բոշա կամ հայ-բոշա: Իսկ ֆինացիալ ցեղերը, համաձայն իրանց սովորական անւան՝ կոչւում են կամ զարաչի, կամ ցիգան և կամ մըլըրըբ, նայելով թէ նրանք աւելի թր ազգութեանն են չարած՝ պարսից, ռուսաց, թէ թուրքաց:

Բարձր-Հայոց բարբառով բոշա են կոչւում միայն լուսաւորչական-հայախօս գնչուները. նոյն կարծիքին է և Շոպէնը. Պատկանեանը նոցա տալիս է նաև անունս «նաղագործ». հ. Սրուանձտեանը բոշաներին մի տեղ անւանում է «հայ-բոշա», մի այլ տեղ՝ «մաղագործ հայ», երրորդ տեղը անխափր «բոշա» կամ «գնչու»:

«Մաղագործ» անունը սակաւածանօթ է և վերցրած է նոցա պարապմունքից — արհեստից: Այդպէս են անւանում իրանց բոշաների մէջ հասկացող պատւասէրները միայն, որոնք խորշում են բոշա արհամարհական, մասամբ նաև նախատական անունից:

«Մաղագործ» են կոչւում նոքա նաև մեր հոգևոր գործերում,

որպիսիք են պսակ, կնունք և այլն, երևի բոշաների պատուասի-
թիւնը չվիրաւորելու համար: Բոշայերէն նոքա իրանց անւանում
են չլոմ, որ համապատասխան է միւս գնչուների բոմ, կամ զոմ
անւանը, բայց կորցրել է մարդ նշանակութիւնը:

Սովորական հարց ու փորձի ժամանակ նոքա իրանց անխտիր
անւանում են հայ: Բոշա բառը հայերէն բարբառներում զործ է
ածւում նաև ածականաբար և, ըստ իս, յատուկ անուն պիտի չլինի:
Երգրումի բարբառով, բացի գնչուների այս ցեղից, ածականաբար
բոշա են անւանում այն անհատին, թէկուզ նա հայ լինի, որ
բազմիցս թախանձանքով՝ առանց վարձատրութեան մի բան է խնդ-
րում, գլխաւորապէս ուտելիքէն, կամ աշխատում է ուրիշի հաշւով
ապրել:

Այդ անւան մասին ահա հայր Ալիշանի կարծիքը. «յայտէ, որ
հին չէ բոշայից անունն, այլ ծագումն ինձ անյայտ. մենք սովո-
րաբար գնչու կ'անւանեմք՝ ինչ որ թուրքք չինկեանէ կ'ըսեն և
եւրոպացիք ծինկանի, ծինկարի և այլ ասոնց նման անւանք» ¹⁾:

Պատկանեանին ևս յայտնի չէ բոշա անւան ծագումը:

«Բոշա» անւան բացատրութիւնը, եթէ իրօք դա յատուկ անուն
է և սեփական է գնչուների այս ցեղին միայն, կարող է լոյս սփռել
նորա անցեալի վերայ, որովհետև Յինգա, Զիտանոս, Զինկեանէ,
Յիգան և այլ անունները, որ զանազան ազգեր տալիս են գնչու-
ներին, եթէ չենք սխալւում, ծագում են մի արմատից, մինչդեռ՝
«բոշա» կոչումը աչդ բազմաթիւ անունների մէջ եզակի է իւր
կազմութեամբ:

Գնչու անունն իսկ, որ այժմ մեզանում զործածական է իբրև
յատուկ անուն և նշանակում է ցիգան-չինկեանէ ընդհանրապէս,
իսկապէս ածական անուն է: Ահա դրա բացադրութիւնը Հայկա-
զեան բառարանից. «Գնչու... թլւառ և թոթով լեզուով, կամ թիւր
և եղծեալ արտաբերութեամբ խօսող. կամ կրճատելով և ծռելով
զբառս և զհնչմունս արտաբերող զբանս, որպիսիք են ծռալեզուք,
կամ ռամիկ գիւղականք և բոշայք»:

¹⁾ Այս և չաջորդ հատւածները, որ կրում են հայր Ալիշանի անունը,
մենք հանել ենք մի մասնաւոր նամակից, որ մեզ է ուղղած:

Մեր աշխարհիկ գրականութեան մէջ նոր-նոր քաղաքացիութիւն է ստանում բոլա բառը, որ Էրզրումի բարբառով տրւում է գնչուների միմիայն լուսաւորչական ցեղին. այդ վերջին նշանակութեամբ գործածում ենք և մենք:

Հետաքրքրական է իմանալ, թէ գնչու բառը ո՞ր դարուց է գործածւում մեր հին գրականութեան մէջ իբրի այս ժողովրդեան անուն. անշուշտ, այն դարերից, երբ գնչուները սկսել են աղճատելով և թոթովելով հայերէն խօսել:

II

ԲՈՇԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Բոշաները ոչինչ չգիտեն իրանց ծագման մասին. նոքա մոռացել են այդ. մի աւանդութեամբ միայն, որ անտարակոյս քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ է կազմել, նոքա իրանց Վայքնի սերունդ են համարում: Նոքա սովորաբար իրանց հայ են անւանում և համարում են սերնդակից հայերին:

Հայերն ևս նոցա ծագման մասին ոչինչ չգիտեն:

Պիտի ասենք, որ բոշաներին համարում են գնչուների մի ցեղ Շոպէն, Պասպառի, Պատկանեան, Վէյնդենբաում և այն բոլոր եւրոպացիք, որոնք առիթ են ունեցել նոցա մասին խօսելու:

Միայն հայր Սարգիսեանն է, որ իւր մի աշխատութեան մէջ նոցա համարում է հայաճեալ հայ աղանդաւոր մանիքեցիք¹⁾: Սակայն, դա մեզ երևում է միանգամայն զուրկ հիմունքից, քանի որ հէնց ինքը մի քանի տողից յետոյ իրան հակասում է ասելով. «գնչուներու վրայ զրոգներն,—ինչպէս նաև բոշաներուն,—է և Ը եւորդ դարէն անդին չեն անցներ անոնց զոյու թիւնն ի հայս, լեզւաբանական քննութեանց համաձայն»: Արդ՝ եթէ հայր Սարգիսեանի հետ ընդունելու լինինք, թէ «գնչուներն ու բոշաները» ծագում են Մանիքէա-Պաւլիկեան թոնդրակեցիներից, հապա՞մրտեղից ծագեց նոցա լեզուն, որի քննութիւնով «է և Ը-երորդ դարէն անդին չեն անցներ անոնց զոյու թիւնն ի հայս»:

¹⁾ Բազմավէպ 1893 թ. № 1 (կր. 24):

Այգլիսով գնչուների լեզուն գողի լեզու չի կարելի համարել, որովհետև գողի լեզուն լեզաբանական հետազոտութեան չի կարող ենթարկւել մի ազգի ծագումն ու անցեալն իմանալու և լուսաբանելու համար: Թէև այս առթիւ հ. Սարգիսեանը կարող է պատճառաբանել թէ իւր խօսքը միայն գնչուներին և ոչ հայ-բոշաներին է վերաբերում, բայց իրօք սխալը մնում է նոյնը, որովհետև գնչուներն ու բոշաները ծագումով չեն ասրբերում բոլորովին, մանաւանդ Պատկանեանը պարզ ապացուցել է հէնց բոշայերէնով գնչուների և բոշաների ցեղակցութիւնը:

Վերջապէս յարգելի հօր ենթադրութեանը հակասում են գնչուների անունը, մարդաբանական առանձնաչափութիւններն ու տիպը, ցեղական պարապմունքը և այլն:

Մենք ևս ընդունում ենք, որ բոշաները ցեղակից են գնչուներին, որ նոցա ծագումն էլ նոյնն է, ինչ որ համայն աշխարհի գնչուներինը, այն է հնդկա-արիական:

Այսպէս ուրեմն՝ բոշաները ծագմամբ հայեր չեն ¹⁾, ինչպէս կարծում են իրանք-բոշաները, մասամբ նաև հայերը, այլ մի եկամուտ, օտար տարր, որ արդէն եղբայրացել է հայերին, որի նման շատերին ենք կլանել մենք մեր պատմական երկարատև կեանքում:

III

ԲՈՇԱՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՏՆԵԼԸ ԵՒ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՏԵՂԵՐՆ ՈՒ ԹԻԻԸ

Փոքր-Ասիան առհասարակ և Հայաստանը մասնաւորապէս, բըռնելով հին աշխարհների միջնակէտը, նոցա փոխադարձ յարաբերու:

¹⁾ Ոմն Мелешко, „Кавказъ“ լրագրի 1854 թ. № 26. խօսելով «թումրուլցիներին» մասին, որ մեր մէջ չափանի են անունով—խաչագող, և պարապում են ռուս ժողովրդին սրբութիւններ վաճառելով, նոցա համարում է հայ-գնչուներ: Թումրուլցիներին գաղտնի լեզուին ծանօթ չլինելով, չենք կարող որ և է կարծիք չափանել ազդ մասին, մանաւանդ չիշեալ լոգաժի բովանդակութեանը մենք ծանօթ ենք միայն Միանուարեանի „Библиография“ ից և չգիտենք թէ լոգաժագիրն ինչ հիմունք ունի ալլպէս կարծելու:

Թեան միակ ճանապարհն են: Այդ պատճառով բազմաթիւ ազգեր հնագոյն ժամանակներից մինչև նորագոյն դարերը Ասիայի խորքերից եկել և անցել են այդ միջազգային կամրջով, որոնց շատերի կենդանի հետքերն այսօր էլ տեսնում ենք այդ երկրում:

Այդ անցորդ ազգերից մինն են և զնչուները, որոնք Հայաստանում և Փոքր-Ասիայում թողել են իրանց ցեղերից մի քանիսը. այդ ցեղերից մինը կոչւում է հայ-բոշա, կամ հասարակօրէն բոշա, որ Հայաստանի բազմաաւար ժողովուրդների թւում ապրում է ցան ու ցիր և իւր սակաւութեան շնորհիւ շատ աննշան տեղ է բռնում:

Թէ որ կողմից, ինչ ճանապարհով և մտաւորապէս որ դարերում կարող էր մտնել այս մթին, առանց պատմութեան և ժամանակագրութեան ժողովուրդը Հայաստան, կ'աշխատենք պարզել այստեղ:

Նախընթաց գլխում ասացինք, որ բոշաները Հնդկա-արիական ծագումն ունին. այսինքն նոցա նախկին բնակավայրը՝ արիական ազգերի ծննդավայրը—Հնդկաստանն է եղել: Պարզ է, որ զնչուները Հնդկաստանից Հայաստան մտնելու համար կարիք չունէին Եւրոպա գնալ և ապա Հայաստան վերադառնալ, որ նոցա ճանապարհին է:

Յայտնի է, որ զնչուներն Եւրոպայում երևացին դեռ ժ. դարու սկզբներին, իսկ Հայաստան, անտարակոյս, նոքա մի քանի դարեր առաջ պիտի մտած լինէին, որովհետև մինչ Եւրոպական շատ զնչուների լեզուներում նկատելի է յունականի ազդեցութիւնը, որ նշան է թէ նոքա երկար ժամանակ ապրել են Յունաստանում, ասիական զնչուների լեզուն զերծ է այդ ազդեցութիւնից, որ նշան է թէ նոքա Եւրոպա չեն եղած, այլ Փոքր-Ասիա աւելի առաջ են եկած, որտեղից նոցա մի մասը Յունաստանով անցել է Եւրոպա, թէև Աֆրիկայից անցնող ցեղեր ևս եղել են:

Ռուս գիտնական և յայտնի ճանապարհորդ Ելիսէեւը բաց է ի բաց յայտնում է, որ «նոքա՝ (Փոքր-Ասիայի զնչուները) այստեղ երևեցան աւելի շուտ քան թէ Եւրոպայում, հաւանականօրէն քրիստոնէութեան առաջին դարերում»¹⁾: Ինչպէս տե-

¹⁾ Антропологическая экскурсія поперегъ Малой Азии. А. В. Елисѣева. 1887 г. (Խր. 30):

սանք, մօտաւորապէս նոյն կարծիքն է յայտնում և հ. Սարգիսեանը, թէ ըստ լեզւաբանական հետազօտիչների՝ գնչուներն ու բոշաները Հայաստանում երևացին է և Բ դարերում: Մենք ևս է և Բ, կամ Թ. դարերը համարում ենք մօտաւորապէս այն ժամանակամիջոցը, երբ գնչուներն արդէն հաստատուել էին Հայաստանում: Այդ դարերի մեր մատենագիրների մէջ, որքան մեզ յայտնի է, դժբաղդաբար ոչ մի տեղեկութիւն չկայ բոշաներին վերաբերեալ: Յովհաննէս կաթող. պատմիչը միայն, Ժ. դարու սկզբները յիշում է ժողովուրդ մի գաբուռնացի անւամբ, որ թւի թէ վրանաբնակք էին ի կողմանս Սիւնեաց, Վասպուրականի և Ատրպատականի, կարդում ենք հայր Ալիշանի նամակում. «Եւրոպայի գիտնականաց կամ քննչաց մէջ ալ գտած է այս կարծիքն ունեցող, այսինքն թէ գաբառնացոց սեբունդք ըլլան գնչուներ»:

Շատ հաւանական է կարծել, թէ Յովհաննէս կաթող. յիշած գաբառնացիք բոշաները լինեն, որ արդէն Թ և Ժ դարերում հաստատուել էին Հայաստանի արևելեան նահանգներում:

Սիւնիք, Վասպուրական և Ատրպատականն էլ այն նահանգներն են, ուր հաւանականօրէն առաջին անգամ պիտի երևային գնչուները, քանի որ, ինչպէս տեսանք նախաբանից¹⁾, ըստ Կոլոչիի՝ գնչուների մի մասը ցամաքով — Պարսկաստանով ու Միջագետքով մտաւ Փոքր-Ասիա: Իսկ մեր երկրի սահմանակից նահանգները Պարսկաստանի հետ՝ Սիւնիքը, Վասպուրականն և Ատրպատականն են, Միջագետքի հետ՝ Հայոց-Միջագետքը: Այս վերջինը չի յիշում Յովհաննէս կաթող. երևի այն պատճառով, որ իրան յայտնի չի եղել: Եթէ չենք սխալում, Մեր բերած բոշայերէն բառարանում¹⁾ պարսկերէն բառեր կան, որոնք պարզ ապացոյց կարող են լինել այն ենթադրութեանը, թէ բոշաները Պարսկաստանից են մտել Հայոստան:

Այդ ճանապարհի մասին աւելորդ չենք համարում զնել և Ելիսէէի կարծիքը. «Յիզան խմբերի ճանապարհը, որպէս երևում է նրանց բանաստեղծութիւնների, կրօնի և մի քանի աղճատեալ յատուկ անունների ուսումնասիրութիւնից, մօտաւորապէս նոյնն է,

¹⁾ Անտիպո

ինչ որ Մակեդոնիայի աշխարհակալի ճանապարհը ¹⁾։ Այնպէս որ նրանք Հայաստան պիտի մտած լինին մասամբ Պարսկաստանից, մասամբ Միջագետքից, ուր և, այսինքն Հայոց-Միջագետքում, ինչպէս յետոյ կը տեսնենք, նրանք ընդունեցին քրիստոնէութիւն։

Այժմ, սակայն, որքան մեզ յայտնի է, այդ նահանգներում բոշաներ չկան, թէև ուրիշ գնչուներ կան։ Բոշաները այժմ կենդրոնացած են Հայաստանի արեւմտեան նահանգները, առաւելապէս Սեբաստիոյ կողմերը։—Յայտնի է, որ ԺԱ դարու սկզբին Վասպուրականի Սենեքերիմ թաւաւորը բազմաթիւ հայերի հետ դաղթեց Սեբաստիա։ Բնականէ, որ այդ գաղթականութեան հետ պիտի գնային և Վասպուրականի բոշաները, որոնք, իբրև թաւաւաշրջիկ, անտուն, անտեղ մի ժողովուրդ, աւելի դիւրութիւն և յարմարութիւն ունէին խուսափելու թշնամուց՝ քան բնիկ հայերը, որոնք պիտի թողնէին իրանց դարաւոր հայրենիքը, պապերի հանդստարանը, կայքն ու գոյքը։ Հէնց այսօր էլ բոշաների ստւար մեծամասնութիւնը հաստատուած է մասամբ Սեբաստիոյ կողմերը, մասամբ նրանից արեւմուտք, որի կենդրոնը այժմ Պոչպատն է համարուում։

Բոշաների երկրորդ մասը, որ ապրում էր Միջագետքում, աւելի ուշ, հաւանականօրէն Լէնկ-Քեմուրի արշաւանքներից յետոյ, Եփրատի ուղղութեամբ ճանապարհ ընկաւ դէպի հիւսիս՝ Բարձր-Հայք-Էրզնրում, այնտեղից էլ տարածւեց Օլթի, Կարս, Աջարա, Տրապիզոն, իսկ 1828-ին՝ նաև Ալեքսանդրապոլ, Ախալքալաք, Ախալցխա և Կովկասեան այլ քաղաքներն ու դաւառները։ Այս մեր խօսքերն ու ենթադրութիւնը վերաբերում են բոշաների մեծ խմբերով կատարած և առ միշտ մի որ և է տեղում հաստատած գաղթականութիւններին։ Այդ գաղթականութիւններից առաջ էլ, անշուշտ, նրանք ըստ սովորութեան ժամանակաւորապէս պանդխտած և այցելած կը լինէին Հայաստանի զանազան մասերը։

Եթէ ուշի ուշով դիտելու լինենք բոշաների այժմեան տեղերը Հայաստանում և Փոքր-Ասիայում, կը դանք այն եղրակացութեանը, որ նրանք բռնում են այդ երկիրների հիւսիս-արեւմտեան նահանգները և տարածւում են Զիլէ, Սեբաստիա, Արաբկիր, Ակն, Կարին,

¹⁾ О материалахъ для изслѣдованія цыганъ. А. В. Елисѣева. Կր. 23.

Օլթի, Կարս, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք և Ախալցխա քաղաքները իրանց զաւառներով: Եթէ այդ քաղաքները միացնենք մի ընդհանուր գծով, կըստանանք մի ճիշտ զուգահեռագիծ Սև-ծովի հարաւային ափերի հետ, որի մէջ տարածւած են այժմեան բոշաները: Նրանց բնակութեան հարաւային սահմաններն են Արածանին և Բինգեօլ լեռները, որոնցից հարաւ, որքան մեզ յայտնի է, բոշաներ չկան: Այստեղ ահա բերում ենք նրանց բնակութեան տեղերի և քանակութեան մասին վիճակագրական տեղեկութիւններ: Այս թիւերը ճիշտ են մօտաւորապէս միայն, որովհետեւ բոշաները իրանց անհանգիստ թափառական նիստ ու կացով միշտ խոցս են տալիս կանոնաւոր վիճակագրութիւնից, այնպէս որ, նրանց ստոյգ թիւն իմանալը շատ դժուար է, եթէ չասենք անհնարին: Կովկասեան բոշաների թիւը մենք հաւաքել ենք մասամբ պաշտօնական աղբիւրներից, առաւել ևս անմիջապէս՝ անձնական հարց ու փորձով: Իսկ Փոքր-Ասիայի բոշաների թիւ մասին մեր աղբիւրնէ հայր Սրուանձատեանի «Փոքրոս-Ասբարը», որ միանգամայն արժանահաւատ կարելի է անւանել, քանի որ ականատես է իր զրաճներին: Կովկասեան բոշաները ցրւած են գլխաւորապէս Կարսի, Երևանի և Թիֆլիսի նահանգների արեւմտեան հոյաշատ զաւառներում և ըստ մեծի մասին 1828 թ. գաղթականներից են: Ամենից շատ՝ բոշա կայ Կարսի և Ալեքսանդրապոլի զաւառներում:—Ահա նրանց մանրամասն ցուցակը:

Ալեքսանդրապոլում և զաւառում 57 տուն, որոնցից երկու տուն հայ-կաթոլիկ-բոշաներ են և ապրում են Փռ-Ախպուր գիւղում: Կարս՝ 20 տուն, համանուն գաւառի Զայիմ գիւղ՝ 20 տ.: Ախալքալաք և զաւառ 31 տ., Մալկա՝ 20 տ., Ախալցխա՝ 16 տ., Օլթի և զաւառ՝ 17 տ., Լոռի՝ 5 տ.: Երևանում, Գանձակում, Թիֆլիսում և նոյն իսկ Շամախումն էլ մի ժամանակ եղել են բոշաներ, բայց երեւի մասամբ գաղթելով, մասամբ թողնելով իրանց ցեղական պարապմունքը, բոլորովին մոռացել և խառնւել են տեղացի հայերի հետ: Նրանց սերնդից այժմս Թիֆլիսում լաւ վաճառականներ կան, որ զեռ կոչւում են «Բոշի-տղերք»: Ք. Պատկանեանը Շօպէնի աշխատութիւնից վերցնելով ասում է, որ ճնախկին Արմեանսկի օբլաստում (Այժմեան Երևանի նահանգ) 46 ընտանիք հայ բոշաներ կան. 101 ար. սեռի, 94 իգ. ընդամենը 195 հոգի: Անտարակոյս, նրանք ձուլւել

են հայերի հետ: Բացի դրանից, եթէ չենք սխալուում, Կովկասի այլ մասերում բոշաներ պիտի չլինին: Նրանց մեծագոյն մասը ապրում է Տաճկա-Հայաստանում և Փոքր-Ասիայում: Նրանց մասին թող խօսի հայր Սրուանձտեանը.— «Վէզիր-Քեօբրուէն մինչև Գասթամոնի, « կըտարածւին հայ մաղագործաց բնակութիւնները և իրանց կենդ-
 « րոնը կը համարւի Պոյպատ: Ասոնք գարնանէ մինչև ձմեռն կըսփո-
 « ւին գեղեր և քաղաքները մինչև Սևաստ. միայն ձմեռը իրանց
 « խորճիթները կը քաշւին... Պոյպատու մաղագործ Հայոց թիւը
 « 6—7000 կը հաշւէին, ի բաց առեալ անոնք, որ այլ և այլ քա-
 « ղաքաց և գիւղից մէջ բնակութիւն հաստատած էին»¹⁾:

Նոյն գրքից քաղում ենք և հետևեալ տեղեկութիւնները.
 « Պաթրայ քաղաք՝ մաղագործ հայք 290, Զիլէ՝ 93 բոշա, Մարդ-
 « ւան 481, Վէզիր-Քեօփրու 280»:

Ինչպէս երևում է, Ալնի և Արաբկերի մասերն էլ բոշաներ կան, որ պատահել են հ. Սրուանձտեանին, որոնց մասին նա գրում է. «Աղտոտ զնուներ իրենց էշերով և ձագերով թաւալած են
 « ջրոյն ափը. մուրացկանութեան տուրքակներ և բուռները բացած
 « մեր շուրջն առին»:

Բոշաներ կան նաև Կարնում և իր շրջակայքում, դէպի Տրապիզոնի ճանապարհը ցան ու պիր: Փասպատին մի միսինարի գրութիւնից առնելով ասում է, որ Թոխաթուֆն ու նրա մօտերքը բոշաներ կան. նրանք Լուսաւորչական են և կոչւում են «բոշա»:

Այս մեր բերած տեղեկութիւնների համեմատ եթէ ուզենք բոլոր բոշաների գէթ մօտաւոր թիւն իմանալ, կըստանանք հետևելալը. Կովկասում բնակւող բոշաները վերև բերած թւերով 195 ընտանիք են: Եթէ ամեն մի ընտանիք միջին թւով հաշւենք հինգ անդամ, կըստանանք 975 հոգի.— անւանենք 1000, ամենաշատը Կովկասում նրանց թիւը 1500-ից աւելի ոչ մի դէպքում չի կարող լինել:

Փոքր-Ասիայի միայն Պոյպատ քաղաքում «ի բաց առեալ անոնք, որ այլ և այլ քաղաքաց և գիւղից մէջ բնակութիւն հաստատած էին», հ. Սրուանձտեանը հաշ-

¹⁾ Թուրոս-Աղբար. 272 երես:

ւում է 6—7000 բոշա: Պաֆրայի, Մարզանի և այլոց բոշա բնակիչների թիւն էլ, որ վերևը դրինք, կան է 1144 հոգի: Եթէ Կարնի և իր շրջակայքի, Խարբերդի, Ակնայ և այլ տեղերի բոշաներին էլ հաշւենք 3000 հոգի և աւելացնենք առաջիններին, կըստանանք Տաճկա-Հայաստանի բոշաների թիւը 11,044 հոգի. Կովկասեան 1500-ի հետ՝ կան է 12,544 բոշա: Յամենայն դէպս բոշաների թիւն ամբողջովին՝ հաւանական է, որ 15,000-ից անց չլինի:

IV

ԲՈՇԱՆՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Մենք նախընթաց գլխում մօտաւորապէս որոշեցինք, թէ գլխունները Հայաստան պիտի մտած լինեն Պարսկաստան — Միջագետքով է—Թ դարերում. այժմ հարկաւոր է լուծել մի այլ հանելուկ, որ պատմութիւնից ու բանասիրութիւնից մինչև օրս մնացել է բոլորովին անուշադիր. դա այն խնդիրն է թէ արդեօք բոշաները երբ ընդունեցին քրիստոնէութիւնը՝ լուսաւորչականութիւն:

Որքան յայտնի է պատմութիւնից, եթէ չլինէք մի քանի բացառիկ դէպքերը, հայերը կրօնական բանասիրութիւն չեն ունեցել. Հայաստանում ազատ դաւանում էին իրանց կրօնը Բազրատունիք և ապա հրէական բաղմամբիւ դադթականութիւնները. չինացի Մամբունի սերունդը այստեղ շարունակում էր Գեմիարի և Գիսանէի պաշտամունքը առանց հալածանքի... Հայոց աստուածների պանթէոնում պատաւոր տեղ ունէին յունաց և ասորոց աստուածները. նոյն համբերատար ոգին տիրում էր և քրիստոնէաց հայոց մէջ, այնպէս որ չի կարելի կարծել, թէ այս ազգութիւնը բռնի ստիպած լինէր բոշաներին իւր կրօնը ընդունել տալու, մանաւանդ հայերն այդ չէին կարող անել այն խառնաշփոթ ժ, ժԱ, ժԲ դարերում, (երբ կարծում ենք թէ բոշաներն ընդունեցին քրիստոնէութիւն), երբ սխալում են Տուզըիլների և Ասիասլանների արշաւները մի կողմից, յունաց՝ Մնին և Հայաստանը տիրելու ձգտումը միւս կողմից և ներքին անվերջ երկպառակտումներն երրորդ կողմից:

Որովհետև զնչունների զոյութեան գլխաւոր պաշմաններից մինն է անխորի տիրապետող ազգութեան կրօնին հետեւելը, ուստի ան-

երկբայ կարելի է ասել, որ բոշաները քրիստոնէութիւն ընդունեցին առանց հայերի միջամտութեան, աստիճանաբար և ինքնաբերաբար:

Նրկար ժամանակ ապրելով հայերի մէջ, սովորելով մեր լեզուն, ծանօթանալով հայերի վարք ու բարքին, կրօնին ու ծիսակատարութիւններին, նոքա հետզհետէ ընտելացան այդ բոլորին՝ և կամեցան միանալ հայերի հետ, որոնք, ի հարկէ, չպիտի խնայէին այդ միութեանը նպաստել բարոյապէս:

Արպէս զի այդ կիսավայրենի ժողովուրդը ընտելանար քրիստոնէութեան և ձանաչէր նորա առաւելութիւնը, անտարակոյս, պիտի անցնէին մի քանի դարեր այն օրից, երբ նա մտաւ Հայաստան, այնպէս որ բոշաների քրիստոնէութիւն ընդունելը պաշտօնապէս՝ անշուշտ պէտք է վերագրել ՓԱ. ԹԲ. դարերին:

Յիրաւի, ԹԲ. դարում մեզ յայտնի է մի ժողովուրդ, որ լուսաւորչականութիւն է ընդունում, որի մկրտութեան և բարոյական կրթութեան մասին Ն. Շնորհալին գեղեցիկ պատւէրներ է տալիս Սամոսատի քոր եպիսկոպոսին. խօսքս Արևորդոց մասին է, որ ըստ Շնորհալու յայտնի թղթի՝ պաշտօն էին մատուցանում արևիկն և բարդի ծառին, որոնց նա հին հեթանոս հայերի մնացորդ է համարում:

Մեզ ստոյգ յայտնի չէ գնչուների նախնական կրօնը, այլապէս զիւրին կը լինէր որոշել Արևորդոց բոշա, կամ հայազգի արևապաշա լինելը:—Գնչուների կեանքով հետաքրքրուող բոլոր նշանաւոր հետազօտիչներն այն կարծիքն են յայտնում, որ նոքա չեն ունեցել առանձին, սեպհական կրօն:

Շատերը մինչև անգամ նոցա համարում են մի «անկրօն» ժողովուրդ: Գնչուն սեպհական ոչինչ չի ստեղծագործում, այլ միայն օգտուում է ուրիշի ստեղծագործութիւնից. այժմեան գնչուները դաւանում են աշխարհի համարեա բոլոր կրօնները:

Սակայն, Ա. Վ. Ելիսէեը՝ Կունաւինի մեծագին հաւաքածուից նիւթեր քաղելով այն կարծիքն է յայտնում, որ ցիգանները երբեմն դաւանում էին Չենդ-աւետի վարդապետութիւնը, որպէս այդ ցոյց է տալիս նոցա հեքիաթների ուսումնասիրութիւնը: Այդ հեքիաթներից երևում է, որ ցիգանները «Առսապարգև Ջանտրա»-ին—արևին

ընդունում էին իբրև Աստուած, որ շրջում է «ոսկէ կառքով և արծաթէ ձիերով»:

Ուրիշ հէքիաթներից երևում է բարու և չարի կռիւը, որ նման է Որմզդի և Արհիմանի կռիւին՝ ըստ Զենդի: Այս հեռաւոր ցոյցերից հասկանալի է, որ գնչուները երբեմն դաւանել են հին պարսից կրօնը, որից շատ չէր տարբերուի և հին հայկականը, մանաւանդ գնչուները պաշտում էին «Առասպարգև Զանտրա»-ին — հայոց «Արեգին»:

Գնչուների և հայերի նախնական կրօնների այս նմանութիւնը ինկատի ունենալով, կարծեմ՝

ա) անհաւանական չի լինիլ, եթէ ենթադրենք, որ Կոցա նմանութիւնից խաբւած՝ Ն. Շնորհալին Արևորդոց համարել է հայազգի հեթանոսներ:

բ) Գնչուն ազգութիւն չի ճանաչում. այսօր իսկ մի գնչու չի կարելի գտնել, որ իր ազգութեան անունը տալ, իբրև առանձին ժողովրդի. որ ազգութեան հետ գործ ունեցաւ, նորա անունն ու կրօնն էլ ընդունում է նա. «ում սալին նաոի, նորա զուռնան կը փչի». այդ Ֆակո է: Յայտնի է, որ Արևորդիներից պատգամաւորներ էին գնացել Շնորհալու մօտ. այն էլ է յայտնի, որ այդ պատգամաւորների զաւուց առաջ, ինչպէս ներքեւ կը տեսնենք, նոցանից շատերը մկրտւած էին, իսկ բոլորը միասին դեռ չմկրտւած, իրանց քրիստոնէսաց էին կոչում. ուստի՝ ոչ մի տեղիք չկայ կասկածելու, որ այդ պատգամաւորները աւելի շահաւէտ, նպատակադարմար և պատուաբեր կը համարէին Շնորհալու մօտ իրանց հայ անւանել, քան մի համաշխարհային Պարիպի անունը տալ, որպիսին է գնչուն (կամ Արևորդին): Այդպիսի օրինակներ այսօր էլ շատ ունենք աչքի առաջ. ուտիացիք ու բոշաները իրանց հայ են անւանում, թէև ծագումով հայեր չեն. ընդհակառակը ծագումաւ հայ-կաթոլիկները իրանց Ֆրանկ են կոչում, բողոքականները Փարմասոն, լիւտերական, յունադաւան հայերն իրանց հոռոմ, ուռում են կոչում: Տգէտ ժողովուրդը ազգութիւն չի ճանաչում, այլ միայն կրօն. այդ է պատճառը, որ Վրաստանի հայ-կաթոլիկներից շատերը իրանց համարում են վրացի-կաթոլիկ, որովհետև կրօնով էլ, լեզուով էլ խորթացած են հայութիւնից:

Մանաւանդ Արևորդիք հայերէն են խօսելիս եղել. «զի ազգաւ և լեզուաւ ի տոհմէ հայոց են», այնպէս որ այդ հանգամանքները պէտք է համարել Շնորհալու սխալի գլխաւոր պատճառներից մէկը, որոնք շփոթեցրել են նրան:

գ) Որ ամենագլխաւորն է, այս մեր ենթադրութեանը, թէ Արևորդիք զնչուններ են, նպաստաւոր են նոյն իսկ Շնորհալու սեփական խօսքերը, որոնք համարեա զմի կասկած չնն թողնում թէ Արևորդիք զնչուններ են: «Նոյնպէս կանանց պատուէր տուք, գրում է Շնորհալին իր թղթի մէջ, 'ի կախարդութենէ, և ի դե-
« ղատուութենէ և յամենայն դիւական աղանդաւորու-
« թենէ ի բաց կալ. զի ամենայն ոք որ կախարդութեան զհետ
« երթայ, դիւաց է պաշտօնեաց և երկրպագու... Նոյնպէս և որ
« զ'իլիդ և զաղտեղի իրս ի կերակուրս կամ յըմպե-
« լիս խառնեալ՝ ուտել քրիստոնէի վասն դիւական
« սիրոյն... և զզուշացուցէք զնոսա յամենայն այսպիսի բժժա-
« գործութենէ»: Տղամարդոց մասին նա հետեւեալ պատուէրներն
է տալիս. «ի բաց կալ ի սպանութենէ, ի շնութենէ,
« պուսնկութենէ, ի գողութենէ, ի նենգութենէ քն-
« կերաց, ի յարաբերութենէ և յամենայն չար գործոց առ-
« տանայի, զորս ստէ Աստուած և փոխանով այսոցիկ՝ լինել եղբայ-
« րասէր և զմիայն 'ղացլոց իրս զգողանալ, այլ՝ յիւր
« արդար ստացուածոցն տալ կարօտելոյն»¹⁾:

Շնորհալու այս ականքները միանգամայն յիշեցնում են գրնչուններին. այդ պատուէրները չէին կարող վերաբերել բնիկ հայերիս. յիրաւի, չենք կարծում, թէ Արևորդիք, հայ ազգի լինելով հանդերձ, բարոյապէս այդչափ հեռու կանգնած լինէին իրանց քրիստոնեայ եղբայրներից. ընդհակառակը, յիշեալ յատկութիւնները համարեա կէտ առ կէտ այսօր էլ տեսնում ենք բոլոր զնչունների մէջ:

¹⁾ Տես Ընդհանրական թուղթ Ն. Շնորհալու, Վերաւազեմ 1871. «Յաղագս Արևորդեացն դարձի, ուղղեալ առ քրիստոնայոսն Աստուծա քաղաքի», — (Էր. 223—229): Տես նաև մեր լուծածում Սուրբ զնչունի վարք ու բարքի նկարագիրը. «Մուրճ» 1892. № 7—8, 9 Հայ-բոշաներ վերնագրով, ալլև № 3, Գինա Ռաշնիչիչ:

Այսօր էլ արտահայտութիւնը և գողութիւնը (որի վրայ առանձնապէս շեշտում է Շնորհալին. «ոչ միայն զայլոց իրս ոչ գողանալ») նրանց յատկանիշ կողմն է, այսօր էլ զնշուները ըստ մեծի մասին իրանց ապրուստը հայթաղթում են կախարդութիւնով, սիրադաւերով և «բժժագործութիւնով», որպէս Արևորդիք:

դ) Մեր աշխատութեան մէջ դժբաղդաբար չիշեալ յատկութիւնները առանձնապէս աչքի չեն ընկնում և չեն շեշտում, որովհետեւ նրա նիւթը գնշուների մի այնպիսի ցեղն է, որ ըստ մեծի մասին զերծ է այդ վատ կողմերից. այն ինչ՝ մնացեալ թէ եւրոպական և թէ ասիական գնշուներին լիովին յատուկ են Շնորհալու ակնարկած կողմերը, որ կարծես հէնց այսօր դիտած և գրած լինի դրանց: Այդ մեզ չպիտի զարմացնէ. բոշաները ի բնէ զերծ չէին կարող լինել այդ յատկութիւններից. դա մէկ պէտք է վերագրել Շնորհալու նման հովւապետի հեռատես և մանրագնին հրահանգներին, որոնցով խորհուրդ է տալիս Սամոստիոց քորեպիսկոպոսին նոր ընծայեալներին առաջնորդել բարոյական ճանապարհը. մէկ էլ՝ քրիստոնէութեան բարերար և հայազգի կուլտուրական ազդեցութիւնը բոշաների մէջ խեղդեցին այդ բնածին յատկութիւնները, նրանց փոխանակ պատուաստելով աւելի բարի և առաւել ազնիւ յատկութիւններ, որոնցով այժմ փայլում են մեր բոշաները:—Աւրիշ կերպ անկարելի է բացատրել այն անպնդի գողութիւնը, որի մի ափին կանգնած են բոշաները իբրեւ զուտ բարոյական ժողովուրդ, իսկ միւսին՝ մնացեալ գնշու ցեղերն, իբրեւ տիպար անբարոյակաւութեան:

ե) Շնորհալու սխալի գլխաւոր պատճառներից մինն էլ այն է, որ նա, ինչպէս երևում է, Արևորդոց չի ճանաչում անմիջապէս, այլ ի լրոջ միայն. համարձակում եմ կարծելու, որ նա, մինչև անգամ Արևորդոց շփոթում է Թոնդրակեցոց հետ... «Եկին և առաջի մեր ինոցանէ և գնոյն բանս աղաչանաց խօսեցան ընդ մեզ (Արևորդիք ուզում են քրիստոնէաց դառնալ) և մեք ծանուցաք նոցա զոր ընթերցեալ էաք ի դրոց (!?) վասն դիւապաշտ ազանդոց (!?) նոցին, և զոր լուեալ էաք ի համբաւէ յընտելակցաց նոցին զգանազան չարիս բանիւ և գործով զնոցանէ... Որպէս և դոքա առ մեզ եկին, յուրաստ եղեն երդ-

մամբ մեծաւ ի չար աղանդոյ (!?) անտի, և նզովեցին բերանօք իւրեանց, որ զայնպիսի ծածուկ անասուածութիւն ունիցի յինքեան և զոր ինչ սահման եղաք նոցունց՝ յանձն առին կատարել զամենայն»... Մի քիչ յետոյ շարունակում է. «իսկ զայնոսիկ, որք յառաջագոյն մկրտեալք լինին, միայն զխոստովանութիւն առեալ... Ս. Միւռոնաւ զճակատն դրոշմեցէք... Իսկ եթէ ստուութեամբ լինիցի դարձ նոցա, որպէս և կարծեն քաղումք զնոցանէն, և դարձեալ անդրէն ի փոխածն իւրեանց դառնան, մեզ և ոչ մի ինչ փնասէ»:

Այս հատուածի մէջ երեք նշանաւոր կէտեր են շոշափւում. մէկ որ Շնորհալին կարգացել է Արևորդոց աղանդի մասին և նոցա ընդելակիցներից լսել է Արևորդոց չար գործերի մասին. դրժբազդաբար չի յիշում թէ ի՞նչ գիրք է եղել նրա կարդացածը: Արևորդոց մասին, որքան մեզ յայտնի է մատենադրութիւնից թէ Շնորհալուց առաջ և թէ յետոյ, ոչ մի քիչ թէ շատ մանրամասն գրութիւն, բացի հատակտուր հատուածներից՝ չի եղել. գէթ այսօր մեզ յայտնի չէ մի այդպիսի գրութիւն, որ նւիրւած լինէր այդ «աղանդի» պատմութեանը. չենք էլ կարծում, թէ մի այդպիսի «գիրք» գոյութիւն ունեցած և կորսւած լինի. ընդհակառակը քանի որ Շնորհալին Արևորդոց դենը «աղանդ» է անւանում, քանի որ Թոնդրակեցոց վերաբերեալ թղթեր-«գրքեր» կային Շնորհալուց առաջ, քանի որ Մազիստրոսը Արևորդոց յիշում է Թոնդրակեցոց մասին գրած թղթի մէջ, քանի որ Շնորհալին անմիջապէս ծանօթ չէր Արևորդոց, այլ «ի համբաւէ յընդելացած նոցին», ապա մենք հիմք ունենք կարծելու, որ նա Արևորդոց շփոթում է Թոնդրակեցոց հետ և այդ պատճառով էլ նրանց հայ է համարում ինչպէս Թոնդրակեցի հայք, մանաւանդ, ինչպէս տեսանք, Արևորդի-գնչուններն էլ իրանց իբրև հայ պիտի ներկայացրած լինէին Շնորհալուն: Այդ մեզ օտարոտի և զարմանալի չալտի թւաց, որովհետև դեռ մեր օրերում ևս, ինչպէս տեսանք, կան կարծողներ, թէև առանց որ և է հիմունքի, թէ գնչունները հայազգի Թոնդրակեցիք են ¹⁾:

¹⁾ Տես նախընթաց գլուխը:

Երկրորդ, Արևորդիքը ինքնաբերաբար են եկել քրիստոնեաց դառնալու և նրանցից ոմանք արդէն մկրտած են եղել:

Երրորդ, ինչպէս առհասարակ թղթի ամբողջ ոգուց, մանաւանդ նրա այս վերջին տողերից, այն եզրակացութեանն է գալիս ընթերցողը, որ Արևորդի ժողովուրդը այնպիսի յատկութիւնների տէր է, որի խօսքին և ազնուութեանը շատ քիչ հաւատ կարելի է ընծայել. որ նա երևի քրիստոնէութիւն է ընդունում ոչ թէ էսպէս հասկանալով նրա նշանակութիւնը, այլ աչքի առաջ ունենալով լոկ այն նպատաւոր պայմանները, որոնք կարող էին զիւրութիւն տալ իրանց ապրուստին քրիստոնեաների մէջ, որպիսի են և բոլոր այժմեան գնդակները:

զ) Մեզ անհաւանական է թւում, որ Պրիգորների, Ներսէսների, Սահակների և Մեսրոպների ջանքերից յետոյ դեռ մինչև ժ. Գարը մնացած լինէին հայազգի արևապաշտներ և այն, եթէ չենք սխալւում, առանց յիշատակութեան: Քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ տառերի գիւտը և Վարդանանց պատերազմը այն հուժկու մոմէնտներն էին, որոնք հայ-հեթանոսութեան հոգոցը կարգացին. մինը մոտաւոր ասպարիզում, միւսը քաղաքական: Մեսրոպի քարոզութիւնից յետոյ միայն ժ. Գարումն է, որ Շնորհալու թղթով իմանում ենք, թէ դեռ մնացել էին հայազգի հեթանոսներ Արևորդի կոչմամբ: Եւ ինչո՞ւ հայերը պիտի Արևորդիք կոչէին. միթէ այն պատճառով, որ նոքա արևապաշտ էին, կամ այդ կոչումը նրանց կրօնին էր տրւում. հապա ինչո՞ւ նախնի արևապաշտ հայերն այդպէս չէին կոչւում քրիստոնէութիւնից առաջ: Այդ կոչումը, եթէ կրօնի անունն էր, նոցա քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ պիտի կորէր, վերանար, մինչ Արևորդոց քրիստոնեաց դառնալուց երկու դար յետոյ Մեծօփացին նոցա դարձեալ այդ անունով է կոչւում, որ նշան է թէ դա յատուկ-ազգային անուն է: Յամենայն դէպս հէնց «Արևորդիք» անունը կարծես յիշեցնում է մի ինչ որ խորին արևելեան ծագումն: Արևելեան ժողովրդի համար դա օտարոտի անուն չէ. չինաց կայսրը «Երկնքի որդի» է կոչւում: Մեզ թւում է, թէ Արևորդի կոչումը գնդակների հնադոյն անուն թարգմանութիւնը պիտի լինի, որով նոքա ծանօթ էին հայերին մի ժամանակ:

Այստեղ մենք ցանկացանք հէնց Շնորհալու իր խօսքերով հերքել իր սխալը. այժմ կը բերենք երկու պատմական վկայութիւններ, որոնք, ըստ իս, ոչ մի կասկած չեն թողնում, թէ Արևորդիք առ սակաւը հայեր չեն:

Բարեբաղդաբար վկայութիւն տուող անձները ժամանակով բաւական հեռու են Շնորհալուց, իսկ պայմանները բաւական մօտիկ Արևորդոց, այնպէս որ նոցա խօսքը կտրական նշանակութիւն պիտի ունենայ այս խնդրում: Այդ վկայութիւններէից մինը պատկանում է Գրիգոր Մագիստրոսին, որի թոռնորդին է Շնորհալին: Ասորոց կաթողիկոսին զրաժ Թոնդրակեցոց վերաբերեալ թղթի մէջ նա յիշում է նաև Արևորդոց.

«Եւ այլ ոմանք ի Զրադաշտ մոգէ՝ մոդ պարսկականք. և այժմ
« ի նոցունց դեղեալ Արեգական ապաշտք, զոր Արևոր-
« դիսն անուանեն և ահա են յայդմ գաւառի (ի Միջա-
« զետս) բազումք, և ինքեանք քրիստոնեայք զին-
« քեանս յայտնապէս կոչեն. բայց թէ որպիսի մոլու-
« թեամբ և անառակութեամբ վարին, գիտեմք՝ զի
« ոչ ես անտեղեակ»¹⁾:

Այս տողերը գրւած են Շնորհալու թղթից առ սակաւը 110 տարի առաջ, ի նկատի ունենալով, որ Մագիստրոսը մեռել է 1058-ին, իսկ Շնորհալին կաթողիկոսացաւ 1165-ին, որից յետոյ պիտի գրած լինէր իր թուղթը: Այն էլ պէտք է յիշել, որ Մագիստրոսը Միջագետքի կառավարիչն էր, ուրեմն և ի մօտոյ անմիջապէս ծանօթ Արևորդոց և ոչ թէ Շնորհալու նման իլրոյ կամ «ի գրոց»:
Վերեն էլ ասացինք, որ Շնորհալու կարդացածը «ի գրոց»՝ կարող էր լինել Մագիստրոսի այս թուղթը, ուր Թոնդրակեցիք և Արևորդիք յիշուում են միաժամանակ, որի պատճառով նա շփոթած պիտի լինի այդ երկու ժողովուրդները:

Այս էլ պէտք է ասենք, որ Սամսուիա կամ Սամսատ քաղաքը գտնուում է Միջագետքում, որի Արևորդի բնակիչները ուղեցան քրնստոնեայ դառնալ Շնորհալու ժամանակ. Մագիստրոսի և

¹⁾ Հնախօսութիւն Աշխարհադրական Հայաստան Աշխարհի. Ղուկաս վարդապետի խնձրձեան. հատ. Գ. Վենետիկ 1835 թ. (եր. 161—162):

Մեծոփեցու վկայութիւններն էլ վերաբերում են նոյնպէս Միջագետքում բնակեցող Արևորդոց. այնպէս որ երեքի վկայութիւնն էլ Միջագետքի Արևորդոց մասին է.

Շնորհալիս իւր թղթումն ասում է, որ «Արևորդիքից ազգըս մեր ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ոչ կամեցան լուսաւորել ասուածային լուսովն ի ձեռն Լուսաւորչին», մինչ Մագիստրոսը պարզաբար ասում է, որ նոքա, Ջրագաշտականներին են դեղւած, ուրեմն հեթանոս հայերից չեն մնացած, ինչպէս կարծում է Շնորհալիս. և որ գլխաւորն է, նոքա դեռ Շնորհալու թղթից 110 տարի առաջ «ինքեանք քրիստոնեայ ղինքեանս կոչէին», թէև իրօք արևապաշտ էին... Այդ դեռ բաւական է. ժԱ դարում իրանց քրիստոնեայ անւանող Արևորդիք, որոնք ժԲ դարում պաշտօնապէս՝ իրանց խնդրանօք և կաթուղիկոսի թղթով միացան քրիստոնէութեանը, մինչև ժԴ. դարու վերջերը կոչւում են կռապաշտ: Ահա Թոմա Մեծոփեցու վկայութիւնը. «նկն ի Մէրօին (որ ի Միջագետս. առ Թոմա Մեծոփեցի վասն Լէնկթէմուրին) աւերեաց զքաղաքն... և չորս գեղ Արևորդի կռապաշտ, զՇօլն, զՇըմըշախ, զՍաֆարի, զՄարաղի իսպառ կործանեաց: Եւ յետոյ դարձեալ սատանայի հնարիւք բազմացան ի Մէրօին և յԱմիթ»: Յորոց գտանին մինչև ցացժմ ի սահմանս երկուց գաւառացս որք են ի Միջագետս, աւելացնում է հայր Ինճիճեանը իրանից ¹⁾:

Այսպէս ուրեմն, Մագիստրոսը Շնորհալուց մի դար առաջ և Մեծոփեցին նրանից երկու և կէս դար յետոյ խօսելով Արևորդոց մասին, ոչինչ չեն ասում նրանց հայութեան մասին: Արևորդոց գիւղերի անուն-անուն յիշելը նշան է, որ Մեծոփեցին ևս Մագիստրոսի նման ի մօտոյ ծանօթ է Արևորդոց:

Պարզ է, որ Արևորդիք քրիստոնեայ էին կոչում իրանց ժԱ. դարում, և պաշտօնապէս քրիստոնէութիւն ընդունեցին ժԲ. դարում լոկ երեսանց, որովհետև մինչև ժԴ. դարու վերջերը իրօք նոքա մնացել էին կռապաշտ, ինչպէս վկայում է Մեծոփեցին, ճիշդ այսօրեայ զնչունների նման, որոնք դաւանում են ամեն մի հանդի-

¹⁾ Տես նա խորդ ծանօթութիւնը:

պած ազդի կրօն, առանց իրօք որ և է մինին առաւելութիւն տալու: Թէ պատմական վկայութիւնների ընթացքից և թէ Ինձի-ճեանի վերջին խօսքերից, որ վերեւը դրինք, իրաւունք ունէինք եզրակացնելու, որ Արևորդոց շառաւիղները, թէպէտ հայացած, պէտք է որ մնացած լինեն Միջագետքում և որոշեն այնտեղի հայերից, թէպէտ նոցա մեծագոյն մասը, հայ-բոշա անւամբ, այժմս բնակւում է Հայաստանի այլ մասերում: 1894 թ. «Արձագանք» № 55, կարդում ենք «Տիգրանակերտ և իր գիւղերը» որ և է թերթերից երևի արտատպւած յօդւածում:

«Իջևանեցանք Շամամ անուն հայ-ասորի գիւղ մը... զարմա-
«նօք լսեցի, որ գիւղիս հայ և ասորի ժողովուրդն բացի մայրենի
«լեզուէ, ունին իրանց առանձնայատուկ լեզու մ'ալ
«արաբերէնի մօտիկ (!?) զոր շրջակայք չեն հաս-
«կնար»: Արդեօք սոքա Արևորդիներ չեն:

Այսպէս ուրեմն, մենք այն եզրակացութեանն ենք դալիս, որ Արևորդիք հայեր չեն, այլ մի առանձին ազգութիւն. իսկ այդ ազգութեան կրօնը, Հայաստանում երևալու ժամանակը, պատմական վկայութիւնները, նոցա բարք ու վարքի նկարագիրը, կրօնական խորութիւն չունենալը, կախարգութիւնով և բժժագործութիւնով պարապիլը, որ այսօր յատուկ է միայն զնչուններին, և այլն և այլն... մեզ իրաւունք են տալիս պնդելու, որ Արևորդիք գընչուներ են:

Բացի բերածս հատակտորներից, զժբաղդարար մեզ յայտնի չին Արևորդոց վերաբերեալ այլ վկայութիւններ. բանասիրութիւնը, հաւատացած ենք, դեռ ևս շատ բան կը լուսաբանէ: Արևորդոց վերաբերեալ սխալ կարծիքի տիրապետութիւնը, թէ նոքա հայեր են, ծագում է հեղինակաւոր Շնորհալու սխալմունքից, որին հետեւելով դարուս բոլոր հայագէտները Արևորդոց հայեր են համարում:

Եթէ Արևորդիք գնչուները չլինին, ապա միանգամայն անբացադրելի կը մնայ այն բացառիկ երևոյթը, որ բազմաթիւ գնչուներ, երկար դարերից ի վեր ապրելով Հայաստանում, չփոխելով հայերի հետ, դաւանելով նոցա կրօնը և խօսելով հայերէն, մատենագիրների կողմից մնում են առանց որ և է յիշատակութեան: Գնչուները կամ հայ-բոշաները Արևորդի կոչումը մոռացան, կորցրին հաւանականօրէն վերջին դարերում միայն, երբ ցրւելով հա-

յերով աւելի խիտ բնակւած դաւառները, ընտելացան նոցա կրօնին ու ազգութեանը և այդ անունով էլ սկսեցին իրանց անւանել, այն է՝ հայ-քրիստոնեայ:

Եւ թէ մեր այս ենթադրութիւնը նորանոր փաստերով ապացուցւի և ընդունւի, ապա դա լոյս կը սփռէ ոչ միայն մեր բոշաների, այլ համայն զնչուների անցեալի վրայ, որովհետեւ նրանց վերաբերեալ եւրոպացոց պատմական վկայութիւնները, որքան մեզ յայտնի է, ժ՛՛՛՛՛ դարուց չեն անցնում, մինչ մեր գրականութեան վկայութիւնը, Մագիստրոսի բերանով, ժ՛՛՛՛՛ դարու կիսին է հասնում. բանասիրութիւնը թերեւս աւելի հին աղբիւրներ որոշէ:

Ի վերջոյ, ինչպէս նախորդ գլխումն ասացինք, Կոլոշին կարծում է, որ զնչուները Փոքր-Ասիա մասն Պարսկաստան Միջագետքով, իսկ Ելիսէսը նրանց հէքիաթների հետազոտութիւնից եզրակացրել էր, որ զնչուները դաւանելիս են եղել Զրադաշտի կրօնը: Այդ երկու դիտնականների սրամիտ ենթադրութիւններն էլ իրականանում են, եթէ ընդունենք, որ Արևորդիք զնչուներն են, քանի որ նրանք ապրում էին Միջագետքում, և, ըստ Մագիստրոսի վկայութեան, Վեդեալք էին ի Զրադաշտականաց:

V

Բոշաների կեանքը Հայաստանում լուսաբանելու համար մեծ նշանակութիւն կարող է ունենալ ոչ միայն բոշայերէնը, այլ և այն հայերէնը, որ զործածական է հիմակաջ բոշաների մէջ: Մեզ թւում է, թէ այդ հայերէնով հնարաւոր կը լինի ամենադիւրին և դրական կերպով պարզել, թէ բոշաները երբ են մտել Հայաստան, երբ են ընդունել քրիստոնէութիւն և զի մասում աւելի երկար են ապրել: Իրողութիւնն այն է, որ ինձ ծանօթ բոշաները թէև սպորում են Երզրումից զաղթած հայերի մէջ, բայց զործ են ածում մի այնպիսի հայերէն բարբառ, որ տարբեր է Երզրումի բարբառից, և, որ զլիաւորն է, աւելի մաքուր և զերծ է թուրքերէն բառերից, որոնք մեծ քանակութեամբ զործածական են զաղթական հայերի բարբառի մէջ. — բոշաները աւելի մաքուր հայերէն են խօսում, քան բնիկ հայերը: Թւում է թէ բոշաները հայերէն են սովորել զեռայն դարերում, երբ տաճիկները Հայաստան չէին մտել, և իրանց

տոկուն ու թափառական կեանքի շնորհիւ աւելի մաքուր պահպանեցին հայերէնը, քան բնիկ հայերը: Որովհետեւ հաստատաբնակ ժողովուրդը միշտ աւելի է ենթարկւում տիրող տարրի ազդեցութեանը, քան թափառականը, որը միշտ հնարաւորութիւն ունի խուսափելու այդ ազդեցութիւնից: Դժբաղդաբար այս կէտը մենք ուշ առանք ուշադրութեան. բոշաների խօսած հայերէնից համարեա նիւթեր շունենք ձեռքի տակ, այնպէս որ չենք կարող ստել, թէ դա մեր բարբառներից առաւել որի՞ն է մօտիկ. «էկօ նայեմ, ձեռքիկդ տուր, տոտիկիդ ի մեռնիմ, ձգրեցուցած ձար, ուզուոր պարկի, չեմ խտար, չեմ իզար, չեմ ի առներ» այնպիսի ձևեր են, որոնց նմանը կը գրումի բարբառում համարեա չենք պատահում: Ինչպէս երևում է, բոշաները հայերէն սովորել են մի այլ դաւառում, թէև Կարնի բարբառը տիրապետող է նրանց լեզւում:

Այս տողերը սրանից մի տարի առաջ գրելիս, մենք չէինք էլ կարծում, թէ շուտով փաստեր կունենանք, որ ապացուցէին մեր այդ ենթադրութիւնը: Հայր Այտնեանը իւր քննական քերականութեան մէջ հետեւեալն է ասում, որ մենք առաջ ենք բերում հանգուցեալ Ս. Սարգսեանի «Լեզու և Ուղղագրութիւն» («Մուրճ» 1894, № 2, էջ 264) յօդաւածում բերած վկայութիւնից՝ ԺԱ, ԺԲ դարերում մէջ երևան կ'ելլէ նոր ձև բացասական մը էական բացով և է նախդրով... չեմ ի գալ... Այդ է նախդիրն հիմա միայն միավանկ բացերում վրայ մնացած է. «չես ի գար...»: Ինչպէս կը նկատէ ընթերցողը վերևը գրած մեր օրինակներից, ԺԱ, ԺԲ դարերում գործածւող այդ ձևերը, հէնց այսօր գործածական են մեր բոշաների մէջ և այն ո՞չ միայն միավանկ, այլև բազմավանկ բացերում: չեմ ի առներ, չեմ ի ուզեր և այլն... Այս փաստը թէև մի հատիկ, բայց ցոյց է տալիս, որ մեր բոշաները ԺԱ, ԺԲ դարերում արդէն խօսում էին հայերէն. յայտնի է, որ Արևորդիք էլ նոյն այդ դարերում իրանց անւանում էին քրիստոնեայ և խօսում էին հայերէն... Սա էլ մի փաստ է՝ յօգուտ մեր ենթադրութեան: Եթէ Արևորդոց խնդիրն էլ մի կողմ թողնելու լինենք, բոշաների խօսած հայերէնից այն եզրակացութեանն ենք գալիս, որ նրանք Հայաստանում էին և հայերէն էին խօսում դեռ ԺԱ դարում:

Առ այժմ այսքան. այս առթիւ մենք երևի դարձեալ կը խօ-

սենք «Մուրճի» ընթերցողների հետ: Նախքան բոշաների մասին մանրամասն աշխատութեանս տպագրութեան յանձնելը առանձնապէս մենք ցանկացանք նրա այս մի քանի հատուածները նախօրօք լոյս հանել, հմուտ բանասէրների թեր և դէմ կարծիքն իմանալու և լուրջ քննադատութեամբ զտած մաքրած տեսնելու համար:

Մի այլ անգամ մենք կը պատմենք, թէ բոշաները ի՞նչ երևելի մարդիկ են տւել մեզ:

ՀԱՅԵՐԷՆ ԱՅՐՈՒԲԵՆՔԻ ՁԱՅՆԱԿՈՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՊՐՈՖ. ՖՐԻԴՐԻԽ ՄԻՒԼԼԵՐԻ

(Յաջորդ լողածը լուս է տեսած հաչադէտ ֆրիդրիխ Միւլլէրի գրչից վիեննայի Արեւելագիտական թերթում: (Fr. Müller: Ueber den Ursprung der Vocalzeichen der armenischen Schrift: Wien, Zeitschr. für Morgenlandskunde, 1894, տետր II, էջ 155—160): Նոյն պրոֆեսորի աղ նիւթի մասին առաջուց գրած լողածնիրը տպւած են նոյն թերթում 1888 թ., տետր III, էջ 245—248 և 1890, տետր IV, էջ 284—288, որոնք թարգմանւած են հաչերէն վիեննայի «Հանդէս Ամսօրեայի» մէջ: Ներկայ լողածը առաջ ենք բերում, օգտուելով «Հանդէս Ամսօրեայի» մէջ (1894 թ., օգոստոս) տպւած թարգմանութիւնից):

Նախնիթաց հատւածներին մէջ, ուր Ասողկի և Վարդանի տւած տեղեկութիւնների վրայ հիմնւած՝ հաչերէն տառերի ծագման նկատմամբ խօսւած է, ջանացած եմ ապացուցանել որ, աչն երկու մատենագիրների համեմատ, պէտք է սեմական և չատկապէս արամեական ալբուբենքը նկատել իբրեւ աղբիւր հաչերէնին, և թէ Մեսրոպի արդիւնքն աչն էր որ, ճաչն աւուր տառեր հնարելով, սեմական բաղաձաչն աղիւրն վերածեց պարզ տառագրի, որի մէջ թէ բաղաձաչները և թէ ձաչնաւորները հաւասարապէս նշանակւում են տառերով:—Թէ աչն ալբուբեն պիտի եղած լինի՝ ապացուցւում է պալձառ կերպով Մեսրոպի աղ նկատմամբ ունեցած դարձուցութեան մասին հին մատենագիրների, մասնաւորապէս Խորենացու տւած տեղեկութիւններովը:

Մեսրոպը ճանաչում է Գանիէլի ալբուբենքը և, մի փոքր ժամանակ իւր աշակերտների ձեռքով փորձելով, գտնում է որ աչն տառերը անբաւական են աստւածաչին պաշտապուստների ժամանակ կարեւոր ընթերցւածները և կարդացմունքները գլուխ բերելու (Մովսէս Խոր. Գ. ծբ.): Յալոնապէս սեմական ալբուբենք է աչն՝ բնիկ սեմական նկարագրով, և դորանով անկարծար՝ ոչ-սեմական մի լեզվի բառերը ներ-

կապացնելու: Երևում է որ Դանիէլի աւանդութեան շատ էլ չէր վստահանում Մեսրոպը, չկարողանալով հաւատալ թէ աչն ալբուբենքը հաջոց հնագոյն ժամանակները դործածածը լինի. որովհետեւ նա Եղեսիա գնաց, որ աշնտեղի զիւանում Դանիէլի տառերի—հին հաջոց ալբուբենքի—նկատմամբ աւելի տեղեկութիւն գտնել կարողանալ (Մ. Խոր. Գ. ծգ.): Բայց իւր լուսն ի դերե ելաւ. և գոհացուցիչ արդիւնք չունեցան նաեւ ալ փորձերը, որ ուրիշ անձերի հետ արաւ: Այն ժամանակ աղօթքով օգնութիւն խնդրեց՝ ըստ աւանդութեան,—և աստածափն մի դաղափար լուսաւորեց իւր միտքը: Հալերէն լեզուի ձայնաւորները՝ ա, ե, ի, շ, է, ու իւրեւ անկախ հնչմունք ըմբռնեց և ոչ թէ բաղաձայնները միայն երկարացնող, ինչպէս է սեմական ալբուբենների մէջ: Այսպէս հնարեց մի ալբուբենք, որով հալերէն լեզուն կարողանար ճշգրիտ և ապահով կերպով գրուել, և նույնպէս ճշգրիտ և ապահով կերպով կարդացուի:

Այստեղ խնդիր է ծագում թէ արդեօք Մեսրոպ ալբուբենքի եօթ ձայնաւորները իւր կամքով հնարեց թէ մի ուրիշ ալբուբենքից առաւ: Եւ ալս վերջին դէպքում խնդիր է թէ Բնչ ալբուբենք աղբիւր եղաւ Մեսրոպի մոծած հալերէնի ձայնանիշ տառերին:

Այստեղ կարող են միայն չունական և աւեստական ալբուբենները խնդրի մէջ ի նկատ առնուել: Երկու ալբուբեններից եւ Մեսրոպ քիչ շատ տեղեկութիւն պիտի ունեցած լինէր՝ Վռամշապուհ թագաւորի քարտուղարութեան մէջ գործ ունենալով, ուր գտնուում էին մի կողմից պաշտօնական գրութիւններ երկու գրով եւ, և միւս կողմից՝ կալին անձեր, որոնք երկուսից մէկն ու մէկին տեղեկ էին:

Արդ, թէ եւ գիւրին լուծումն կը լինէր միաբանուել աչն բանասէրների հետ, որոնք հալերէն տառերը նույն ժամանակի չունական նոտրագրից լառաջ բերել են ուզում, և դորանով աղատ կը լինէինք ասպացոյց բերելուց աչն բանի համար թէ հալերէն ձայնաւոր տառերը չունարէն նշանագրերից առնւած լինեն, սակայն եւ աչն կարծիքն ունիմ—որքան էլ աչս ոմանց արտասովոր թւի—թէ հալերէն ձայնաւոր նշանագրերը ծագած չեն չունարէն նոտրագրից, ալ թէ հալերէնի ձայնաւոր տառերը կապ ունեն աւելի աւեստական նշանագրերի հետ:

Այս կարծիքը հաստատելու ծառայում է հետեւեալ տախտակը ¹⁾:

Ա	ա	—ա
Ե	ե	է
Է	է	է

¹⁾ Աւեստական տառեր չունենալու պատճառով՝ ստիպւած ենք ձեռագիրով նշանակել նոցա:

Ը	Ը	Ք
Ի	Ի	Չ
Ո	Ո	Յ
Ի	Լ	Ձ

Պէտք է նաև մտածել, որ մի կողմից հայ տառերի հնագոյն և նախնական ձևն անծանօթ է մեզ, և միւս կողմից հայ տառերի ձևը հետզհետէ լուծական գեղադրութեան ազդեցութեան ներքև փոխւեց:

Առաջին չորս տառերի՝ ա, է, հ, ը՝ աւետական համապատասխանող նշանադրերի հետ նույն լինելը ցուցման կարօտ չէ ¹⁾։ Ե և ո տառերի մէջ գտնուած հնք աւետական նշանադրերը ձախ դարձած և ալն ձևով կանգուն դրած, իսկ ա տառի մէջ երևում է թէ աւետական նշանադրը միւս կողմն է շրջւած:

Ուստի Մեսրոպի ձեռքով հաւերէն նշանադրերի գիւտի իրական գէտքը հետեւեալը պէտք է եղած լինի: Մեսրոպ, տեսնելով որ հաջոց հին տառերը անգործածական են լեզուն ալնպէս ներկալացնելու, որ դրած նշանաձևերը ապահովապէս կարգացուել կարողանան, մտքովն է եկել որ Պարսից մօտ, որոնք առօրեալ կեանքի մէջ պարզ բաղաձայնագիր ալբուբենք են գործածում, պաշտամունքի մէջ քրմերը ալնպիսի նշանադրեր են գործածում, որոնցով կարելի էր մեռած լեզուով զըրւած ալն կրօնական գրութիւնները կարգաւ ապահովապէս: Վերջին կէտի պատճառն ալն էր, որ ալն ալբուբենքը (զէնդական) ունէր նշաններ՝ լեզուի ձալնաւորները նշանակելու, որոնցից զուրկ էր սովորական ալբուբենքը (պահլաւականը), ալիքն՝ սեմական բաղաձայնատառ ալբուբենքը պարզ ձալնատառի էր վերածւած: Մեսրոպ, ըմբռնելով և ընդունելով ալս սկզբունքը, որով զնդերէն ձալնաւորանիչ տառերն առաւ իւր ալբուբենքի մէջ, եղաւ գտիչ հաւերէն տառերի: Ալն որ ա, է, ո տառերի համար առել է Մեսրոպ ա, շ, զ երկարները, նրանից է

¹⁾ Եթէ ուղիղ է մեր այս կարծիքը, կարող ենք աւետական տառերի հնութեան չափը աւելի ճշդիւ որոշել քան մինչև այժմ: Ալն ժամանակ չի կարող աւետական գիրը պահլաւերէնից զարգացմամբ ծաղած լինել VII-դ դարում, ինչպէս Շպիգել համեմատ. (Spiegel, Gramm. der alt-eränischen Sprachen, էջ 11) և ուրիշ գիտնականներ ընդունում են, ալ պէտք է արդէն IV. հաւանականօրէն III. դարում ծագած լինի, մի կարծիք որ արդէն միմիայն հնապարաօսական հիմքերի վրալ հիմնած այս թերթի մէջ (1891 թ. էջ 253) չափում եմ: Սակալն նաև հնագրական հիմունքի մէկ կողմ թողնելով՝ նույն իսկ աւետական տառերի նախաւիզը (տես Շպիգէլ, անդ) և նաև լուծական տառերի նոցա վրալ արած անուրանալի ազդեցութիւնը տարկում են մեզ ընդունել մի ալնպիսի ժամանակ, որ լուծական գիրը արդէն բաւական ծանօթ էր երկրի մէջ, որ միայն Պարթևները կործանւելուց քիչ լետոյ կարելի էր:

առաջ եկած, որ ալբուբենքը որոշւած էր նախ և առաջ արարողութիւններէ մէջ գործ ածելու, որ որոշ, չափակցեալ արտասանութիւնը կարենոր էր: Այն եւ, որ Մեսրոպի պարսկական ալբուբենքից առած գաղափարը երկնքի ազդեցութեան է վերագրւած, հեշտութեամբ մեկնուում է նոյն ժամանակի հանդամանքներով: Եթէ իւր ազդակիցներին չափոնէր որ իւր տառերը ինքը լօրինած է քրիստոնեայ հաւերից ատուած հեթանոս պարսիկներից, անշուշտ իւր գէմ մեծ դժգոհութիւն պիտի ծագէր, և իւր գիւտը անընդունելի պիտի լինէր...

Թէ հաւերէն տառերի մէջ լուսարէնից փոխառութիւն չի եղած, ապացուցւում է նաև այն հակակրօթիւնով, որ ունէին նոյն ժամանակ լուսական իշխանութեան ներքև եղող հաւերը և նոյն իսկ լուսները՝ Մեսրոպի գիւտի գէմ: Այսպիսով Սահակ կաթողիկոսը գրում է իւր նամակի մէջ Թեոդոս կալսրին (Մ. Խոր. Գ. 85)՝ «Եւ ոչ հանդիպեցաւ ընդունելութեաւ փնտմ վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա, աշխարհ ասեցեալ զմեզ երեւ նոյն ալր՝ զոր առաքեցի առ ձեր բարեբարութիւնդ, բազում անգամ ճգնեալ զորա Վստրուց աշխարհին»: Եւ աւելի խիստ ամբողջ ալբուբենքի ոչ-լուսական ծագումը նշանակւած է այն պատասխանովը, որ Թեոդոս կալսրը գրեց Սահակ կաթողիկոսին: Կալսրը գրում է (տես անդ)՝ «Եւ առաւել չափ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, Վստրեաց ուսանց խնդրէին զխմատից գիւտս: Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոց ծառալիցոյ արհամարհել զաւսպիսի ուսմամբդ. բաւց զի քնտոյ պատմեաց մեզ Մեսրոպ թէ կատարածին արեւտոխը ի շնորհաց վերնոյն եղև, գրեցաք՝ զի ամենաչն փութով ուսցին, և զրեզ պատուով ընկալցին՝ որպէս զարդարև վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու»:

Միննոյն բանը հաստատում է Մ. Խորենացու այս խօսքն ևս (Մ. Խոր. Գ. 84)՝ «Ընդ այն ժամանակն եկեալ Մեսրոպալ, և բերեալ զնշանադիրս մերոյ լեզուիս, և հրամանաւ Վռամշապոյ և մեծին Սահակալ՝ ժողովեալ շանկունս ընտրեալս, ուշեղս և քաջուամուծս, փափկաձայնս և երկարողիս, և զպրօցս կարգեաց չամնաչն գաւառս, և ուսուց զբնաւ կողմանս բաժնին Պարսից՝ բաւց ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ լաթոռն Կեսարու, վարել լուսական զպրօթեամբ և ոչ ասորով»:

Այսպիսի նկատողութիւնները և տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հաւերէն ալբուբենքի մէջ չկար նախնաբար լուսական ազդեցութեան ենթարկւած մի բան: Եթէ ալսպիսի մի կէտ լինէր՝ Սահակ և Մեսրոպ կարող էին մատնանիշ անել լուսական այն տարրը և լուսցնել հակառակութիւնը: Այն, որ նորա աղպէս չարին, ալ զիրը վերագրեցին վերնական ներշնչման, ցոյց է տալիս թէ ոչ արևմուտքում՝ Բիւզանդիոնում, ալ արևելքում՝ Ասորոց և Պարսից մօտ՝ պէտք է որոնել այն սերմերը, որոնցից զարգացել է հաւերէն ալբուբենքը:

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ ԴՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻՑ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

III

«Պոմոշչ» (Օգնութիւն) ընկերութեան մասին խօսելու առհասարակ աւելի քիչ բան ունինք, քան կարող են սպասել մեր ընթերցողները. քիչ բան ունենք, ասացինք, որովհետեւ «Պոմոշչը», իբրեւ ապահովագրական ընկերութիւն, ղեկավարոււմ է նոյն կանոնադրութիւններով և համանման գործունէութեան բնաւորութիւնն է կրում, ինչ «Ռոսսիա» ընկերութիւնը:

»Պոմոշչ» ընկերութիւնը հաստատուած լինելով ներքին գործերի նախարարից 1888 թ. մարտի 4-ին, ուրեմն համարեա մի տարով աւելի ուշ «Ռոսսիա» ընկերութիւնից, իր կանոնադրութիւնները և ընդհանուր սլաշմանները ընդօրինակելով վերցրել է վերջինից: Ուրեմն հետաքրքիր ընթերցողը, այդ ընկերութեան մասին ևս մի զաղափար կազմելու ցանկութեամբ, կարող է վերցնել «Մուրճի» նախընթաց երկու համարները, ուր բացատրուած է «Ռոսսիա» ընկերութեան գործունէութեան բնաւորութիւնը:

Բայց կայ մի հանգամանք, որով մենք գերադասոււմ ենք «Պոմոշչի» գործունէութիւնը—«Ռոսսիայից», և այդ աչն է, որ «Պոմոշչ» ընկերութիւնը, չատկապէս ներւաւած լինելով դժբաղդ դէպքերից ապահովագրութեան, իւր ամբողջ վեց տարւայ գործունէութեան ընթացքում ապահովագրական գործը աւելի հանրամատչելի, աւելի կանոնաւոր և գործնական է դարձրել ապահովագրեալներին համար, քան «Ռոսսիա» ընկերութիւնը:

«Ռոսսիա» ընկերութեան գործունէութիւնը բաժանւած է չորս տարբեր ապահովագրական ճիւղերի (կեանքի, կրակի, դժբաղդ դէպքերի և փոխադրութեան), մինչդեռ «Պոմոշչը» յատկապէս պարապելով դժբաղդ դէպքերի (առանձին անձերի և կողլեկողի) ապահովացումով, իւր բոլոր ոյժերը և կազմակերպութիւնը կենտրոնացրել է միայն մի ապահովագրական ճիւղի մէջ, և հետեւապէս հըսկայական քայլեր է արել թէ անհատներին և թէ հաւաքական կերպով բանւորներին ապահովագրելու գործում: Այժմ Ռուսաստանում չէք գտնիլ մի քաղաք, ուր «Պոմոշչը» ընկերութիւնը ապահովագրութիւններ չունենար ձեռք բերած. ընկերութեան գործակալները ցանցի պէս սփռւած լինելով պետութեան համարեա բոլոր շատ թէ քիչ արդիւնաբեր քաղաքներում, գործում են մեծ եռանդով և միևնոյն ժամանակ մրցում են «Ռոսսիա» ընկերութեան հետ, ամենուրեք տարածելով ապահովագրութեան համակրելի միտքը:

Եթէ մի համեմատական ակնարկ ձգենք այդ երկու ռուս ընկերութիւնների գործունէութեան վրայ, կը նկատենք, որ «Պոմոշչը», չնայած իր մի տարով աւելի ուշ հիմնւելուն, որպէս և իր փոքր հիմնական զրամագլխին, աւելի շատ դժբաղդ դէպքերի ապահովագրութիւններ ունի ձեռք բերած և աւելի սովորաբար արդիւնաբերութիւններից, քան «Ռոսսիան»:

Պատճառները պարզ են. «Պոմոշչը» ուղղակի ընկեր է անում և մեծ անձնւորութեամբ է գործ բռնում, մինչդեռ «Ռոսսիան» խորհում, քննում, հետազօտում է և ապա ընդունում ապահովագրութիւններ. երբեմնապէս միայն ընկեր է անում «Ռոսսիան»:

Մի քանի օրինակներից կարելի կը լինի այդ երկու ընկերութիւնների բնաւորութիւնները որոշել: Օրինակ, օրերումս Բագլայ ձիաքարշ երկաթուղու վարչութիւնը, ցանկանալով իր բոլոր ծառայողներին և երթևեկներին (որոնց թիւը մօտաւորապէս հասնում է 20,000-ի) ապահովացնել դժբաղդ դէպքերից, դիմել է «Պոմոշչը» ընկերութեանը, առաջարկելով մի տարւայ վճար (պրէմիա), 1500 ռ. «Պոմոշչը» մերժեց՝ այդ պրէմիան քիչ համարելով, մինչդեռ «Ռոսսիան» համաձայնեց նոյն պրէմիայով ապահովագրել: Նոյնպիսի մերժում «Պոմոշչի» կողմից պատահել է Պետերբուրգի, Մոսկուայի, Նարկովի և այլ քաղաքների ձիաքարշ երկաթուղու մի քա-

նի գծերի վերաբերմամբ, որոնք ընդունված և ապահովված են «Ռոսսիա» ընկերութեան մէջ:

Եւ ընդհանրապէս «Պոմոշչը» ահագին քանակութեամբ և աւելի շատ ապահովագրութիւններ ունի ձեռք բերած Պրիւխսկեան և Ուրալեան նահանգներում, որոնք հանքային աշխատանքների կենտրոններ են ներկայացնում Ռուսաստանի համար. ուրեմն դրանք վտանգի տեսակէտից՝ աւելի մեծ ռիսկերի հետ կապւած ապահովագրութիւններ պիտի համարել «Պոմոշչի» կողմից: Եւ այսպէս մերժում է «Ռոսսիան», ընդունում է «Պոմոշչը», մերժում է «Պոմոշչը», ընդունում է «Ռոսսիան»: Ամեն մի ընկերութիւն իր հայեցողութիւնը, իր հաշիւը ունի մի որ և է ապահովագրութեան ընդունելու գործում: Այսպէս թէ այնպէս, երկուսն էլ գործում են, երկուսն էլ տարէցտարի առաջդիմութեան են ձգտում մրցելով միմեանց դէմ:

«Պոմոշչ» ընկերութեան դրամագլուխը իր հիմնելու օրից մինչի այսօր երկու միլիոն ռուբլիով աւելցած է. գործունէութիւն սկսած օրից նրա հիմնական դրամագլուխը հաւասար էր $1\frac{1}{2}$ միլիոնի միացն, (2000 ակցիա, ամեն մէկ ակցիան 250 ռուբլու արժողութեամբ) և այժմ այդ դրամագլուխը հասնում է $2\frac{1}{2}$ միլիոնի, որը պահում է զանազան մասնաւոր և պետական բանկերում, և որոնք վերածված են օբլիգացիաների և տոկոսաբեր թղթերի:

Պէտք է նկատենք, սակայն, որ «Ռոսսիան» լիկւիդացիաներ անելու, բաւարարութիւններ տալու մէջ աւելի հաստ մէջք ունի, քան «Պոմոշչը», որովհետեւ «Ռոսսիա»-ի դրամագլուխը, որը յատկացրած է զանազան պատահարների համար, $2\frac{1}{2}$ միլիոնով աւելի է, քան «Պոմոշչ» ընկերութեան:

Եւ ահա այդ երկու ընկերութիւններից մէկը պատասխանատու է ապահովագրեալների առաջ իր 5 միլիոն, միւսը $2\frac{1}{2}$ միլիոն գումարով:

Նաո զարմանալի կըլտայ մեր ընթերցողներին այն հանգամանքը, երբ իրանք իրանց հարց կը դնեն՝ թէ այս ինչ հանելուկ է, որ մի կամ մի քանի միլիոն դրամագլուխով յանկարծ նոյնչափ և դեռ աւելի միլիոններ են աշխատում ռուս ապահովագրական ընկերութիւնները:

Իսկապէս հանելուկ կը թւար, եթէ մանաւանդ մենք մի առ մի առաջ բերէինք այդ ընկերութիւնների այն ահագին ծախսերը, որոնք դործադրուած են ընկերութեան կազմակերպութեան, յայտարարութիւնների և միմեանց դէմ մրցման համար. բայց այդ հանելուկը իսկոյն կը պարզուի, եթէ ընթերցողը մի փոքր համբերութեամբ լսի մեր բացատրութիւնը:

Նախ մի քանի խօսք:

Թող չզարմանայ ընթերցողը, եթէ մենք ասենք թէ եղել են տարիներ, երբ երկու ընկերութիւնները նոյն իսկ վնասուել են դժբաղդ դէպքերի կողմէն և ապահովագրութիւնն էր և նոյն իսկ այժմ այդ ընկերութիւնները բանւորների հաւաքական ապահովագրութիւններից շատ քիչ օգուտ են ստանում:

Սակայն այդ վնասները միշտ ծածկուել են դժբաղդ դէպքերից ապահովացման մի այլ ճիւղից, որ անւանուած է անհատական ապահովագրութիւն դժբաղդ դէպքերից (страхование отъ несчастныхъ случаевъ отъ дѣльныхъ лицъ) փակագծում ասենք, որ այստեղ չպէտք է խառնել կողմերի ապահովագրութիւնը՝ անհատապէս դժբաղդ դէպքերի ապահովագրութեան հետ, ինչպէս և կեանքի ապահովագրութիւնը բնական մահով՝ դժբաղդ դէպքերից առաջ ցած մահւան հետ (այս վերջինի մասին պատեն ժամանակին կը խօսանք):

Անհատապէս ապահովագրուել ցանկացողը դժբաղդ դէպքերից երբէք չի ստանում յայտնի ապահովագրած դումարը, երբ նա մեռնում է հիւանդութիւնից առաջացած բնական մահով, և այդ պատճառով էլ նա այդ տեսակ ապահովագրութեան համար 10 տարում վճարում է շատ քիչ պրէմիա, մօտ 500 ռուբլի. եթէ դժբաղդ դէպքերից ապահովագրեալը մի պատահարի է ենթարկւում, օրինակ ճանապարհորդութեան, որսի, զբօսանքի ժամանակ, սպանւում է կայծակի հարւածից, երկրաշարժից և այլն, կամ ընկնում է մի որ և է բարձրութիւնից, (որի հետեանքը լինում է մահ, կամ հաշմանդամութիւն), այն ժամանակ ապահովագրեալի ժառանգները ստանում են ապահովացրած 5000 ռուբլի մահւան դէպքում, 6000 ռուբլի հաշմանդամութեան դէպքում):

Այս փոքրիկ նախաբանից անցնենք հանելուկի լուծման:

1) Դժբաղդ դէպքից ապահովագրեալը, որը 10 տարւայ ժամանակամիջոցում ընկերութեանը վճարում է մօտ 500—600 ռուբլի, իրաւունք չունի ապահովագրած գումարը յետ ստանալ, եթէ մահը չի առաջացել միայն դժբաղդ դէպքից. բայց որովհետեւ այդ տեսակ ապահովագրութիւններ առաջարկողներից շատերը մեռնում են հիւանդութիւնից առաջացած բնական մահով, հետեւապէս նրա վճարած բոլոր գումարները մնում են ընկերութեան օգտին. ուրեմն այս մի՞ օգուտ որ ստանում է ընկերութեանը 1):

2) Լինում են այնպիսի ապահովագրեալներ, որոնք, պայմանաժամը չլրացած, անկարող լինելով այնուհետեւ շարունակել պրէմիաներ վճարելու, դադարում են նշանակւած տուրքեր վճարել, ուրեմն և զրկւում են մի քանի տարիներ վճարած պրէմիաներից. այս էլ նոր օգուտ ընկերութեանը:

3) Եւ վերջապէս յայտնի ժամանակամիջոցում վճարելով պրէմիաներ, ապահովագրւողը արդէն լրացրել է պայմանաժամը առանց մի որ և է դժբաղդութեան, պատահարի ենթարկւելու, և ահա բոլոր վճարած գումարները մնում են էլի ընկերութեան օգտին: Ահա ձեզ 3-դ օգուտը, որ ստանում է ընկերութիւնը, եթէ միայն չհաշւենք այդ գուտ օգուտի $\frac{0}{0}/\frac{0}{0}$:

Սա ապահովագրութեան բացասական կողմն է կլիէնտի համար, բայց դրական կողմը այն է, որ ամեն մի անձնաւորութիւն միշտ կարող է կարծիք և սպասել, որ վաղը կամ միւս օրը մի դժբաղդութիւն կը պատահի իրան հետ, որի հետեւանքը կը լինի կամ մահ, կամ հաշմանդամութիւն, ուրեմն մի յայտնի ժամանակամիջոցում ինչո՞ւ զլանալ 500 ռուբլի վճարելուց, որով կարելի լինի ստանալ 5 և 6 հազարներ:

Ինչպէս տեսնում էք, մի կողմից ընկերութեան օգուտի աղբիւրները պարզեցին, իսկ միւս կողմից ապահովագրեալի ակնկալութիւնները—ահա սա էր հանելուկի բանալին, որ մենք

1) Անհատապէս ապահովագրւողը դժբաղդ դէպքից, կարող է պայման կապել, և այն պարմանով, որ ոչ դժբաղդ դէպքից առաջացած մահից չետոյ վերադարձւի բոլոր վճարած պրէմիան, սակայն դրա համար նա վճարում է շատ պրէմիա:

բացատրեցինք:—Ահա թէ ինչ միջոցներից է ծածկում ընկերութիւնը հաւաքական ապահովագրութեան փնաները, որ յաճախ է պատահում բանւորական կեանքում:

Սակայն, կրկնում ենք, դրանով չի կարելի մխիթարել և գուցէ ապահովագրութեան միտքը աւելորդ ծախս համարել, մանաւանդ բանւորների ապահովագման խնդրի վերաբերութեամբ: Այն ռիկ մեզինից որ և է մէկը կարող է գուշակել, որ մարդ մինչև իր բնական մահով մեռնելը, մի վտանգի չի ենթարկւել, կամ այն ռիկ գործարանատէրը կարող կը լինի վստահութեամբ պնդել, թէ իր բանւորները պատահարներից զերծ կը մնան շնորհիւ իր գործարանի տեխնիկական բարեկարգ պայմանների... Վտանգը և պատահարը միշտ անխուսափելի են մարդու համար և սա նրանց ամենայն օր սպասում է անակնկալ կերպով... Հասարակ ժողովուրդը նոյն իսկ իր աղօթքի մէջ միշտ յիշում է՝ «Տէր Աստուած, Դու ազատ պահես չարից, փորձանքից»:

IV

Այս ամենից յետոյ, մենք կարծում ենք, որ մեր ընթերցողները կը ցանկացին մի քիչ էլ ծանօթանալ այն ընկերութիւնների ներքին կազմակերպութեան հետ, որը վարում է ընկերութեան բոլոր գործերը և որի հետ պայմանաւորւում է ապահովագրւել ցանկացողը: Խօսելով այդ մասին, մենք վերցնում ենք «Պոմոշչ» ընկերութիւնը իր ամբողջ օրգանիզացիայով, որի կազմակերպութեանը նման է նաև «Ռոսսիա» ընկերութեան կառավարչական մարմինը. «Պոմոշչի» մասին գրելով ուրեմն, ընթերցողը թող ինկատի ունենայ և «Ռոսսիա»-ին, որովհետև նա ևս համանման կազմակերպութիւն ունի:

«Պոմոշչ» ընկերութեան հիմնադիրներն են՝ «Ռուսացին ապահովագրական ընկերութեան» ղրեկտորները, գաղտնի խորհրդական Վ. Պոլիվանով, Ստատսկի. սովետնիկ Ն. Պ. Պէրոսսի, Գանիմարքայի հիւպատոս Պ. Բերգ, բժիշկ Գ. Գէմելխան և 5 հարուստ վաճառականներ և արգիւնաբերական տների ներկայացուցիչներ. ընդամենը 10 հոգի ¹⁾:

¹⁾ «Ռոսսիա»-ի հիմնադիրները են՝ Коммерции совѣтникъ Н. М.

Թէ «Պոմոշչ և Թէ «Ռոսսիա» ընկերութեան ղեխաւոր վարչութիւնը գտնուում է Պետերբուրգում, որտեղև վճռուում է ամեն մի գործ, ամեն մի լիկւիդացիա, ապահովագրեալներին բաւարարութիւն տալու վերաբերեալ:

Ընկերութեան բոլոր գործերը յանձնւած են a) վարչութեան (Правление), b) խորհրդին (СОВѢТЪ) և c) ակցիոնէրների ու ապահովագրած ակցիոնէրների ընդհանուր ժողովին (общее собрание акціонеровъ и Акціонеровъ контрагентовъ):

1) Վարչութիւնը կազմում է 5 ղիրեկտորներ, որոնք ընտրւում են ընկերութեան անդամների միջից 5 տարով. սակայն այդ ղիրեկտորները չեն հանդիսանում իբրև լոկ ղիրեկտորներ, այլ ամեն մէկը նոցանից պարտաւորւում է ընկերութեան դրամարկղին 20 ակցիա ներկայացնել, (5,000 ռուբլի), որը յետ են ստացւում այն ժամանակ միայն, երբ ընդհանուր ժողովը վաւերացնում է վերջին 5-րդ տարւայ հաշիւը և հաշիւների հաւասարակշռութիւնը (балансъ):

Ահա այդ 5 ղիրեկտորներն են, որ ամեն տարի ընդհանուր ժողովի ժամանակ իրանց միջից ընտրւում են ժողովը ղեկավարող նախագահ. այդ նոյն ղիրեկտորները ընտրւում են կամ իրանց միջից կամ կողմնակի մարդու, իբրև ընդհանուր գործերի կառավարիչ, որը 5 ղիրեկտորների հետ հանդիսանում է պատասխանատու անձն ընկերութեան բոլոր ներքին և դրսի գործերի: Սա ևս, բացի 20 ակցիա ընկերութեան դրամարկղին յանձնելուց, դնում է նոյնպէս ոչ պակաս քան 10 ակցիա և, անցնելով գործերի գլուխ, կառավարում է ընկերութեան տւած ինստրուկցիաներով:

Վարչութիւնը իւր ժողովները կայացնում է առնւազն ամիսը մի անգամ, որտեղ վճռուում են այս կամ այն ապահովագրեալի

Полежаевъ, дѣйствит. статск. совѣтникъ И. Е. Кондосянки, Торговый домъ И. Е. Гинцбургъ, потомствен. почетн. гражд. Г. А. Рафаловичъ и Ѳ. А. Рафаловичъ, Коммерціи совѣтникъ А. Ф. Кларкъ, Потомств. почет. гражд. И. Ф. Ефрусси и С. Петерб. I гильд-купец. А. И. Закъ.

առաջարկութիւնը, ապահովագրութեան ընդունելը կամ մերժելը, բաւարարութիւն տալը, պրէմիաներ վերադարձնելը և այլն:

Վարչութեան պարտաւորութիւնները կաշանում են ընկերութեան կապիտալի այս կամ այն տեղ տեղաւորելու մէջ (բանկերում), ապահովագրութիւն առաջարկողների պրէմիայի (վճարների) քանակութիւնը նշանակելու, տուած վկայագրին համաձայն (ПОЛИСЪ) բաւարարութիւններ վճռելու, հաշիւների վրայ հսկելու, նախահաշիւներ կազմելու միւս տարւոյ համար և վերջապէս այդ թէ կազմած և թէ կազմելիք հաշիւները ընդհանուր ժողովին ներկայացնելու մէջ:

2) Խորհուրդը բաղկացած է 12 անդամներից, որոնցից 7 հոգի ընտրւում են ակցիոնէրներից, իսկ մնացած 5-ը գիրեկտորներից:

Խորհուրդի անդամները ևս պարտաւորւում են ընտրւելու ժամանակ ընկերութեան կասսային 20 ակցիա երաշխաւորութիւն (5000 ռ.) ներկայացնել, որը վերադարձւում է 7 տարից ցետոյ, երբ ընկերութեան հաշիւները հաստատւում են ընդհանուր ժողովից:

Խորհուրդի պարտաւորութիւնն էլ կաշանւում է այն բանի մէջ, որ նա զեկուցանում է ընդհանուր ժողովին նոր ծրագիրներ, կամ փոփոխում է կանոնադրութեան այս կամ այն աննպաստ կէտերը, որ և կարող է ընդունել կամ չընդունել ընդհանուր ժողովից. հաշիւների մասին միշտ իր նկատողութիւններն է անում և իր կարծիքը այտնում փոփոխելու կամ բարեփոխելու համար. խորհուրդը, առհասարակ, զեկուցանողի և ընկերութեան շահերին նախանձախնդիր մի մարմին է հանդիսանում:

3) Ընդհանուր ժողովը, առհասարակ, վաւերացնողի և հաստատողի դեր է կատարում: Սա է, որ վճռում է ընտրել կամ չընտրել, ընդունել կամ արձակել այս կամ այն կառավարչական մարմինները, հաստատում կամ բողոքում է խորհուրդի և վարչութեան ներկայացրած հաշիւների դէմ, նոյն իսկ զանց առնելով վերաստուգող մասնաժողովի վաւերացումը. փոփոխում կամ լրացնում է իրան ներկայացրած զեկուցումները և, վերջապէս, ընդհանուր ժողովն է, որ կարգադրում է գիւլիգէնդի բաժանումն: Չնայած, որ գիւլիգէնդի բաժանման մէջ ընկերութեան գործերի ղեկավարներին «առիւծային փայն» է ընկնում, այնուամենայնիւ, ընկե-

րութեան օգտին մասնակցելու պայմանով, ապահովագրեալները ևս ստանում են 8-ից մինչև 15 տոկոս ընդհանուր օգուտից, որ ասել է թէ 100 ուրբի պրեմիայից 8—15 ուրբի: Ահա սա է ընկերութեան ներքին կազմակերպութիւնը, ուր, ինչպէս տեսնում էք, ներկայանում են մէկը միւսին քննող, հսկող, ստուգող մարմիններ:

Վերջացնելով մեր յօդածը, պէտք է խոստովանել, որ բանւորների ապահովագրական հարցին շատ միակողմանի կերպով մօտեցանք: Նւ իսկպէս, ինչ կարող էինք ասել աւելին, քանի որ այդ մասին պ. Գ. Ղարաջեանը աւելի ընդարձակ, բազմակողմանի է խոսացել իւր յօդածներում, որոնք լոյս են տեսել «Մուրճ»-ի այս տարւայ № 1—4 համարներում: Մեզ հարկաւոր էր ընթերցողներին իմացնել, որ Ռուսաստանում ևս գոյութիւն ունի բանւորների ապահովացումն, որի մասին պ. Ղարաջեանը ոչինչ չէ ձիշել իր յօդածներում և, իբրև լրացուցիչ տեղեկութիւններ նորա յօդածին՝ այսքանն էլ բաւական է մեր կողմից: Իսկ թէ Ռուսաստանում արդէն ծրագրւել է պետական խորհուրդում բանւորների ապահովացման խնդիրը և այդ պրօէկտը գործադրութեան հերթի է սպասում, այդ աւելի լաւ: Նւ քանի որ ապահովագրութեան գործը չէ անցել պետութեան ձեռքը, և զուցէ մինչև վերջնականապէս գործադրութեան սահման մտնելը ժամանակ տւի, մենք շտապեցինք «Մուրճ»-ի ընթերցողներին նւիրել այս փոքրիկ աշխատութիւնը, միևնոյն ժամանակ ցանկանալով, որ բանւորների ապահովագրական գործը, իբրև մի վերին, աստիճանի համակրելի երևոյթ, իրականանայ, գործադրւի և նոյն իսկ տարրականանայ մեր հայ արդիւնաբերողների մէջ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ:— Հանդէս նախնական և երկրորդական կրթութեան, հրատարակեալ ընդ վերատեսչութեամբ Ուսումնական խորհրդոյ ազգային կենդրոնական վարչութեան: Կաստանդնուպոլիս, 1894 թ.

Մայիս, Յունիս:

«Մուրճ»-ի մէջ մի քանի ամիս առաջ հաղորդած էր աչն լուրը թէ «Մասիս» շաբաթաթերթը վերափոխուած է մանկավարժական թերթի, իրր օգրան Տաճկահայոց Ուսումնական Խորհրդի: Այժմ մեզ ուղարկած են սկզբի չորս համարները: Թերթը լոյս է տեսնում ամիսը երկու անգամ, 1-ին և 16-ին, և ներկայացնում է տետրերի իւրաքանչիւրը 24 լաչն ծաւալով երկսիւնակ էջեր: Ամուսկ երկու տետրերի նիւթը հաւասար է «Մուրճ»-ի մօտաւորապէս կէսին, չորս տետրերինը—«Մուրճ»-ի մի համարին: «Մասիս»-ը խմբագրուած է մի մասնախմբի ձեռքով, որի ատենապետն է Տաճկա-Հայոց Ազգային Կենտրոնական վարչութեան Ուսումնական Խորհրդի ատենապետ պ. Ռէթէոս Պէրպէրեան. խմբագրութեան միւս անդամներն են պ. պ. Գալուստ Մալաթեան, Միհրան Մոզեան, Յովհ. Հինդ-

լեան և Յովհ. Սէթեան: Թերթի արտօնատէրը Նոյն պ. Կար. Իւթիւճեանն է, որ քառասուն երկու տարի առաջ հիմնել էր «Մասիս» օրագիրը, որ վերջին տարիներս շաբաթաթերթի էր փոխարկւած: «Մասիսի» ծրագիրը «կը գրկէ զաստիարակութեան վերաբերեալ տեսական և գործնական խնդրոց մշակումը, նախնական (տարրական) և երկրորդական (միջնակարգ) կրթութեան վերաբերեալ դասեր, դասընթացքներ, հրահանգներ և ուղղութիւններ, ներքին և արտաքին կրթական շարժումը ծանօթացնող լուրեր և տեղեկութիւններ, Ազգային վարչութեան և Ուս. Խորհրդոյ դպրոցական տնօրինութիւններն, քննութիւններ դասագրոց ու դպրոցաց վրա և զանազան գրական ու գիտական շահեկան գործածներ»:

Թէ ինչպէս է իրադործուած աչգծրագիրը, աչգ մասին մի գաղափար

տալու համար լիշենք տպւած չօղւածները: Տեսական մասի համար տպւած են՝

Տետր Ա. Նախագահ, Բարոյական դաստիարակութիւն (ըստ Վաքրիէլ Եոմայէլուի). Համերաշխ պաշտօնակցութիւն:

Տետր Բ. — Բարոյական դաստիարակութիւն չօղւածի շարունակութիւնը և Վարդական առողջապահութիւն:

Տետր Գ. Հոգեբանական ծանօթիւնք. — Շարունակութիւն Վարդական առողջապահութեան չօղւածի. — Նախակրթարանաց ուսուցիչներու պատրաստութիւնը *). — Գրաբարի ուսումը նախակրթարանի մէջ:

Տետր Դ. Իմացական դաստիարակութիւն. — Համերաշխ պաշտօնակցութիւն չօղւածի շարունակութիւնը. — Մանկավարժական ընթերցածք (ապակիի վրայ դաս մը, ըստ Լըզէի):

Գործնական (դասախօսական) մասի համար տպւած են՝

Տետր Ա. — 1) Բացատրեալ ընթերցւած (բարձրագոյն դասընթացը), աչն է՝ բացատրութիւն Վ. եպ. Սըրուանձտեանի գրած «Շեղջալ գարը» փոքրիկ զրոյցի. — 2) Իրագիտական դաս (Նզն. թէ արդեօք եզն ու կովը արեւտներին ինչ նիւթեր են մատակարարում). — 3) Ընթացք Փրանսերէն լեզուի (Ռոբերտսընի մեթոդով, առաջին դաս). — 4) Բնական պատմութեան դասեր — մարտողութիւն:

Տետր Բ. — 1) Մտամարզական հրա-

հանգներ ա) մալրենի լեզուի ուսման համար, բ) գրաբարի ուսման համար. — 2) Իրագիտական դասեր — Կիր. — 3) Ծաղկունք օտմանեան մատենագրութեան ի պէտս երկրորդական վարժարանաց (Մուալլիմ Նաճիի մասին):

Տետր Գ. — 1) Կենդանաբանութեան դասեր (ընթացք երկրորդական վարժարանի. թէ ինչ է հասկացում կենդանի ասեղով և կենդանական դասակարգերը). 2) բնական պատմութեան դասեր (բարձրագոյն դասընթացք. Բուսոյ գործարանք). — 4) Ընթացք Փրանսերէն լեզուի (շարունակութիւն).

Տետր Դ. — 1) Մանկապարտիզի համար (Զրօսանք). 2) Ծաղկունք Օսմանեան մատենագրութիւն. 3) Իրագիտական դասեր (թղթի մասին). 4) Ընթացք Փրանսերէն լեզուի (շարունակութիւն):

Նթէ հաշուելու լինենք ալ և ալ դպրոցական (ոչ առատ) լուրերը, չօղւածները մնում է լիշատակելու տետր Դ - ում Քննական բաժնում տպւած «Վարժարանական ալցիլութեանց տպաւորութիւնք», ուր «Մասիս»-ի խմբագր. մասնախմբի ատենապետի չանձնարարութեամբ պրն. Արամեան արձանագրում է իւր տպաւորութիւնները Պոլսի հալոց ուսումնարաններին արած ալցիլութիւններից, գլխաւորապէս վերաբերեալ նոյցա առողջապահական հանգամանքներին:

*) Այդ չօղւածը տպւած է Դասախօսականի (գործնականի) բաժ-

նի մէջ. սակայն իւր բովանդակութեամբ նա առաջին բաժնին է պատկանում:

Այս չորս տետրների բովանդակութիւնով մեր ընթերցողները կարող են զաղափար կազմել նոր հակական մանկավարժական թերթի պարունակութեան մասին: Այստեղ ալն, ինչ աչքի է ընկնում առաջին անգամից, ալիք թերթի դասախօսական մասն է: Սովորական երևութիւն չպիտի համարել անշուշտ որ մի մանկավարժական թերթում սպւում են ուղղակի աւանդելի դասեր, ալսինքն աջնալիս լօղւածներ, որոնք, միասին առած, կազմելու են դասագրքերու Անշուշտ, ամեն մի ազգ անցնում է կրթական զարգացման զանազան աստիճաններ և նորա մանկավարժական թերթերն էլ պէտք է չարմարւին ժամանակի որոշ պահանջներին և ոչ թէ իրանց պարունակութիւնով լրակատար համապատասխան են թերթերի աչն տիպարին, որ ստեղծել ևն աւելի առաջացած ազգերը իրանց աւելի մեծ պահանջների համար: Բալց հարց է թէ նոյն իսկ Տաճկա-Հալերի համար ստեղծւած մի կիսապաշտօնական զարոցական թերթ պէտք է տպէ դասընթացքների թէ ոչ և թէ ինչ սահմանափակումներ պիտի ունենալ ալիք բաժինը: Պարբերական թերթերը ստեղծւում է սովորաբար խնդիրներ լուծելու և նիւթեր պատրաստելու համար: Եթէ տպւած հատւածները օրինակելի դասերի իմաստն ունենալին, ալիք ալ խնդիր կը լինէր. բալց գալ ու դասագրքեր տպել, ինքնուրոյն կամ թարգմանական, — ալիք, որ պէս մեզ թւում է, աննպատակալար մար է: Տաճկա-Հալերը դորանով չպիտի առաջին անգամ ծանօթանան

դասագրքերի զաղափարի հետ, որքան և խղճուկ վիճակ ունենան հալոց ուսումնարանները, բալց դասագրքեր կան և շարունակ նորերը ստեղծւում են. և եթէ եղածները բաւարար չեն կամ որ և է առարկայի համար դասագրքը չկալ—Աղգալին վարչութեան Ուսումնական Խորհրդի գործն է խրախուսել նոցա ելուելուն և ոչ թէ դասագրքեր հանդէս բերել մի պարբերական թերթի էջերի վրալ: Այս սլատճառով մեզ համար բոլորովին անհասկանալի է Ռուսերու սընի «Ընթացք Փրանսերէն լեզւի», որը հաւանականօրէն կը շարունակել տպւել ոչ միայն ամիսների, ալ և տարիների ընթացքում, եթէ միայն թերթի իմրագրական մասնախումբը ետ չկանգնի իւր սկզբնական դիտաւորութիւնից: Նոյնը պիտի տանք նաև բնադիրութեան դասընթացքի մասին, թէև աւելի նւազ չափով, քանի որ ալիք դասերի մէջ տւելի հանրակրթական տարր կալ քան առաջին մէջ:

Դասագրքեր տպագրելը, բացի աչն որ պարբերական թերթերի գործը չէ, չատկապէս մի կիսապաշտօնական թերթում, ինչպիսին է «Մասիս»ը, ունի նաև մի ալ անւարմարութիւն: Գործնով Ուսումնական խորհուրդը, որի վերատեսչութեան ներքոյ է հրատարակւում «Մասիս»ը, իրան դրուած կը տեսնի կողմնապահ լինել դասագրքերի նկատմամբ, արտօնեալ զիրք ստեղծելով աչն դասագրքերի համար, որոնք տպւած կը լինեն «Մասիս»ի մէջ: Դա աչնքան պարզ է որ ծանրանալ ալիք մասին հարկ չկալ:

Գալով թերթի առաջին մասին, ինչպէս երևում է, նա նւիրւած է տեսական մանկավարժութեան մի կողմից, և հրապարակախօսութեան՝ միւս կողմից: Այդ բնաւորութիւնն ևն կրում գոնէ ցաւժամ ալդ բոժնում տպւած լօղւածները: Հրապարակախօսականին ևն վերաբերում, բացի առաջին տետրում տպւած «ճախաբանից», նաև աշխարհի լօղւածներ, ինչպիսիք ևն Համերաշխ գործակցութիւն, Նախակրթարանների ուսուցիչների պատրաստութիւնը, (որ թիւրիմացութեամբ տպւած է Գա տխօսական բաժնի մէջ) և Գրաբարի ուսումը: Նախակրթարանների մէջ, Գոքա աշխարհի լօղւածներ ևն, որոնք մասնագիտական նշանակութիւնից վեր՝ ընդհանուր կարևորութիւն ևն ներկայացնում: Նոքա ոչ միայն ուսուցիչներին, ալ և ընդհանրապէս հասարակութեան ևն վերաբերում: Այգպիսի լօղւածներովն է որ թերթի խմբագրութիւնը պիտի պատասխան տալ աշխ ժամանակակից հարցերին, որ իւր հետ բերում է դպրոցական կեանքը և որոնցովն ալ պէտք է պահպանի իւր շփումը ոչ-դպրոցական հասարակութեան և ոչ-մասնագիտական մասնւրի հետ: Ահա ինչու մենք ալգպիսի լօղւածները ոչ միայն աւելորդ չենք համարում, ալ և կ'ուզէինք որ նոքա անպակաս լինեն «Մատիւ»-ի մէջ:

Յիշեալ լօղւածներից մէկով (Գրաբարի ուսումը նախակրթարանաց մէջ) «Մատիւ»-ի խմբագրական մասնախումբը, նորա ատենապետի գրչի միջոցով, իւր հաւանքն է չափանում ոչ միայն գրաբարի ուս-

ման անհրաժեշտութեան մասին նախակրթարանների մէջ, ալ և արևմտեան գրական հաւերէնի կազմութեան մասին՝ գրաբարի նկատմամբ: Պէտք է իմանալ որ, չնայած որ տաճկա-հաւերը իրանց աշխարհաբարը զարգացնելու մէջ հակադական քալեր ևն արած և որ աշխարհաբարը արդէն վաղուց փոխարինել է գրաբարը գրականութեան և նոն իսկ պատրիարքարանի պաշտօնագրութեան մէջ, բայց և աշխարհի նոնքանում անպակաս է վէճը աշխարհի մասին՝ թէ որքան տեղալեւք է բուն գրաբարը ներկալ աշխարհաբարի մէջ, Ալգ նկատմամբ նոյանում երկու ուղղութիւն է տիրում: աշխարհաբարի մէջ կ'արել ինչ ալ թիչ պահպանել գրաբարի տարբեր, և աշխարհաբարի մէջ կ'արել ինչ ալ շատ պահպանել գրաբարի տարբեր—ահա, ալ երկու ուղղութիւնները իրար հետ մրցում ևն նաև մինչ ալտօր, բայց տաճկա-հաւերի մէջ շատ աւելի մեծ եռանդով քան ուսա Հաւերի մէջ, որովհետև ուսա Հաւերի գրականութիւնը առաջ տանողների մէջ ալ մասին շատ աւելի մեծ համերաշխութիւն է եղած անդեալում և կալ ներկայումս, քան տաճկա-հաւերի մէջ: Ահա ինչու տաճկա-հաւերի մօտ գեռ ևս ուղ ունենալ է թւում աշխ ուղղութիւնը, որը աշխարհաբարի մէջ աշխատում է որքան կարելի է շատ գրաբարեան խօսքեր և քերականական ձևեր պահպանել: Օրինակի համար, թէև մեղանում ևս կան լեզուի կողմից գրաբարամոլներ, բայց, բացի աշխ որ նոքա հեղինակութիւն չեն ներկա-

լացնում և մեր լեզվին ուղղութիւն տալու ուժից զուրկ են, նոքա անքան հեռու չեն գնում որ աշխարհաբարում գործածեն անպիսի ձևեր, ինչպէս՝ ձիոց, եղինք, լերինք Արեւից, անւանք, անւանց, հառակք, վիճակք, տօնք և հանդէսք, նշուլիցն արեգական, լատտիս, ընդ Աստուծոյ, զմեզ, կենաց, որք և անլն։ Եւ սակաւն անպիսի ձևեր գործածական են տաճկահայ գրողներից շատերի մօտ և անպէս գրել են կամ գրում են Գ. Վ. Սրուանձտեան, Կ. Խեթիւճեան, Ե. Տէմիրճիպաշեան, Խրիմեան Հալրիկ, Պէշիբթաշեան, Ստեան, տիկին Տիւսապ և ուրիշ հեղինակներ։ Այդ հանդամանքը բնականօրէն ծանրացրել է ան գրողների դործը, որոնք, աւելի աշխարհիկ լեզվի հետևողներ լինելով՝ իրաւամբ կը ցանկալին իրանց ուղղութիւնը ընդհանրացած տեսնել արեւելեան հայերի ամբողջ գրականութեան մէջ։ օրինակ՝ «Հայրենիք» լրագիրը։

Արդ, այս խնդրում պ. Ռ. Պէրպէրեան, որ ատենապետն է Ազգ. վարչութ. Ուս. Խորհրդի և միանգամայն ատենապետ է «Մասիս»-ի խմբ. մասնախմբի, չիշեալ լուծածով դալիս է լայնեւելու իւր դաւանանքը, և դորանով նոր ապացոյց բերում, որ երկու ուղղութիւնները զեռ ևս պիտի շարունակեն իրանց անպտուղ կռիւը։ Տաճկահայոց ուսումնարանական վարչութիւնը, որպէս երևում է, խրախուսելու է գրաբարեան աշխարհաբարը (եթէ թող կը տրւի ինձ անպէս անւանել չիշեալ ուղղութիւնը)։ Թէն «Մասիս»-ի գործածած լեզուն անո ուղղութեամբ ծալ-

րաւորութեան չի հասնում և նորա լեզուն զիւրմբռնելի է, բայց քանի որ տաճկահայերը կարողացած են մի աւելի զուտ աշխարհաբարի տիպար ստեղծել, — մնում է մեզ միայն ցաւել որ «Մասիս» ը լամնաւն դէպս անո ուղղութեան նպատողներից չի լինելու։

Եւ անո մենք համարում ենք նորատեղծ թերթի խոշոր պակասութիւններից մէկը, մանաւանդ ցաւալի, որ «Մասիսը», իւր ալմեան ճշանակութեամբ՝ կոչւած է ուղեցոյց լինելու Տաճկահայ ուսուցիչներին։

Տեսէք թէ պ. Պէրպէրեան ինչպէս է արդարացնում իւր դրաբարամոլութիւնը. «Թէն, ասում է նա, աշխարհաբարն ունի իր հոլովմանց և խոնարհմանց լատուկ ու սովորական կերպերը, բայց ո՞վ չգիտէր թէ դրաբար հոլովմունք և խոնարհմունք ևս կրնան ուկրցած են միշտ ի ճահ գործածւել աշխարհաբար գըրւածոց մէջ...» Եւ անա նա բերում է օրինակներ Սրուանձտեանից, Տէմիրճիպաշեանից, Տիւսապից և անլն, մոռանալով որ անո հեղինակները գրել են, երբ աշխարհիկ լեզուն դեռ ևս զարգանալու չըջանումն է գտնւել, մի շրջան, որի մէջ նա անմաս գտնւում է և որ ուրեմն լեզվի խնդրում աւելի դէպի ապագան պիտի նայել քան դէպի անցեալն ու ներկան։ Մի ալ հիմունք ծառայում է պ. Պէրպէրեանին տաճկահայ բանատեղծների օրինակը. «Գրաբարի նախորդներ ու ոճեր ևս շատ անգամ կը գործածւին աշխարհաբարի մէջ և դիտեմք որ ոտանաւորը ո՞ր

աստիճան մեծ տեղ մը կուտայ՝ գրաբարի ձևերուն»։ Բաց, ի հարկէ, պ. Պէրպէրեանի այդ վկայութեան մէջ չկալ պատասխան այս հարցին թէ՛ արդեօք արժանիք է այդ թէ պակասութիւն տաճկահայոց ոտանաւոր բանաստեղծութեան, երբ սա, «մեծ տեղ տալով գրաբարի ձևերին» արհեստականութեան կնիք է դրոշմում իւր վրայ և նւազեցնում պարզ զգացումների արտապատկերան ուժը...

Զպէտք է կարծել, սակայն, թէ այս խնդիրների հետ անրաժեշտ կերպով կապւած է գրաբարի ուսուցման խնդիրը։ Թէ ինչ ուղղութեամբ պէտք է զարգացնել աշխարհիկ լեզուն, այդ ալ խնդիր է։ Իսկ թէ պէտք է գրաբարը դաս տալ աշակերտներին—այդ ալ խնդիր է։ Վարելի է խիստ պաշտպան լինել մաքուր աշխարհաբարին—և միաժամանակ պահանջել գրաբարի ուսուցումը դպրոցներում։ Նախ որովհետև մաքուր աշխարհաբարում ևս բաւականին տարբեր կան գրաբարից վերցրած. երկրորդ՝ գրաբարով գրւած գրքերը՝ եկեղեցական, պատմական և այլն, գեռ ևս մեծ տեղ են բռնում հաշկական մտաւոր և ոգեկան կեանքի մէջ։ Ուրեմն զուր է՝ գրաբարի ուսուցումը անհրաժեշտ կացուցանելու համար՝ գալ ու արհեստական կերպով արդի աշխարհաբարը ողողել գրաբարի ձևերով և կամ հիմնաւ ալն հեղինակների լեզուով, որոնք այդ սխալ ուղղութեան հետեւած են կամ հետեւում են։

Այսպէս սխալ և վնասակար ուղղութիւն ունենալով լեզուի զարգաց

ման խնդրում՝ պ. Պէրպէրեան, սակայն, ճիշտ միտք է չափնում գրաբարի ուսուցման եղանակի մասին։ Պէտք է, ասում է նա, զիւրացնել գրաբարի ուսուցումը. իսկ դուրս համար պէտք է գրաբարի քերականութիւնից հանել ալն բոլորը, ինչ չատուկ է բոլոր լեզուների (ուրեմն և աշխարհաբարի) քերականութիւնների և աւանդել աշակերտներին միայն գրաբարին չատուկ ձևերի և դործածութիւնների ուսումը. իսկ քերականութեան ընդհանուր մասերը, թէ ինչ է գոյական, ածական և այլն, ինչ են ենթակալ, ստորոգելի, խնդիր, չատկացուցիչ և այլն—պէտք է նախօրօք անցնել, բաց միայն աշխարհաբարի դասընթացքի մէջ։

Այստեղ մենք տեղը չենք համարում խօսել ալն մասին թէ արդեօք պէտք է սկզբնական դպրոցներում մերձենալ գրաբարի ուսման թէ ոչ, բաց միայն օգտւում ենք դէպքից ասելու, որ տաճկահայոց Նախնական կրթութեան կազմական կանոնադիրը տարրական նախակրթարանների ուսման ծրագրի մէջ նշանակած է «Սկզբունք գրաբար հաշկերէնի»։

Խօսելով «Մասիա» թերթի առաջին չորս համարների մասին, չի կարելի լռութեամբ անցնել նաև պրն. Պէրպէրեանի գրած «Նախաբանը», որը, ընդհանուր առմամբ, շատ լաւ տպաւորութիւն է անում և միանգամայն խրախուսական է կրթական գործի ծաւալման համար տաճկահայերի մէջ։ Այդ լօղւածից չի բուրում կրօնական ախուրտիկական ալն հոտը որ բարձրացնել են ուղում մեր

կողմի աւանդապահները: Պրն. Պէր-
պէրեան, չափնելով որ դաստիարա-
կութեան բուն նպատակն է մանուկ-
ների բոլոր կարողութիւնների ներ-
դաշնակ զարգացումը, ֆիզիքական
ու բարոյական մարդու կազմութիւ-
նը, զարմանում է որ «բնական գի-
տութեանց պէս կարևոր գետելիք
բացակա էն մեր շատ մը դպրոցնե-
րէն»:—Նա պահանջում է նաև որ
միջնակարգ դպրոցների թիւը աւելա-
նալ, և հիմնական աղպլախներ նաև աղ-
ջիկների համար, քանի որ չկան բը-
նաւ. պահանջում է ուսուցիչներ պատ-
րաստող մի դպրոցի հիմնարկութիւն,
ծափահարում է մանկապարտէզի գա-
ղափարին: Նա հեզնում է ուսումնա-
րանական աշն կարգը, որի նկարա-
զրութիւնը «Մուրճի» ընթերցողները
կարդացած կը լինեն Լեոնին գրած
Սմբատի նամակներում պ. Մանուէ-
լեանցի «Դպրոցական նամակներ»-ի
մէջ. («վասն զի կառավարիչ անու-
նով ալ պաշտօնեալ մ'ունեցեր եմք
և ունեմք մեր նախակրթարանաց
մէջ, աղաքները զսպելն և լռութիւն
պահելն պաշտօնով»):

Բաւց և աշնպէս պ. Պէրպէրեան
վկայում է որ կալ կրթական մի
չարժում, և որդէպի լաւագոյնը քաղ-
էր արւած են: Դոքա են՝ Ազգային
Կենտրոն. Վարչութեան հրատարա-
կած նախնական կրթութեան կազ-
մական Կանոնադիրը, մի քանի տա-

րիներից ի վեր ուսուցչական ժողով-
ներ կազմեցնելու սովորութիւնը, ման-
կավարժութիւն ուսանելու համար
Եւրոպա գնալը, մանկապարտէզների
բացումը Ֆրիօբէլի եղանակով: «Այս
ամենաշն մեր մէջ կրթական ոգւոյ
զարթում մը ցոյց կուտալ, և կ'աւե-
տէ դպրոցական լուրջ բարոքմանց
թւական մը, լուրջ ջանքերու սկի-
բնաւորութեան ու շարունակութեան
իբր հետեանք»: Այս ամենի վրա-
պէմ գտլիս է աւելանալու դպրոցա-
կան մամուլը, նախաձեռնութեամբ
Ազգ. Կենտ. վարչութեան Ուսումնա-
կան Խորհրդի՝ «Մասիս» երկչաքաթա-
թերթի միջոցով, որի բռնած ըն-
թացքից անշուշտ շատ բան կախ-
ւած կը լինի տաճկա հաւերի դպրո-
ցական գործերի նկատմամբ:

Յանկանք որ ալդ նոր հիմնւած
թերթը կարողանալ արժանաւոր
թարգման հանդիսանալ տաճկա-հա-
ւերի չառաջդիմական մտքերի կըր-
թական գործում, իմանալ գնահատել
իւր պաշտօնական դիրքը, աշն ի նարը
գործ չդնելով և զգալնութիւն ցոյց
տալով դէպի ազատ մամուլի մէջ ար-
տաշարուող մտքերը, և, որ գլխա-
ւորն է, եռանդով շարունակելով
սկսած մի գործ, որը, ինչպէս Խմբ.
մասնախմբի ատենապետը վկայում
է, նաև նիւթապէս: Գոհացուցիչ հան-
գամանքների մէջ է գրւած:

Ա. Ա.

ՔՈՒԶԱՐԵԱՆՑ Գրիգոր.—«Մեղապարտ փարիսեցիներ, զրամատիքական անցքեր. 79 էջ in 16, տպ. Յ. Մարտիրոսեանցի. գրին է 20 կուպէկ:

Բժշկապետ Քուչարեանն իր գրք բաժնի առաջին երեսի վրայ ասում է, որ «Մեղապարտ փարիսեցիները» զրամա է. Սակաչն գրքի կազմի վրայ հեղինակն իր գրածքը կոչում է զրամատիկական անցքեր. Մեր կարծիքով «Մեղապարտ փարիսեցիները» ոչ թէ զրամատիկական, այլ կոմիկական անցքեր են, և կոմիկական անցքեր են ոչ թէ նրա համար, որ գրածքի մէջ կոմիզմ կալ,—ոչ, տարաբաղաբար ալ շնորհքից զուրկ է հեղինակը. կոմիզմը կալանում է նրանում, որ հեղինակը տքնել է, արիւնքրտինք է թափել մի բան ասելու, բայց դուրս է եկել նրա ջանկացածի բոլորովին հակառակը, իսկ թէ ինչպիսի զրամա է ալ «զրամա» կոչւածը, կը տեսնենք:

Ի բաց առած Սաքուլ, Կակուլ գողերը, փաստաբանն ու ծառաները, որոնք բոլորովին աւելորդ և անպէտք անձնաւորութիւններ են, պ. Քուչարեանի «զրամալում» գործում են վեց անձեր, որոնցից կէսը զրական տիպեր են, կէսը բացասական. Հեղինակի ամբողջ սիմպատիան կենտրոնանում է ալք երեք զրական տիպերի վրայ. Սրանցից առաջինը, Հեղինէն, Աղա-Ղազար Կեղեքեանի դուստրը, ներկայանում է մեզ իբրև մի թուլամորթ, բոլորովին ոչ-զրամատիկական անձնաւորութիւն. Նա

հանդէս է գալիս իր՝ ծնողների զիտաւորութիւններին հակառակ՝ ցանկութիւնով միայն երկրորդ գործողութեան մէջ, և հէնց ալ գործողութեան մէջ, նա ընկճում է, խաբւում է լովէլան Գովսէփ Գովսէփեանի խօսքերից ու մտնում է կուսանոց, որպէս զի ապագայ գործողութիւններից էլ ոչ մէկում չերևալ Երկրորդ զրական անձնաւորութիւնը Աղա-Ղազարի հարս տիկին Անահիտ Կեղեքեանն է, որ մի վերին աստիճանի թեթեւութիւն, քամու պէս շարժուն, իբր թէ էմանսիպացած կին է. նա ուզում է անպատճառ սիրահարւելով ամուսնանալ, և մի շաբաթ բաւական է նրան սիրահարւել, համբույրներ ու ձեռքն ու սիրտը տալ լաւ չճանաչւած մի մարդուն, լետու մի ակնկալանի խարդախ նամակի վրայ ֆրոնտը փոխել, ստանալ ջլաւ ձգութիւններ (первые припадки) և ընկնել հիստերիկական դրութեան մէջ. Պ. Քուչարեանի ամբողջ «զրամալում» միակ զրամատիկականը իսկապէս նրա դրութիւնը պիտի լինէր, երբ սահնում է արտաոտանան Գովսէփեանի հետ: Տիկ. Անահիտի մէջ պիտի պատահի իսկապէս աչն երեքին կուլը, որ պահանջում է զրաման—կուլ սիրուց և պարտաճանաչութեան մէջ. ալք կուլի մի կողմը կանգնած է անբարոյական բալց օրինական ամուսին Աղէքսանդր Կեղեքեանը, իսկ

միւս կողմ՝ աղնիւ (sic!) բնաւորութեան տէր սիրահար Յովսէփեանը։ Բայց ալդ ներքին կուլը... զուցէ եղել է, բայց ոչ աչնտեղ, որտեղ հարկն է. նա զուցէ եղել է արտասահմանում—չղիտենք, բայց Թիֆլիսում, որտեղ «ղրամալի» գործողութիւններն են կատարում, ալդպիսի բան չենք տեսնում—աչստեղ բանը բանից արդէն անցկացած է... Երբ լորդ դրական անձնաւորութիւնն է, ինչպէս վերեւ կոչեցինք, լովկաս Յովսէփ Յովսէփեանը օրիորդ Հեղինէի ուսուցիչը և տիկին Անահիտի արտասահմանեան ընկերակիցը. ծագումով մի ինչ որ մութ անձնաւորութիւն (տես երես 37)։ Մենք նրան կոչեցինք լովկաս և ալս բանի համար անկասկած շատ կը նկատուէր պրն. Քուչարեանը, որով հետեւ սրա միակ սիմպատիան գրաւող, աղնութեան տիպար jeune premier—ն՝ ալդ Յովսէփեանն է. բայց ինչքան ուզենալ թող հակառակը պնդէ հեղինակը, Յովսէփեանը է և կը մնալ մեզ համար իբրեւ մի շատ փչացած անձնաւորութիւն։ Ալդ Յովսէփեանի ամենակեղտոտ արարմունքն աչն է, որ քանի նա Աղա Ղազարի տանն է, Հեղինէի ետեւցն է ընկած, նրան «կրթում» է—իրան վրալ սիրահարեցնում, բայց երբ տեսնում է, ոչ ոչինչ չի դուրս գալ, որ, միևնույն է, հալըը նրան անպատճառ կուսանոց պիտի ուղարկի, պոչը իրան է քաշում և ինքն էլ մի կողմից համոզում է Հեղինէին, որ կուսանոց մտնի, որ նա աչնտեղ չի թողնիլ նրան և ալն։ Ահա ձեզ ալդ տեսարանը։

«Յովսէփեան (Հեղինէի ձեռքը բռնած ունի)։ Իմ հոգոս հա-
«տոր, միթէ զու չի (չ) գիտես, որ
«քո արտասուքի կաթ լինե
«րը արում են իմ սիրտը
«դ ժողովուն կրակի մէջ (Ինչ
«վարենի դարձածք)։ Ո՛հ, միթէ
«քեզ նման գեղեցիկ և քնքուշ աղ-
«ջիկը (սրա կոմպլիմենտներին հա-
«յեցէք) պէտք է զոհ դնալ իւր ծնո
«ղաց խաւարամիտ կրօնամուտ-
«թեան... Ո՛հ, ո՛չ, հանդատցիր,
«տենչալիս, ալդ բանը անկարելի է,
«ես սպրիւ չեմ ցանկանում... Լո-
«ուրախութեամբ կը զոհեմ կեանքս,
«միայն թէ քեզ ազատեմ (ալս բա-
«նը լաւ լսեցէք)։

«Հեղինէ (հեկեկալով)։ Ահա
«հալս չալունից ինձ իւր վճիռը, (.)
«եկող կիւրակէ տանում են ինձ ա-
«նապատ (ալսինքն՝ կուսանոց)։

«Յովսէփեան։ Ի՛նչ փոթ,
«թէ և, թէ և նոյն իսկ վաղը. աչնտեղ
«գոնէ հանդիստ կը լինես, մինչև
«շատ շուտով ես քեզ կ'ազատեմ
«(կրկին լսեցէք)։

«Հեղ. Քո խօսքերը ինձ կենդա-
«նացնում են, առանց քեզ ես վա-
«ղուց գլուխս սպանած կը լինէի։
«Այո, կ'երթամ ես, բայց իմ վիճակն
«ու կեանքը քեզ եմ չանձնում...»
(եր. 35—36)։

Եւ ի՛նչ էք կարծում, կատարում է արդեօք Քուչարեանի փառաբանած Յովսէփեանն իր խոստմունքը, գոնէ աշխատանքի մի նշույլ ցոյց է տալիս կուսանոցից ազատելու աչն հէգ, թշուաւ արարածին, որը չանձնել էր նրան իր «վիճակն ու կեանքը»։ Ո՛հ, նա հիմա ուրիշ որսի ետեւցն է վա-

զուտ. արտասահման գնալով՝ Աղէք
ոանդր Կեղեքեանի կնոջ հետ՝ հիմա
նա վերջինիս ետևիցն է ընկել (ի
նկատի ունեցէք, որ Աղէքսանդրի թէ
քուր Հեղինէն և թէ կին Անահիտը
հարուստներ են...):

Կանգնենք բացասական տիպերի
վրայ:

Յանձին աղա-Ղազարի հեղինակն
ուզեցել է մի կատարեալ հրէշ դուրս
բերել, բայց նրա անշնորհութեան
պատճառով դուրս է եկել մի տիպար
որին թիֆլիսեցիք մկրտում են «էշ-
սատանայ» անունով: Նա իբրև մի
պաշտօնեայ, որի պաշտօնն է հալա-
ծել գողութիւնը, ինքը գող է և զս-
ղութեան խրախուսող: Բայց, չնայե-
լով իր աչս հրէշալին չատկութեան,
նա ալնքան միամիտ է, որ գողացած
ապրանքը, ալն էլ իւր կնոջ ճակա-
տին, հանդէս է դուրս բերում: Մէկ
անգամ Բարբարէն, Ղազար աղայի
կինը, իր մարդու Չոլախենց տանից
գողացած ճակատի քորոցը ճակա-
տին՝ լոտո է խաղում հասարակու-
թեան մէջ: Աչդտեղ է լինում և Չո-
լախենց հարսը, որը, ճանաչելով իր
քորոցը, վեր է թռչում և դուրս քա-
չում ալն Բարբարէի ճակատից, ստե-
լով որ իրանն է և իրանց տանից
գողացած: Բարբարէն դուրս է գա-
լիս և մարդուն չափմանում. «մի
բան որ մութը տեղը պէտք է պահ-
ւէր, ասում է նա, դու ինձ ուր էիր
տալիս» (չատ իրաւացի նկատողու-
թիւն): Չոլախենց հարսը տեսէք թէ
ինչ է ասում Բարբարէին բազմու-
թեան առաջ. «Գնա, գնա, չուտ
արա (յ) մարդուդ ասան, որ մէկէլ
կողոպտած բաները խորը տեղ պահէ:

Իզուր չեն ասում, որ աչդ փարիսեցի
սուտ Բրիստոսը, փոխանակ գողերին
բռնելու, ինքն է գողեր պահում...
Ամեն կորած ու չափշտակած բա-
ները ձեր տանիցն են դուրս գա-
լիս...» Ահա ձեզ կատարեալ էշ-սա-
տանայ: Մի հրէշ-ոստիկան, որ գո-
ղութեամբ է պարագում, ալնքան
վիմարանայ, որ իր գողացածը կնոջ
ճակատին աշխարհ հանի և հասա-
րակաց սկանդալի առիթ տալ կնոջ
գլխին: Աչս հրէշ-աղան, որը սատա-
նալին զանազան ծուռ ու մուռ ճա-
նապարհներով, ահագին զժաբու-
թիւններով (երեւակացիք գող ոս-
տիկանի դրութիւնը) հարստութիւն
է դիզում, վերջն ալնքան վիմարա-
նում է, որ թող է տալիս իր ուր-
դուն փչացնել աչդ բոլորը դեռ իր
կենդանութեան ժամանակ: Վերջա-
պէս ալն մարդը, որ դրամալի առաջին
կիսում գործոն դեր է կատարում, նրա
վերջին կիսում արդէն միալն խօսում է
առանց մի որ և է բան շինելու.
աչս կէսից սկսած նա բոլորովին ո-
ղորմելի, պասիւ դեր է խաղում,
որով արդարացնում է իրան վրայ
«էշ սատանայի» անունը: Աղա-Ղա-
զարի բնորոշ գծերից մէկը, որ սա,
չնայ՝ լով իր հրէշալին չատկութիւն-
ներին, դուրս է գալիս իբրև եկեղեցա-
սէր, աղօթասէր, նոր չէ ալն շատ ծամ-
ծմած թէ Աւրոպացի և թէ հալ գրող-
ներից. բայց աղա-Ղազարի աչս չատ-
կութիւնն էլ բաւական անշնորհք
կերպով, կոպիտ թեւերով է կար-
կատնած հեղինակի ցանկացած տի-
պի հետ: Միւս բացասական անձերի՝
աղա-Ղազարի կին Բարբարէի և
նրանց որդի Աղէքսանդրի տիպերը

եթէ քննենք, մէջները ոչինչ նոր բան չենք գտնիւ. սրանք պատճէններ են, և թող պատճէններ Սունդու-կեանցի դուրս բերած տիպերի, և զա-նազանութիւն եթէ կալ մէջները, ալդ նրանց խօսակցութիւնների մէջն է կալանում. ալն էլ ի հարկէ ալն պատճառով, որ երկու հեղինակների պատմած նիւթերը ուրիշ-ուրիշ են, իսկ ընդհանրապէս, ինչպէս ասացի, ալս երկու տիպերի վերաբերեալ պ. Քուչարեանը մեզ ներկայանում է կոպիտ, ալն էլ անչնորհք կոպիտ:

Ղրամալի գլխաւոր ինտերէսը զրամատրկական կուր զարգացման մէջն է կալանում. ալն ամեն, ինչ խանգարում է մեր ուշադրութիւնը կենդրոնացնելու կուր ալդ զարգաց ման վրալ, աւելորդ են և վնասում են զրամալին: Բալց մինք տեսնւք, որ կուր ալն մաքով, ինչ մոքով պահանջում է զրաման, բոլորովին էլ չկալ «Մեղապարտ փարիսեցիները» մէջ: Հետեալար և պ. Քուչարեանցի «զրաման» զրամա չէ: Սա է իսկապէս մի ժողովածու թող կերպով կապած մենախօսութիւնների, և բազմախօսութիւնների, որոնք տեղ-տեղ փալլում են իրանց ծիծաղելի եղերականութեամբ, տեղ-տեղ բուլթ սրախօսութիւններով՝ կոմիզմի տեղ, և տեղ տեղ ճարճատուն հոետորութեամբ՝ զրամատրիզմի տեղ:

Ինչ կարող էր կարծել Շէկսպիրը, որ մեր աստածապալ աղբի մէջ գուրս կը գալ մի «զրամատրիզմ», որը հիմնուելով նրա՝ ժամանակի միտութեան օրէնքի խախտման վրալ՝

ալդ խախտման իրաւունքը ալսպէս կը գործադրի. «մի պատկերից մինչև միւսը չաջորդում են միմեանց երկար տարիներ, ալնպէս որ առաջին և վերջին գործողութեանց մէջ մերձաւորապէս անցնում է 40 տարի»: Քառասուն տարի—համարեա կէս դար մի զրամալի գործողութիւնը կատարուելու համար...

Պ. Քուչարեանն իր «զրամալում» թող է տուել կրկնակի գործողութիւն (ոչինչ, ալդպիտի բան թող է տուել և Շէկսպիրը), մէկը տիկին Ա. հասիտի դէպքն է, միւսը օրիորդ Հեղինէի կուտանոց մանկ չցանկա-նալը: Բալց արդեօք ալդ կրկնակի գործողութիւնների մէջ կալ մի որ և է ընդհանուր իղէա, մի որ և է ընդհանուր նպատակ, ինչպիսի բան որ պահանջում է զրամալից—բալց ինչ հարկաւոր են պ. Քուչարեանին ալդպիտի բաներ...

Պ. Քուչարեանն, ինչպէս երևում է, շատ բարոյական մարդ է, կամ աւելի ուղիղն ասած՝ սեռ ալին բարոյական ութ ետն երկըրպագու է: Նա չի ուղեցել, որ տիկին Ա. հասիտը որ և է սեռալին չարաբերութիւն ունենալ իր անբարոյական ամուսնու հետ, սրա համար նա սեռ կատարան է կալում ամուսինների մէջ առաջատից հէնց առաջ, որպէս զի աղնիւ տիկին Ա. հասիտին տնմեղ լանձնի աղնիւ պարոն Յովսէփեանին:

«Մեղապարտ փարիսեցիների» հետոները զրամանալի ընդունակութիւն ունեն. նրանք շատ անգամ խօսում են ոտանաւորներով և ուղիղ ալնպիտի տալիս կ ոտանաւորներով

որպիսին ընդունակ է գրել պ. Քուչարեանն իր «Մխիթարանի և հանգիստ» ժողովածուի մէջ (որա մասին փոքր ինչ ցածում):

Պր. Քուչարեանն իր «դրամալի» վերջում մի գրամատիկական էֆֆէկտ է ստեղծել, որը հիմնւած է մի շատ անհիմն բանի վրայ: Ո՞վ կարող էր երևակայել, թէ քաղաքակիրթ աշխարհում կը գտնւէր մի դատաւոր, թէկուզ ալ զատաւորը լինէր մի հոգեւոր հաստատութիւն, որը առանց մեղադրեալին հարցնելու և հիմնւելով միայն մեղադրողի խօսքերի վրայ՝ պատժէր մէկին: Բայց ալգպիսի խառնակ դատաւորի դեր կատարել է տալիս պ. Քուչարեանն «եկեղեցուն ու նրա օրէնքին», որպէս զի ընթերցողներին մի գրամատիկական էֆֆէկտ տալ: Երևակայեցէք ձեզ, տիկին Անահիտը Յովսէփեանի հետ արտասահմանում մի քանի տարի ապրելուց չետոյ (հիմնւելով ալն բանի վրայ, որ պ. Քուչարեանը սեռալին բարոյականութեան երկրպագու է, մենք ընդունում ենք, որ նրանք

չէին կենակցում) զալիս է Թիֆլիս և նրա հետ երկու ամիս ծածուկ ապրում կաւկազ հիւրանոցում: Այդ ժամանակամիջոցում նա զուլս է բերում իր և Աղէքսանդրի պսակաւածութիւնը, իրան վերսպահելով ամուսնանալու իրաւունքը և պսակւում է Յովսէփեանի հետ: Այս բաների վրայ ոչինչ տեղեկութիւն դեռ չունի ոչ «դրամալի» ընթերցողը և ոչ Անահիտի օրինական ամուսին Աղէքսանդրը: Երբ վերջինս առանձին հրաւիրաթղթով գալիս է հիւրանոց և ցանկանում իր կնոջ «մագերից քաշ տալով» նրան տուն տանել, չանկարծ դուրս է պրծնում Յովսէփեանը և չարոնում, որ նրա օրինաւոր կինը հիմա իր օրինաւոր կինն է, որ ալ թանն արել են «եկեղեցին և նրա օրէնքը»: Երևակայեցէք, ինչպէս պիտի չչկուէր Աղէքսանդրը, քանի որ ընթերցողն անգամ չչկուում է ալդ անսպասելի լուրն առնելով, էֆֆէկտ չէ՝ արդեօք սա:

Գ. Ա. Գ.

ՔՈՒՉԱՐԵԱՆ ԳՐԻԳՈՐ.—«Մխիթարանք և հանգիստ»: Չափ սերական գրւածք, Թիֆլիս, 1894 թ., եր. 94 in 16, գինը 30 կոպ.

Շատ քիչ մարդ կը գտնուի, որն աշակերտական նստարանից սկսած՝ իր պատանեկական մտորող հասակում երևակայած չլինէր թէ ինքը բանաստեղծ է և փորձած չլինէր ոտանաւորներ գրել: Ալգպիսի

փորձերով շատ անգամ պարապած են մինչև անգամ հասակն անցած մարդիկ և, ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս, մինչև անգամ սառը դիպլոմատներ և ղիտնականներ: Ալգտաղաչափական փորձերը իբրև մի մօ-

ցիոն, իբրև մի տեսակ մարմնամարդութիւն, միշտ կենսարար ազդեցութիւն են ունենում շարունակ մի բանով պարապած, ուղեղները չոգնեցրած մարդկանց վրա՝ բաղմատեսակութիւն գցելով նրանց պարապմունքների մէջ: Ոչ ոք կարող է արգելել մէկին ալդպիսի անմեղ, թէկուզ բոլորովին անտաշ, անճոռնի, բաւց չամենալն դէպք՝ բարոյական տեսակէտից առողջարար պարապմունքի համար: Որչափ, և մինչև անգամ չանցանք կը լինի ալդպիսի մի բան արդիւլը, որն անկասկած հողեկան զարժութիւն է տալիս պարապողին և ոչ մի վնաս ուրիշին: Բաւց ուրիշ բան է իր սեփական տանը տաղաչափական փորձեր անել իր սեփական բաւականութեան համար և ուրիշ բան է ալդ փորձերը լոյս աշխարհ հանել: Հրատարակած ոտանաւորները դառնալով հատարակաց ընթերցանութեան նիւթ՝ դառնում են հասարակութեան սեփականութիւն և ալդպիսի ոտանաւորներին արդէն մենք որոշ պահանջներ ունենք անելու: Ո՞վ կարող է արգելել պ. Վրիդոր Քուչարեանցին գրել իր սեփական կարիքէտում ոտանաւորներ կամ ալպէս անւանած՝ բանաստեղծութիւն և ր (թէպէտ պ. Քուչարեանցի ոչ «բանաստեղծութիւնների» մէջ կալ բանաստեղծութիւն, ոչ նրա ոտանաւորների մէջ՝ ոտք), քանի որ ալդ ոտանաւորները կամ բանաստեղծութիւնները նրան «Միեթարանք և հանգիստ» են պատճառում, քանի որ «բանաստեղծութիւնը (պ. բժշկապետի համար) ծառայում է իբրև մի

ողելից բմպելիք, որ չատ անգամ չոգնած ու տանջւած մարդը գործ է ածում իր ցաւերն ամօքելու և լարւած նեարդերը հանդստացնելու համար»: Ոչ ոք, կրկնում ենք, թող դրի պ. Քուչարեանն, որքան նրա սիրտը կուզէ, կաբինէտն իրանն է, թուղթը, գրիչն ու թանաքն էլ իրանը, բաւց երբ նա իր գրական վաստակները տպագրութեան և վաճառման է տալիս, մենք արդէն իրաւունք ունենք քննելու՝ արդեօք կարող են նրանք հասարակութեանն ևս պատճառել բաւականութիւն, կամ որ և է կերպ օգտակար լինել նրան. կարող են արդեօք նրանք համարել ալդպիսի ոտանաւոր-բանաստեղծութիւններ, որպիսին մենք ճանաչում և ընդունում ենք:

Պր. Քուչարեանը համեստ է. նա ինքը խոստովանում է իր «ծանուցման» (առաջաբանի) մէջ, որ բանաստեղծութեան զիմել է միայն «երբեմնապէս», և ոչ թէ իբրև «ոգևորւած բանաստեղծ», ալ իբրև «չոգնած մարդ, հանդիստ գտնելու նրա մէջ»: «Ալպիսով, — աւելացնում է նա, — ոչ թէ ես եմ ծառայել Մուսային, ալ նրան եմ ինձ ծառայեցրել»: Ալստեղ Մուսայի մասին ի հարկէ խօսք չի կարող լինել, որովհետև ալն էակը, որը ծառայել է պ. Քուչարեանցին, երևացել է նրան միայն Մուսայի զիմակով, որի տակ թագեցրած է եղել լուչկապարկի անճոռնի-ծաղրածու դէմքը: Բաւց մեր խօսքը պ. Քուչարեանցի գրականական համեստութեան մասին է: Մենք երբեք չենք կարող արդարացնել պ.

Քուչարեանին իր ոտանաւորները տպելու մէջ միանալ ան բանի համար, որ նա համեստ է: Ախր, մենք եթէ աղպլիսի բաների վրաջ ուշադրութիւն դարձնենք, ամեն մի փինալի կարող է հանդէս դուրս գալ և իր համեստութիւնն իբրեւ մի զրահ արած հասկայողներ ի դէմ՝ մեր հասարակ և ընթերցածարաւ ժողովրդին, որը շատ անգամ չգիտէ լաւը վատից ջոկել, կերակրել իր փինալիական գրաւծներով: Զեւքդ է ընկնում հաւերէն մի գիրք, լրագրի մի համար, ազահաբար թերթում ես, կարծում ես մի միտք, դոնէ մի հետաքրքիր, օրդինալ դարձածք կը գտնես մէջը: Բայց ի դուր աշխատանք: Գռնիկները, անտաշները, որոնք զարգացմամբ, իրանց զգացմունքների նըսթեամբ հաղիւ կարող են զանազանել մի որ և է բուշմէնից կամ նախնական մարդուց՝ «բանաստեղծութիւններ» են թխում, համբալներ, որոնք իրականութիւնը կոպիտ ֆանտազիալից գանդանել չգիտեն՝ «իրական կեանքից վէպեր» են զաւանցում, — և կան տարաբաղդաբար մեր մէջ մարդիկ, որոնք փոխանակ սանձահարելու, փոխանակ ապտակելու ալը գրական խեղկատակներին՝ նրանց աւելի լրբացնում են, տպում են նրանց ափեղցփեղ և մեծակար գրութիւնները, կան մարդիկ բարձր կրթութեամբ, պ. Գրիգոր Քուչարեանցի նման, որոնք առանց քաշելու մտնում են ալը դրական խեղկատակների շարքը:

Մենք ապշած ենք, մենք զարմանում ենք, միթէ պ. Քուչարեանցը չի հասկանում, սր իր ոտանա-

ւորները ոչ թէ միաջն բանաստեղծութիւններ չեն, ալ և մինչև անդամ մի պէտքական բան:

Վերցնենք մի ոտանաւոր, որ կրում է «ժողովրդական հէքիաթ» անունը և տեսնենք.

I

«Զքնաղ Մանուշակ,
Իմ վարդ ու մխիակ,
Գլուխդ դուրս բեր (ճրտեղից),
Լսիր իմ խօսքեր:

Ահա նախք բարձր երկնքին,
Փալ (?), ասողերին. (,)
Պայծառ լուսնին,
Քեզ տեսնելիս, կը սփութնի (1):

II

Իսկ ես կ'իզւած, (?)
Աչերիդ վառ կրակից,
Խկոյնեթ ձուկն դարձած (')
Ալիքների սառն խորքից
Քեզ կը նայեմ,
Բայց կը փախչեմ (լաւ լսեցէք),

Ա'խ, իմ մանուշակ,
Սիրածս միակ:
Արի ձուկ դարձիր,
Արդէն ես ձկնորս
Գու գետ ընկեր,
Ես էլ կը գամ հորս»:

Այստեղ, ինչպէս տեսնում է ընթերցողը, ձուկը առաջ հեղինակն էր, որը քետոյ Մանուշակին խորհուրդ տւեց ձուկը դառնալ, իսկ ինքը ուզում է ձկնորս դառնալ:

III գլխում մանուշակն արդէն տատրակ է դարձել, իսկ հեղինակը «հորսկան»:

«Մի նախանձիր ազատ թռչնուն
(թռչնին), շարունակում է հե-

ղինակը.

Դառն գղջանք առաջ կը գալ (օհօ).

Դու կը մնաս անտէր, անբուն,

Իսկ քեզ սիրողը կը սլանալ».

IV գլուխը ամբողջապէս հետեւեալն է.

«Ան ժամանակ,

Նազ (!) մանուշակ,

Նա կը սահ մ,

Ինչպէս առուակ,

Կ ու ո գ ե մ

Մ ե Ր ա գ ա Ր ա կ».

V գլխում հեղինակը ցանկանում է «խորտոս ամպեր» դառնալ, բայց փետոյ իսկոյն փոյմանում է և խնդրում Մանուշակին, որ նա ամպ դառնալ, իսկ հեղինակը կը դառնալ գեփիւռ.

«Դու ամպ դարձիր,

Իսկ ես զեփիւռ,

Թարմ, զովարար

Ինձ ցողդ տ ու Ր».

VI գլուխ.

«Շքեղ (!) Մանուշակ,

Դարձիր դու լուսնեակ,

Իսկ ես ամպ թռչնի կ...

VII

«Բո քնքռւ գրկից

Յանկարծ կը թռչեմ

Առաւել վարդից

Դաշտում կը բուրեմ».

Այսքան լիմարութիւններ անելուց փետոյ՝ հեղինակը VIII գլխում ցանկութիւն է չափանում, որ մանուշակը վարդ դառնալ իսկ ինքը՝ «մեղրաճանձ», բայց փետոյ իսկոյն և եթ փոյմանում է և ցանկանում է, որ ինքը «կաղանի ծառ» դառնալ՝ «որ փարթամ դօտէ Մանուշակի նա. զուք մէջքը»։ Այս բանն էլ մոռա-

ցած՝ հիմա ուզում է, որ մանուշակը

«կաղանի ծառ» դառնալ.

«Դու ծառ կաղանի,

Անվեհեր կաշնած,

Նւ փափուկ ջղլի (?)

Լանջի եմ պատած»...

Վերջապէս, ինչ գլուխնիդ ցաւացնեմ, չարգելի ընթերցող, հեղինակը մեռնում է և Մանուշակի, որ ալդ ժամանակ դեռ ես վարդ էր, «ձայնով դմալած մտնում է դադաղ», որի վրայ դուք շատ ուրախացած էք, հաւատացած լինելով, որ հեղինակը դաշաղից ալ ևս ցնդարանութիւններ ու վալրկենական մետամորֆոզներ չի անի։ Բայց, մէկ էլ տեսես... Մանուշակը մօտենում է հեղինակիս գերեզմանին և հեղինակն աշնտեղից «նորից բուսնում է», մանուշակը «տուփում նրա գրկին», իսկ ձեր իլլիւզիան կրկին կորչում։

«Վերջ ի վերջոյ կը հաւատամ քո

սէրին, չարունակում է հեղի.

նազը և (ի՜նչ դժւար հասկացող

մարդ է եղել, նա)

Նրջանիկ եմ ես նորից.

Ա՛ռ, զիր մատդ մատանին,

Ել շանջատուս իմ գրկից».

(երես 47—53)։

Ահա ձեզ բանաստեղծութիւն։ Եւ սրա գրողը ոչ թէ խելագար է, ոչ թէ մի համբակ, առաջին դաստան մի աշակերտ, ալ հասակն անցած, բարձր կրթութեամբ մի բժշկապետ։ Ամօթ, ամօթ.

Ուզում էք տեսնել, թէ հեղինակն ինչքան զաղափար ունի չափաբերական կանոնների վրա, հրամմեցէք՝ Վերցնենք մի ոտանաւոր.

«Ն ու է ր.

«Նթէ վիճակ գթառատ»=7 վանկ
 Թափէր իր լուսն ինչպէս արե-
 րակ,=10 վանկ
 Իրօշմէր քո ճակատ»=5 վանկ
 Արդար չաղթանակ,=5 վանկ
 Այն, երջանիկ ժամանակ,=8 վանկ
 Ճիշդ ամեն մի նուազ,=6 վանկ
 Կուզէի, տենչալ,=5 վանկ

Գրկումն տուիալ: (Եր. 41)=5 վ.:
 Բաւական է: Պարապեցէք, պ.
 Քուչարեանց ձեր բժշկութեամբ. զրա-
 նով միշտ օգտակար կարող էք լի-
 նել, իսկ մուսաներին հանգիստ թո-
 ղէք: Յիշեցէք լատինական առածը—
 quod licet Jovi, non licet bovi...

Գ. Ա. Գ.

ZOLA.—«Les trois villes. Lourdes».

ԶՈՒՍ, Էմիլ.—«Երեք քաղաքներ. Լուրդ»: Պարիզ, 1894 թ.:

Ահաւասիկ մի նոր նշանաւոր
 վէպ, որ Զոլան ի լուս աշխարհ է
 ընծաւել: Երբոր Զոլան իր «Պոքտոր
 Պառլալ» վէպով վերջացրեց հոչակա-
 ւոր «Րուզոն—Մաքարտի ընտանի-
 քի բնական և հասարակական պատ-
 մութիւնը», եւրոպական ընթերցող
 հասարակութիւնը շատ հետաքրք-
 ւած էր իմանալու թէ ալուհետեւ
 Զոլաի հանճարեղ գրիչը հասարա-
 կութեան ինչ տեսակ խաւերը կը
 նկարագրի և կ'ուսուցնասիրի: Յալո-
 նի է, որ Զոլաի վիպագրութեան օ-
 լորով երևան եկաւ Ֆրանսիայում
 մի ուրիշ նոր վիպագրական շկուա,
 որ իր նիւթը վերցնում է մարդկանց
 հոգեկան աշխարհից: Հոգեբանական
 վիպագրութիւնը քննում և վերլու-
 ծում է մարդկանց բնաւորութիւն-
 ները, որոնք արտադրուում են
 ճգտումների, ցանկութիւնների և
 կրքերի ձևով և բնորոշում են մարդ-
 կանց աշխարհացիքը և իդէալը:
 Վերլուծող վիպագրութիւնը անկաս-

կած մեծ տպաւորութիւն գործեց
 ընթերցող հասարակութեան վրա:
 և մի չափով շարժում լաւաջացրեց
 գրականութեան մէջ, տնայէս որ
 կ'արծիք ծագեց՝ իբր թէ Զոլաի
 տեղծագործութիւնը ալ ևս ժամա-
 նակակից պահանջ է: Սակայն ալ
 կարծիքը միանգամայն սխալ և ան-
 հիմն էր: Նթէ վերլուծող վիպագրու-
 թիւնը մեզ պատկերացնում է ոգե-
 կան կեանքի երևութիւնները, որոնք
 չօջափում են մեր բարոյական գոյու-
 թեան աստիճանները և մեզ չիշեց-
 նում են մեր պարտքը և պարտա-
 ճանաչութիւնը դէպի մարդկայնու-
 թեան սուրբ և վսեմ գաղափարը,
 նա դեռ ևս զորանով միմիայն լա-
 ւարարութիւն չէ տալիս այն պա-
 հանջներին, որ մարդկութիւնը ունի
 իր անվերջ լաւաջաղիմութեանը ձգ-
 տելու տեսակէտից: Զոլաի հանճարը
 նրանում է կալանում, որ նա համա-
 գրական-բնական եղանակով ուսում-
 նասիրեց և պատկերացրեց մեզ հա-

սարակական խաւերի սովորութիւնները և հաստատութիւնները, որոնք կազմել են երկաշն ժամանակների ընթացքում, Բնական վիպագրութեամբ՝ Զուան լիշեցրեց և արթնացրեց մեզ աշն հասարակական, տընտեսական, քաղաքական և բարոյական հետեանքների մասին, որոնք ծագում են չափնի ժողովրդական սովորութիւններից և հաստատութիւններից: Պահանջելով աշն հաշեցակէտը՝ Զուան շարունակում է ստեղծել աշնպիսի գրական գործեր, որոնք ահագին և թանգագին պաշար են կազմում հասարակական զիտողութեան համար: Աշնպիսի հանձարեղ գործերից մինն էլ «Լուրդ» վէպն է, որ նա տեւց աշն տարի քաղաքակիրթ աշխարհին: Լուրդը Ֆրանսիայի հարաւում Պիրենէ կոչւած լեռների վրա գտնուող մի փոքրիկ քաղաք է: Աշտեղ կա մի քարանձաւ, ուր մի կոչս աղջիկ, Բերնադէտ անունով, աղօթելիս աշխարհին մեղքերի և ցաւերի քաւութեան համար՝ իւր թէ տեսել է Մալր Աստւածածնուն, որը լսելիս է եղել աշն աղջկալ աղօթքները: Շնորհիւ աշն առաւելեական պատմութեան՝ Ֆրանսիական կաթոլիկ ժողովրդի նախապաշարած մասը կնքել է Լուրդի քարանձաւը Մալր Աստւածածնի սրբաւալր անունով: Աշն ժամանակից քսուել Լուրդի Աստւածածնի սրբաւալրը վաղելում է մեծ համբաւ կաթոլիկ ժողովրդի համար իւրեցաւերից վերկող, աղաաող և բուժող մի ուխտատեղի: Տարւնը մէկ անգամ, օգոստոսի վերջերքին, կատարում է ուխտագնացութիւն զէպի Լուրդը:

Բազմաթիւ ուխտաւորների շարքում լինում են, բացի Ֆրանսիացիներից, շատ օտարաղդի կաթոլիկներ: Բայց Զուան վէպի մէջ վիշաւ ուխտաւորները Ֆրանսիացիներ են: Ուխտաւորները պատկանում են զանազան դասակարգերին: Սրանց մէջ կան ունեւորներ և աղքատներ, բոլորն էլ գնում են Լուրդ երեք օրով ուխտանելու, ի հարկէ աշն չուով, որ սրանք, աղօթելով Լուրդի սուրբ քարանձաւի մէջ, կը բուժեն իրանց ցաւերից: Լուրդ գնացող ուխտաւորների թիւը, որոնք բռնաւ են աշնպիսի երեւակաւութեամբ, հասնում է հարիւր հազարների: Սրանց համար պատրաստում են չատուկ գնացքներ թէ Պարիզից և թէ Ֆրանսիայի ուրիշ քաղաքներից: Պարիզում կան և աշնպիսի բարեգործական խնամատար ընկերութիւններ, որոնք կազմակերպում են Լուրդի ուխտագնացութիւնը և խնամում են չքաւոր ուխտաւորներին ուխտագնացութեան ամբողջ ժամանակ: Զուան վերցնում է ուխտագնացութեան գնացքներից մէկը, որ «ապիտակ գնացք» է կոչւում, և նկարագրում է աշն գնացքի մէջ գտնուող ուխտաւորների հինգ օրաւ կեանքը և արարողութիւնները, աշնին երկու օր զնալը և վերադարձը, երեք օր էլ Լուրդում մնալը: Ահա աշն հինգ օրաւ ուխտաւորների կեանքն է, որի հետ Զուան մեղ ծանօթացնում է իր զօրեղ և աննման գրչով: Խակ հինգ օրաւ ուխտաւորների կեանքը աշնքան հետաքրքրական և բովանդակալից է, որ նա կազմել է նիւթ 600 երեսանոց վէպի համար:

Ջանազան ցաւերով հիւանդ ուխտաւորները, բռնւած լինելով հպատարով դէպի Լուրդի գերբնական ուժերը, խնդրում են սուրբ Սօրից փրկութիւն իրանց ֆիզիկական ցաւերից: Սրանց համար հաւաստը ոչ միայն ողու պահանջ է, այլ կարծես միջոց լինէր, որ պէտք է դարձանէր օրգանական պատճառներից բխած ֆիզիկական ցաւերին: Եթէ բժշկական գիտութիւնը սրանց դէմ առաջ առնել չի կարողացել, խոկապէս այլ ևս ոչինչ փրկութիւն չպիտի սպասուի: Բայց եթէ այն դէպքերում, ուր բնութիւնը ջանազան պատճառների շնորհիւ նպաստել է որ ցաւերի ազդեցութիւնը զեղոքանալ կամ նոքա լիովին բուժեն: Սա մի ճշմարտութիւն է, որ կուր հաւատացիալը չի ճանաչում, որովհետեւ սա իր բոլոր էութեամբ կլանւած է նախապաշարմունքներով: Բայց որքան մխիթարուում է ընթերցողը, երբոր սա հանգիպում է նախ «սպիտակ գնացքի» մէջ մի ուխտաւորի, Պիէր անունով քահանային, որ գիտնական ճշմարտութեան կողմն է:

Պիէրը մի շատ համակրելի անձ. նաւորութիւն է, որ ինչ դատողութիւններով և մտքերով արտապատում է ժամանակակից լուսաւոր աշխարհագրաբան, Պիէրը չնորհապարտ է իր լուսաւոր մտքերի համար իր սեպական հօրը և սրա շքրջանին: Պիէրի հայրը մի գիտնական քիմիկոս է եղել, որ իր լաբորատորիալում մի օր բանելիս՝ մեռնում է չանկարծակի պալթած գործիքների հարւածներից:

Պիէրը զարձեւ էր քահանայ ոչ

իր կոչումով, այլ իր մօր ցանկութիւնով և կամքով: Այս կինը մի նախապաշարած հաւատացեալ էր, որ կարծելով իր մարդու չանկարծակի մահը իբրեւ Աստուծանից պատիժ, նւիրեց իր սրտուն հոգևորականութեանը, որպէս զի նա ծառայելով հոգևորական պէտքերին, քաւի իր հօր մեղքը: Իսկ Պիէրի կրտսեր եղբայրը հաւարում մնալով իրանց հօր գիտնական ասպարէզին, նւիրում է իրան քիմիական գիտութեանը և դառնում է նշանաւոր քիմիկոս: Այնուհետեւ նա բոլորովին հեռանում է իր մօրից և իր աւագ եղբորից:

Պիէրը այն հոգևորականն է, որ կատարում է բոլոր եկեղեցական ծեսերը և արարողութիւնները ամենայն ճշտութեամբ և օրինաւորութեամբ: Նա ծառայում է հոգևոր պէտքերին հաւատով դէպի վսեմը, բարին և լաւը, արդարութիւնը, եղբայրասիրութիւնը, հաւատարմութիւնը, դէպի այն բոլորը, ինչ որ մարդկութեան բարօրութիւնը պահանջում է: Նա ոգով և խելքով գիտնական դարի մարդ է, այն դարի, որ մեկնում է կեանքի երեւութները բնական օրէնքներով: Նա չի հաւատում հրաշքներին և չի հաւատում ուխտաւորների տաճած լուսերին դէպի սուրբերը, որոնք իբր թէ պիտի ազատեն ուխտաւորներից մէկին թոքախտից, միւսին խոզախտից, երբ որ նա լսում է ուխտաւորների աղաչանքները և պաղատանքները սրբազան Լուրդին՝ թէ սա պիտի բուժի նրանց իրանց ցաւերից, Պիէրի ներքին աշխարհը բողբոջում է

ուխտաւորների աղաւթի հաւատի դէմ, որ նրանց մտքերը եւ կաշկանդել է ցնորքներով: Նա համոզւած է, որ ուխտաւորների մէջ բնաւ չկալ բանականութեան նշույն անդամ: Իսկ իրերը եւ երեւութները մեկնելու համար ամենից առաջ Պիէրին կարեւոր է թուում բանականութիւնը:

Պիէրը գերծ չէ մնացել իր կեանքում սիրող արկածից: Այսպէս, գնացքի մէջ նա հանդիպում է մի հիւանդ ուխտաւոր օրիորդին: Մարիամ Պիէրը ալդ օրիորդին շատ ժամանակ ճանաչում էր եւ մինչև քահանայ ձեռնադրելը նրան սիրելիս է եղել եւ գուցէ հեռը կ'ամուսնանար եթէ հոգեւորական չդառնար: Այժմ, օրիորդին հանդիպելիս, արթնանում են նորա բոլոր լիշողութիւնները իր անցեալ սիրող մասին: Պիէրի սկըրդէպի ալդ օրիորդը նորոգւում է, սակայն ոչ իր նախկին բնաւորութեամբ, որից Պիէրը հրաժարւել է: Այդ սկըրդէպը դառել էր լոկ եղբայրական եւ առգորում էր նրան լոկ եղբայրական զգացմունքներով: Միայն այս սուրբ սիրով է մերձենում Պիէրը օրիորդ Մարիամին եւ չաճախ սրա հետ է լինում թէ ճանապարհ գնալիս եւ թէ Լուրդում:

Վերջապէս ուխտաւորները հասնում են Լուրդ: Այստեղ ուխտաւորները երեք օր են մնում եւ անօթում ու հետևում մոլեռանդ կերպով բոլոր ահն ծէսերին եւ արարողութիւններին, որ քահանաները ի պաշտօնէ կատարում են: Ամենազարմանալի սովորութիւնը, որ աչքի է զարնում եւ բոլորովին հակառակ է մեր դարու սկսած ցողութեանը, դա այն է, որ

Լուրդում համարեա թէ բոլոր հիւանդ ուխտաւորներին լողացնում են: Սորա համար շինւած է մի աւազան, ուր հոսում է Լուրդի գետակի ջուրը. աղբոսի մոտում են լողանալու ամեն տեսակ ցաւերով հիւանդ ուխտաւորներ, երեւեակելով, որ սուրբ ջուրը պիտի փրկի նրանց իրանց ծանր հիւանդութիւններից: Սակայն որքան մեծ է հիասթափումն, երբ ուխտաւորները ահն ջրում լողանալուց լետո՛՛ իրանց բուժւած չեն տեսնում, եւ նրանցից ոմանք էլ մինչև անգամ մեռնում են ջրում լողանալու հետեանքից: Ուխտաւորներից շատ շատերը տնքաւական են Լուրդի սրբավայրից, ասելով թէ նա չի ուզեցել նրանց բուժել եւ նոքա վերադառնում են զրգոհ իրանց ուխտագնացութիւնից: Սուրբ աւազանում լողացող ուխտաւորների մէջ ահնու ամենապիւ մի բուժման դէպք է պատահում, որ զրգոռում է նրանց ահագին ոգևորութիւնը դէպի ս. Լուրդի հրաշալից ուժը: Այդ դէպքը վերաբերում է վերը լիշած օրիորդ Մարիամին, որ սուրբ աւազանում լողանալուց լետո՛՛ իրան լանկարծ բուժւած է տեսնում: Օրիորդ Մարիամը ներգալին հիւանդ էր, եւ ցաւը բռնել էր նրան գլխաւորապէս ոտներից, որոնք թուլացած զրութեան մէջ էին դանդաղում: Այս դէպքից ազգւած ուխտաւոր ամբոխը շարունակում է խնդրել եւ աղերսել սուրբ Լուրդի օգնութիւնը: Մի խօսքով՝ մոլեռանդ երեւակաւութիւնը շարունակւում է: Նոյն աչք դէպքը Պիէրի համար ոչինչ համոզեցուցիչ բան չէ պարունակում իր

մտքերի դէմ, և նա մնում է ամուր և անդրդուկի իր համոզմունքի մէջ: Չէ որ ներդաշին հիւանդների վրայ բազմաթիւ փորձեր անելիս՝ բժշկութիւնը ալն եղբակացութեանն է հասել, որ ներդաշին հիւանդները՝ չաճախ բուժուում են զանազան դէպքերի ազդեցութիւնից, Պէպքեր, որոնք ներդործելով հիւանդի երեակալութեան վրայ, գրգռում են նորա ափրոջ ներադաշին սիստեմը և ունենում են բուժիչ ազդեցութիւն հիւանդատենարդերի վրայ: Անկասկած օրիորդ Մարիամի դէպքն էլ ալս կարգին էր պատկանում և ոչ մի հրաշքից չէր բղխում: Այսպիսի մեկնութիւնը պարզ և հասկանալի է Պիէրի նման ժամանակակից մարդու խելքի համար, որ իր ֆիզիկական ցաւերի փրկութիւնը չի որոնում միջնադարեան խորհուրդների մէջ: Էմիլ Զոլան ջանաց ցոյց տալ գիտութեան գերազանցութիւնը և ուժը, որոնց ազդեցութիւնը արտադաւաճում է նաև Պիէրի լուսաւոր աշխարհալեացքի մէջ: Եւ որովհետեւ Պիէրը հոգեորական էր, հարկաւոր էր ցոյց տալ, որ

նոյն իսկ հոգեորական զատակարգի մէջ արդէն բողոք է ծագել մոլորեցուցիչ նախապաշարմունքների դէմ: Զոլան ալս վէպի նշանակութիւնը նրանում է որ ասպնուցել թէ զեւսու ժողովրդական խաւերը գեգերում են այսպիսի լեռնադէմ և անցեալ դարերին պատկանեալ երեակալութիւնների և ցնորքների մէջ, որոնք վեատում են բանական աշխարհալեացքի ընդլայնմանը և ալլանդակում են մարդկանց մտքերը՝ խանգարելով մարդկային մտաւոր զարգացման խելացի ընթացքը: Իսկ ալկաթիոյի ժողովրդի ուստագնաց սովորութիւնները ոչինչ դրական հիմք չունին, ալ երեակալութեան արդիւնքներ են, որոնց հետեանքները ենթարկում են մարդկանց ինքնախարէութեան, մոլորութեան, մտաւոր և բարոյական անկման: Սոցա իսկական պատկերը տալու համար հարկաւոր էր Զոլան գրիչը, որ ալս անգամ ևս եւրոպական գրականութեանը մի նշանաւոր լուշարձան կանգնեցրեց:

Գ. Վ. Խրտ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատրիարքական Տեղապահի ընտրութիւնը Տաճկա-Հալեբի համար:—Պատ-
ւարի հաշտարար դատաւորների հաստատութիւնը Կովկասում:—Չաջնա-
տու ծխականների խնդիրը:—Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձութեան
վերջին սխրագործութիւնը:—Հրատարակչական Ընկերութիւնը և մա-
մուլը:—Մի նոր չարձակումն Հալեբի վրա՝ ռուսաց մամուլի մէջ:—Մի
նոր չարձակումն «Մուրճ»-ի վրա՝ հալոց մամուլի մէջ:

Կ. Պոլսի հալոց պատրիարքի ընտրութեան խնդիրը լուծւեց
Տեղապահի և ոչ նոր պատրիարքի ընտրութիւնով օգոստոսի 3-ին:
Ընտրութիւնը կատարեց ոչ ազգային ժողովը, որ de facto վերա-
ցրած է տարիներից ի վեր, Աշըգեանի պատրիարքութեան օրերով,
այլ ընտրութիւնը կատարեցին Կրօնական և Քաղաքական կոչւած
ժողովները, դումարւած խառն ժողովի, մասնակցութեամբ ընդա-
մենը 13 հոգու, որոնցից վեցը Կրօնական ժողովից, եօթը՝ Քաղա-
քական ժողովից: Տեղակալ ընտրւեց Դիմաքսեան Տ. Հմայեակ եպիս-
կոպոս: Բայց ամեն ինչ թէ ընտրութիւնից առաջ կատարւած իրո-
շութիւնները և թէ ընտրութեանը յաջորդող հանգամանքները
զալիս են արդարացնելու ընդհանուրի զգացմունքը թէ կատար-
ւածը սովորական ընտրութիւն չէր պատրիարքական Տեղապահի,
այլ դա՝ իսկապէս պատրիարքական ընտրութիւն էր՝ տեղապահի
ընտրութեան անունով: Եւ հայսերական իրադէն, որով հաստատւեց
Հմայեակ եպիսկոպոսի ընտրութիւնը, յիշատակութիւն չի անում
լինելիք պատրիարքական ընտրութեան մասին:

Այդ տարօրինակ վարուողութեան մէջ պէտք է տեսնել շարու-
նակութիւն տաճկական քաղաքականութեան՝ առանց մեծ աղմուկի
վերացնել տաճկա-հալոց սահմանադրութիւնը: Աւելի հեշտութեամբ
կարելի էր խառն ժողովով Տեղապահ ընտրել, որը կը վարի պատրիար-

քական պաշտօն: Իսկ ներկայ ժամանակներում Բ. Դռան համար Տեղապահի կառավարութիւնը այն յարմարութիւնն ունի, որ Տեղապահը բաւականաչափ հեղինակութիւն չի ունենալ՝ Բ. Դռան առաջ փափուկ խնդիրներ յարուցանելու համար: Այսպիսով ազգային ծանրագոյն խնդիրները անշուշտ պիտի մնան ոչ թէ միայն առկա զրութեան մէջ, այլ անգամ հնարաւոր չի լինելու նոցա յարուցանելն անգամ:

Տեղապահի ընտրութեան իմաստը մենք տեսնում ենք միայն զորանում:

Հանգամանքը այդ տեսակէտով ծանրակշիւ է: Մնում է սպասել թէ Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոսը պիտի յամառի արդեօք իւր Տեղապահական պաշտօնում, ինչպիսի յամառութեամբ նստած մնաց Աշըգեանը պատրիարքական դահի վրայ: Պատրիարքական ընտրութեան խնդիր յարուցանողը ներկայ պարագաներում կարող է և պէտք է լինի պատրիարքական Տեղապահը: Կը տեսնենք:

Կովկասեան երկրում նոր սկսում է մուտ գործել մի կարգ, որը արդէն վաղուց գոյութիւն ունի Ռուսաստանի ներքին նահանգներում. դա է՝ պատուաւոր հաշտարար դատաւորների նշանակումը: Մինչ այժմ մենք ունէինք «ուչաստկալին» ¹⁾ հաշտարար դատաւորներ, որոնց համար դատաւորի պաշտօնը մի յատուկ ծառայութիւն է և որի համար նոքա ստանում են ռոճիկ, որպէս առհասարակ բոլոր պետական պաշտօնեաները: Իրաւաբանական ուսումը պարտաւորիչ է նոցա համար: Նոքա դատաւորներ են՝ շնորհիւ իրանց նախապատրաստութեան իրաւագիտական ուսումների մէջ: Իսկ պատուաւոր հաշտարար դատաւորներ կարող են լինել նաև

¹⁾ Ուչաստոկ վարչական ամենափոքրիկ բաժանմունքն է: Մի երկիր բաժանում է նահանգների, նահանգներ՝ աւաւոների, գաւառ՝ ուչաստոկների: Ամեն ուչաստոկ ունի թէ ուչաստոկալին ոստիկան «պրիստաւ» անունով և ուչաստոկալին հաշտարար դատաւոր: Մեծ քաղաքները նույնպէս բաժանւում են վարչական ուչաստոկների, որոնցից ամեն մէկում կա մի ոստիկանական պրիստաւ և մի հաշտարար դատաւոր: Ուչաստոկը, ուրեմն, գաւառներում՝ գաւառամասն է, մեծ քաղաքներում՝ քաղաքամասը և համապատասխանում է ֆրանսիացոյ arrondissement-ին:

ոչ իրաւագէտներ, այլ հասարակութեան կամ կառավարութեան աչքում առանձնապէս յարգւած դիրք վայելող անձեր: Ռուսաստանի ներքին նահանգներում, ուր գործում են դատաստանական օրէնքները իրանց լիակատարութեամբ, պատուաւոր հաշտարար դատաւորները ընտրւում են հասարակութիւնից, մինչդեռ մեզանում՝ Կովկասում նոր հաստատուած պատուաւոր հաշտարար դատաւորները ոչ թէ ընտրւած են հասարակութիւնից, այլ նշանակւած են կառավարութիւնից:

Առաջին նշանակումը պատուաւոր հաշտարար դատաւորների, Կովկասի համար, կատարւած ենք տեսնում բարձրագոյն հրամանով առ 20 յուլիսի, Թիֆլիսի և Բաքւի դատաստանական շրջանների համար, և նշանակւած են ազնեական դասակարգին պատկանող և բարձր կառավարչական և զինւորական պաշտօններ ունեցող անձերից:

Պատուաւոր հաշտարար դատաւորների մասին խօսւում է «Պատաստանական օրէնագրքերի» մէջ կարճառօտ կերպով և դորա վերաբերելիք տեղերը սղբա են:

Այդ պաշտօնը հաստատոււմ է նրա համար, որ հեշտացնելի հաշտարար դատաւորի բազմազան պարտաւորութիւնների կատարումը, կարելիին չափ կրճատելով պետական գանձարանի ծախքերը, և նոյնպէս նրա համար, որ հասարակութեան լաւագոյն անդամները կոչւեն անվարձատիր կերպով ծառայելու իրանց հասարակութեանը:

Պատուաւոր հաշտարար դատաւորը, հաշտարարութեան շրջանում եղած ժամանակ, պարտաւոր է դատաստան կտրել բոլոր այն գործերի համար, որոնք ենթակայ են հաշտարարական քննութեան, այն դէպքերում, երբ երկու դատուող կսղմերը կը գիմեն նորա միջնորդութեանը:

Պատուաւոր հաշտարար դատաւորը քննում է գործերը նոյն հիմքով, որպէս և ուշաստկային հաշտարար դատաւորը, և դատուող կողմերը, որոնք գիմած կը լինեն պատուաւոր հաշտարար դատաւորներին, իրաւունք չունեն նորա վճռից շեղւել և չեն կարող նոյն գործը նորոգել մի այլ հաշտարար դատաւորի մօտ:

Պատուաւոր հաշտարար դատաւորը կարող է կոչւել նահանգա-

կան դատարանի անդամների թիւը լրացնելու համար, եթէ դատարանի անդամները պակասեն:

Պատուաւոր հաշտարար դատաւորի պաշտօնը կարող է միացած լինել ամեն այլ պաշտօնի հետ ¹⁾ պետական կամ հասարակական ծառայութեան մէջ, ի բաց առած դատախազների, նոցա օգնականների և գանձարանական վարչութեան և ոստիկանութեան տեղական ծառայողների պաշտօններից:

Պատուաւոր հաշտարար դատաւորները ոչ մի գումար չեն ստանում իրանց պաշտօնի ծախքերի և վարձատրութեան համար:

Պատուաւոր հաշտարար դատաւորների հաստատութիւնը, եթէ նա մանաւանդ ընդհանրաճառ մեր երկրի բոլոր նահանգների մէջ, մի նոր խթան կը լինի քաղաքացիութեան զգացմունքը ուժեղացնելու տեղական ազգաբնակչութեան մէջ և, միևնոյն ժամանակ, մի լաւ առիթ պատուելու այն քաղաքացիներին, որոնք իրանց շիտակ գործունէութիւնով յարգանք վաստակած կը լինեն համաքաղաքացիների կողմից:

Ձայնատու ծխականների խնդիրը: Թիֆլիսի թեմի առաջնորդ սրբ. Գէորգ եպ. Սուրենեանցի առած ծխական ընտրութիւնների «Կանոնք»-ով պարտաւորեցուցիչ էր պառնում որ ամեն մի եկեղեցի ունենայ իւր ծխականների ցուցակը և որ ամեն ծխական գերդաստանից, անցեալի պէս, միայն մի հոգի իրաւունք ունենայ ծխական ընտրութիւններին ներկայ գտնւելու և ձայն տալու: Բննելով այդ «Կանոնք»-ը, մենք «Մուրճ» № 5-ում ի միջի աչլոց յայտնել էինք այն միտքը թէ ժամանակ է արդէն գերդաստանական սկզբունքը թողնել՝ անհատական սկզբունքին անդնելու համար ծխական ընտրութեան գործում, իբր տւելի համապատասխան նոր ժամանակների ոգուն: Մենք պահանջում էինք որ ձայնատուութեանը մասնակցեն ծխականներից բոլոր այն արական անձերը,

¹⁾ Եւրոպայի է որ «անհաշտելիութեան օրենքով» (ЗАКОНЪ О НЕСОВМѢСТНОСТИ) միևնոյն պաշտօնակալին թող չէ տրւած միաժամանակ մի քանի տեսակ պաշտօններ վարել:

որոնք 25 տարեկան կամ աւելի կը լինեն, միւսնոյնն է թէ մի գեր-
զաստան մէջ քանի հոգի կը լինեն այդ տարիքով:

Հետաքրքրական է որ մեր տեղական մամուլի մէջ իւր ժամա-
նակին ոչ ոք չձայնակցեց մեր այդ պահանջին, որին եթէ բուա-
րարութիւնն արւէր բարձրագոյն հոգեւոր իշխանութեան կողմից,
նշանաւոր բարեփոխութիւն կատարւած կը լինէր մեր ծխական
ընտրողական գործում: Ընտրողներին թիւը դորանով ապահով կեր-
պով կը կրկնապատկէր և հասարակաց կարծիքի արտայայտութիւնը
այժմեանից աւելի ապահովւած կը լինէր և այդ կարծիքն էլ աւելի
ճիշդ կ'արտայայտէր:

Այժմ «Մշակ» լրագրում, № 87, կարդում ենք մի յօդւած
«Յիսական ցուցակները թիւրքահայերի մօտ և մեզանում», ուր յօդ-
ւածագիրը, համեմատելով մեր ընտրողական ցուցակները տաճկա-
հայերի ցուցակների հետ, գտնում է «մի էական զանազանութիւն»:
Եւ այդ զանազանութիւնը կայանում է նրանում, որ «մինչդեռ մենք
ընտրութեանը մասնակցում ենք ընտանիքների և իւրաքան-
չիւր ընտանիք ունենում է միայն մի հատիկ ձայն, տաճկահայերի
ամեն ընտանիք ներկայանում է ընտրութիւններին այնքան ձայ-
նով, ինչքան որ իր մէջ հասակ առած մարդ կայ...» այսինքն
ինչպէս այդ պահանջում է «Մուրճ»-ը ռուսահայոց ծխական ընտ-
րութիւնների համար:

Ներսիսեան Դպրանոցի նոր հոգաբարձութիւնը մտաւ
իւր պաշտօնի մէջ օգոստոսի 21-ին, համաձայն կաթողիկոսական
կոնդակի: Հին հոգաբարձութիւնը (Աբգար Յովհաննիսեան և ընկեր-
ներ) իւր վերջին նիստերից մինում փորձեց մի վերջին ճիգ անել
դպրանոցը անկանոնութեան ընթացքի մէջ պահպանելու համար:
Բանի տեղ չդնելով որ արդէն նոր հոգաբարձութեան ընտրութիւնը
կատարւած էր և օր օրի վրայ սպասւում էր նորի հաստատութիւնը,
այդ հին հոգաբարձութիւնը ոչ միայն չքաշեց ապագայի հա-
մար նոր տեսուչ ընտրելու, այլև մի ապօրինի նիստի արձանա-
գրութիւնը Վեհափառ Վաթողիկոսին ուղարկելու: Այդ նիստում
վճռեց երեք հոգու կամքը պրն. Ս. Մանդինեանին տեսուչ ընտրե-

լու՝ հաղորդել Վեհափառին իբր վճիռ հոգաբարձութեան: Վեհափառ. Կաթողիկոսը պրն. Ս. Մանգինեանի ընտրութիւնը չի հաստատել, համարելով նորան չընտրեաժ ըստ կանոնի: Այժմ՝ լրագիրներում մենք հրատարակեաժ ենք տեսնում պ. Ս. Մանգինեանի մի գրութիւնը Վեհ. Կաթողիկոսին, որով նա Վեհափառին խնդրել է անհետեանք թողնել այդ ընտրութիւնը, գտնելով որ ընտրութեան ժամանակ մի քանի ձեեր չեն կատարել ճշդութեամբ, որով նրա նշանակութիւնը և զօրութիւնը թուլանում է: Ոչ, պ. Ս. Մանգինեանց, հոգաբարձութիւնը ընտրութիւն բնաւ չի կարողացել կատարել, ուրեմն և սխալ է իբր թէ հանգամանքներ են եղել, որոնք այդ զԱՍԻ ընտրութեան զօրութիւնը «թուլացնում են»: Վճիռ չի կայացել, հետեապէս և այդ չեղած վճռի զօրութեան «թուլացնող» հանգամանքների մասին չի կարող խօսք լինել:

Այս դէպքը մի նոր ապացոյց է թէ որքան հասարակական կարծիքը պէտք է արթուն կերպով հսկի մեր գործերի ընթացքի վրայ, որովհետեւ մենք չենք տեսնում որ նոքա, որոնք կոչեաժ են կարգ ու օրէնքի վրայ հսկելու՝ իրանց պարտքը կատարում լինեն:

Լոյս ցերեկով անկարգութիւններ և օրինազանցութիւններ են կատարում և բոլորը ներում է:

Ուր է տանում այս ամենը:

Հրատարակչական Ընկերութեան մասին „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“-ի աշխատակից В. И. մի յօդեաժ է տպել նոյն թերթի № 3644, որ բռնում է մի ամբողջ բանասիրական: Այդքան սիւնակներում մի քանի բաւականին հասարակ խորհուրդներ տալու համար, որոնց արժէքը դեռ քննելի է, հեղինակը իրան իրաւունք է համարում վերելից վար նայել տեղական հայ մամուլի արած ջանքերի վրայ այդ Ընկերութեան բարգաւաճման համար: «Զխօսելով ռուսաց մամուլի մասին, ասում է նա, մինչև անգամ հայոց լրագիրներն ու ամսագիրները (?), ինչպէս երևում է, չափազանց անտարբեր են վերաբերում դէպի այդ ընկերութեան վիճակը: Զկարծէք թէ ամսագիրներն խօսքը В. И. ի այդ պար-

բերութեան մէջ որ և է իրական նշանակութիւն ունի. այդ խօսքը նա կցել է միմիայն ТАКЪ СЕБѢ, լիակատարութեան համար. լրագիր բառը իրա հետ բերել է ամսագիր խօսքը, ամսագիր բառն էլ ինքնաբերաբար դառել է ամսագիրներ յոգնականը. այլապէս պէտք էր ընդունել որ В. А. մտածել է «Մուրճ»-ից զուրա նաև «Արարատ»-ի մասին: Իսկ «Մուրճ»-ը բազմիցս խօսել է այդ ընկերութեան մասին և, ի միջի այլոց, նպատակ է որ այդ ընկերութիւնը մեռած ձեռքերից անցնի աւելի կենդանի մարդկանց ձեռքը և, որքան կարելի է դատել ընկերութեան գործունէութիւնից համեմատաբար նախկին գրութեան հետ — «Մուրճ»-ը չի սխալւել:

Բայց աւելի հետաքրքրականը յետոյ է գալիս. «Բացառութեամբ արձանագրական հաշիւների ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովների առիթով և այս ու այն պատահական գրախօսական նկատողութիւնների նորա (ընկերութեան) մի քանի հրատարակութիւնների մասին, հայոց լրագիրները մի ինչ որ պատճառով չեն արժանացնում ընկերութեանը իրանց խորհուրդներով, յանդիմանութիւններով, հաւանութիւնով, մի խօսքով՝ քննադատութիւնով...» Բայց կիսիական անհրաժեշտ է արդէն այն պատճառով որ «արեգակի վրայ էլ բծեր կան» Նիթէ, շարունակում է В. А., ամեն մի գրքի մասին, որ հրատարակում է ընկերութիւնը, տրւէին շատ թէ քիչ մանրամասն հաշիւներ, դորանից վաստակ կ'ունենար որպէս ինքը ընկերութիւնը, նոյնպէս և այն հասարակութիւնը, որի համար նշանակւում են այդ հրատարակութիւնները. թէ չէ մեծ մասամբ Ընկերութեան հրատարակութիւնները լռութեան են տրւում:

Ամենից առաջ նկատենք որ կանոնաւոր պարբերականութեամբ լոյս տեսած գրքերի մասին հաշիւներ տուողը ամբողջ ուղտահայ մամուլի մէջ միմիայն «Մուրճ»-ն է, հետևապէս և В. А.-ի նկատողութիւնը ամէնից առաջ կարող է «Մուրճ»-ին վերաբերւել: Իսկ գալ ու ասելու համար թէ այդ գրախօսութիւնները պատահական են, թէկուզ միայն հրատարակչական ընկերութեան գրքերի վերաբերմամբ, դորա համար անշուշտ պէտք է սովորականից տարբեր հասկացողութիւն ունենալ պատահական խօսքի մասին: Պ ա.

տա հական չէ, պ. Բ. Ա., որ «Մուրճ»-ը հաշիւներ է տւել Հրատ. Բնկերութեան բոլոր շատ թէ քիչ կարեւորութիւն ներկայացնող հրատարակութիւնների մասին այս վերջին 5—6 տարիներում, «կարեւորութիւն» խօսքն էլ ըմբռնելով նոյն իսկ ոչ լայն համաշխարհային, այլ նոյն իսկ շատ աւելի նեղ հայկական հասարակութեան տեսակէտից:

Ճիշդ է որ «Մուրճ»-ը այդ վերաբերմունքը ունեցել է դէպի Հրատ. ընկ. գրքերը ոչ թէ այն պատճառով, որ նոքա այդ ընկերութեանն են պատկանում, այլ միայն որովհետեւ նոքա ուշադրութեան և քննութեան աւելի արժանի և կարօտ են եղել: Եւ այդ ինչ բացառիկ պահանջ է որ դնում է պ. Բ. Ա. Հր. ընկ. գրքերի վերաբերմամբ: Ինչու Հր. ընկ. պէտք է մի արտօնութիւն վայելի բոլոր ուրիշ հրատարակիչների առաջ, որ մամուլը այդ ընկ. նոյն իսկ ամենափոքրիկ և աննշան գրքերի համար պարտաւոր լինէր տալ «շատ թէ քիչ մանրամասն հաշիւներ», ինչպէս պ. Բ. Ա.-ն է պահանջում: Պէտք է աշխատել ոչ թէ այդ ընկերութեան, այլ առհասարակ բոլոր հայերէն լոյս տեսած գրքերի մասին հաշիւ տալ, իսկ եթէ այդ անհնարին է որ և է մի թերթի համար, (և այդպէս էլ է իսկպէս), այդ դէպքում նա, այդ թերթը, գրախօսելու գրքեր ընտրելիս՝ ամենեւին չպիտի ինկատի առնի հրատարակողին, այլ միայն գիրքը: Հասարակութեան և մամուլի համար բոլորովին միևնոյնն է թէ մի գիրք ով է հրատարակել՝ մի որ և է Բնկերութիւն թէ ինքը հեղինակը կամ թարգմանիչը թէ որ և է երրորդ անձն: Մինչդեռ պ. Բ. Ա.-ի յայտնած ցանկութիւնը բաւարարութիւն տւող թերթը իրան կը դնի հարկի մէջ՝ անուշադրութեան մասնեւ մի գիրք, որ Հրատ. Բնկերութեան հրատարակածը չէ:

Յանուն օր սկզբունքի?

«Մասկովսկիյա Վէրոմոտի», նորերս հրատարակել է իւր սի աշխատակից-թղթակցի՝ Մակիեւսկի-Ջուբոկի յօդւածը բուլղարների մասին, ուր միևնոյն սրի ծայրով երկու ազգ է հարաւածում և ստորագոյն ոգով մասնութիւններ է անում ուսանա-

յերի վրայ, մի կողմից զրպարտութիւններ անելով, իսկ միւս կողմից նշաւակելով հայերի նոյն իսկ մի քանի յատկութիւնները, որոնք ամենուրեք մի ազգի առաքինութիւններ կը հռչակէին: Բայցնախ և առաջ բերենք այդ կտորը.

«Մեր Կովկասեան հայերը, բարբառնջում է Մոսկովեան թերթի թղթակիցը, հայրենասէրներից ի հարկէ (մենք չենք խօսում ոչ-պո-լիտիկանների մասին), իրանց յանդգնութեամբ և լրբութեամբ Ստամբուլովից յետ չեն մնում: Գաղթեցրած Ռուսաստանի սահմանները, շնորհիւ խնամատարութեան մեր հայազգի գեներալների, մերկ և անօթի, նոքա անսովոր արագութեամբ ընտելացան նոր հողին: Յետոյ, փետրահաններից և քաղցածներից նոքա հարուստներ դառան և իրանց ձեռքը կենդրոնացրին Անդրկովկասի բոլոր հարստութիւնները. ամբողջ Քիթլիսը,—և դա փոքրիկ քաղաք չէ,—անցաւ սոցա ձեռքը: Հնումը, իրանց ոտի տակ դեռ հաստատ հող չզգալով, նոքա աշխատում էին իրանց ազգանունները ռաբէն ձևի փոխել, բայց այժմ բանը միւս կողմն է փոխւել.—ո վին կրկին փոխարինել է ե ա ն ց ը. խառն ամուսնութիւններից նոյն իսկ ուղղափառ մաշ-րերից ծնւած երեխաները մկրտում են հայ-լուսաւորչական եկեղեցու ծէսերով: Մղում է ուժեղ, բաւականին ակնյայտի ազիտացիա Բուլգարիայից ոչ պակաս մեծ Հայաստանի վերականգման համար: Ներկայումս հազաւորւած է տէրունական կապալով հարստացած հայ վաճառականը, որը կտակով նշանաւոր դումարներ չթողնէր հայկա-կան գործի համար: Այդ ազիտացիան իրա համար բռն է շինել Եջմիածնի վանքում, ուր հայոց սինոդի և հոգևոր ճեմարանի ներ-կայացուցիչները հանդիսանում են իբր ամենակատաղի մարտնչո-րներ ռուսաց իշխանութեան դէմ. մինչև անգամ աստիճանաւորները հայերից պատրաստ են պատերազմ յայտնել (не прочь объявить вой-ну России) Ռուսաստանին: Նորերումս Քիթլիսի նահանգական դա-տարանը, դատաստանական քննութեան միջոցով, պարզեց, որ Ախալ-ցխայի ոստիկանութեան աստիճանաւորները, որ բացառապէս հայե-րից են, չքաշւելով իրանց ծառայութեան պարտականութիւններից, հրամաններ էին տալիս քաղաքի բնակիչներին ռուսաց զինւորներին կոտորելու և նպաստում էին այդ կոտորածին:»

1. Մոսկովեան թերթը ուզում է մի զիծ դնել հայրենասէր-

հայերի և ոչ-հայրենասերների մէջ, կարծես թէ առաջինները մի աղանդ կազմում լինեն: Մինչդեռ ճշմարտութիւնը սա է, որ հայերի մէջ հայրենասերների աղանդ չկայ, այլ կայ անհուն սէր դէպի ազգն ու հայրենիք, ինչպէս ամեն կուլտուրական աղբի մէջ, մի սէր, որի բացակայութիւնը կատարելապէս անարգանք կը լինէր հազարաւոր տարիներով տոկացած մի պատմական ազգի համար:

2. Մոսկովեան թերթը ռուսահայերին գաղթականներ է համարում, եկած Անդրկովկաս, հայազգի ռուս գեներալների խնամատարութեամբ, ի հարկէ Թիւրքիայից: Հասկա ովքեր էին այս երկրի բնակիչները մինչև ռուսաց տիրապետութիւնը? Կրկին նոյն ազգերը, ինչ որ այժմս՝ հայեր, թուրքեր, վրացիք: Միթէ գաղթականներով աճելը մի հիմք է որ ռուսահայերը իրանց պատմական հայրենիք Համարեն Անդրկովկասը?

3. Նոր բան է արդեօք որ Թիֆլիսի բնակիչները մեծամասնաբար հայեր են? Թիֆլիսի բնակիչները այդ քաղաքի գոյութեան թերևս ամբողջ ընթացքում մեծամասնաբար հայեր են եղել: Ռուսաց մեծ բանաստեղծ Պուշկինի «Ճանապարհորդութիւն դէպի Երզերում» որ այժմ մտել է ռուսաց խրեստոմատիանների մէջ անգամ և զաստանդում է պետական գիմնազներում, առում է. „Въ Тифлисѣ главную часть народонаселенія составляютъ армяне: въ 1825-мъ году было ихъ здѣсь до двухъ тысячъ пятисотъ. Грузинскихъ семействъ считается до тысячи пятисотъ. Русскіе не считаютъ себя здѣшними жителями. Военные, повинясь долгу, живутъ въ Грузіи, потому что имъ такъ велѣно. (Թարգմանութիւն. Թիֆլիսի ազգաբնակչութեան զլիսաւոր մասը կազմում են հայերը. 1825 թիւն նոցա թիւն էր այստեղ մինչ 2500 ընտանիք: Վրացիք հաշւում են մինչ 1500 ընտանիք: Ռուսները իրանց չեն համարում այստեղի բնակիչներ: Զինւորականները, հնազանդւելով պարտաւորութեան, ապրում են Վրաստանում, որովհետև այդպէս նոցա հրամայւած է):

Ինչպէս 1825-ին, նոյնպէս 1800-ին և աւելի առաջ, հայերը մեծամասնութիւն են կազմել Թիֆլիսում, և այժմ էլ մեծամասնութիւն են կազմում, թէև աւելի պակաս տոկոսով, քան առաջ, որովհետև այժմ եթէ Թիֆլիսում 50—55 հազար հայ բնակիչ կայ, բայց մինչ 30-հազար վրացի կայ, մինչ 25 հազար ռուսներ կան և մի քա-

նի հազար թուրքեր և 5—6 հազար հոգի օտար ազգերից:

4. Սխալ է իրր թէ հայերը իրանց ձեռքն են զցել Անդրկովկասի բոլոր հարստութիւնները: Կովկասի գիւղական հոգերի մեծ մասը պետական սեփականութիւն է. իսկ մասնաւոր սեփականութեան մի ահազին մասը արտօնեալ դասակարգի սեփականութիւն է, որի մէջ հայ տարրը համեմատապէս ամենից քիչ մաս ունի: Հանքային հարստութիւնները, դոցա մէջ և նաւթահանութիւնը, բաժանւած է թէ Կովկասեան և թէ օտար ազգերի մէջ: Գործարանական ինսուստրիան զարգացած չէ դեռ ևս: Առևտուրի մէջ մասն ունին բոլոր Կովկասեան ազգերը, գլխաւորապէս հայերը. և փառք պէտք է տալ այդ հանգամանքին, այլապէս ատուորի մեծ մասը հաւանականօրէն կ'ընկներ հրէաների ձեռքը: Եւ փառք պէտք է տալ էնդուր, որ ընդհանրապէս գերադասելի է տեղացիներից վաճառականներ անենալը քան օտարներից:

5. Հայերի ազգանունները ե ա ն և ե ա ն ց են վերջանում մեծամասնաբար: Հպատակութեան զգացմունքը ամենեւին չի կապւած ազգանունների վերջաւորութեան հետ: Եթէ առաջ ով (ОВЫ) վերջաւորութիւնը աւելի յաճախ էր լսուում, այդ նրանից է որ առաջին ժողովրդագրութիւնների ժամանակ պաշտօնական ազգանուններ չունէին հայերը, մանաւանդ գիւղերում. կամերալ կազմողները ամենքին ով վերջաւորութիւնն էին կպցրել: Ազգանուններին կարեւորութիւն տալը աւելի նոր ժամանակների գործ է:

6. Խառն ամուսնութիւններից ծնւածներին հայրական կրօնի ծէսերով մկրտելը անբռնաբարելի իրաւունք է բոլոր ազգերի մէջ: Լուսաւորչական հօրից ծնւածը ամենաբնականը այն է որ լուսաւորչական եկեղեցու ծէսով մկրտուի, եթէ օրինական արգելքներ չկան:

7. Եթէ հարուստ հայերից շատերը կտակներ են արել յօգուտ հայկական հիմնարկութիւնների, այդ միայն պատիւ է բերել նրանց. դա մի առաքինութիւն է, որը ամեն խրախուսանքի արժանի է. դորանով նոքա մի բարոյական պարտք են կատարել և բարի օրինակ տւել ուրիշներին ևս: Իրանց այդ սովորութիւնով՝ հայերը բարի օրինակ են տալիս նաև հայերին հարեւան բոլոր միւս ազգութիւններին: Կտակներ թողնել են միայն յօգուտ եկեղեցու, ուսումնարանի, հասարակական դործերի, ընկերութիւնների և այլն, իսկ

որ և է այլ «հայկական գործի» համար կտակներ չեն եղել: Անամօթ և բարբարոս պէտք է լինել պարսաւելու համար այն, ինչ միայն գովելու և խրախուսելու արժանի է և որը յարգանքի զգացմունք է ծնեցնում դէպի հայերը բոլոր հարեան ազգերի կողմից:

8. Մենք և ոչ մի խօսք չենք խօսիլ Էջմիածնի մասին. դալ ու պաշտպանել Էջմիածինը մեղադրանքների դէմ ուսաց իշխանութեան հակառակ ագիտացիայի մէջ՝ այդ նշանակում է շատ թոյլ ճանաչել նոյն այդ Էջմիածինը: Էջմիածինը Տէր ունի, որը զանազան Զուբովների մեղադրանքներից չի վախենում:

9. Այն մեղադրանքները որ դնում են Անյալցիսայի հայազգի ոստիկանների վրայ, զրպարտութիւններ են. եթէ ճիշտ լինէին նոքա—այդ ծառայողները պատժւած կը լինէին:

«Տարագ»-ը, երբ նա խմբագրւում էր պրն. Լիսիցեանի ձեռքով, անցեալ 1893 թւականին էր այդ, մի լաւ սովորութիւն էր արել՝ պարբերաբար, ամեն երեք ամիսը մի անգամ՝ քննադատել «Մուրճ»-ը: Մենք չենք խօսում այն մասին թէ ինչ տեսակէտներից էր քննադատւում «Մուրճ»-ը պ. Լիսիցեանի կողմից, թէ որքան յաջող էին այդ քննադատութիւնները. այդ այլ խնդիր է. բաց նա, այսպէս ասած, ծրագրել էր իրան համար «Մուրճ»-ի հետ ծանօթացնել իւր ընթերցողներին: Նա քննում էր ամսագիրը, և այդ պատճառով նա վերցնում էր մեր ամսագիրը սորա կեանքի ընթացքում և համնում էր մի նպատակի՝ այն է ամփոփ գաղափար տալ թէ ինչ էր նա, պ. Լիսիցեանը, մտածում ամսագրի կեանքի, ուղղութեան, բովանդակութեան մասին: Այդ ձևի քննադատութեան ժամանակ հետաքրքրելին այն է թէ ինչ է ներկայացնում ամսագիրը իւր ամբողջութեամբ:

Բայց «Տարագ»-ում ահա ինչ որ մի տարի է, որ «Մուրճ»-ի մասին քննադատութիւն չէինք գտնում, և յանկարծ տպւում է մի յօդւած՝ «Կրիտիկա. — «Մուրճ» 1894 թ. № 6»: Ինչո՞ւ քննւում է № 6 և ոչ № 5 և ոչ № 4 և այլն? Որովհետև այդպէս է ուզել քննադատի քէ՛ջը: Բայց որքան է հեղինակի այդ քէ՛ջը սազում կրի-

տիկացի նստատակացարմարութեան, որ նոյնն է թէ հասարակութեան օգտի հետ,—այդ մասին չի մտածել «Տարագ»-ի խմբագրութիւնը կամ նորա քննադատը:

Ամսագիրները այդպէս չեն քննադատուում: Այդ պէտք է իմանայ մի թերթի խմբագրութիւն, եթէ չգիտէ նորա կրիտիկոսը:

Բայց «Մուրճ»-ի նոր քննադատը «Տարագ»-ում մի քանի ուրիշ շատ հասարակ բաներ էլ չգիտէ. նա օրինակ կարծում է թէ ամսագիրը պէտք է ամեն ամսւայ սկզբին դուրս գայ: Նա չի իմանում որ կանոնաւորութեան դէմ ամենէն չի մեղանշում ինչպէս այն ամսագիրը, որը լոյս է տեսնում մի ամսի 1-ից մինչ միւս ամսի մէկը, նոյնպէս և այն ամսագիրը, որը լոյս է տեսնում մի ամսի 15-ից մինչ միւս ամսի 15-ը, 20-ից — 20-ը, մի ամսի 30-ից մինչ միւս ամսի 30-ը: Եւ որովհետեւ նա այդ չգիտէ, այդ պատճառով նա «Մուրճ»-ի համար պարտաւորեցուցիչ է համարում իւր ճանաչած ամսագիրների կանոնները, մանաւանդ վրաց «Մոամբէ» ամսագիրին: Այլպէս նա այդքան չէր հիանալ այն բանից, որ իբր թէ վրաց «Մոամբէ» ժուրնալը հայ («Մուրճ») ժուրնալից մի ամբողջ ամսով վաղ է լոյս տեսնում: Երկուսն էլ լինել այդպիսի բացականչութիւնների անելու համար: Ամենաշատը ինչ կարող էք պահանջել կանոնաւորութեան տեսակէտից՝ այդ այն է, որ մի ամսագիր լոյս տեսնի 30-ից 30 օր, լինի այդ ամսի 1-ից մինչ 1-ը թէ 30-ից մինչ 30-ը: Իդէալական կանոնաւորութիւնը այդ պէտք է համարել և այդ է համարւում ամեն տեղ, բոլոր երկիրներում: Արդ, այդ չի դէպական իմանաւորութեան դէմ որքանով է մեղանշել «Մուրճ»-ը? Նոյնքանով, կը պատասխանենք մենք, որքանով որ մեղանշելու է դատապարտւած ամեն մի ամսագիր մեր երկրում և որքան մեղանշել է արդէն «Մոամբէ» ամսագիրը, նոյն իսկ իւր ու է կէս տարւայ դոյութեան ընթացքում: Այդ ամսագիրը սկսեց լոյս տեսնել յունւարի 1-ին. երկրորդ համարը մենք ստացանք արդէն փետրւարի սկզբներին, կարծեմ 5-ին միայն, մօտաւորապէս յունւարի 1-ից 35 օր յետոյ. 3-րդ համարը մենք ստացանք ինչ որ մարտի 10-ին, ուրեմն երկրորդ համարի լոյս տեսնելուց 35 օր յետոյ. 6-րդ համարը մենք ստացանք յունիսի 15-ին. յուլիսի համարը արդէն յուլիսի 20-ին: Եւ ահա այս

սողերը սրբազրելու րոպէին, օգոստոսի 29-ին մեզ բերում են «Մոամբէի» VIII-րդ համարը, փոխանակ որ նա լոյս տեսած լինէր օգոստոսի 1-ին! Մի խօսքով ութ ամսում այդ ամսագիրը արդէն 29 օր աւելի ուշ հրատարակեց քան պէտք է հրատարակէր, եթէ ուզում էր լոյս տեսնել 30 օրւայ մէջ:

Նւազ չափով նոյնն է պատահել և «Մուրճ»-ի հետ. մտադիր լինելով այս վերջին տարիներում 30-ից մինչ 30-ը լոյս տեսնել, ամեն ամսի վերջը, նա երբեմն լոյս է տեսել մի քանի օրով աւելի ուշ կամ մի քանի օրով աւելի վաղ, այնպէս որ տարւայ ընթացքում պիւս և մինուսը իրար ծածկել են. իսկ ինչ վերաբերում է ներկայ տարւան՝ այդ անկանոնութիւնը շատ աւելի պակաս է եղել քան «Մոամբէի»-ինը:—Ներկայ տարում «Մուրճ»-ը լոյս է տեսել մէկը միւսից յետոյ № 1—37 օրում, № 2—38 օրում, 3—28 օրում, № 4—30 օրում, № 5—35 օրում, № 6—26 օրում: Կատարեալ կանոնաւորութեան տեսակէտից «Մուրճի» 6 համարները պէտք է լոյս տեսնէին ճիշդ 180 օրում, բայց լոյս են տեսել 192 օրում: Միթէ սա մի բղաւող չարիք է. և որ զլիւաւորն է՝ ուր մնաց «Մոամբէի» օրինակը?! աւելացրէք՝ 1000 բաժանորդ ունեցող «Մոամբէի» օրինակը, պ. Խսկանդար, այն ամսագիրը, պարոն, որը տարւայ սկզբին լոյս տեսնելով ամսի մէկին, ութ ամսից յետոյ արդէն լոյս է տեսնում ամսի վերջը!

Նւ քանի որ «Մոամբէի» մասին յիշողութիւն է արած, լսեցէք և այս: Դուք կարծում էք թէ շատ է դժւար ամսագիրը նոյն իսկ ճիշդ միևնոյն օրը ամեն ամիս դուրս բերել? Ամենևին ոչ. դորա համար բաւական է որ այդ ճշտութեան համար զոհենք ամսագրի աւելի կարեւոր շահերը: Մենք միշտ այն կարծիքի ենք եղել, այս վեց տարւայ ընթացքում, որ աւելի լաւ է մի որոշ համարի մէջ լինեն անպատճառ այս ու այն յօդւածները, քան զոհելով այդ յօդւածները՝ համարը լոյս ընծայել մի քանի օր աւելի վաղ և այդպիսով զրկել այն յօդւածները իրանց հետաքրքրականութիւնից՝ հրատարակելով նոցա յաջորդ համարում: Նւ մենք կարծել ենք միշտ, որ մեր բաժանորդները աւելի ուրախ են լաւ համարներ ստանալով մի քանի օր աւելի ուշ, քան եթէ դատարկ համարներ ստանային, բայց ճիշդ որոշւած օրը, ենթադրելով որ այդ անկա-

նոնութիւնը կը մնայ նեղ սահմանների մէջ, ինչպէս «Մուրճի» համար այդ պէտք է ասել: Արդ, թէև ես չգիտեմ մեր բոլոր բաժանորդների և ընթերցողների կարծիքը, բայց ինքնագովութիւն չեմ համարում յայտնելով որ, հայոց հիւլտուրական զարգացման ներկայ վիճակում, «Մուրճի» բովանդակութեամբ ամսագիրը ներկայացնում է այդ ազգի ամենաթանձրացած եռանդը և ժամանակակից մտքի գրական արտայայտութիւնը: Այլ կը կամենայ վիճել մեզ հետ այդ մասին, — անկասկած պիտի գինւի հակառակը ցոյց տուող ասացողներով: «Մուրճը» իւր յոյսը չի դրել հեշտ ձեռք բերուող նիւթերի վրայ. նորա բովանդակութիւնը կազմւում են զլիսաւորապէս աշխատակիցների ինքնուրոյն աշխատութիւնները և ոչ թարգմանութիւնները: Եւ որպէս զի մեր «կրիտիկոսների» համար աւելի մատչելի լինի իմ ասածը, թող նոքա մի համեմատութիւն անեն մեր երկրում լոյս տեսնող և իրանց ծրագիրներով իրար նման երկու ամսագիրների բովանդակութիւնները՝ «Մուրճ»-ինը մի կողմից, «Մոսմբէ»-ինը — միւս կողմից: Եւ դուք, պարոններ, որ 8 ամսում 29 օր իւր ժամանակից ուշացող մի ամսագրի օրինակով յանդգնում էք խրատել մի երկու անգամ կէս ամսով իւր ժամանակամիջոցից ուշացած մի ամսագրին, չնայած որ ձեր հուշակած օրինակելի «ճշդութիւն» պահպանող ամսագիրը ոչ միայն 1000-ից աւելի բաժանորդ ունի, այլ ունի նաև սեփական տպարան, մինչև անգամ դուք, ասում եմ ես, լաւ կարող էք հասկանալ, որ այլ է «Մուրճ»-ի բովանդակութիւնը, այլ՝ «Մոսմբէ»-ինը, այլ թանձրութիւն կայ «Մուրճ»-ի աշխատութիւնների մէջ, և այլ՝ «Մոսմբէի» բովանդակութեան մէջ: Գիտէք ինչ է ներկայացնում գիցուք հէնց այս օգոստոս ամսւայ «Մոսմբէի» համարը: Ամբողջ համարի մօտ մի երրորդը, 77 երես, բռնում է շարունակութիւնը յունւարից սկսած մի ձեռնարկի՝ գինեգործութեան մասին, ուր թարգմանական տարրը կազմում է ամբողջ բովանդակութիւնը: Վիպական բաժնում տպւած են Իօկայից, Պիեր Լատիից, Վալտէր Սկոտից, Բելամիից, — իսկ ինքնուրոյն միայն Կադպէկի կիսատ գրւած երեք զրւածքները, ընդամենը 32 երես: Տպւած է թարգմանական նաև մի ճամբորդական յօդւած Հնդկաստանի մասին: Ինքնուրոյն են ամբողջ համարում, բացի մի յօդւածից՝ Ֆրանսիական արդի գրականութեան մասին, միայն ներ-

քին և արտաքին տեսութիւնները: Ուրեմն եթէ մի կողմը թողնելու լինենք գինեգործութեան մասին ձեռնարկը, որ հանրակրթական ամսագրում մինչև անգամ անտեղի է հրատարակելը, մնացածի կէսից աւելին՝ զուտ թարգմանական են, կէսից պակասը միայն ինքնուրոյն:

Միթէ «Մուրճ»-ը այդ բանին է ընտելացրել իւր ընթերցողներին?

Եւ որ աւելի զարմանալին է, «Տարազ»-ի կրիտիկոսը հաւատացնել է ուզում թէ իբր, «ուշացնելով» համարը, ամուսյ հասարակական խնդիրները «հնանում» են ամսագրի համար: «Ամսագիրը պէտք է ամեն խնդրի մասին գրի իր ժամանակին», խրատում է նա մեզ:

Որքան անբարեխղճութիւն! Մենք ուզում ենք հաւատալ որ «Տարազ»-ի կրիտիկոսը «Մուրճ»-ի ուշագիւր ընթերցողներին է: Իսկ եթէ այդպէս է, այդ ո՞ր հասարակական խնդիրն է նա ակնարկում, որի մասին «Մուրճ»-ը շտապած չլինի պատասխան տալ խնդրի ծագելուց մինչև մի ամիս? Օրինակ գերցրէք Ներսիսեան դպրանոցի հոգաբարձական վերջին ընտրութիւնները, որոց մասին յօդւածը տպւած է նոյն № 6-ում, որը «Տարազը» յանձն է առել քննադատել: Տեսնենք թէ այդ ինչի մէջն է կայացել յօդւածի «ուշացումը»: Միական ընտրութիւնները կատարւել են յունիսի 19-ին և յուլիսի 3-ին: Յուլիսի 14-ին ցրւել է «Մուրճ»-ի համարը: Միթէ մի ամսագրի համար ուշ է երբ տասնութէկ օր անցած՝ այդ մասին իւր յօդւածն է տալիս? Ուրեմն ինչ էլ որ առէք այն բանի մասին թէ այդ յօդւածը կրող համարի վրայ ինչ է գրած՝ յունիս թէ յուլիս, դուք խօսք կարող ասել թէ «Մուրճ»-ի ընթերցողները ուշ սասցան պատասխան այդ ամենքին զբաղեցնող խնդրին? Նոյնը մենք կարող ենք պնդել և ժամանակակից տեսութեան բոլոր միւս յօդւածների մասին առաջւայ համարներում:

Վստահանում ենք ասել, ուրեմն որ ձեր այդ «ցաւի» արտայայտութիւնը շինծու է:

Շինծու է նաև այն ենթադրութիւնը, թէ իբր «Մուրճ»-ը փոխել է իւր տեսակէտը վիպական բաժնի մասին. իբր թէ «Մուրճ»-ը առաջ արհամարում էր վիպական բաժինը: Իբր թէ այդ երևում է համեմատութիւնից այժմեանի հետ: «Տարազի» այժմեան կրիտի-

կոսի վկայութեամբ՝ «Մուրճ»-ում այժմ վիպագրութիւնը իւր արժանաւոր տեղն է գտել, և իբր թէ դա մի առաջադիմութիւն է որ արել է «Մուրճ»-ը: Մենք միշտ ուրախ կը լինենք, եթէ մեզ ցոյց տան թէ այս ինչը կամ այն ինչը «Մուրճ»-ում գնալով առաջացել է. բայց երևակայական յառաջդիմութիւնների վկայութիւններ մեզ շողորթըթել չեն կարող: Այն օրից որ «Մուրճ»-ը հրատարակուեց է, հայ ընթերցողը վիպական գրեւծներ կարգացել է գլխաւորապէս «Մուրճ»-ում: Եթէ այդ այդպէս է ներկայումս, այդ նոյնն է 1889-ից սկսած: Գրականական արժէքները այլ և այլ գրեւծների կարող են տարբեր լինել, բայց «Մուրճ»-ը ոչ մի տարի չի արհամարել վէպը, ինչպէս հաւատացնել է ուզում «Տարազ»-ի կրիտիկոսը: Ապացոյց դորան այն, որ «Մուրճ»-ի առաջին տարիներում վէպին նոյնքան տեղ էր տրուում որքան այժմ: Մեզ ներկայացրած վէպերից մենք տպել ենք այն, ինչ լաւագոյն ենք համարել, եթէ միայն մեր միջոցները ներել են հեղինակների պահանջները ընդունելու: Այդ կողմից մեր վերաբերմունքը առաջ և այժմ բոլորովին նոյնն է եղած, և «Տարազ»-ի կրիտիկոսը տեսակէտի փոփոխութիւն է տեսնում այնտեղ, ուր միայն վէպերի յաջորդութիւնն պէտք է տեսնէր!

Զարմանալի բան. «Տարազի» կրիտիկոսը «Մուրճ»-ում այս ու այն բանը չտեսնելու համար իւր երկու աչքը փակում է, բայց մի երրորդ աչք է ստեղծում յառաջդիմութիւն տեսնելու համար այնտեղ, ուր այդպիսի յառաջդիմութիւն ամենեւին չկայ:

Շատ անհամ է «Տարազ»-ի քննադատը նաև վրաց վէպերի մասին խօսելիս: Այս մարդիկ, որոնք «կրիտիկոսներ» են ուզում լինել, երկու տող գրել չգիտեն առանց շինծու զարմանքների և առանց կոտորաւուելու! «Մուրճ»-ը տպել է վրաց վէպերից ճաւճաւաճէի մի պատմաճքը և Կազբէկի չորս վէպիկները: Դոցա դէմ ոչինչ չունի ասելու մեր պարոն կրիտիկոսը: Բայց արիք ու տեսէք, որ «Մուրճ»-ը «կանգ չէ առնում, այժմ նա սկսել է իր էջերը ողողել վրաց միջակ շնորհքի տէր հեղինակների գրեւծքների օվ» բացազանչում է մեր կրիտիկոսը: Ողողել է, հեղինակների, գրեւծքների! Հարցրէք թէ այդ ո՞ր վրաց միջակ շնորհքի տէր հեղինակների գրեւծք.

ներուլ ողողեցին «Մուրճ»-ի էջերը: Եւ կը գտնէք պատասխան. ահա տիկին Գաբաշ-իլիի մի գրեւծքով, որ բռնում է ընդամենը 12¹/₂ երես «Մուրճ»-ում: Եւ այդ դառաւ հեղինակներ, գրեւծքներ, ողողել... «Տարազ»-ի կրիտիկոսը դեռ ուրիշ բացականչութիւններ էլ ունի դորա համար. «Խեղճ է մեր հասարակութիւնը, վկայ է Ասուած, խեղճ է նա, մի փշագրէք նրա ճաշակը...» և այլն և այլն: Այլ կը հաւատար որ այս ջղաշին թուրութիւնները 12—13 երեսանի մի պատմածքից են, ուր, նոյն այդ կրիտիկոսի ասելով, «կան միայն մի քանի հատ ու կտոր տեսարաններ գիւղական կեանքից»:

Սա արդէն կրիտիկա չէ, այլ կրիտիկա անելու հիւանդութիւն:

Եւ իրօք, ինչ է նշանակում 10—14 օրը համարել «մի ամբողջ ամիս». ինչ է նշանակում մի օտար թերթի 20 օր և նոյն իսկ 29 ուշանալը իւր ժամանակամիջոցից՝ մեր առջևը դնել իբր հետեւելու արժանի օրինակ. ինչ է նշանակում մի հեղինակի պստիկադոյն մի գրեւծքով տեսնել հեղեղումն կամ ողողումն հայ ամսագրի էջերի. ինչ է նշանակում գրականութիւն փրկող ձեւանալ մի 12—13 երեսանի գրեւծքի առիթով, ուր թէկուզ միայն «մի քանի տեսարաններ կան գիւղական կեանքից», թէև իրօք՝ այդ պատմածքում դորանից զատ՝ ուրիշ բան էլ կայ որ կրիտիկոսը չի հասկացել:

Կրիտիկոս լինելուց առաջ մարդ պէտք է իւր ուղեղը լաւ կանոնաւորէ: Եւ մենք հաւատացած ենք, որ այդ պայմանով ոչ ոք չէր դալ ու ասիլ մի այսպիսի խօսք. «Վերջին ամիսներում մեր հասարակական աղքատիկ կեանքի ասպարէզում մի քանի քիչ թէ շատ ուշադրութեան արժանի խնդիրներ ծագեցին: «Մուրճ»-ը... չպիտի անուշադիր թողնէր այդ խնդիրները և ոչ մի ինքն: Արդ, մենք պնդում ենք, որ այս վերջին ամիսներում քիչ թէ շատ ուշադրութեան արժանի խնդիրները» եղել են 1) քահանայական խնդիրը, 2) Ներսիսեան դպրանոցի կառավարութեան անկանոնութիւնը. 3) Ճխական ընտրութիւնների կանոնաւորման խնդիրը: Մենք վստահանում ենք ասել, որ 1) քահանայական խնդիրն ոչ մի թերթ այնքան լրջութեամբ չվերաբերւեց որքան «Մուրճ»-ը. 2) որ Ներսիսեան դպրանոցի կառավարութեան խնդրում «Մուրճ»-ին պատկանում է նոյն իսկ սիգնալ տւողի պատիւը. 3) Ճխական ընտրութիւնների կանոնադրութիւնը «Մուրճ»-ում իւր

արժանաւոր քննադատութիւնը գտաւ: Մնում է մեր կրիտիկոսին ուրեմն ցոյց տալ այն խնդիրները, որոնք բաց են մնացել...

Ի նկատի ունեցէք որ «Տարազ»-ի կրիտիկոսի աչքում կարծես ոչ մի գին չունեն այն յօդաւածները, որոնք խմբագրի գրչին չեն պատկանում: Շատ սուր աչքով նկատում է որ № 5-ում խմբագրի յօդաւածը չկար, թող թէ այդ պատահել է մեզնից անկախ պատճառներով: Բայց կոյր է ձեռնում ստիպւած չլինելու համար նոյն համարում տպւած մեր աշխատակցի մի յօդաւածը յիշելու, ուր (Օրէնք և կազմակերպութիւն յօդաւածում) մեր հոգեւոր վարչութեան մէջ տիրող ոգին և կարգ կամ անկարգութիւնը յաջող կրիտիկայի է եւ թարկում: Մանաւանդ, ի հարկէ, «Տարազ»-ի համար այդ խնդիրը բաւականաչափ «հասարակական» չէ: Նոյնպէս «հասարակական» չէ նորա համար նաեւ պ. Մանուէլեանի քննութիւնը մեր դպրոցական կարգերի, ինչու, որովհետեւ նամակների ձեռով են գրւած այդ յօդաւածները, ուրեմն զրականական են: Ել ինչ խօսք որ «հասարակական» հետաքրքրութիւն չեն ներկայացնում «Տարազ»-ի կրիտիկոսին նաև բանւորներին վերաբերեալ խնդիրները, և ուրեմն ինչ հարկ կար նոյն իսկ յիշատակել այդ մասին յօդաւածները «Մուրճ»-ում: Եւ այլն և այլն:

Անպատճառ առիթներ որոնելով որ և է անհաճոյ նկատողութիւն անելու մեր հասցէին, «Տարազի» կրիտիկոսը եթէ այդ չի գտնում իւր իբր թէ քննադատելի № 6-ում, ուրախութեամբ յետ է նայում դորանից առաջւայ համարներին, և ահա այդպիսով իբր «հասարակական գտնում է № 5-ում միայն մի ոմնի դէմ գրւածքները: Այդ նոյն № 5-ում տպւած «Արծաթի և ոսկու խնդիրը» յօդաւած պ. Գ. Վարդանանցի, «Բանւորների ապահովացումն Ռուսիայում» յօդ. Յ. Յակոբեանի, «Օրէնք և կազմակերպութիւն» յօդաւած Գ. Վանցեանի, «Քահանաները Ախալցխայի վիճակում» Արսէն վ. Ղլըտճեանի—այդ բոլորը հէշ, զոքա խմբագրի ստորագրածները չեն, ուրեմն գին չունեն, և ոչ էլ «հասարակական» խնդիրներ են!!! Օ՛հ, Իսկանդար, Իսկանդար, տարադային կրիտիկոս, որքան դժւար արհեստ է կրիտիկոս լինել, մտնաւանդ որ դորա համար բարձր զարգացումն և բարձր միտք է պահանջւում! Բայց առանց այդ անհրաժեշտ բաների յանդգնութիւն է կրիտիկոսի դեր ստանձնել:

Եւ այսպէս այդ նոյն № 5-ում նա աչք չունեցաւ տեսնելու այնքան յօղանձներ հասարակական խնդիրների մասին, բայց աչք ունեցաւ տեսնելու միայն մի ոմնի դէմ գրած տողերը. Եւ ինչ! «Տարազը» այդ աւիթով խորհուրդ է տալիս «չոգեորւել» բանակւում որ անձնական բնաւորութիւն է կրում: Մի մոռացէք, որ «այդ անձնական բնաւորութիւն» կրող բայց, «Մուրճին» վերաբերող բանակւիւ սկսողը, խարդախութիւններ, ստեր և անլուր մեքենայութիւններ լարողը բնորել է իւր համար խօսելու տեղ «Մշակ» լրագիրը, ուր գրելուց յետոյ նա բրոշիւրներ է ցրում «Մուրճի» խմբագրի մասին հազարաւոր օրինակներով նոյն «Մշակի» միջոցով. և այս բոլորի զիմաց մեր կրիտիկոսը մեր անձնապաշտպանութիւնը «ոգեւորութիւն» է համարում անձնական բանակւում! և ոչ մի խօսք չի գտնում ասելու այդ անլուր մեքենայութիւնների մասին մեր ամսագրի դէմ: Բայց մենք, ընդհակառակը, մի խաբեբայի մեզ դէմ վարած արշաւանքը վերին աստիճանի բնորոշ ենք համարում մեր հասարակութեան և մանաւանդ մեր թէ «գրական» և թէ «ոչ-գրական» գործիչների համար: Եւ մենք «Մուրճի» ընթերցողների խորին ուշքն ենք դարձնում այդ դէպքի վրայ, որը մեծ կապ ունի մեր հասարակութեան մէջ բուն դրած ակտերի հետ:

Ահա ձեզ, օրինակ, մէկը, որը այն աստիճանի «գրականութեան» սիրահար է, որ այդ գրականութեան ետեւից նա չի ուզում տեսնել կենդանի մարդուն: Բայց ես ոչինչ եմ համարում այն գրականութիւնը, որը չսիրի մարդիկ մշակէ: Եթէ գրական մարդը պէտք է գրականութիւն մշակէ, նոյնպէս գրականութիւնը պէտք է մարդ մշակէ. նա պէտք է մարդիկ ստեղծէ: Բայց ահա զուք ականատես էք մի կռի թէ ինչպէս մի հայ խմբագիր, իւր թերթը գերծ պահելու համար մի օջինբազ կապիտալիստի կորստաբեր ազդեցութիւնից՝ զոհում է իւր անձնական շահը և դուրս է վնասում նորան գրականութեան սրբավայրից և զրկում նորան ազդեցութիւնից հասարական գործերի վրայ, որքան, ի հարկէ, այդ իրանից կախած է: Զեզ համար այդ ներքին կռիւը ոչ մի նշանակութիւն չունի, «Տարազի» կրիտիկոս: Որովհետեւ զուք գործ չունէք հասարակութեան և մարդու հետ, այլ միայն «գրականութեան» հետ, և միևնոյն ժամանակ դուք բաւականաչափ զարգացումն չունիք հասկանալու համար այն կապը

որ կայ նոյն աջդ գրականութեան և մամուլի որպիսութեան և նորանում գործողների մէջ: Դուք ականատես էք նաև այն անյուր մեքենայութիւններին, որ մի մարդ լաղում է մի հայ խմբագրի անձնական շիտականութեան դէմ, հնարելով ստեր, խարդախութիւններ, դիմելով ամեն տեսակ սատանայութիւններին. և ահա, երբ աջդ նոյն խմբագիրը իրան պաշտպանում է և ցոյց տալիս հակառակորդի լրբութիւնները և զորանով զերծ պահում մամուլի մի օրդանայն փեսաներից, որ կարող էին հասնել նորան եթէ միայն հնարած ստերը խտութիւններ լինէին,—այդպիսի մի անձնապաշտպանութիւն, որը քաղաքացիական մի պարտք է, դուք համարում էք խղճարութիւն անձնական բանականով! Զեզ նման մտածողիքի համար մի թերթի խմբագրի զխաւոր առաքինութիւնը այն է որ փող ունենայ նոցա «թանկագին» տողերը վարձատրելու համար: Ահա ինչու մենք չենք զարմանալ եթէ հզուց էլօր կը տեսնենք մեր առջևը դրած մի գիրք, մի վէպ, մի յօդած՝ «Հեղինակութիւն Խականդարի, հրատարակութիւն...», որի հեղինակը կըսկսի արդարանալ նոյն տեսակ սոփեստութիւններով, ինչ սոփեստութիւններով որ վիպասան Շիրվանզադէն նորերումն «Մշակ»-ում փորձում էր իրան արդարացնել Աբգար Յովհաննիսեանին խունկ ծխելում, երբ որ աջդ իրան «հաշիւ» էր...

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԵՐՈՒԱՆԴԻ ՂԱԶԱՐԵԱՆ

Նթէ մեր պարբերական մամուլը զարթեցնում և քննութեան առարկայ է դարձնում «Քահանայական խնդիրը», նուցն մամուլի համար ոչ պակաս հետաքրքրութեան և ուսումնասիրութեան առարկայ պիտի լինի նաև «Ուսուցչական խնդիրը»։ Նւ ալս խնդիրը, իր ժամանակակից կարեւորութեան կողմանէ, եթէ ոչ աւել, դո՛նէ պակաս անհրաժեշտ է մեզ համար։ Մինչև հիմա մենք սովոր ենք կարդալ լրագիրների մէջ հալ ուսուցչի մասին աջակիտի կարծիքներ և տեղեկութիւններ, որոնք ընդհանրապէս արտաքստում են՝ մի կողմից մեր հասարակութեան անտարբեր, արհամարական վերաբերութիւնը դէպի հալ ուսուցիչը, և միւս կողմից ալ ուսուցչի ճշւած, դժգոհ և մի տեսակ սպասողական դրութիւնը։ Նթէ լրագրութեան մէջ խօսել է հալ ուսուցչի մասին,—խօսել է միայն նրա պիտուքների մասին, նրա սահմանափակ նիւթական դրութեան մասին, նրա դրութիւնը լաւացնելու մասին և ալն։ Նւ հասարակութիւնը կարդալով ալ հատ ու կտոր լրագրական կարծիքները, ալն եզրակացութեանն է դալիս, որ ուսուցիչը խեղճ է, աղքատ է, թշւառ է. ուրեմն պէտք է նրան օգնել, պէտք է նրան խղճալ, պէտք է նրան զիջանել... Մի խօսքով՝ պէտք է օգնել. իսկ օգնելու հասկացողութիւնը չատ մօտ է ողորմութիւն տալու հասկացողութեանը, և օգնութեան կարօտը նուցն է թէ ողորմութեան կարօտ լինի։ Նւ մեր հասարակութիւնը ալ պէս էլ նալում է հալ ուսուցչի վրալ. օգնելու, ողորմութիւն տալու տեսակէտից։ Դրա համար էլ նա արհամարում է ալ ուսուցչին։ Որ մեր հասարակութիւնը արհամարական, հեղեական կերպով է վերաբերում դէպի ուսուցիչը, կամ, ինչպէս ասում են սովորաբար, հալ «վարժապետը»—ալ չատ հեշտ է ապացուցանել. բաւական է ուշադրութիւն դարձնել մեր հողաբարձուների և ուսուցիչների մէջ եղած չարաբերութեան վրալ, և դուք կը համոզւէք, որ, նոցա իսկ պաշտօնական չարաբերութիւնների ժամանակ, երբ լոկ իրաւունքի և

սլարտականութեան մասին կարելի է խօսել, ալդ դէպքումն էլ հոգաբարձուն միշտ աշխատում է չափոնել իր արհամարանքը դէպի ուսուցչի անձնաւորութիւնը, միշտ աշխատում է օգուտ քաղել իր դիրքից, որ ստիպէ ուսուցչին խոնարհիլ, ստորանալ իր առաջ: Ես երբէք չեմ մոռանալ մի շատ համակրելի օրիորդի բուռն զարուիթը Վ. քաղաքի (ուր նա դժբաղդութիւն է ունեցել վարժուհի լինել) հոգաբարձութեան վրայ, որ անպատճառ պահանջելիս է եղել վարժուհի օրիորդից՝ ռոճիկ ստանալու համար գնալ հոգաբարձուի մօտ, նրա տանը և աջնեղ ստանալ... Եւ երբ օրիորդը վճռական կերպով չափոնել է, որ ինքը չի գնալու հոգաբարձուի տունը, — հարուստ հոգաբարձուն նուազեց վճռական կերպով չափոնել է, որ ինքը փող չի տալ օրիորդին: Եւ իրաւ, օրիորդը ստիպւել է հեռանալ Վ. քաղաքից, առանց մի քանի ամսաւ ռոճիկ ստանալու:

Եւ այս մի սովորական երեւոյթ է մեր ուսումնարանական (խօսքս ծխական ուսումնարանների մասին է) գործի փշոտ և տատասկոտ ասպարիզում: Փուշ և տատասկը, ի հարկէ՝ հալ ուսուցչի բաժինն է... Նիւթական ծանր և անապահով դրութիւնը գուցէ աջնեց էլ զգալի չլինէր հալ ուսուցչի համար, եթէ մեր հասարակութիւնը զոնէ անկեղծ համակրութեամբ վերաբերէր դէպի ուսուցիչը, եթէ նիւթական զրկանքների փոխարէն, գոնէ բարոյապէս վարձատրէր նրան հասարակութիւնը. իսկ մեր հասարակութիւնը երբէք չի կարող նիւթականը բարոյականից զանազանել, և հալ ուսուցչին էլ՝ երբէք չի կարող սպասել հասարակութեան կողմից մարդավաճել չարդ ու պատիւ, քանի որ նրա ռոճիկը 400—600-ի շուրջն է պտըտւում, քաի որ ալդ չնչին գումարն էլ՝ երկնից մանանալի պէս է իջնում հալ վարժապետի գլխին: Բալց չէ որ ուսուցչին էլ մարդ է, մարդկալին բոլոր արժանաւորութիւններով ու թուլութիւններով: Կէ որ նա էլ ունի հոգեկան պահանջներ, նա էլ ունի ցանկութիւն «մարդ գտնուելու», հասարակութեան մէջ պատիւ ու չարդ ձեռք բերելու, ալդ շատ լատուկ է մարդուն, իր կեանքի ծաղիկ հասակում, ինչպէս որ են մեր բոլոր ուսուցիչները: Ինչպէս պէտք է բաւականութիւն տալ հալ ուսուցիչը իր այս ցանկութիւններին ու պահանջներին, ինչ պիտի անէ նա, որ հասարակութիւնը նրան էլ մարդ համարէ, որ նրա խօսքն էլ չէ միաշն դասարանում, աշակերտների համար ունենալ կշիռ միաշն, ալ և հասարակութեան մէջ, ալ և ուսումնարանից դուրս կատարուող միւս հասարակական գործերի վերաբերմամբ: Այս լուկ պատուի խնդիր է, որ իմ կարծիքով, ամենեւին պակաս չէ նիւթական ապահովութեան, բարեխաւութեան խնդրից: Ի հարկէ «տնտեսական մատերիալիզմի» տեսակէտից՝ մարդու պատիւը և նշանակութիւնը կը բարձրանալ հասարակութեան մէջ աշն ժամանակ, երբ նրա տնտեսական դրութիւնը կը բարձրանալ, երբ նրա կեանքի նիւթական պարմանները կը լաւանան... Անշուշտ, նիւթական պարմանների բարեխա-

ւութիւնից՝ շատ բարիքներ առաջ կը գան կեանքի մէջ։ Բայց ինչպէս լաւացնել ուսուցչի կեանքի նիւթական պաշտանները. աչն միջոցով, որի մասին ես խօսեցի վերեւում,— դառնալով դէպի հասարակութեան զգացմունքները, խնդրելով նրանից օգնել ուսուցչին,— ոչ մի հետեանքի չի կարելի հասնել, բացի նրանից, որ հասարակութիւնը աւելի հեգնական, արհամարական կերպով կը վերաբերի դէպի ուսուցիչը։ Վերցնել նկարագրել ուսուցչին բոլոր խղճալի ու ողորմելի գոչներով, հասարակութեան մէջ գութ չարօքել, որ նա օգնէ իր ուսուցչին,— այդ միանգամաւն թէ միասակար և թէ վերաւորիչ է ուսուցչի համար։

Բայց կան երկու ուրիշ միջոցներ, որոնց մասին շատ քիչ են մտածում թէ նրանք, ովքեր ուզում են օգնել ուսուցիչներին, և թէ նոյն իսկ իրանք ուսուցիչները։

Արշէն Երեցը, իր նշանաւոր քարոզի մէջ, ալսալիս խօսքերով է որոշում քահանայի նշանակութիւնը ժողովրդի համար. «Քահանան գիւղական ժողովրդի աղն է, ձեզ համ պիտի տալը»։ «Ի՞նչ չգիտէք, որ քահանան ձեր հողերի հովիւն է, որ պէտք է արթննալ լինի մտքի աչքով և գիշեր ցերեկ հսկէ ձեր վրայ, ինչպէս պահապան հրեշտակ, որպէս զի դուք չմոլորուիք քրիստոնէութեան ուղիղ ճանապարհէն»։ Այս խօսքերը չափազանցութիւն չեն. սոքա խոր զգացմունքի արտապատկութիւններ են։ Ի՞նչ անենք, որ ալժման հալ քահանան չի համապատասխանում իր ալդ բարձր կոչմանը. Արշէն Երեցը, որպէս նախանձախնդիր իր ժողովրդի քարոզական շահերի, որպէս ներկայացուցիչ քահանայական դասի, անպատճառ ուզում է, որ ժողովուրդը պարզ գաղափար ունենալ քահանայական կոչման մասին, որ սոքեւ գիւղացին կարողանալ գնահատեն իրական կեանքի մէջ տեսած քահանային, իսկական, իրէալական քահանայից, որ նա կարողանալ իրականութիւնը համեմատել իր իրականի հետ, կարողանալ ձգտել ունենալու իրէալական քահանայ։ Եւ երբ ժողովրդի երեակալութեան մէջ պարզ կերպով կը գծագրուի իրէալական քահանայի պատկերը, աչն ժամանակ ժողովուրդը ինքը, առանց որ և է օգնութեան, կը կարողանալ գնահատել իր քահանային ըստ արժանոյն։ Նոյնը կարելի է ասել և ուսուցչի վերաբերութեամբ. Ուսուցչի պատիւը և չարքը կարելի է բարձրացնել հասարակութեան աչքում՝ տալով հասարակութեանը ճիշդ հասկացողութիւն ուսուցչական պաշտօնի մասին, բացատրելով սոքեւ ժողովրդին՝ որպէս ուսման, նորնպէս և ուսուցչական պաշտօնի բարձր բարոյական նշանակութիւնը։ Արշէն Երեցը, իր քարոզի միջոցով, ալդ բանը անում է քահանաների նկատմամբ,— մամուլի և գրականութեան մէջ գործողները նոյնը կարող են անել ուսուցիչների վերաբերութեամբ։ Համոզեցէք մեր հասարակութեանը,— զրքով, լրագրով, խօսքով. ինչով ուզում էք, միենոյն է, — համոզեցէք, որ ուսումը և ու-

սոսմանարանը անհրաժեշտ են հասարակութեան կամ ժողովրդի համար, ոչ թէ ալն պատճառով, որ ուսման միջոցով մարդիկ սովորում են թէ ինչպէս պէտք է հարստանալ, ինչպէս պէտք է ձեռք բերել շատ տեսակ նիւթական չարմարութիւնների կեանքի մէջ, (աչդ խօ ինքն ըստ ինքեան հետեանք է ուսման, գիտութեան), ալ որ ուսումը, անկախ իր տեւած նիւթական օգուտներից՝ մի մեծ բարիք է մարդու համար, որովհետեւ նա ազատում է մարդուն տգիտութեան մոլորութիւնից, որովհետեւ նա լոյս է սփռում մարդու հոգեկան աշխարհի մէջ, բարձրացնում է նրան իր կոպիտ անասնական դրութիւնից, աղնւացնում, նրբացնում, կատարելագործում է նրա միտքը, նրա զգացմունքները, նրա երևակայութիւնը։ Այս համոզմունքը միանգամից տակն ու վրայ կ'անէ մեր հասարակութեան՝ ամբողջ աշխարհաբոցութիւնը։ Թէ ուսման, թէ ուսումնարանի, հետեապէս և ուսուցչի վրայ հասարակութիւնը կը դադարի նախել ան շահադիտական—նիւթապաշտական տեսակէտից, ինչպէս որ ալժամ նախում։ Ուսուցիչը և ուսուցչական պաշտօնը կը բարձրանան հասարակութեան աչքում, որովհետեւ կը ստեղծւի ուսուցչի և հասարակութեան մէջ մի կապ, մի բարոյական, գիտակցական չարաբերութիւն, որը համարեա զոգութիւն չունի ներկայումս։

Այս առաջին միջոցն է, որի մէջ անմիջական մասնակցութիւն չի կարող ընդունել ուսուցիչը։ Նրկրորդ միջոցը լիովին կախած է իրանցից— ուսուցիչներէր։

Թիֆլիսի վարժուհիները ունեն իրանց փոխադարձ օգնութեան ընկերութիւնը։ Ինչու մի աչքով ընկերութիւն չկազմակերպեն և ուսուցիչները։ Նիւթական մասնատր խնայողութիւնը, որից առաջ կը գալ մի պատկառելի գումար—աչդ կը լինի ուսուցչական փոխադարձ օգնութեան մի միջոցը։ Ուրիշ միջոցներ ևս շատ կան, բայց նախ հարկաւոր է, որ մեր հաջ ուսուցիչները իրար մօտենան, միասին խորհն իրանց ընդհանուր դրութեան մասին։ Զգալով իրանց տնտեսական անապահով և խարխուղ դրութիւնը, թող վերջապէս համոզւեն մեր ուսուցիչները, որ աչդ դրութիւնից դուրս գալու գորեղ միջոցներից մէկն է փոխադարձ օգնութեան, փոխադարձ պաշտպանութեան սխտեմը։

Այս միտքը թէև շատ հին, բայց միշտ դեռ անկատար է մնում մեր մէջ։ Գոնէ ուսուցիչները թող գործնական օրինակ տան մեզ ալս բանում։

ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՍ

ՄԿՐՏԻՉ ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆԻ

Ահա հասել է ուսումնական տարին, շուտով պիտի կազմակերպւեն ուսուցչական խմբերը իրանց աւագ ուսուցչի հետ: Ի՞նչ հանգամանքներ պէտք է ունենալ աչքի առաջ, մանաւանդ աւագ ուսուցիչ ընտրելիս. դա բաւական ծանրակշիռ հարց է և լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել դրա վրայ: Աս չափ անգամ լսել եմ, թէ ուսուցչի գործունէութիւնը բաւարար կարելի է համարել, թէ նա արդէն կանգնած կը լինի իր կոչման բարձրութեան վրայ, եթէ իրան չանձնած ուսումնական գործերը կանոնաւոր կերպով կը տանի, կ'անցնի ծրագիրը, մի խօսքով կ'ունենալ լաւ պատրաստած աշակերտներ և աշակերտուհիներ: Ո՛չ, հալ ուսուցիչը չպէտք է, իրաւունք չունի աչքքանով բաւականանալու, նա ունի ուրիշ մեծ պարտականութիւններ էլ, որոնց աչքից չպէտք է թողնել, արհամարհել:

Ուսուցիչը ոչ միայն պէտք է կրթէ, մտաւոր մուտնդ մատակարարէ մանուկներին, այլ նաև նոյն մանուկների ծնողներին, աչն վալրին, որտեղ նա ուսուցիչ է: Վուցէ աչս բանը աւելորդ համարի թիֆլիսի, Բագւի, Երևանի նման կենդրոնների համար, բալց միւս քաղաքների մանաւանդ գիւղերի համար աչք բանը անհրաժեշտ է:

Մտէք հալ գիւղերը, նոյնիսկ քաղաքները և դուք կը տեսնէք հասարակական կեանքի կատարեալ բացակայութիւնը, իւրաքանչիւրը ճանաչում է միայն իր անձը, իր տեմական շահերը, և ոչ միայն չի օգնում հասարակական կեանքի զարգանալուն, այլ նոյն իսկ հաշտ աչքով չի նաչում աչք ուղղութեամբ գործողների վրայ: Երևակայեցէք, մեր նշանաւոր կենդրոններում իսկ հալըր ամբողջ տարին գոնէ մի անգամ չի մտնում ուսումնարանի շէմքից՝ տեսնելու ի՞նչ է անում, ի՞նչպէս է սովորում իր զաւակը, չի հետաքրքրում, մինչև անգամ տեղեկութիւն չի հարցնում ուսուցչից իր որդու մասին: Թէև կան աչք բոլորի դէմ բողոքող լնտիլիգեհտներ, բալց դրանց թիւը շատ քիչ է, աչք պատճառով էլ բողոքները մնում են «ձաչն բարբառու լանապատի»: Աչքում ու պիտի զարթեցնէ, գործունէու:

թեան մէջ զնէ ժողովրդին, սերտ կապերով կապէ նրան ուսումնարանի և զրականութեան հետ, թե, ոչոք տալ ինտելիգենցիային, եթէ ոչ ուսուցիչը:

Ուսուցչի պարտքը մեծ է, նա դասերից չետու հանգստութիւն պէտք է գտնի ժողովրդի մէջ. ծանօթանալ, աշխատէ օգնել նրա ցաւերին և ոչ թէ ղրմէ կողմնակի, արհեստական, շատ անգամ էլ ուսուցչի անւան ոչ շատ չարմար միջոցների, վերականգնելու իր ուժերը: Ուսուցիչը իջնելով մինչև ժողովրդի նոյն իսկ ամենատգէտ խաւերը, պէտք է բարձրացնէ նրան իր հետ դէպի լուսաւոր, քաղաքակրթւած չառաջադիմական աշխարհը. ծանօթացնելով նրանց, որքան կարելի է, որքան թույլ կըտալ իրութեան հետ և ալլն. կամ ուղղակի ինքը կտրգալով, պատմելով, կամ թէ իրան ժողովրդին կարգացնել տալով ալլ ուղղութեամբ թեթեւ, հասկանալի գրքեր. (ցաւելով պէտք է աւելացնել, որ ալլալիս գրքերը մատներով կարելի է հաշուել. բաց ալլ պակասը լրացնելու պարտքն էլ ուսուցչինն է): Բաց հեշտ չէ մտնել ժողովրդի մէջ, ծանօթանալ նրա բոլոր խաւերին, պահանջներին և օգնել, ուղիղ ճանապարհի վրա կանգնեցնել նրան: Ազդեղ նա շատ նեղութիւնների, արգելքների կը հանդիպի, կը տանջուի, կը չարչարուի, կը կրի մինչև անգամ վերաւորանք, սակաւ ու չպէտք է դարձնել դրան, պէտք է հաստատ, անդողւելի քալելով առաջ գնալ, և իւրաքանչիւրը թող հաստատ հաւատացած լինի, որ վերջը լաղթութիւնը անշուշտ կը տանի և ալլ բոլոր քաջած նեղութիւնների տեղ նա կը վարձատրուի, կը մխիթարուի մի քանի անգամ աւելի: Բաց ցաւօք սրտի պէտք է ասել, որ մեր ուսուցիչների ահագին մեծամասնութիւնը չունի ալլ կամքի ուժը, եռանդը և հետաքրքրութիւնը: Դրա պատճառն էլ հետեւեալն է. հալ ուսուցիչը աւարտելով իր դասընթացը, մշտնօրէն է կեանքի մէջ, լանձն է առնում ուսուցչական ծանր պարտականութիւնը, պէտք է ասած բաւական եռանդով, իրէալներով ոգևորւած. սակաւ չունենալով կարգին առաջնորդ, շատ շուտ ընկճում է կեանքի ծանր լծի տակ և ալլուհետև գուք շատ հեշտ կարող էք ճանաչել հալ ուսուցչին ոչ աշխուժ, անհամարձակ հալեացքով, թուլ բնաւորութեամբ, որը շատ խօսում, մանէ գալիս և քիչ գործ կատարում: Ահա որտեղ հարկաւոր է աւագ ուսուցիչը, որտեղ նա մեծ նշանակութիւն ունի և գեր է խաղում: Աւագ ուսուցիչն է, որ բոլորին պիտի կապէ իր հետ, իր եռանդով, իր սիրով դէպի գործը, իր գեղեցիկ իրէալներով, իր հմտութեամբ և իր մօտ ծանօթութեամբ ժողովրդի կարիքներին, և ահա ալլ ժամանակ գուք կ'ունենանք խումբ, որ ոչ թէ զբաղւում է կուլիւներով՝ իրար թշնամանելով՝ իրար ոտքի տակ փորելով և ալլալիսով զգալի հարւած տալով ուսումնական սուրբ դործին, որի հետեանքը լինում է ժողովրդի ուսումնալանից ան-

ջատելը, սառը վերաբերելը դէպի նա և մինչև անգամ ատելութիւն դէպի ալդ սրբավարը,—ալ մի խումբ, որ ոչ միայն սիրով, եռանդով և ի հարկէ մեծ առաջադիմութեամբ առաջ է տանում ուսումնարանական գործը, ալ և քաշում լառաջ է տանում ժողովրդին, գրաւում է նրան, սիրել է տալիս ուսումնարանը, թատրոնը, ընթերցարանը, մի խօսքով ինչ որ անձնական չէ, հասարակական է: Այդտեղ արդէն ժողովուրդը չէ խորշում ուսումնարանից, ուսուցչական խմբից, սիրում է նրան, միշտ նրա հետ է լինում, դիմում է նրան իր կարիքները մասին խորհուրդ հարցնելու և մեծ ուրախութեամբ հետևում է ուսուցչի տաճ բարի, օգտակար խորհուրդներին: Առաջ ուսուցչիչը չպէտք է լինի ժողովրդից փախչող, փրկիստփախութիւնները անել սիրող մի սառը մարդ. նա պահանջող չպիտի լինի՝ բաւականաւ միայն ուսումնարանական գործով, թէ և միշտ գլխաւոր տեղը ալդ պէտք է բռնի. կողմնակից չպէտք է լինի պաշտօնական լարաբերութեան ոչ միայն ժողովրդի, նաև աշակերտի, աշակերտունիների հետ, չպէտք է խոչ տալ մանկական և գրականական երկրպագութիւնից. չպէտք է հակառակ լինի ներկայացումների—կանոնաւոր ներկայագումների կրթող նշանակութեանը: Նա պիտի լինի օպտիմիստ. նա պիտի ունենալ սիրող սիրտ, սիրէ ուսուցչական խումբը, աշակերտի, աշակերտունիներին, ժողովրդը ինչ և սիրէ նրանցից: Գոցէ ասող լինի թէ ինչո՞ւ անպատճառ ալդպէս մեծ և ներգործող դեր խաղացնել առաջ ուսուցչին, միթէ ուսուցչիչները առանց առաջ ուսուցչի աչքի ընկնող դործ չեն կարող կատարել. պատասխանը բացասական է. որովհետև նախ՝ եթէ մէկը ուսուցչիչներից գործում է խմբից անջատ, շատ աննշան լառաջդիմութիւն ցոյց կը տալ. մէկ էլ որ դա շատ անգամ ոչ միայն օգուտ չի բերի, ալ և զգալի վնաս: Ա՛յ ինչպէս.—մեր ոչ մեծ կրթութեան տէր ժողովուրդը միանգամայն անձնական շարժառիթներ ճանաչելով, ուսուցչի գործունէութեան մէջ էլ փնտռում է անձնական շատ շարժառիթներ, առանց ուչ դարձնելու նրա բարձր իդէալներին. և շատ անգամ ամենաազնիւ գործի հիմքը համարում է ստոր հակումներ. ալդ պատճառով էլ սկսում է հալածել ոչ միայն ուսուցչին, ալ նոյն իսկ գործը. դեռ մի կողմ թողած ուսուցչական խմբի անդամներից մէկի, երկուսի նախանձից կուրացած հալածանքները, որ աւելի վտանգաւոր է: Իսկ երբ առաջ ուսուցչիչն է գործի կպչում և կարողանում իր հետ կապել ամբողջ խմբին, ալդտեղ արդէն անձնաւորութիւններ չեն գործողները, ալ մի պատկառելի մարմին, որին հաւատում, լսում, հետևում է ժողովուրդը, հետևապէս լաջողութիւնն ու լառաջդիմութիւնն էլ մեծ է լինում:

Արեւմտ առաջ ուսուցչի ընտրելիս, կամ հրաւիրելիս՝ շատ զգուշ պէտք է լինել. երբէք չպէտք է բաւականաւ նրանով, որ առաջ ուսուցչիչը ինտուստուտ աւարտող է, լսել է, եղել է համալսարանում և կամ թէ լաւ դասատու է եղել: Ալդ հանդամանքները երբէք իբրև հաստատ գրաւական չեն

կարող ծառայել, թէ նա անպատճառ լաւ աւագ ուսուցիչ էլ կը լինի: Այլ աւագ ուսուցիչ ընտրելիս պէտք է աչքի առաջ ունենալ, որ նա լինի ոգևորւած, կամքի տէր, եռանդոտ և ժողովրդին, տեղին մօտ ծանօթ անձնաւորութիւն: Անպատճառ հարկաւոր չէ, որ աւագ ուսուցիչը չարգլւած լինի ուսուցչական խմբից. դա շատ հազւագիւտ է, բաւական է նաեւ՝ եթէ նա ուսուցչական խմբի սիրած անդամն է: Այդպիսով կրճատւած կը լինին մեր ուսուցչական խմբերի մէջ եղած խալտառակ խռովութիւնները և ուսումնական գործը մեծ քաջերով առաջ կ'երթալ, ձեռք ձեռքի տւած ժողովրդի չառաջդիմութեան հետ:

Բայց թէ ինչպէս՝ որտեղից գտնել ալիպիտի աւագ ուսուցիչներ, ալի էլ դժուար չէ: Եթէ խումբ կազմողը թեմական տեսուչն է, նա հեշտութեամբ կարող է ընտրել, քանի որ նա մօտիկօրեց լաւ ծանօթ է ուսուցիչների հետ, ուրիշ կերպ էլ չպիտի լինի, եթէ ծանօթ չէ պիտի ծանօթանալ, ամեն բան իր տեղը ուսումնասիրելու չարմարութիւն ունենալով, ուրեմն միայն հարկաւոր է ուշադրութիւն դարձնել և հետաքրքրւել գործով: Միւս կողմից էլ, եթէ հոգաբարձութիւնը, տանջւելով անտանելի աւագ ուսուցչի ձեռքին, տեսնում, հասկանում, հետաքրքրւում է և կամենում է անպատճառ լաւ աւագ ուսուցիչ ունենալ, կարող է չաջողեցնել, թէև մի չքի չգլուարութեամբ բանի ետևից ընկնելով, տեղեկութիւններ հաւաքելով, մէկից միւսից հարցնելով. եթէ միջոցները ներուստ են հեղը անձամբ ծանօթանալով: Ահա ալի դէպքում, շատ քիչ բացառութեամբ կարելի է ունենալ ցանկացած աւագ ուսուցիչը, լաւ կազմակերպւած խմբի հետ: Ամեն մի գործ ձեռնարկելիս պէտք է միայն կամենալ և տշխատել չաջողութեամբ զլուի տանել. աշխուհետ ամեն ինչ իր կարգով կ'երթալ:

† ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԽԱՏԻՍԵԱՆ

Մի անսպասելի մահ եկաւ խելեղ ամբողջ Կովկասից մի նշանաւոր գործիչի։ Ներկալ օգոստոսի 6-ին վախճանեց Յովհաննէս Խատիսեան, Գերմանիայի Նաուհէլմ բուժատեղիում, ուր նա ընտանիքով գնացել էր բժշկելու։ Չնայած որ նորա սրտի հիւանդութիւնը արդէն վկայւած էր բժշկներից ներկալ տարւալ դարնանը, բայց ոչ ոքի մտքովն անգամ չէր անցկենում թէ ալդ հիւանդութիւնը օրհասական պիտի լինէր նորա կեանքի համար աչքան կարճ միջոցում։

Հանգուցեալը, իբր մտածող և գործող դրական մարդ էր, բնաւորութեամբ՝ շիտակ, ազնիւ, բարի, մեծածաւալ հետաքրքրութեամբ թէ զիտութիւնների և թէ կեանքի մէջ, կամքով ուժեղ, խելքով՝ կորովի, բայց և վարեղ, դործի մէջ իբր վարող անձն՝ հեղինակաւոր, որից ամենքը պատկառում էին, շնորհիւ համոզմունքի աչն խորութեան, մտածելու աչն ուժի և տեղեկութիւնների աչն հարստութեան, որ նա զիտէր մտցնել խնդիրների քննութեան մէջ։ Յովհաննէս Խատիսեանի հասարակական գործունէութիւնը կարիւրի է բաժանել չորս մասի. պետական ծառայութեան, ծառայութեան հաշկական հիմնարկութիւններին, ծառայութեան Թիֆլիս քաղաքին և չորրորդը՝ իբր զլուխ մի ընտանիքի, որը, երկու ամուսինների լուսաւոր ձգտումները շնորհիւ՝ տեղական կրթւած երիտասարդութեան բարոյական մեծ բարիքներ է տւած։

Բաւականին երկար է հանգուցեալ Յովհ. Խատիսեանի ծառայական ցուցակը։

Յովհ. Խատիսեան ծնեց 1838 թ.։ Համալսարանական ուսումը աւարտելով Մոսկովեան համալսարանում, ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի ընական գիտութիւնների բաժնում, կանդիդատի աստիճանով, նա քնաց Գերմանիա, ուր Հոհենհէլմի երկրագործական ակադեմիայում լսեց դասընթացքը և վերադարձաւ Կովկաս, Թիֆլիս։ Իւր պետական ծառայութիւնը սկսեց իբր շտաբից դուրս ծառայող Կովկասի զիւղատնտեսութեան և արդիւնագործութեան վարչութեան մէջ 25 նոյեմբ. 1861 թ.։ Ալդ վարչութիւնը վերացնելուց լետու, նա, 1864-ին լուսաւորի 1-ին նշանակեց շտաբից դուրս ծառայող Կովկասեան փոխարքայի գլխաւոր վարչութեան պետական կալւածների դեպարտամէնտում, իսկ սեպտեմբերի 1-ից նոյն թւականի՝ նոյն դեպարտամէնտի ագրոնոմի պաշտօնակատար։

1868 ին Յ. Խ. ուղարկեց հետազոտելու հոգերը Սև ծովի հիւսիս-արևելեան ափում, 1866-ին ուղարկեց Կ. Պոլիս և Փոքր-Ասիա՝ 600 ընտանիք Թիւրքիայից գաղթեցնելու համար Սև ծովի հիւսիս-արևելեան ափը: 1868-ին, չունալի 1-ից նա նշանակեց ագրոնոմ պետական կալաածներին, անտառների, գիւղատնտեսութեան և արդիւնարերութեան գործերի վարչութեան, փոխարքայի գլխավոր կառավարութեան մէջ: Նոյն տարում, 15 չունալի նա դրեց կարգադրութեան ներքոյ «Կովկասում, Ուղղափառութիւն տարածելու ընկերութեան», դորան պատկանեալ Վարաչևադի կալաածների կառավարչի պաշտօնով: 1869 ին նշանակեց իբր առանձին լանձնարարութիւնների պաշտօնեալ VII կարգի Կովկասեան փոխարքայի մօտ, մնալով Կարաէնադի կալաածների կառավարիչ, որի վրայ նոյն տարում դրեցին Կարաէնադի ջրանցքի վնասումների դէմ գործող մասնաժողովի անդամի պարտաւորութիւնները: 1872-ին Յ. Խ. ուղարկեց Ստաւրոպոլի նահանգը քննելու համար աշխտեղի էստոնցի կոլոնիստների դանդաղեցրել նոցա բնակատեղիի անպարտաւորութիւնների մասին: 1873-ին նշանակեց անդամ լանձնաժողովի Կովկասեան թիավար նաւատորմը վերադնելու խնդրի համար: Նոյն թւականին նշանակեց անդամ լանձնաժողովի՝ կանոններ կազմելու Կովկասի և Անդրկովկասի հոգերը ուղղելու համար: 1876 ին Յ. Խ. ընտրեց քարտուղար Կովկասեան Գիւղանտեսական ընկերութեան: 1877-ին ուղարկեց Լրեանեան նահանգը ժանդարմաւոր համար Թիւրքիայից գաղթածների վիճակի հետ, որոնք եկած էին 1877—78 թւականներին պատերազմի ժամանակ Լրեանեան շօրաբաժնի հետ, նոցա օժանդակութիւններ տալու և տեղ ցոյց տալու նոցա բնակութեան համար ռուսաց կալարութեան սահմաններում: 1818-ին ուղարկեց Քուլթալիսի նահանգը հետազոտելու համար բարոն Լոնգէլի որթի աղիները, 1879-ին նշանակեց անդամ լանձնաժողովի Սեծովեան չրջանի բարեկարգութեան համար: 1880-ին նշանակեց անդամ լանձնաժողովի Անդրկովկասեան երկիրը հացով ապահովելու համար: Նոյն տարում ուղարկեց Անդրկովկասի ալ և ալ տեղերը վերստուգելու զաւառական վարչութիւնների գործողութիւնները մօրեկը ոչնչացնելու համար և ցոյց տալու ալ միջատի ոչնչացնելու միջոցները Նոյն տարում նշանակեց օգնական անդամ Հանրառուսական Մոսկովեան ցուցահանդէսի Կովկասեան բաժնի: Նոյն տարում ուղարկեց Պետերբուրգ պատշաճաւոր պետական հիմնարկութիւններին բացատրութիւններ և նիւթեր տալու Կարաէնադի Մարիամեան ջրանցքի ընկերութեան կանոնադրութիւնը հաստատելու համար: 1881-ին նշանակեց անդամ ֆիլոսոֆերային կառավարչական մնալուն կոմիտէտի: Նոյն տարում ընտրեց փոխ-նախագահ գիւղատնտեսական ընկերութեան, որ պահպանեց մինչ 1887 թւականների վերջերը, որից չեալ ընտրեց ընկերութեան պատաւոք անդամ Նոյն

1881-ին նշանակեց անդամ լանձնաժողովի՝ մշակելու համար Միլեան դստը կառավարչական միջոցներով և կոնցեսիական ձևով ոռոգելու խնդիրները: 1882-ին ուղարկեց Սեւաստապոլ՝ մասնակցելու համար աշնտեղ գումարած ֆիլոխերային ժողովին: Նոյն տարին ուղարկեց Մոսկւա իբր կարգադրիչ Համառուական ցուցահանդէսի Կովկասեան բաժնի: 1883-ին նշակեց առանձին լանձնարարութիւնների պաշտօնեալ VI կարգի Կովկասեան կառավարչապետի մօտ (որը փոխարինեց 1882 ին Կովկասեան փոխարքային): Նոյն տարեալ հոկտ. ուղարկեց² ուղեկցելու համար պետական կալաճների մինիստրին՝ սորա ճանապարհորդութեան ժամանակ Անդրկովկասում: 1884-ին նշանակեց կառավարիչ պետական կալաճների Թիֆլիսի նահանգի և Զաքաթալի շրջանի, և ալդ պաշտօնում մնաց մինչ իւր մահը:

1889-ին Յ. Խ. ընտրեց պատւաւոր անդամ Կովկասեան արդինահանդէսի կոմիտէտի և փոխ-նախագահ արդինահանդէսի կարգադրիչ կոմիտէտի:

Անշուշտ ալ ծառայական ցուցակը ցոյց է տալիս ալն կարեւորութիւնը, որ զգացել է Կովկասեան կառավարչութիւնը լանձին Յ. Խատիսեանի: Բալց դորանից զուրս նա գործել է նաև լօգուտ հալ հասարակութեան: Կարեւորագոյնը նորա գործքերից պէտք է համարել ալն գործակցութիւնը որ նա ունեցել է հանգուցեալ հարուստ Յովհանեանին (Անահան) զրգելու համար Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցը հիմնելու, կառավարութիւնից նորա կանոնադրութիւնը հաստատելու և հանգուցեալի կտակը կազմելու (Տես Մուրճ № 3, Յովնանեան դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը): Հանգուցեալ հիմնադրի կենդանութեան օրօք՝ Յ. Խատ. նշանակած էր անդամ ալդ դպրոցի խնամակալութեան, իսկ հիմնադրի մահից վետոյ նա երկու անգամ ընտրեց ծխական պատգամաւորներից իբր հոգաբարձութեան անդամ, վերջին անգամ ներկալ թւականի մարտի 10-ին (տես նոյն լօգւած) երկու մրցող կուսակցութիւնների միաձալն քւէտի: Յարկւած և պատկառւած, բռնելով վարչութեան մէջ կարեոր դիրք, բնութիւնից օժտւած հալադիրտ ընդունակութիւններով և բարութեամբ՝ Յ. Խատիսեանի խորհուրդներին և աջակցութեան շատերն են պարտական իրանց ընտրած կեանքի շաւիղի համար:

Հանգուցեալը, որպէս և բնական է, ունէր չարգոյնների մեծ բազմութիւն: Նորա վաղաժամ մահը, որ ալնքան անսպասելի էր, ընդունեց որքան վարմացմամբ նոյնքան և խորը ցաւով: Նա երկար կը մնալ նորան ճանաչողների շիջողութեան մէջ և հաղիւ թէ շուտով նորան փոխարինող լինի ալն բազմազան դերերում, որ կատարում էր նա թէ իբր պաշտօնեալ, թէ գործիչ և թէ իբրև մարդ:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳԵՏԱՀԷՆ ԳԻԻՂԸ

(Գիւղական ուսուցչի յիշատակարանից)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՅԻ

Գետաչէն հալաքնակ գիւղը գտանւում է Գանձակ նահանգական քաղաքից մօտ 25 վերստ հեռու զէպի հիւսիս-արեւմուտք, երկու ու լաջն ձորի մէջ, որի միջով սըընթաց վազում է Գուրակչալ գետակը: Գիւղը, որ մօտ 500 տուն է, առատ է ջրերով. որ կողմ նալէք, որ բլրակի և մօտենաք, առւակներ են ու հոսում են:

Ժողովրդի մի մասը բնիկ է. իսկ մեծ մասը գաղթած է Զրաբերդից (Ղարաբաղում) և պահպանել է թէ լեզուն ու թէ հնաւանդ սովորութիւնները. իլիման առողջարար է. ալդ երեսում է ժողովրդի երեսի արտադատութիւնից, որ զւարթ է: Պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ. կան վաճառականներ և արհեստաւորներ. ալդ է պատճառը, որ Գետաչէնը դարձել է կենտրոնական գիւղ: Պարապում են նաև ալգեգործութեամբ:

Առաջին անգամ գիւղ մտնելիս՝ նկատեցինք անկանոն ծուռ ու մուռ փողոցներ աղբով ծածկւած, հասարակ խրճիթներ ու մի քանի տեղ էլ քարէ միւարկանի տներ: Ակամալ մեր միան ընկաւ 10 վերստ առաջ անցած գերմանական շէքենհոփ զաղութը իւր կանոնաւոր, լաջն ու խճուղած փողոցներով ու երկարկանի սիրուն տներով, քարաչէն մեծ ուսումնարանով ու եկեղեցիով և մաքուր հազնւած բնակիչներով: Ալդ Գաղութում մենք նկատեցինք խումբ-խումբ երիտասարդների, որոնք տաք տաք վիճում էին՝ ձեռքերին բռնած գերմանական լրագիրներ, միով բանիւ ալդտեղ աւելի մաքրութիւն ու կեանք էր նկատուում քան թէ մի

ժամ առաջ անցած նահանգական Գանձակ քաղաքում: Բայց թնշ տեսանք Գետաշէն մտնելիս. մերկ ու բոբիկ երեխաներ և գինեվաճառի առաջ գծուծ շորերով երիտասարդներ միմեանց ափեղցվեղ խօսքեր ասելիս. իսկ մօտերը խոզերի երամակ կանգնած, որոնց հոտից անցնելն իսկ ղժար էր: Մարդ ակամազ զարմանում է՝ չէ որ անտառը դերմանացիներից աւելի հեռու է. իսկ Գետաշէնին կպած, ապա ուրեմն հալ գիւղացին թնշու չի օգտուում և չի կառուցանում գետնի վրա սիրուն տներ. եթէ քարի պակասութիւնն ասէք, աչքի առաջ ունեցէք, որ Գետաշէնը շինութեան քարերով է նշանաւոր. ուրեմն պիտի ենթադրել, որ նա կամ աշխատել չի սիրում ու բաւականաճում է իրա սլապենական խրճիթով կամ սովորել է գետնաչարկ տներին, աչս ընտելացել նաև նորանից առաջացած վնասներին: Այնթաղերէն թէ գերմանացիք դաշտալին ու ալդու գործեր չուտ են պրծնում շնորհիւ կատարելագործւած գործիքների ու ժրջան աշխատանքի. ապա միացած ժամանակ իւր մտքի ու բնակարանի համար, թնշ է շինում հալ գիւղացին ձմեռը՝ երբ նա պարապ է. մի քանի գործիքներ պիտի սրի եկող զարնան համար ու միացած ժամանակ անդկացնի փողոցներում գետնի վրա նստոտած զրուցելիս կամ հոհուան հարսանիքներում քէֆ անելիս: Ահա երբ կարելի է նոցա հաւաքել և խրատներ տալ թէ գիւղատնտեսութեան, թէ առողջապահութեան և թէ տուն կառուցանելու ձևերի համար: Այս, այդ հարկաւոր է, որովհետև նա թմրած է, նրան հարկաւոր է մի գրգիշ ուժ. ալդ ուժը պիտի կսովեն գիւղական և մասնաւորապէս գիւղատնտես ինտելիգենցիան, քահանան և ուսուցիչը:

Մեր հալ գիւղացիք ձմեռը պարապ են, ուստի երբեմն գիւղական տանուտէրի ու գատաւորների ընտրութիւնն է լինում: Ահա ալդ ընտրութիւններից մինին ներկալ եղանք. պիտի ընտրէին տանուտէր ու գատաւորներ, ալսինքն առաջնորդող ու առաջնակարգ մարդիկ, որոնցից կախւած էր նոցա երեք տարւալ կեանքը:

Նախընթաց երեկոյին «չօուչը» (գգիր) կտրէկտուր ման եկաւ ու ընտրելով ալսպէս առած կենտրոնական կտուր, մի քանի անգամ հազալուց չետոյ բարձրաձայն կանչեց «վաղը լօխն էլ (բոլորը) գլլականէք (պիտի գաք) ըղբաշին (տանուտէր) ու սուղիէք ջոկլական ենք, լաւ հասկացէք»: Նրկրորդ օրը տանից մէկ մարդ եկաւ գեղամէջ, եկաւ և պրիստաւը ու բալկոնում սպասում էր: Գիւղացիք տանուտէրին փոխում էին. թնշու, որովհետև նա, իբրև հասկացող ու մի քիչ զարգացած տղամարդ, շատ խիստ է եղել գիւղացիների վերաբերմամբ և շատերին տուգանքի էր ենթարկել գաւթիներն ու փողոցները կեղտոտ պահելու և անասուններին զիչերով աղատ թողնելու համար և ալսքան խիստ էր եղած, որ չէր խնայած նոյն իսկ իւր զառամիալ հօր՝ գիւղացիներից չարգւած ալդ նախկին տանուտէրին: Միշտ տրտունջներ էին լսւում թէ լաւ

չի կառավարում, հօրն էլ պատմեց՝ իսկ դատաւորներին արժէր փոխել օրովհետեւ կաշառակերներ էին:

Պրիստաւի (տեղական վիճակի ոստիկանապետ) հարցին թէ ում եւ կամենում տանուտէր, մօտ 300 մարդ բարձրացրեց ահապին աղաղակ. մի քանիսը գոռում էի Համբօին, միւսները Թիւնիին կամ Զաւադին և ալլն, աջնպէս որ միաձայնութիւն չէր տիրում: Պրիստաւը համբերութիւնից դուրս գալով, կարգադրեց՝ «ով ուզում է Համբօին՝ ձախ, իսկ ով Սաքնին (հին տանուտէրներից մինը), աջ ամբօյը Սաքնի կողմը քիչ էր գնում, բաց Սաքնականները դրոհ տալով տարան աջ և նոցա, որոնք Համբօին էին ուզում, պրիստաւն էլ, առանց հաշւելու, ալլ միաջն նկատելով թէ որ կողմն շատ անցաւ, աջն կողմի թեկնածուին էլ ընտրած համարեց: (Ընտրած էր ուրեմն աշխարհքից բեխաբար Սաքոն միաջն նորա համար, որ նորա տանուտէրութեան օրով խաղաղ են եղել, ալլսինքն ինչ ուզեցիլ են, ալլն են արել: Ահա թէ ինչպէս է ամբօյը իրա համար հոր փորում: Ալլ ձեռով է լինում և դատաւորների ու քահանայացուների ընտրութիւնը:

Մեր չիշողութեան մէջ աւելի վառ է մնացել ժողովրդի հոգեւոր ու կրթական գործը և ալլն չարաբերութիւնը, որ հա ունի դէպի եկեղեցին, հոգեւորականութիւնը ու դպրոցը. սկսենք եկեղեցուց:

Գետաչէնի սուրբ Աստուածածնալ եկեղեցին բաւականին մեծ շինութիւն է, բաց սաստիկ մութ և, բացի դորանից, չափից դուրս խոնաւ, ալլնպէս որ մի հինգ րոպէից չեսող դգալի է նորա վնասակար աղղեցութիւնը. իսկ խոնաւ է՝ որովհետեւ հարաւային պատի տակից և չատակի միջից աղբւրի նման ջրեր են բղխում, որոնց համար փորած են փոքրիկ արիւհը. ալլ արիւհը բոլորն էլ միանում են ու թափւում եկեղեցու մէջ փորած հորը. ահա ալլ ջրերն են պատճառ, որ եկեղեցու չատակը և պատերը խոնաւ են: Ալլ հորը տակից խողովակ ունի անցկացրած դէպի գաւիթը, ապա թէ ոչ ամբողջ չատակը ջրով կը ծածկի: Աւելի զարմանալին սակաւն ալլն է, որ ժողովուրդը ահապին փափախներով ու մեծաաղմուկ քոչերով ժամերգութեան ժամանակ մտնում է սափորներ ունի ու հորից ջուր տանում, բոլորովին խանդարելով ժամաւորներին. տէրտէրներն ու երեցփոխանը ձայն էլ չեն հանում:

—Ախր, տէրտէր, ինչու չէք արդեւում դոցա.

—Եդ իմ բանը չէ. Հանէս ապօրն առն, սառնութեամբ սրտատխտունեց եկեղեցու նախանձախնդիրը:

—Հանէս ապեր, ինչի ևս թողնում, որ ներս մտնեն կամ ինչի չէք աշխատում ալլ ջուրը կտրել տալու:

— Ես ինչ անեմ, քը մատաղ, ինձ լսում են, վարժապետ մի կղենի (բարկացիր), քը մատաղ, բալբի քեզ լսեն, եղաւ նրա պատասխանը:

Հապա եկեղեցու մաքրութիւնը ինչ մաքրութիւն. խաչկալները մի մատաչափ փոշիով ծածկւած, եկեղեցական անօթները, զգեստները սեւացած, նամանաւանդ շապիկները, իսկ մեռոնամանը, խնդրեմ ներէք, եթէ մի քիչ անհամեստ նմանողութիւն անենք, որովհետեւ ինչին նմանացնենք, եթէ ոչ վաքսամանին... չորացած սև ածուխի նման աւաղանի գլխին ընկած: Մի անգամ ծեր քահանայն երեխա էր մկրտում և, ըստ հնաւանդ սովորութեան, կարգը կատարում էր դուրսը. ես գործով գնում էի պաշտօնակցիս մօտ և դէպքով նկատեցի, որ կնքահալրութիւն անում է մի 8 տարեկան աղջիկ, որ հակառակ է Հալատաճեալց եկեղեցու կանոններին: Հարցրինք՝ ինչ իրաւունքով աղջկան թողնում էք կնքահալրութեան. քահանայն թէ՛ հալը գործ ունի և աղջկան է ուղարկել. ինչ կա՞ մատիանում հօր ազգն ու անունը կը մոռնենք: Աւ ահա ես, երեխին վերցնելով աղջկալ գրկից, դարձաւ ի զարմանս ծնողաց, երեխի անկոյ, անտես ու անճանաչ կնքահալրը: Մօտեցաւ մեռն քսելու ժամանակը. խեղճ սանկիս ճակատը սեպցաւ վաքսի նման սևացած մեռնի պատճառով:

Եկեղեցին որոշ տիրացուներ չունի, ալ ով կարգաւ-գրելն իմանում է՝ նա տիրացու է. ուստի երեակալեցէք թէ ինչ անճոռնի, աններդաշնակ ու միմեանց չհասկացող ձալներ կը լսեն եկեղեցում ալդ առանց շապիկի վրացու տիրացուների նման եկեղեցու սպասաւորները: Երկար խրատ տալուց չեսոյ հազիւ կարողացանք որոշ տիրացուներ հաստատել ու մի կողմ քաշեցինք չոխաւորներին. հազիւ հազ տեսանք շապիկով տիրացուներ ատենանի առաջ, որովհետեւ մինչ ալդ ժամանակ առանց շապիկի էին փոխեր ասում:

Եկեղեցին, ալդ մօտ 500 ծուխի աղօթարանը, դաւիթ չունի, ուստի չատ չաճախ նկատում էինք անասունների աղբը դռան առաջ: Ահա ալսքան անկարգութիւններից չեսոյ ինչ սրտով ժողովուրդը չաճախէ եկեղեցի. ուստի աւելի բարւոք էր համարում փողոցներում թափառել, քան թէ սրբութեան տեղ աղտոտութեան տուն մտնելու:

Գետաչէնում կալ երկու քահանայ, մինը ծեր և աւելի բանիրուն. իսկ միւսը չափահաս և անկարգ: Ինքնակամ պատարագներ չեն լինում, ալ, ալսպէս ասած, պիտի ժողովուրդը պատուէր տալ, որ պատարագ մատուցանեն. ալդ պատուէրը և դառնում է կռածաղիկ քահանաների մէջ. չէ որ ժամոցի հարց կալ մէջը:

Երեւն ասում է. ես պիտի անեմ, հերթը իմն է:

— Հերթն ով է տել, միշտ ես եմ ժամ դալիս, ասում է միւսը, չնայած որ ես աւելի չաճախ ծերին էի նկատում ժամ ասելիս: Աւ ալդ պիտով ծագում էր կռիւը և, ինչպէս լսում էինք, մինչև իսկ կռւարարը

ձեռք էլ էր բարձրացրել մի անգամ իւր օծեալ լծակցի վրայ. աչդ էր պատճառը, որ գիւղականները միշտ գանդատում էին՝ աչս ինչ անիրաւութիւն է, վարժապետ, որ դա անում է. ի՞նչ անենք, ո՞ւմն ասենք: Կը իրօք, ո՞ւմն ասեն. ոչ գործակալը, ոչ հոգեօր կառավարութիւնը ուշադրութիւն չեն դարձնում: Իսկ աչդ բոլորը նա անում էր չար նախանձից, որովհետեւ, չնայած որ ծեր քահանան ուրիշ գեղից էր փոխադրւած, շատ համեստ էր ու ժողովրդից համակրւած իւր լաւ վարքի ու բարքի համար. նա էր, որ միշտ չորգոր էր կարդում ժողովրդին: Իսկ միւսին ժողովուրդը հակակրում էր և ոչ առանց պատճառի. կրթութեամբ գիւղացիներից բարձր չլինելով, ոչ մի բարոյական օրինակ չտալով նոցա, նա, ընդհակառակը, անում էր նոցն իսկ աշխարհականին անվազել բաներ. օրինակ՝ գիշերներով բալկոնում դափ ու զուրնով քէֆ անելը, ամեն ճաշի ներկազ գտնելը ու թամազա ընտրւելը: Գիւղացոց պէս նա կոնծում էր, նոցա նման քէֆ անում, բամբասում. և աչդ էր պատճառը, որ գիւղացիք մի-մի անգամ ինչպէս իրանցից մէկին, հաչոյում էին. և թէև կարգը չարգելով համարձակութիւն չունէին նաև թակելու, բացք որ հովիւը ինքն էր օրինակ տալիս, մենք մի անգամ ականատես եղանք, և մինչև իսկ վկաջ էին կամենում գրել: Ինչպէս տեսնում էք աչս եկեղեցու թէ ներքինը և թէ արտաքինը խորխուլ է, ուրեմն ժողովուրդը մեղաւոր չէ որ եկեղեցին սիրով չէ չաճախում: Բացք որպէս զի ցոյց տանք, որ գիւղացին միշտ պատրաստ է եռանդով եկեղեցի չաճախելու, երբ ամեն բան կարգին է, իբր օրինակ կը բերենք ալտեղ քարոզի և երգեցիկ խմբի նշանակութիւնը:

Մեծ պատը մօտենալիս քահանաներին առաջարկեցինք որ ինչպէս քաղաքներում սովորութիւն է, սուքա էլ շաբաթ կամ կիրակի օրերով քարոզեն ժողովրդին. ծեր քահանան մեզ չարգելով, հէնց գիւղացու կեանքից նիւթ վերցնելով ասում էր մի-մի բան. իսկ երբ միւսին առաջարկեցինք՝ նա պատասխանեց.

— Ինչ ասեմ, վարժապետ, սովոր չեմ, սկի բան չեմ ասել էս 11 տարում, էն ա տէրն (տէրտէր) ասում ա, բօլա էլի. արհամարհանքով ասաց նա վերջին խօսքերը:

— Լաւ չէք անում, մէկ մէկ պիտի խրատէք ու օրինակով ցոյց տաք:

— Գե՛հ հընչ ասեմ, քը մատաղ, ո՞նց սկսեմ:

— Այ, աւուր պատշաճի քարոզներ կը բերեմ ձեզ մօտ կը կարդամ ու ապա քարոզեցէք:

Աչդպէս էլ արինք, տարանք Սահակ քահ. Սահակեանցի թելադրած քարոզները Ներսիսեան դպրոցում և, մի քանի անգամ կարդալուց չհտոյ, մի գիշեր կրկնել տւեցինք: Քարոզ չին, (քարոզիչ) ինչպէս ինքն էր ասում, նստած էր անկողնում. երկրորդ օրն անհամբեր սպասում էինք սորա

քարոզին, բայց նույն պատճառաբանութեամբ դարձեալ չքարոզեց. իսկ երբ տեսնում էին իրանց խոխաներին (երեսաներ) եկեղեցում չապիկները հագին երգելիս, հիանում էին ու գալիս. նամանաւանդ պառաւ կանաչ մեզ փաթաթւում ու օրհնում էին, և շարունակ ինչքան խումբը մեր ձեռին էր, ոչ թէ գալիս էին միայն ծնողները ալ և հարեանները՝ լսելու թէ ինչպէս իրանց խոխաները «տաղեր» էին ասում: Մի նպատակի հասած լինելով, կամենում էինք միւսին էլ հասնել՝ ալն է բոլորին միատեսակ չապիկ հագցնել. բայց իմ առաջարկութեան՝ հա՛ա ծնողներն ինչ պատասխանեցին. «Վարժապետ, դուչմանի աչքն է, վաղ թէ դիպչի խօխիս. երբ տեսնեն, որ նա աչնպէս սիրւուն, (սիրուն) զուգած տաղաւորը»: Եւ չաջողեց: Բայց ինչպէս լսում ենք, չաջորդս ալդ պակասը լրացրել է:

Մի քանի խօսք էլ եկեղեցական հաշիւների մասին, և մեր կարծիքով մի ամփոփ գաղափար տւած կը լինենք ալդ բազմամարդ հաշկական գիւղի հոգևոր գործերի վերաբերմամբ: Եկեղեցու երեցփոխը և միաժամանակ (ըստ կանոնադրութեան) ուսումնարանի գանձապահ հոգաբարձուն՝ մի տղէտ, անդրաղէտ, բայց աստուծաւախ մարդ էր: Եւ ահա թէ նա ինչ ձեռով էր հաշիւ պահում: Ահա մի կնունք եղաւ (գիւղերում). չօգուտ եկեղեցուն լուսազին տրւում է առհասարակ 10 20 կոպ.). բայց կնքահալըն ասում է՝ «չունեմ, Վաճէս ապեր, ետո՛ւ կը տամ»:

— Լաւ, որդի, չմոռանաս, Աստծու խաթեր. խօ գիցում ես՝ գրել չեմ իմանում: Եւ աչքպէս էլ անցնում է կորչում. իսկ եթէ ստանում է՝ մատեն չի մուծում, չնալած որ հոգևոր կառավարութիւնը ամեն տարի մատենաներ է ուղարկում: Ով պիտի գրէր, ինքը դրել չէր իմանում, տէրտէրի ալարն էլ գալիս էր: Հապա ի՞նչ էր անում ստացած փողը? Գանձապահն ունէր մի քիսալ, աչնտեղ էր ածում ստացած փողը, առանց իմանալու. թէ ինչքան կար և որքան որ ժամանակ ստացած և ումնից ինչի համար: Եկեղեցում մոտ է հարկաւոր— նա աչնտեղից էր հանում ու առնում. մոմը տանում են հարսանիքին կամ թաղման համար,— և դորա փողը մի ամսից լետո՛ւ ստանում է քահանան իրա մեռելաթաղի հետ. բայց ի՞նչքան պիտի եկեղեցուն տրւի, իբրև մոմի վճար, աչն մնում է անորոշ, քանի որ երեցփոխը չի գրել և ոչ էլ գրել է տւել, ուստի ալդ դէպքումն էլ աչնքան չի ստանում ինչքան հարկաւոր էր:

Հասնում է դեկտեմբերը: Հոգևոր կառավարութիւնը պահանջում է եկեղեցական հաշիւները. աչ հիմա՛ կը վեր բերեն ելուժուաքի փոշոտ մատենը և կը մոլձեն երեսակաւական հաշիւներ Մենդեան մատենանի համեմատ. քանի ծնունդ որ եղել է՝ աչնքան 10 կոպէկ էլ կը նշանակեն ելեմտից մատենանում. մի-մի տեղ էլ 15 կոպէկ կը գրեն, որ միակերպութիւն լինի, բայց իսկապէս ալդ 10 կոպէկ կամ 15 կոպէկ ում համար որ

Նշանակեցին արդեօք Նրա կնքահայրը 10 է տւել թէ 15 կ. կամ կարելի է ոչինչ էլ չի տւել, ալդ փուլթ չէ: Մինչ հաշիւներ գրելը երեքփոխը նաւում է թէ քանի մանէթ կալ քիտում, ենթադրենք թէ 37 մանէթ, տեսէք ի՞նչ է առաջարկում:

—Ա՛, տէր, մարդ եմ, կարելի է կամ ինձ մօտ է մնացել եկեղեցական փողը կամ մոռացել եմ գրել տալու կամ հանել եմ մի ուրիշ բանի համար ու էլ տեղը չեմ գրել, եկեղեցու փողնա, հախ Աստծու՝ մի տասը մանէթ էւէլ (աւելի) գրի, քը մատաղ, որ անպարտ ըլիմ: Աւ ալդպէս, փոխանակ 37 մանէթ մուտքի, գրում է ընդհանուր մուտք 47 մանէթ: Ո՞վ է արդարն, ով է մեղաւորը:

Արդեօք դրադէտ մարդ չկար, որ դրան են նշանակել? Ոչ, գրագէտներ շատ կան, բալց դրան են ընտրել, իբրև աստաճապախ մարդուն, դրա մի ոտը գերեզմանումն է, եկեղեցական փողերի հետ չի խաղալ...

Եթէ մի գրագէտ երիտասարդ ընտրւի, ոչ հաշիւները ալդ օրում կը լինին և ոչ էլ մոմալաճառութիւնն, որ շատ թուլ է. իսկ թուլ է, որովհետև ամեն մի մանրալաճառ թաւուն ծախում է անկնիք մոմը էժան գնով: Չնայած որ շատ անգամ խորհուրդ տւինք դրա առաջն առնելու, բալց ծախողներին «բեղամաղ» չէին ուզում անել կամ քաշում էին, բաւականաչափ չլարգելով եկեղեցու շահերը:

Կրթական գործը Գետաշէնում լաւ հիմունքների վրայ է դրած, բալց ցանկալի է, որ աւելի ևս ուշադրութիւն դարձնէր, որովհետև միակ գործը, որին գիւղացիք համակրութեամբ են վերաբերում, ալդ կրթական գործն է:

1866 թւականից Գետաշէնում գոյութիւն ունի հայոց ծխական դպրոցը, ասել է թէ ամբողջ քառորդ դար, դրա շնորհիւն է ահա որ գիւղում գրագէտներ շատ կան, բալց ալդ քառորդ դարու ընթացքում ուսումնարանը չի կարողայել միդասեանի սահմանից դուրս գալ և աղբիւրները որոշել, շնորհիւ մի շարք թուլ հոգաբարձուների: Գպրոցների փակումից չեսող ալդ դպրոցը մնում է անաւտութեան մէջ և, չնայած որ Գետաշէնը պատկանում է Վրաստանի և Նմերէթի թեմին, բալց ալդ թեմի նախկին հալը տեսին չաւանի չէր ալդ տեղի դպրոցի գոյութիւնը, քանի որ հոգաբարձութիւնը 1887-ից փետոլ չի դիմել, դոնէ 1890-ից սկսած, իրանց դպրոցին ուսուցիչ նշանակելու, ալ իրանք վարձել են ուսուցիչ որոշ պալմաններով և իրանց գործը վերջացած համարել, տւել են մի մութ ու հակամանկաւարժական սենեակ ուխտատեղու գաւթում, մի քանի երկար տախտակներ իբր թէ նստարաններ, ալնալիսի նստարաններ, որ եթէ մի աշակերտ վիւր կենար՝ ամբողջ աստիակը կը ճռճուար, միով բանիւ մի կիսախալիֆալական դասատուն, որ պիտի երբեմն-երբեմն ծառաէր նա և ուխտաւորներին:

Այդ ուսումնարանը Գանձակում մի կրպակ ունի, որից տարեկան ստացւում էր 150 ռուբլի, թէև 200-ից անլի արժէր: Ո՞վքեր են հոգաբարձուները: Մինն է մեր հերոս քահանան, երկրորդ աստուածավախ Հանէա ապեր—ձեզ ծանօթ երեցփոխը, արհեստով խաղաղորդ (գաբաղ), երրորդը միաջն ազգ և անուն ստորագրել իմացող մի գիւղացի, որի մասին չորս ամսից քննող միաջն իմացանք, որ հոգաբարձու էր: Գորա մօտն էր ուսումնարանի մօտ 70—80 ռուբլու մի գումար, և, երբ պահանջում էինք, ասում էր.

—Շահար (քաղաք) կը դնամ, մորթիք կը ծախեմ ու կը տամ:

Միւս աղբիւրը ուսումնարանի կազմում է սուրբ Նշան ուխտատեղին, որ հէնց գեղումն է և գրաւում է բաւականին ուխտաւորներ: Գալիս են նոյն իսկ Թիֆլիսից: Այդ ուխտատեղին էլ, հակառակ կանոնադրութեան, կապալով վերցրել էր քահանայ-հոգաբարձուն, վճարելով 120 ռուբլի տարեկան: Գրա նախորդ քահանան, որ շատ լաւ փշատակ է թողել գիւղացոց մէջ, իր քարոզչութեամբ ու ուսուցչութեամբ, վճարելիս է եղել 200-ից անլի ու:

Ուսումնարանին է չատկացրած նաև գիւղից մի քիչ հեռու դտնւած Պանտալիոնի ուղտատեղին, որից ստացւում է 45 ռուբլի: Ուրեմն կըրպակ—150 ռ., սուրբ Նշան—120 ռ. և ս. Պանտալիոնն էլ 45 ռ., միասին 315 ռուբլի, որը չի կազմում և ալն գումարը, (335 ռ.), որ պիտի վճարել մի ուսուցչի նոյն իսկ երկրորդ կոպարով: Աշակերտներից թոշակադրամ չի ստացւում: Իսկ միջասեան ուսումնանին հարկաւոր է մօտ 400 ռուբլի, եթէ երեք բաժանմունքները միացած են և միաջն մի ուսուցիչ կալ, ուրեմն ամեն տարի ռոճկի և ալ ծախսերի համար խառնակութիւն պիտի լինէր: Շնորհիւ նախկին թեմական տեսուչ հալր Գեղամեանի, սակաջն, աղբիւրները կանոնաւորուել են և հասել 400-ի. դորա 3 տարւայ մէջ ալդ դպրոցին մի անգամ ալցելելը ալդ օգուտը տւեց: Նստարաններ չինւեցին ծնողների հաշտով, ամեն երեք աշակերտի հալրերին՝ մի նստարան. չորան էլ պարգևեց տանուտէր պ. Թ. Նպիսկոպոսեանց, Հալոց ուսումնարանի համար կալ մի շատ գեղեցիկ երկար ու լալն շինութիւն, որ տարաբախտաբար թերի է. դա շինւել է դարձեալ օգնութեամբ ալն տանուտէրի, որին հօրը պատժելու պատրւակով գիւղացիք փոխեցին. ահա քանի տարի է, որ միաջն տանիքն է պակաս, գոնէ ալդ լրացնէին: Նստարանն էլ վերալիշեալ տանուտէր պ. Ռ. Նպիսկոպոսեանցը նւիրեց և ալդ պիտով դպրոցն ունեցաւ մօտ 20 նստարան: Թէ որ աստիճանի է գիւղացին գնահատում ուսումն՝ ալդ կերևալ հետևեալից:

Աշնանը մի քանի գիւղացիք գաշտալին աշխատանքների պատճառով երեխայոց պահել էին մօտը, իսկ երբ դարձան՝ ալ ևս տեղ չկար, կամ ուեղի լաւ էր ասել տեղ շատ կար, բալց՝ նստարան չկար և ուսումն էլ մօտ 2 ամիս սկսած էր:

—Վարժապետ, սարըցի ենք, գեղական, գիղում չէինք թէ երբեք սկսւական, էս իմ լակոտիս (որդի) նստցրու, թաքի քեզ մօտ ըլի, մի բան էլա սովրի:—Բացադրում ենք ցոյց ենք տալիս, որ տեղ չկալ, բալց նա ալդ չի ուզում ընդունել, ուստի ասում է՝

Տաբուրէտ (աթոռ) կը բերենք, վարժապետ, կողքիդ նստցրու կամ դեանին նստցրու:—Ամբողջ մի ամիս մենք չողենցինք կրկնելուց թէ տեղ չկալ, ժամանակ չէ, հիմա ուսումնի սկսած է, բալց չէ ու չէ:

—Ինչ կը լինի, վարժապետ, թող ըլի:

Մեր զրութիւնն անելանելի էր, զոնեա հոգաբարձութիւնը մի քանի հատ էլ նստարան չիւնէ տար. կամ ամառը պատրաստութիւն տեսնէր. մենք սիրով կընդունէինք նոյն իսկ մինչ 50 աշակերտ, որովհետեւ դասատունը ահագին դահլիճի էր նման:

Գեառաչնում կալ արքունական երկդասեան դպրոց ես, 8 տարի առաջ Գեօրան թուրքարնակ գիւղից փոխադարձ. ալդ դպրոցը բուրսովին ապահով է, ունի երեք ուսուցիչ. 150 ռուբլի միալն գրադարանի փող է տրուում զանձարանից, ուստի ունի համեստ թէ ուսուցչական և թէ աշակերտական գրադարան, ստանում էր մօտ 10-ը զանազան հրատարակութիւններ թէ ուսուցիչների և թէ աշակերտների համար: Հալոց դպրոցը ոչինչ չէր ստանում, 5—5 կոպէկ աշակերտներից հաւաքելով ստանում էինք մանկական «Աղբիւր»: Դպրոցը ունեցել է մի փոքրիկ գրադարան, բալց զանազան մարդոց ձեռքն ընկնելով գուրջիացել է:

Գիւղի գրագէտներն բաւականին ընթերցասէր էին և համաձայնում էին ամսական քսան կոպէկ վճարել, եթէ ուսումնարանը կ'ունենալ իւր փոքրիկ գրադարանը, որից և իրանք կարողանան օգտուել. երբ ալ բանը չալանեցինք նախկին թեմական տեսուչ հալր Գեղամեանցին, նա թող չտեսց, և մենք նոցանից մի քանիսին գոհացումն տալու համար մեր սեպհական գրքերն էինք բաժանում: Արքունական դպրոցն ունէր մօտ 50 աշակերտ 5 բաժանմունքով, իսկ հալոց դպրոցը 40 աշակերտ երկու բաժանմունքով. ամեն բան իրա կարգին է արքունական դպրոցում և աշակերտներ էլ լաւ չառաջադիմում են, բացի կրօնից, որ թող էր: Այդ զբալրոցն աչքի է ընկնում մարմնամարդութեամբ և մեղաբոճութեամբ: Այս գիւղի մանուկները սուր են, նոյն չառաջադիմութիւնն էր նկատուում և հալոց դպրոցում, ուր երրորդ կամ երկրորդ բաժանմունքը վերջացնելով մտնում էին արքունական դպրոցի երկրորդ բաժանմունքը, իսկ արքունական երկդասեան դպրոցից անցնում են Գանձակի արհեստաւորաց կամ քաղաքական դպրոցը, եթէ մի քիչ կարողութիւնը ներում է ծնողներին:

Ուրեմն երկու դպրոցում մօտ 90 աշակերտ էր ուսանում. բալց հաստացած ենք, որ եթէ հալոց դպրոցն էլ երկդասեան դառնալ և օրիորդաց համար էլ բացել, դարձեալ բազմութիւն երկուսերք կը մնան դուրս:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Երբ «Մուրճի» անցեալ № 6 լուս տեսաւ, մենք, եղած տեղեկութիւնների հիման վրա՝ դադարաւ չէինք կազմել Պոլսում և Նորա շրջակայքում նոր պատահած աղէտի ահաղնութեան մասին: Բայց երբ մեզ հասան Պոլսի լրագիրները—երևաց որ պատահած երկրաշարժը ալի քաղաքի տարեգրութեան մէջ մի թւական պիտի նշանակէ, որը երկար տարիներ պիտի վառ մնալ Նորա բնակիչների չիտողութեան մէջ: Առաջին երկրաշարժը պատահեց 1894 թ. Յունիսի 28-ին, երեքշաբթի օրը, ժամը 4¹/₂-ին, երեք անկղ ցնցումներով, հարաւից հիւսիս, 12 վայրկեան տեղութեամբ: Դա զօրաւոր երկրաշարժ էր, որի նմանը, ինչպէս պնդում են, 1800 թւականից դէս Պոլսի մէջ չէր պատահած: Պոլսի մէջ զրեթէ բոլոր քարոսկիր շինութիւնները վնասուեցին, ամենից շատ բուն Ստամբուլի մէջ, Սուլթան-Ահմէտից սկսած մինչ մինչ Էդիրնէ-Գարու տարածուող լեռնադաշտը, մեծ Շուկաները մանաւանդ: Երբ երկրաշարժը սկսում է, ամեն մէկը իւր խանութները թողնելով փախչում է. պահապանները ոտիկաններով զռները գոցում են, և ինչ կենդանի շունչ կա՝ ամենքը շտապում են զուրս փախչել: Պիթ-Բաղարի Բէգէսթէնի դռնից զուրս գալու ժամաբաղ՝ Շուկայի կամարը փլչում է և շատերը մնում են տակը: Նոյն դժբաղդութիւնները պատահում են Նուրը-Օսմանիէ դռան մօտ, Մուհաֆաճըլար փողոցում, Թաուդ-բաղարի Նազըլ խանի (քարահասարա), Սոր-գուճու խանի, Բաստրմաճի խանի, Թափքէճի խանի, Վէզիր խանի շինութիւններում, Շուկայի դռան մօտ Պոտուրում խանի առաջ, Մէրջան Զարըսին փողոցի խանութներում:—Ստամբուլի կողմը, Բալըգ Բաղարից մինչև Գում-Գափու բոլոր շէնքերը վնասուած, մանաւանդ քարոսկիր շէնքերը: Մէրքէճիի նոր կալարանը վնասուած: Բաղէ-Գարու՝ հողը ճատըրտած: Մաքսատան առջև հողը ճաթըրտած և ծովի ջրերը ներս խուժած: Հանրալին Պարտքի պաշտօնատան բոլոր ապակիները կտրած: Սուլթան-Համամի բոլոր շէնքերը վնասուած: Սուլթան-Բալագլիդում՝ տները մեծ մասը անբնակելի դառած: Փողոցներ կան, ուր անցուղարձը անկարելի դառած:

փլատակների պատճառով: Բոլոր հանրալին ժամացույցները կանգ էին առած ցնցումների ժամանակ: Ոստիկանութեան նախարարարութեան սրաշտոնատան ապակիները ջարդովալուր եղան: Սիւլէլման փաշա խանը ամբողջովին փլաւ և մէջը զտնւածները աւերակների տակ մնացին: Պապը Զապլթէի մօտ գտնուող մզկիթի պատն ու մինարէն կիսով չափ փլեցին: Սուլթան-Մեհմէդում փլած տների մէջ հրդեհ ծագեց որ շուտով հանգչեց: Ազ Սէրալ, Հասան-փաշա խանը մէջտեղից ճեղքեց: Կոսքալում մի փուռ փլեց: Խաղանճիները, Վլանկան իջնող ճամբի վրայ, ամբողջովին փլեցին: Բալաթում, Թոփ-գափուլի, Ալան-Սէրալում փխսը ընդհանուր է: Սամաթիալում հինգ տուն փլած, տներից 100-ին 60-ը փխսուած: Ամենքը եկեղեցու հրապարակը լեցւած, աչր ու կին «Տէր-Ողորմես» էին ասում: Կունաց եկեղեցու գմբէթը վալը ընկած, մի մզկիթի մինարէն փլած, տների զրեթէ բոլոր ծխեկոյւները փլած են:—Գում-Գաբու՝ բոլոր տները փխսուած, Մալր-եկեղեցու կամարը և զանգակատունը ճաթած:—Գետիկ-փաշալի բոլոր տները փխսուած, փլատակները լքրել են փողոցները:—Մինարէների ծալքի կապարները ընդհանրապէս խախտւած են. Նշանճի՛ում մինարէն փլած է:

Աչգ էր զրութիւնը բուն Ստամբուլի մէջ:

Ղալաթիալում չէնքերը կամուրջի մի կողմը մեծ փխսներ չկրեցին Սոմհանէ՛ում նոր շինւած քարափները ամբողջովին ճեղքւած են:

Պերա՛ում փխսը աննշան է:

Պեշիքթաշ—Օրթագիւղ: Պեշիքթաշում մեծ պահականոցի քարովիր քիւր վալը է ընկած. Գեօփրիւլ-բաշըի և Գերէի բաղանիքները կիսովին փլած: 20-ից աւելի քարովիր տներ ճեղքուած. Թաշը Բետիկ օղլուի շինել տւած մեծ շէնքը կիսովին փլած:—Օրթագիւղի մզկիթի մենարէների ծալքերը վալը են ընկել: Կիւմիւշ-Սուլի զինուորական հիւանդանոցի կարանտինալին լատկացրած շէնքը ճեղքրուած է:

Բոսֆորի մէջ երկրաշարժը աղետալի աղղեցութիւն չի ունեցած. Բալթա-լիմանում մի քէօշք փլեց: Անատոլու-Հիսարի մէջ բաւական տներ փխսուեցին:

Իւսկիտարում, պահականոցի մէկ մասը փլեց, երեք զինուոր տակն են մնացել և մեռել:

Մարմարա ծովի ափական եղերքը: Նաքաֆճը՛ում փլեցին մինարէի կէսը և երկու տուն: Տներ և պատեր խախտեցան:—Պէնտիք՛ում երկաթուղու կաշարանը կիսովին փլած, մի փուռ ամբողջովին: Պատեր և տներ խախտւած: Սրճարանների մէջ բաժակներ և դաւաթներ բոլորը ջարդուած:—Կարթալ՛ում չունաց քարովիր դպրոցը կործանւեց, ճաշի ժամ լինելով՝ աշակերտ չփխսուեց: Հալոց Ս. Նշան եկեղեցին ճեղքրուեց. նույն պէս չունաց եկեղեցին: Կաւալարութեան սրաշտոնատան վերնաշարիւր

փլած, երկու խանութ փլած, նոյնպէս պատեր ու տներ խարխլած:—Մալթիփէ՛ում աղէտը շատ մեծ է եղած. երկաթուղու կապարանը բոլորովին փլած, մզկիթը և չունաց եկեղեցին կործանւած, մեծ կաղնիօճի հիմնադասակ եղած. երեսուն տնից աւելի փլած, բոստանճիւնների հիւղակներն իսկ փլած են, ծովեզերքի մօտ մի մաւունա (մեծ Նաւակ) ընկղմւած. — Բոստանճը՛ում պարտէզների մէջ գտնւած քարուկիր տնակներից մի քանիսը փլած, կապարանը վնասւած: Բոստանճըղից երեք քառորդ ժամ հեռու Բաքալ գիւղի չունաց եկեղեցին խախտւած:—Երէն գիւղի վնասը աննշան է, նորա մօտիկ Վէրդիւէն գիւղի զպրոցը փլած:—Հալգար փաշայի պարտէզի պատերը փլած, ղինուրական հիւանդանոցը վնասւած:—Գատը գիւղում վնաս չի եղել: Գուշ-Գիլիի կողմը մի տուն և մի քանի խանութներ փլած:

Որպէս բնական է, ամբողջ քաղաքը ալղ և հետեւեալ օրերը աճ ու դողի մէջ էր: Պաշտօնատները, շուկաները, դրասենեակները, խանութները, ամեն ինչ ալղ երեքշաբթի օրը փակ էր: Գործունէութեան ալղ բոլոր կենտրոնները՝ Ղալաթիա, Ստամբուլ, Պերա—անշարժութեան մէջ էին: Ամենքը շտապում էին դուրսը, դէպի մօտակալ գիւղերը, դէպի Բոսֆորը, դէպի հրապարակները և պարտէզները: Մինչև իրիկուն չուզումը և սասանումը դեռ հանդարտած չէր. ամենքը նոր աղէտքի ահուելի պատահականութիւնը աչքի առջև ունէր:

Ժողովուրդի զգացմունքը չէր սխալուում: Երեքշաբթի կէս դիշերին մօտ մի ցնցում պատահեց, քաղաքի մէջ թեթև, բայց կղզիների մէջ աւելի զօրաւոր: Մի ալլ ցնցում ևս պատահեց մի ժամ ու 20 րոպէ չետու, ապա մի անգամ ևս դժբախից երեք ժամ չետու, ապա առաւօտը մօտ 7 ժամին, հեռզհետէ տխրաբանալով և անզղալի դառնալով:

Մեծ երկրաշարժից հեռագրական հաղորդակցութիւնները թէ մալթաքաղաքի և թէ գաւառների մէջ դադրեցան. միայն մի գիծ աղատ մնաց վնասումից: Ալսպիւուի Պերալի հեռագրատունը դիմող անձերը ստիպւած էին Օդեսսայի գիծը դործածել՝ Իզմիրի և Ալեքանդրի հետ հաղորդակցելու համար: Պոլսի մէջ հաստատւած երկու հեռագրական դժբախալութիւնները ալղ իսկ պատճառով չկարողացան ժամանակին որ և է լուր հաղորդել իրանց բաժանորդներին:

Ասիական մասում՝ Անատոլիայում՝ երկրաշարժը նոյնպէս աւերմունքներ է արել: Անատոլուի երկաթուղու գծի վրայ ցնցումը զգացւել է մինչև 480-րդ կիլոմետրը: Մինչև Պողիւք գտնւած կալարանները աւելի կամ նւազ վնասւած են:

Ազգիները: Ասիական եզերքից կարելի էր որոշել թէ կղզիների մէջ երկրաշարժի աղղեցութիւնը մեծ էր: Փոշիով և մաւախուղով պատած էին. չորեմեքենաները կանգ առին ճանապարհին:—Բուրկազի մէջ հրդեհ ծագեց:

Կղզիներին մէջ երկրաշարժը նույնպէս սոսկալի է եղած: Բայց չորս կղզիներէն միւսին չափ մեծ աւազան է Հալքի և Կետոյ՝ Անտիքոնի (Պուրղազ):

Պրինքիպոյի մէջ տուն չմնաց, որի ծեփերը թափւած չլինեն, փայտի տներն եւ մի քիչ փնսւեցին: Լեռան եկեղեցիներին մէկը բոլորովին քանդուեց:

Հալքի մէջ գիւղի ամեն կողմը փլուզումներ տեղի ունեցան: Յոյները Աստածարանութեան դպրոցը որ բարձրանում էր բլուրի գագաթը, իր նորաշէն հաստ պատերով կիսով չափ կործանուեց: Բարեբաղդաբար 30 վանականներից ոչ ոք չմնաց: Ծովեղերքի վրա, որտեղից ջրերը ներս քաշւելով մակուկները ցամաքի վրա թողին, մեծ փնսններ եղան: Պետական ծովափն ընդարձակ դպրոցը շատ փնսւեց, մղկիթի մինարէն կիսովին ավերեց, աղօթք անող մուկղիներ կարողացաւ ազատուել, բայց մղկիթի սեմի վրա եղող իմամը սպանուեց: Նրկու թուրք կանաչք երկրաշարժի բռնկին ուսուցչամբից վաղը ընկնելով մեռան: Առետրական դըպրոցը իր բաղմադարեան մատուռով ճեղքւած քներ ունեցաւ պատերի վրա: Գիւղի եկեղեցին, որ 25 տարեալ չէնք է, կորցրեց իր զանգակատունը և տանիքի մէկ մասը: Բոլոր քար ու կիր տները առհասարակ խաբխած են: Չամիլիման՝ ի սիրուն ծովախորշը ցամաքեց բոլորչի եղերքներից մինչև 150 մետր հեռուն: Բայց ջրերը անմիջապէս վերադարձան և ծովախորշը վերստին ստացաւ իր գեղեցիկ տեսքը:

Բուրգազ՝ ում ծովափի վրա ալս ամառ շինւած պանդոկը ճեղքւում է, և երբ մէկ կողմից տների պատերը իրար ետևից փլուզման շուրջ էին հանում, ահա լանկարծ կրակ սկսեց, որին հինգ տուն ճարակ եղան:

Պրոտի (Գընալը) գիւղում Հալոց եկեղեցին շատ ծանր կերպով խախտեց: Քարուկիր տները ընդհանուրի վիճակին ենթարկուեցին: Ժողովուրդը մասամբ հեռանալ սկսեց: Ժողովուրդը գիշերը անցկացրեց բաց օդում:

Գետնաշարժից անմիջապէս Կետոյ կղզիները լցուցին ահազին բաղմութեամբ, որին հաւկաւոր էր պառկելու տեղ և ուտելիք գտնել: Ամեն ոք բացօդեալ տեղում անցկացրեց:

Բուլլըր կղզու գագաթի զգեսակը փլեց: Պահապանը ծանրապէս վիրաւորուեց:

Նրկրաշարժի ժամանակ ծովը դարձուրելի տեսարան էր ներկայացնում: Ջուրը սև թանաքի գոյն առած, հարկւր մետր հեռաւորութեամբ եղերքից քաշւելուց Կետոյ, թաթառի ձեռով նորից ցամաքի վրա ընկաւ: Նաւակները փչրելով, քարտիք քարերը փչրելով, ամեն բան աւելելով սրբելով:

Աւերումները մեծ եղան նաև Պուլի արարածանները մէջ՝ Նէտի-Գուլէ, Մաքրիգիւլ, Ալ-Ստեֆանօ:

Ձոհերի թիւը երեքաբարձաւ երկրաշարժից պէտք է որ մեծ եղած լինի: Թերևս մինչ հարիւր—հարիւր չիտուն հոգի:

Երկրաշարժը տարածւեց նաև գաւառներում: Ետիրնէ, Բրուսա, Մուտանիա, Սիւքիսթ, Կեմէլէիկ, Մեխալըճի, Քէօթանհա, Իզմիր, Ուրլա, Իզմիր, Ադաբաղայ, Կէլէ, Գարամուսալ, Չաթալճա, Քոնիա, Չենիլէր, Պանտրմա, Եալովա, տեղ-տեղ թեթև, տեղ-տեղ՝ զօրաւոր ցնցումներով:

Անդորրութիւնը և վստահութիւնը սկսեցին քիչ-քիչ վերադառնալ մտքերի մէջ միայն հինգշարժի օրը: Այդ օրը զիւղերում ապաստանող բազմութիւնը քաղաք վերադարձաւ և բորսան, պաշտօնատները, դրամատները, վաճառատները բացւեցին: Գալաթիա և Պերա—իրանց սովորական կենդանութիւնը նորից գտան: միայն Ստամբուլի կողմը՝ Շուկան փակ մնաց, իսկ Շուկալից դուրս խանութների մեծ մասը, նորից բացւեցին:

Հաւ եկեղեցիների մէջ առաւօտ-երեկոյ հսկումն էր կատարւում:

Բայց լուրումը վերսկսեց լունիսի 29-ին, հինգշաբթի իրիկան դէմ, երբ տեղի ունեցաւ գրեթէ նոյնքան զօրաւոր մի ցնցում, որպէս երեքշաբթի օր: Բարեբախտաբար այս նոր ցնցումը հազիւ երկու-երեք վայրկեան (սեկունդ) տևեց: Բնակիչները նորից տակն ու վրաւ եղան և կէս ժամ անց՝ ամեն ինչ՝ պաշտօնատուն, դրամատուն, բորսա, խանութ փակւեցին, իսկ հասարակաց պարտէզները և հրապարակները նորից լցւեցին լուրումնալից բազմութեամբ: Երեք ժամ անց՝ նորից զօրաւոր ցնցում զգացւեց, բայց միայն մի սեկունդ տևողութեամբ:

Երեկոյեան, քաղաքի տեսարանը շատ սրտաճմլիկ էր. ընտանիքների խմբեր, ծրարներով և կապոցներով, գիմում են քաղաքի մէջ բոլոր աչն կողմերը ուր չէնք չկալ: Երրորդ գիշերն է որ մալրաքաղաքը վաշկատուն կեանք էր անցկացնում: Քարոզիկը չէնքերի տակ հինգշաբթի գիշեր կարելի է ասել որ ոչ ոք չպառկեց: Ուրբաթ օր ևս ժողովուրդը դուրսը մնաց:

Հինգշաբթի օրւալ ցնցումները աչնքան էլ մնաս չհասցրին, այլ նպաստեցին որ խարխլած շինութիւնները փլեւն:

Յուլիսի 2-ին խանութների և վաճառատների մեծ մասը բացւած էին և քաղաքը իր կենդանութիւնը մասամբ վերստացած:

Նիւթական մնասը անհաշւելի է:

Անմիջապէս երկրաշարժից լետու սկսւեցին արկածեալների օգտին ժողովարարութիւններ՝ Պոլսում, Իզմիրում և այլն: Մասնակցեց նաև արտասահմանը՝ գլխաւորապէս Անգլիան և Ֆրանսիան: Եւ դա առաջին անգամն է որ Թիւրքիայում պատահած որ և է աղէտքի համար Եւրոպան օգնութեան է հասել Թիւրքիային:

Պոլսի ներկալ տարւալ մեծ երկրաշարժի առիթով՝ Պոլսի չրագիրները լիշեցրին Պոլսում պատահած մեծ երկրաշարժների մասին: Համեմատաբար մօտաւոր ժամանակի մէջ մեծ երկրաշարժներ եղել են Պոլսում՝ 1712 թ. մարտ 14-ին, 1766 թ. մալիսի 11-ին, 1826 թ. լունւարի 27-ին, 1838-ին լունւարի 13-ին, 1841 մարտ 5-ին և 1841 սեպտեմբեր 23-ին գիշերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆ-ԵՍՊՈՆՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նապոնիան պատերազմ է յայտնել Չինաստանին: Նւ սակայն այս հեռաւոր երկիրների ընդհարմանը իրար հետ լուսաւոր աշխարհը հետևում է նկատելի հետաքրքրութեամբ: Նւ զարմանալու չէ այդ. Չինաստանի և Նապոնիայի հետ տնտեսական և քաղաքական շփումներ ունի Ներսիսյան, մասնաւորապէս երկու պետութիւններ—Անդլիան և Ռուսիան—որ և է դիրք բռնելու են հարկադրաւ, թէև անմիջապէս չեն մասնակցում պատերազմին: Իսկ ընդհանրապէս խնդրի մէջ աւելի կամ նւազ չափով հետաքրքրած են բոլոր լուսաւոր ազգերը և մեծ պետութիւնները:

Պատերազմի առիթը Կորէան է:

Կորէա, չիներէն Չաօ-սիան, թերակղզի է և թագաւորութիւն արևելեան Ասիայում, Դեզին և Նապոնական ծովերի միջև, Կորէան կանալով բաժանւած Կիուսիու եապոնական կղզուց, 218,192 քառակուսի կիլոմետր (գրեթէ նոյն մեծութեամբ ինչ Անդրկովկասը, որ 222,625 քառ. կիլոմետր է) 10¹/₂ միլիոն բնակիչներով (ուրեմն գրեթէ 2¹/₂ անգամ աւելի խիտ ազգաբնակչութեամբ քան Անդրկովկասն է): Ընդ երկայն ձգւում է մի լեռնաշղթայ, որի պատճառով երկիրը զուրկ է մեծ ղետերից, բայց հարուստ է հանքերով. հարաւը շատ բերրի է (բրինձ, ցորեն, թուրթուն, բամբակ): Բնակիչները, որոնք եապոնացիներին ազգակից են և մեծ մասամբ բուդդայական են, արդիւնաբերում են գլխաւորապէս թուղթ և կոպիա գորգելանի ապրանքներ: Թագաւորը անսահման իշխան է: Տէրութիւնը բաժանւած է ութ պրովինցների: Մայրաքաղաքն է Կեօնգ կամ Սէուլ: Անւանական կերպով Կորէան զտանւում է

ստորադրած յարաբերութիւնների մէջ դէպի Չինաստանը: Եսպոնիան վերջին ժամանակներս միշտ ձգտել է այդ վասսալական յարաբերութիւնը պատռել, առաջին անգամ Սէուլի դաշնագրով 27 փետր. 1876 թ., որը ճանաչեց Կորէի անկախութիւնը: Այդ ժամանակից ի վեր առևտրական դաշներ են կապել Կորէաի հետ՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները 1882-ին, Մեծ-Բրիտանիան և Գերմանիան 1883-ին, Իտալիան և Ռուսաստանը 1884-ին:

Սակայն Չինաստանը ետ չէր կանգնում իւր հին իրաւունքներից: 1885-ին կապեց մի դաշնագրութիւն, որ արդիւնք էր երկու քաղաքական անձերի դիպլոմատիական ճարպիկութեան՝ Իսո'ի և Լի-Շունգ-Չանի, որոնցից առաջինը եսպոնական նշանաւորագոյն քաղաքագէտն է, երկրորդը՝ չինաց կարևորագոյն քաղաքական անձն է: Այդ դաշինքով Կորէաի վրայ հաստատուում էր երկու պետութիւնների ազդեցութիւնը, ոտեղծւում էր մի տեսակ condominium, որի նմանները յաճախ պատահել են եւրոպական նոյն իսկ նորագոյն պատմութեան մէջ: Ներկայ պատերազմով պէտք է վերջ դնել այդ երկուութեան: Աւերկու պետութիւնների ազդեցութեան ենթարկւած երկիրները առհասարակ աղաւաւում են այդ դրութիւնից սրտերազմով: Ինչով վերջացաւ երկու պետութիւնների (Պրուսիայի և Աւստրիայի) իշխանութիւնը Շլեզվիգ-Հոլշտէյնում? Փորձեցին նախ Գաշաէյնի դաշնագրութիւնով իրար վէճը խաղաղ ճանապարհով վերացնելու. բայց այդ դիպլոմատիական դաշնը պատրաստեց 1866 թւականի Աւստրո-պրուսական պատերազմը, որ տարաւ դէպի Սադովա: Այդպէս էր նաև Անգլիայի ու Ֆրանսիայի պատմութիւնը Նիսպոսում, որը ենթարկւած էր երկու պետութիւնների ազդեցութեանը. Դիլլի և Գամբետտայի խաղաղ բանակցութիւնները բանի տեղ չծառայեցին և Ֆրէյսինէի մինիստրութեան օրերով Ֆրանսիայում՝ Անգլիան միակ գրաւեց Նիսպոսը. պատերազմ չեղաւ, բայց Նիսպոսը միայն մէկի ազդեցութեան ներքոյ ընկաւ: Այժմ նոյնն է Չինաստանի և Եսպոնիայի պատմութիւնը Կորէայում. 1885 թւականի դաշնը միայն նախերգանք էր ներկայիս պատերազմի:

Սակայն պէտք է նկատել որ եւրոպական պատմութեան հետ արած համեմատութիւնը ասիական գործերի նկատմամբ կարելի է

խորթ թւայ այն պատճառով, որ Ասիայում արմատացած սովորութիւնների համեմատ՝ անցքերը այնպէս արագ չեն յաջորդում իրար և շատ չեն հասունանում՝ ահեղ պատերազմի տեղ տալու համար:

Դորա պատճառները պէտք է որոնել մի կողմից Ձինաստանի և միւս կողմից՝ Նապոնիայի առանձնացատկութիւնների մէջ:

Ձինաստանը երբէք ետ չի կանգնում ձեռք բերած որ և է արածութիւնից, թէկուզ իւր իրաւունքը իրապէս կորցրած էլ լինի: Այսպիսով նա կարողացել է մինչ երեսուն դարերի ընթացքում ամբարել մի ամբողջ արխեպիսկոպոսական թանգարան գերիշխանական շաւկնութիւնների, և ոչ ոք Ձինի կարծիքով՝ չի կարող դոյա ձեռք տալ, առանց վիրաւորելու որ և է հնացած իրաւունք և կամ առանց ջնջելու որ և է նախապատմական վատախանութիւն:

Միւս կողմից Նապոնիան մի նորագոյն ձեւի պետութիւն է ներկայացնում, որը Ներուպից փոխ է առել ամեն ինչ միանգամից՝—օրէնքներ, սովորութիւններ, անգամ՝ հանդերձեղէնը: Հետեւելով Ներուպի օրինակին, ինչ կայ աւելի եւրոպական քան երկիրներ նաձեւել՝ կոլոնիական ոյժը զարգացնելու համար: Պահելով վերջին կատարելութեամբ նաւատորմ և ցամաքի զօրք, ըստ եւրոպականի, Նապոնիան բնականօրէն պէտք է զգացել շռայլութեան այդ զարդից օգտւելու:

Կորէան միակ երկիրն է, ուր Ձինաստանը և Նապոնիան կարող էին իրար հանդիպել, և հասկանալի է որ միայն Նապոնիան կարող էր պատերազմի նախաձեռնողը լինել, եթէ ինկատ առնենք թէ ով է այդ երկրի ղեկավար քաղաքագէտը:

Նապոնիան, որպէս յայտնի է, այս տասնեակ տարում պարլամենտական երկիր է դառնել՝ վերին և ստորին ժողովներով, մինիստրական պատասխանատւութիւնով, ընդդիմադիր կուսակցութիւնով, բիջէտով և այլն: Սկզբում ամեն ինչ խաղաղ էր գնում, քանի որ պարլամենտի պատգամաւորները վարւում էին կառավարութեան ցանկացածի պէս: Կոմս Խոօի տասնութինգ տարի մինիստր մնալը ցոյց է տալիս թէ ինչ էր ներկայացնում ընդդիմադիր կուսակցութիւնը: Բայց ժամանակով ազգային ներկայացուցիչները ճաշակ առան, լրջացան և վերջապէս իրանց ազատ կացուցին կառավար-

չական ճնշումներից, փորձելով անհնարին դարձնել ամեն մի մի-
նիստրութիւն: Դորա հետեանքն եղաւ պարլամէնտի արձակելը և
ներկայացուցիչների նոր ընտրութիւնը. բայց առաջւայ անհնա-
ղանդ մեծամասնութիւնը նորից ընտրեց: Ներկայ պատերազմը
Չինաստանի հետ թւում է այն պատերազմներից, որոնք օգնում
են կառավարութեանը որ ընդդիմադիր կուսակցութիւնը ընկղմի
իւր ոյժը՝ ժողովրդական ոգևորութեան մէջ անյայտանալով:

Ահա թէ ինչով պէտք է մեկնել իրողութիւնների արագ ըն-
թանալու պատճառը ծայրագոյն Արեւելքում:

Այս պատերազմի ելքի համար դատելու մի քանի հաստատ
հիմունքներ կան. Չինաստանը մինչ վերջին ծայր կուելու է չչաղթ-
ւելու համար մի դրացի ասիական տէրութիւնից. Չինաստանի
պարտութիւնը մի կատարեալ աղէտ է համարւելու այդ երկրի հա-
մար. որովհետեւ այդքան մեծ պետութեան յաղթւելը կարող է պա-
տահել միմիայն նորա ծայրայեղ թուլութիւնից: Այդ ամօթանքը
չի ուզենալ իւր վրայ վերցնել Չինաստանը: Ընդհակառակը՝ Յապո-
նիայի պարտութիւնը չի կարող նոյն ամօթանքը հասցնել եապո-
նացիներին. այդ կը համարւի անհաւասար ոյժից ընկճւել: Միւս
կողմից Չինաստանը երբէք չի կարող ոտք դնել Յապոնիայի հողի
վրայ, որը շրջապատւած լինելով ծովերով՝ չինական թոյլ նաւա-
տորմից վախենալու ոչինչ չունի: Այդպիսով կարելիութիւն կայ,
որ Չինաստանը Կորէայում յաղթէ Յապոնիային, բայց կարելիու-
թիւն չկայ որ Չինաստանը՝ եապոնական հողի վրայ Յապոնիային
պայմաններ թելադրէ: Այդ հանգամանքներում պատերազմը կարող
է շատ երկար տևել, եթէ միայն եւրոպական պետութիւնների մի-
ջամտութիւնը չլինի: Իսկ այդ միջամտութիւնը կը ցանկանան նոյն
իսկ իրանք կուռղները՝ Յապոնիան և Չինաստանը:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐԶԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Նահանգապետներին ուղարկած է Կովկասեան կառավարչապետի հետեակ շրջաբերականը.

«1884 թ.ի փետրւարի 16-ին բարձրագոյն հաւանութիւն ստացած՝ Կովկասի հաշ-լուսաւորչական եկեղեցական զպրոցների վերաբերեալ կանոնների հիման վրայ, ալլպէս կարող են անուանել միայն աչն հանրակրթական տարրական միջասեան և երկրասեան դպրոցները, որոնք գտնւում են հաշ-լուսաւորչական դաւանութեան եկեղեցիներին և վանքերին կից և պահպանւում են կամ բացառապէս եկեղեցական և վանքական գումարների հաշուով կամ ծխականների օժանդակութեամբ:

«Աչն ինչ, ստացած տեղեկութիւնների համեմատ, մի քանի հաշ զպրոցներ Անդրկովկասեան երկրում, որոնց հաշ-լուսաւորչական հոգևոր իշխանութիւնը եկեղեցական զպրոց անունն է տալիս, պահպանւում են բացառապէս տեղական զիւղական հասարակութիւնների միջոցներով հասարակական աշխարհի վճիռների հիման վրայ, որոնք կազմւած են առանց վարչութեան գիտութեան, իսկ ալլ ուսումնարանները պահպանելու համար եկեղեցիները իրանց եկամուտներից ոչինչ չեն տալիս, ալլ տուրքը առնւում է հարկերի հետ միասին, բալց աւելի խոտութեամբ, և վերջապէս, հաւաքւած փողերը, առանց որ և է կոնտրոլի վարչութեան կողմից, ծախսում են հասարակութիւններից քնարւած անձեր, որոնք զպրոցները հոգաբարձուներ են կոչւում:

«Ուշադրութեան առնելով աչն հանդամանքը, որ ամբողջապէս հասարակական գումարներով պահող զպրոցները չպէտք է եկեղեցական զպրոցների հետ համեմատւեն, որովհետեւ վերոյիշեալ կանոնների հիման վրայ, եկեղեցական զպրոցներ կարող են անւանել միայն աչն ուսումնարանները, որոնք ծխականներից միայն օժանդակութիւն են ստանում ի լրումն եկե:

զեցական կամ վանքական գումարների—և գտնելով, որ չի կարելի թույլ տալ, որ ամբողջ հասարակութիւնը պարտաւորւի միջոցներ տալու բացառապէս հալոց եկեղեցական դպրոցները պահելու համար, և ի նկատի առնելով ահն, որ ալդ կերպ վարւելով հասարակութիւնները (որոնց չըջանում կարող են լինել և ոչ ծխականներ հաշտւածաւորչական եկեղեցիները) զրկւում են բոլոր դաւանութիւններին պատկանող մանուկների համար ընհանուր հիմունքներով սովորական տարրական դպրոցներ բանալու հնարաւորութիւնից,—կովկասեան գլխատր վարչութիւնը անհրաժեշտ է համարում չափնի կացութեանը հալոց եկեղեցական բոլոր դպրոցների պահպանութեան աղբիւրները կողկասում, պատշաճաւոր միջոցներ ձեռք առնելով, որպէս զի զազարեն և կ ե ղ ե ց ա կ ա ն անւանւել ահն դպրոցները, որոնք միջոցներ են ստանում ոչ թէ եկեղեցական կամ վանքական գումարներից բացառապէս կամ օժանդակութեան ձևով ծխականների կողմից, ալ միմիայն քաղաքային կամ գիւղական հասարակութիւններից, կամ թէ բարեգործական ընկերութիւններից»:

Ալդ պատճառով նահանգապետներից պահանջւում են համապատասխան տեղեկութիւններ:

ՀԱՅԱՍՏԷՍ

ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՅԵՐԸ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՄԵՐԳԸ (Լէոպոլիս, ЛЬВОВЬ) նիստն է հաշ կաթոլիկների մի առաջնորդութեան, որը տարածւում է Աւստրիայի լեհական երկու պրովինցիների՝ Գալիցիայի և Բուկովինայի վրայ: Եպիսկոպոսական աթոռը հաստատւած է 1365 թականին Լեհաստանի թագաւոր Կազիմիր Մեծի ձեռքով:

Գալիցիայի և Բուկովինայի կաթոլիկ-հալածէս հալերը չնախկում են ալժմ գլխաւորապէս՝ Լեմբերգ, Բժեժան, Լըսիեց, Ստանիսլաւ, Կուտի, Տիսմինից, Հորտենկա, Սենատին, Չերնովից, Սուչաւա և Բուկովինայի զանազան գիւղերը:

Արքեպիսկոպոսական թեմը բաժանւած է երեք կարգերեցութիւնների (դեկանատ, վիճակ) և ալ և ալ ժողովրդապետութիւնների:

Կարգերեցութիւնները իրանց ժողովրդապետութիւններովը հետեւեալներն են.

Հոգի բնակիչ

Ա. Կարգերեցութիւն Լեմբերգի	180
Բ. » Ստանիսլաւի	80
Մ. Բժեժանի	— — 240

բ. Լըսիեց	—	—	—	44
գ. Տիամինից	—	—	—	130
Գ. Կարգերեցութիւն Կոռտի'ի				1200
ա. Հորոտենկա	—	—	—	850
բ. Սնեատին	—	—	—	420
գ. Չերնովից	—	—	—	1000
Սուչաւա	—	—	—	214

Գումար բնակիչների 3,858

Հաջածէս հաւ-կաթովիկների ալդ արքեպիսկոպոսութեան կամ առաջնորդութեան մէջ կան 20 եկեղեցականներ, որոնցից մէկը (Սահակ Խաչակեան) արքեպիսկոպոս է, միւսները՝ քահանաներ են, ոմանք կանոնիկոսի, ոմանք ժողովրդապետի տիտղոսներով և մէկը վարդապետ, Վիեննայի Մխիթարեան ուխտից: (Հանդէս Ամսօրեայ):

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ. Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը վճռել է խնդրամատուց լինել կառավարութեան առաջ՝ Թիֆլիսում հիմնելու մի պոլիտեխնիկում՝ հանքաբանական և գիւղատնտեսական բաժանմունքներով, առանց դորանով չետ կանգնելու ապագայում համալսարան հիմնելու գիտաւորութիւնից:

ՇՈՒՇԻԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ առիթով անհամաձայնութիւններ էին ծագած մի կողմից թեմակ. առաջնորդի և միւս կողմից հոգաբարձութեան ու տեսչի մէջ: Առաջնորդը կամենում էր արձակել տեսչին և ուսուցչական խումբը. հոգաբարձութիւնը պաշտպանում էր տեսչին: Այդ առիթով Շուշի էր ուղարկւած գործը քննելու համար Երևանի թեմակալի փոխանորդ Կիւրեղ վարդապետ Սրապեան, որը տեսչի և խմբի դէմ զեկուցումն էր տւել Վեհափառին: Բայց Վեհափառ կաթողիկոսը, բաւական չմնալով ալդ քննութիւնից, հրամայել էր առաջնորդին, տեսչին, հոգաբարձութիւնից երկու հոգու և դպրանոցի կրօնուսուցչին ներկայանալ իրան՝ որպէս զի ինքը ալդ գործը անձամբ քննէ: Քննութեան հետեանքը, ինչպէս տեղեկանում ենք, եղաւ այն, որ Վեհափառը արդարացրեց տեսչին և հոգաբարձութեանը, պատւիրեց տեսչին շարունակել իւր պաշտօնը, արձակեց կրօնուսուցչին պաշտօնից և հրամայեց առաջնորդին մնալ էջմիւս. ծնունդ:

ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ նշանակւած է պ. Կարապետ Կոստանեանցը, Ներսիսեան դպրանոցի նախկին պաշտօնակատարը տեսչի:

ՈՒՂԱՓԱՌ ԴՊՐԱՆՈՑ (սեմնարիա) է բացւում Բուժալիսում:—Բայց

արդեօք ինչ դրութեան մէջ են Շամախու և Հաչարաթանի թեմերում հաջոց զպրանոցներ բանալու խնդիրը?

ՀԱՅՈՑ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՅ շատերը օգոստոսի վերջին ուսուցչական պատրաստ կազմ չունէին սեպտեմբեկի սկզբում դասատու-թիւնը սկսելու համար: Թիֆլիսում ներկայումս դեռ ևս բազմաթիւ հաշ ուսուցիչներ կան՝ որոնք սպասում են զաւառներ գնալու: Բացառութիւն չի կազմում նաև Ներսէսեան զպրանոցը, որը դեռ ևս չունի տեսուչ և ուր մի քանի ուսուցիչներ պակաս են:

Պ. ԿԱՐԱՍՈՒՐԶԱ ներկալ ամառը կոնցերտներ տւեց Շուշիում և Գորի քաղաքում: Գորի քաղաքում կապացել է Կարա-Մուրզալի համերգը՝ 26-ին օգոստոսի, մասնակցութեամբ 34 կին և 36 տղամարդ սիրող երգիչների: Համերգը ընդհանրապէս անցել է չաջող թէ մոտաքի և թէ ծրագիրը ներդաշնակ կատարելու կողմից:

Հասարակութիւնը ոգևորութեամբ է ընդունել պ. Կարա-Մուրզալին և մենք մեր կողմից ուրախ ենք, որ նա իր քառաձայն երգերի արձագանքը թափանցել է տալիս մի աջն-պիտի վիրախօս քաղաքում, ուր հաւերի մեծամասնութիւնը գաղափար անգամ չունի հակակսան երգերի մասին, չնորհիւ մալրենի լեզու խորթութեան:

ԲՈԶԱՐՁԱՆՑ, որ ծխախոտի գործարանատէր է Թիֆլիսում, ալս ամիս մի ընդհարում ունեցաւ իւր գործարանի բանւորների հետ, որոնք թուով մինչ երկու հարիւր են, հեանեալ առթիւ: Գործարանատէրը բանւորներին համեւելիք վճարները մի որոշ տոկոս ետ է պահում եղել մի տասնեակ տարի շարունակ: Այդ պահումներից գոլացել է աչժմ մինչ 15 հազար ուրելի, որի համար բանւորները պահանջում են որ գործադուր իրանց պէտքերի համար Նոցա հակառակ պ. Բոզարջեանցը պնդում է թէ այդ ետ պահած գումարները իբր թէ իւր սեփականութիւնն են: Բանւորները իրանց պահանջը չարգաւած չտեսնելով՝ գործադուր արին, և աչխատա՛քը վերսկսեցին ոստիկանապետի և Նահանգապետի չորգորանքով: Գործը վճուելու է դատարանով:

† **ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՏԻՍԵԱՆ** (տես Ներքին Տեսութեան մէջ):

† **ՊԱՐԻՋԻ ԿՈՄՍԵ**, արքայականների ցաթմեան գլուխը Ֆրանսիայում 28-ն օգոստոսի:


† **ՀԵՐՄԱՆ ՖՈՆ ՀԵԼՄՀՈԼՑ**, մէկը դարուս ամենամեծ բնագէտներից, հանճարեղ ֆիզիոլոգ և ֆիզիկոս, 28 օգոստոսի:

Հելմհոլց ծնւեց նոր տումարով 31 օգոստոսի 1821

թւականին Պոսղամում (Պրուսիա). 1848 թւականից նա զբաղւած Բերլինի համալսարանում: Մէկը միւսի չետեից նա պրոֆեսոր էր անատոմիայի և պատալոգիայի, ֆիզիոլոգիայի և ֆիզիկալի: Նորա սկզբի աշխատատու թիւնները վերաբերում էին աչքի տեսողութեան, ականջի ֆիզիոլոգիային և դորանով երաժշտութեան ֆիզիոլոգիական թէօրիակին: Վերջին 25 տարիներում նա նւիրած էր ֆիզիկային, ուր թերմօքլիմիայի, էլեքտրօքլիմիայի, մեխանիկայի, լւսի վերաբերմամբ և ակնն նշանաւոր գիւտեր արաւ: Բաց նորա գլխաւոր փառքը կապւած է ոչ մէրի պահպանման մասին արած հանճարեղ հետազոտութիւնների մէջ, որոնք կամուրջ են ձգում զուտ ֆիզիքական գիտութիւնների և կենսաբանական գիտութիւնների մէջ:

ՆՈՐ ՍՍԱՅԻԱԾ ԴՐՔՆԵՐ

- 1) MEGHAVORIAN, Agop. Dr. Etude ethnographique et juridique sur la famille et le mariage arméniens. Lausanne, 1894.
- 2) ՏԷՐ ԳԱՐԻԻԷԼԵԱՆՅ, Գաբրիէլ քահ. — «Բրիտոնէական վարդապետութիւն Հալատանեաց առաք. ո. եկեղեցւոյ»: Թիֆլիս, տպար. Շարաձէի, 1894 թ., գինն է 25 կոպէկ:
- 3) ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. — «Վէպիկներ»: (Ֆատման և Առաղը, Թանկագին կապանք, Օրորոգ Լիզա): Հրատար. Թիֆլիսի Հալոց Հրատ. Ընկ. Թիֆլիս, տպար. Ռոտինեանցի, 1894 թ., գինն է 40 կոպէկ:
- 4) ՀԱՆԴԷՍ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ, գինգերորդ գիրք, Մոսկւա, 1894 թ., գինն է 2 ռուբլի:
- 5) TAMAMCHEF, Dr. I. — „Der Kampf um Constantinopel in seiner Vergangenheit, Gegenwart und Zukunft. Ein historischpolitischer Beitrag“. 2. Ausgabe. Wieu, 1887.
- 6) ЕФРАТОВЪ. — „Общедоступная книга для учащихся“. Шекспиръ и его трагедии: Макбетъ, Отелло и Гамлетъ. Книжка первая. Баку, типографія Арора. 1894 թ., գինն է 25 կոպէկ:
- 7) ԲԱԼԱՂԵԱՆ, Սամէլ. — «Գարւինիզմ» (Նկարներով): Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ., Թիֆլիս, 1894, գինն է 40 կոպ.



„У н ђ р ђ“

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅՈՒՆ — ՀԱՄԱՐՈՒԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրու թեան համար զիմե՛լ

ТИФЛИСЬ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
 Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալու թիւններին՝

ԲԱՔՈՒ. — Տպարան «Արօր»:

պ. Նիկ. Աբրահամեան:

ԷԶՄԻԱԾԻՆ.—Արսէն արեղայ Դլոճեան:

ԲԱԹՈՒՄ.—*պ. Սարգիս Մակարեանց (ղրաս, Եղբ. Ծովեանների):*

ՌՈՍՏՈՎ Լ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—*եղբ. Պ. Լ Դ. Ուհանեաններ:*

ՇՈՒՇԻ.— Կ. Գեորգ Զարաթեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — ւլ. Գրիտ. Բաշինյանի տան, Гостинный дворъ.

ՄԱՐՍԷՅԼ, - պ. Սիմէօն Միքայէլեանց: Rue St. Jacques № 86:

ԽՄԲԱԳԻՐԱՏՈՒՆՆԵՐ ԳԽԱՆԼՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ, ՎԵԼԻԱՄԲԻՆԿԱՆ ՎՈՐՈՐԴ, ԽԱՆ ՋՑ